



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11 1895

ՆՈՅԵՄԲԵՐ

1895 № 11

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

1 ՇԱՆԹ	1351	Դուրսեցի՜նսրը (վէպ):
2 ՊՐԻԻԴՈՄ, ՍԻԻԼԼԻ.-Ա. ԾԱՏՈՒՐ	1381	Երկրի վերալ (բանաստ.):
3 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԻՐ	1382	Երկու ալիք (նամանորութիւն):
4 ԳԻ ԴԸ ՄՈՊԱՍԱՆ	1383	Կնուէք (սլաւոմաճք):
5 ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ. ԻՐԻ	1390	Հաջի Արրէկ (սլաւոմա):
6 ՇԱՆԹ	1406	Ծով (բանաստ.):
7 ԴԵՈՒՆԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	1408	Կինը Հին-Նախիջևանի դաւառում:
8 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	1421	Աչեր (բանաստ.):
9 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՐ	1422	Վրաստանի անցեալը:
10 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ	1450	Խորհրդածութիւն (բանաստ.):
11 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻԲԱՅԼԼ	1451	Խորհրդածութիւն. զարգացումը (վերջ):
12 ԽԱՏԻՍԵԱՆ, ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ	1462	Հալ գրողը քննադատութեան առջև:
13 ՂԱԶԱՐԵԱՆ ԵՐԻԱՆԴ	1472	Բժ. Արծրունու «Գարուցական առ- ողջապահութիւն»:
14 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՐ	1476	Ժամանակակից տեսութիւն.— Հալ- կական լանդրի նորագոյն զարգա- ցումը:
15	1483	Տաճկա-հալկական ռեֆորմները: Հալ- կական ռեֆ. տաճկական իրադէն:
16 Ա. Ա.	1493	Հալերի կոտորածները Տաճկաս- տանում:
17	1503	Սալարիւրի ճառերը:
18 ԽՈԶ-ՊԱՊԵԱՆ, Ա.	1509	Նամակներ Կ. Պոլսից:
19 ՄԱՆՈՒԼԼԵԱՆ, ԼԵՈՆ	1518	Հալկական թատրոն, II.
20 ԽՄԲ.	1525	Ձանազան լուրեր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Гипография М. Д. Ротнвіанна, Гол. пр., д. № 41.

1895

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11 1895

Ն Ո Յ Ե Մ Ր Ե Ր

1895 № 11

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр. д. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 28 Октября, 1895 г.

VIII .SUCԻ

ՄՈՒՐՃ

SUCԻ VIII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻԱԿ. ՀԱՄԱՐ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1896 թվականին կը հրատարակէի նոյն ծրագրով և նոյն դիրքով, որպէս և նախկին եօթ տարիներում: «ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմաճշման ինքնուրոյն և թարգմանական:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւնների, պօէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Պատմական:
- VI. Գիտական հանրամատչելի յօդւածներ:
- VII. Յօդւածներ տնտեսական և սոցիալական խնդիրների մասին:
- VIII. Գրական քննադատութիւն:
- IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած զրքերի մասին:
- X. Ժամանակակից Տեսութիւն: Յօդւածներ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին:
- XI. Գաւառական նամակներ:
- XII. Թատրոնական քրոնիկ և քննութիւններ:

XIII. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից:

XIV. Կարեւորագոյն լուրեր ամսւայ եղելութիւններից:

XV. Տեղեկատուներ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1896 թւականին առանձին ուշադրութեան առնել այն ձևով, ինչպէս արդէն յայտնի է 1895 թւականի բաժանորդներին: «Մուրճ»-ի ՎԻՊԱԿԱՆ բաժինը ներկայումս աւելի քան երբ և իցէ ապահոված է յատուկ աշխատակիցներով:

«Մուրճ»-ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ կը մնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդիմական-քննադատական:

«Մուրճ»-Ը ունի աշխատակիցներ ի մի սուար խումբ, որը կազմւած է ամսագրի եօթնամեայ կեանքով և որով ապահովւում են ամսագրի կարեւորագոյն բաժինները: Աշխատակիցների կազմը լրացւում է նորերով, որոնց նպաստները երբեք չեն պակասել «Մուրճ»-ին:

«Մուրճ»-ի 7 տարւայ նիւթերի լիակատար ցանկը տպագրւելու է առանձին բրոշիւրով:

ԿԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները վճարում են զիջումով՝ 8 ռուբլի, արհեստաւորները՝ և բանւորները՝ 7 ռուբլի:

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 3 ռուբլի սկզբում, 3 ռ. ևս մինչ մարտի 1-ը, մնացածը մինչև յունիսի վերջը: ԲՈՒՈՐ 7 տարիների «Մուրճ»-ը 14 հատորով կազմւած վաճառւում է 50 ռուբլով, իսկ առանձին-առանձին՝ որոշ զներով՝ համաձայն առանձին յայտարարութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունւում են ամբողջ տարով՝ տողը 1 ռ., կէս տարով՝ տողը 75 կոպէկ:

Դիմել Խմբագրատունը—Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“
Արտասահմանից—Tiflis. Rédaction „MOURTCH“:

ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

Շ Ա Ն Թ Ի

Ա.

Սեպտեմբերի վերջը տաք իրիկուն մը:

Ահագին իրարանցում Պոլսի մեծ կամուրջին վրայ: Պայուսակներով, կապոցներով բեռնաւորւած ընտանիքի հայրեր, խանութպան պատանիներ ու Պերայի վաճառանոցներուն մէջ ուշացած կիներ կ'ըշտապեն իրենց վերջին շոգենաւին: Առատ հոսանք մը կամուրջի երկու ծայրերէն, որոնք դէմ դէմի կուդան ու անդադար իրարու կը հիւսին: Կամուրջին վրայ ձիերու ղոփիւն, կառքերու զղրղոց, կամուրջի երկու կողմէն ժամանող ու մեկնող շոգենաւներու սալն ու շունչը, կամուրջին տակ «ճանճերուն» ճիչը և մահուկավարներուն հայհոյանքը:

Այս բոլոր աղմուկին անտարբեր երիտասարդ մը Ոսկեղջիւրի կողմի վանդակներու քովէն դէպի Ղալաթիա կը դիմէր արագ քայլերով:

Մաքուր ու սիրուն հագւած, միջահասակ, քսան-քսանըհինգ տարեկան տղայ մըն էր ան. նուրբ ու ազնիւ դիմագծերով, բարակ ընչացք մը, փոքրիկ մօրուք ու սև խոշոր աչքեր, որոնք այդ վայրկեանին յառած էին Ոսկեղջիւրի կոհակներուն:

Արևի մայր մտնող ճառագայթները վերջին անգամ մը կը զըգէին հեռզհեռ նեղցող ջրի այդ շերտը ու սակեթել շղարշ մը կը նետէին վրան:

— Ճիշտ որ ոսկի-եղջիւր, եզրակացուց երիտասարդը:

Բայց հազիւ իր եղբակացութիւնը աւարտած՝ ուսին ամուր հովանոցի հարւած մը կերաւ. և ետէն ալ հազիւ լսելի մարած ձայն մը.

— Ես քու խերդ անիծեմ:

Երիտասարդը բնազդօրէն սեղմեց ձեռքի դաւազանին կոթը ու խոժոռած իրեն դարձաւ. սակայն իսկոյն ժպտեցաւ ու զւարճութեամբ բացականչեց.

— Վասնի, բարեւ. այս ուրկէ:

Իսկ խեղճ Վասակը—կարճահասակ, մօրեղ, թուխ երիտասարդ մը— ձախ ձեռքով իր հինկէկ հովանոցին չեւած, աշով կուրծքը կը սեղմէր՝ շնչառութիւնը կանոնաւորելու համար:

Երբ քիչ մը ուժը ամփոփեց, լայնեղբ գլխարկին տակէն, սև, խոշոր ակնոցներուն մէջէն սուր հայեացք մը նետելով դիմացինին,

— Ես քու խերդ անիծեմ, կրկնեց: Զիշտ հինգ վայրկեան է ետէէդ կը վազեմ. թողբոս, սիրտս բոլոր իրար անցաւ. ինչ այդպէս կ'ըշտապէս. ետէէդ մօրդ է ինկեր:

— Հապա. դուն:

Վասակի դէմքէն ժպտի սէս բան մը անցաւ, խորունկ շունչ մը քաշեց, մոռա ընկերոջը թւը. ու սկսան միասին քալել:

— Գիտե՞ս, Բագրատ, որ անցեալ օր Թիֆլիսէն նոր նամակ առի:

— Վա՛յ. ես դեռ կ'ըստպսեմ. է, ինչ նորութիւն:

— Նորութիւն ոչինչ. բայց աղտոտութիւն, չիմարութիւն, չկառութիւն, ապուշութիւն, ստորնութիւն լեցուն:

— Այդ որքան սիրուն բառեր գիտես եղբ. նկատեց Բագրատ ժպտելով:

— Քեզի համար հարցուցեր էին, թէ ինչ բանի ես. շարունակեց Վասակ:

— Ե՛, ինչ գրեցիր:

— Ի՞նչ պիտի գրեմ. որ Կովկասէն գալէդ ի վեր կամ Պոլսի դպրոցները կը սլտախ և կամ վերին, իդէալական գաւառները. գրեցի, որ արդէն եկած ատենդ խենդ էիր, հիմա Պոլսի օդն ալ որ ծծեցիր դարձար կատարեալ քամի:

— Շատ շնորհակալ եմ. այդ որքան աղնիւ ես դտնւեր:

Եւ կամուրջի զուխը եղած բազմութիւնը ճեղքելով՝ սկսան Ղալաթիայի սանդղաւոր զառիվերը բարձրանալ:

Վասակ նամակը հանեց ու կարդաց:

Կովկասի ու նամակիս բովանդակութեանը վրայ խօսելով, վիճելով՝ երկու բարեկամները բաւական վեր ելած էին արդէն, երբ Վասակ նամակը գրպանին մէջ տեղաւորելով.

— Իսկ դուն դեռ նոյն հիւրանոցն ես, հարցուց:

— Ո՛չ. դեռ երէկ Ֆրանսական ընտանիքի մը մէջ սենեակ մը վարձեցինք Գէորգի հետ:

— Իրաւ. ո՞ր Գէորգի:

— Կարնեցիւն. հայրենակիցս:

— Ե՛, ի՞նչ տեսակ տեղ է. զո՞հ ես:

— Ֆրանսուհի մըն է տանտիրուհին, պատուաւոր կին մը. պալատական տիկիներու հազուապէսներ կը կարէ եղեր: Սրկու աղջիկ ունի. հատ մըն ալ հոգեզաւակի պէս յոյնուհի մը: Սենեակը հոս մօտերն է, եկուր անգամ մը տես: Արդէն Գէորգն ալ եկած կը լինի հիմա:

Մտան կողմնակի փողոց մը, և մէկ-երկու սրտոցտէ վերջը սկսան վեր ելնել ասպարուզմանի մը մաքուր, լայն քարէ սանդղաներէն:

Վերջապէս Բաղրատ երրորդ յարկի դռան զանգը քաշեց:

Ներսէն աղջիկներու աղմուկ մը լսեցաւ:

Գեղեցիկ, վայելչակազմ, դեղձան մազերով աղջիկ մը դուռը բացաւ. ուրիշ 10—11 տարեկան աղջիկ մը նորեկները դիմաւորելով՝ Բաղրատի հետ Ֆրանսերէն շաղակրատելու սկսաւ. Բաղրատի սենեակի դռան մօտ հանդիպեցաւ երրորդ աղջիկ մը, որ ձեռքը կոնք մը ջուր դուրս կ'ելնէր: Բաղրատի բարեւը առաւ ու քրքջալով խոհանոց փախաւ:

Վասակ կանգ առաւ սենեակի սեմին վրայ, պահ մը դիտեց ու ժպտելով Բաղրատին դարձաւ.

— Փառաւոր սենեակ մը, վրան ալ երեք հատ փառաւոր աղջիկ. վա՛յ ես ձեր...:

Մտաւ սենեակ և շխտակ դիմելով Գէորգի կողմը, ուր կանանչ քանապէի վրան երկընցած նոր լըւացած երեսը կը չորցընէր, աւելցուց.

—Նայէ, ինչպէս փուեր է. ձեր Կարինը այդ տեսակ բան շատ էիր տեսած, հմ:

—Նախ մէկ բարե տո՛ւր, մնորդ Աստծու, ընդհատեց Քեորդ լրջութեամբ:

Սա թուիս դէմքով, խաժ աչքերով, սուր մօրուք, ջղոտ, նիհար աղայ մըն էր. մէկ հայեացքով կարելի էր հասկընալ գաւառացի լինելը:

Իսկ Վասակ սենեակի ճիշտ մէջտեղը կեցած՝ իր առանցքին վրայ կը դառնար մահճակալները, պահարանները, հայելիները, պատկերները դիտելով:

Երբ քննութիւնը աւարտեց՝ դեռ գլխարկը գլխին, հինկէկ հովանոցը թւին տակ, ձեռքերը ետին կապած, եկաւ կեցաւ երկու կարնեցուներին դէմը ու հեղնական շեշտով մը արտասանեց.

—Եւ կ'ըսէք թէ ժողովրդի մէջ պիտի երթաք ու ժողովրդի համար պիտի աշխատիք, հմ:

—Եղբայր, չտեսութիւնը մէկդի դիր. ըսաւ Բագրատ դէմքը ծամածռելով: Մէկ գլխարկդ հանէ, եկ՛ուր նստէ քովս մարդավարի. ու ես քեզի հասկըցնեմ, թէ յարմար, գեղեցիկ, մեր գեղադիտական պահանջներուն բաւականութիւնն աւող շրջապատի մը մէջ ասլորելը ո՛չ միայն իմ իդէալներուս չի հակառակիր, այլ կ'ամբողջացնէ:

—Հասկըցուր, նայենք, ըսաւ Վասակ բազկաթոռին մէջ նետւելով: Ի՛նչ ալ փափուկ է, շունչանորդին. հիմա այս փափուկ աթոռներուն մէջ պիտի նստիս իդէալներդ իրագործելու համար, այնպէս չէ. և գործը բոլորովին իդէալացնելու, կամ իդիլիացնելու համար աղջիկներէն մէկը մէկ քովդ պիտի նստեցնես, երկրորդը միւս կողմդ և երրորդն ալ... հա՛ հա՛ հա՛ հա՛...

Ու սկսաւ ամբողջ մարմնովը խնդալ:

—Կատակդ թէև տգեղ, բայց բոլորովին սխալ չէր: Քեզի հիմա միայն այս չափը ըսեմ, սիրելիս, որ կ'նոջ ազդեցութիւնը մարդու հոգեկան զարգացման մէջ ահագին է: Կոճղի մը պէս, սենեակի մը անկիւնը մեծնալը ուրիշ է, աղջիկներու շրջանին մէջ, կանացի շփման տակ, քնքուշ, հոգածու, փափուկ ձեռքի մը խնամքներուն տակ ապրիլը ուրիշ է: Այդ սրտի քնքշացում ըսել է.

զգացումներու նրբացում, ազնւացում ըսել է: Ինծի նայէ, մենակ մտածող գլուխ մը ունեցող մարդը ինձի համար մարդու իդէալը չէ. մարդ տրամաբանական մեքենայ մը չէ. զգացում պէտք է մեզի. արդէն շատ չոր է կեանքերնիս. ճաշակ պէտք է մեզի. բնութիւնը ճաշակել, կեանքը ճաշակել պէտք է գիտնալ. աշխատիլ ու ճաշակել՝ այդ է կեանքը: Նայէ չորսդիդ, ի՞նչ կոշտութիւն, ի՞նչ շահամոլութիւն, ի՞նչ կոպտութիւն, ի՞նչ անազնւութիւն է. ատոնց մէկ մեծ մասին պատճառը, ինծի համար, մեր անզգացութիւնը, մեր անճաշակութիւնն է, մեր մէջ եղած կնոջ դիրքն է: Պէտք է, պէտք է կուել ատոնց դէմ ալ. մի՛ մոռնար, որ սէրը դեռ ամօթի կարգն է մեր հասարակութեան շրջաններուն մէջ. սէրը, որ կեանքի բարձրագոյն հպարտութիւնն է:

—Տղանց, գլխուս բան մի՛ հասկըցըներ. ես բնաւ չեմ զարմանար, որ հոս ես եկեր: Իրաւ. այս ճոխ ու փափուկ բաները շատ չեմ սիրեր, բայց ուրիշ հարց է աղջիկները: Երիտասարդ, արբուն բոց ատենը. իրաւունք ունիք. ձեզի մեղադրողը ո՞վ է: Մինակ կը զարմանամ, Բագրատ, երբ գործը իդէալական, զգացական, ճաշակագիտական և չգիտեմ ալ ինչպիսի ցընդի-բընդի նրբութիւններով վերարկել կ'ուզես. երբ պարզ իրողութիւնը կեղծել կ'ուզես:

—Հերթը է. ընդհատեց Բագրատ ձեռքի հագարտ շարժումով մը: Ես քու առջևդ կեղծելու բնաւ կարիք չունիմ. ես կըսեմ այն, ինչ որ կը մտածեմ. մանաւանդ ընկերական շրջանի մէջ. դուն կ'ուզես հաւատն, կ'ուզես ո՞չ. այդ քու գիտնալիք բանն է. միայն այսչափը աղէկ հասկըցիր, որ այդ խօսքերդ ինծի վիրաւորել կրնան:

Վասակ թերահաւատ շարժումով մը դարձաւ Գէորգին.

—Ե՛յ, դուն ալ զգացումներդ նրբացնելու համար հոս եկար, թէ քսակդ. երևի հոգաբարձուները ամսականդ աւելցուցեր են:

—Ինծի Բագրատը խորհուրդ տուաւ. և շիտակը չափազանց ուրախ եմ:

—Անտարակոյս. փափուկ աթոռ, երեք աղջիկ:

—Նղբայր, վաղ անցիր այդ աղջիկներէն. մէկը դեռ տասնուամէկ տարու չի կայ. միւսը աջնքան հպարտ է որ մարդ աչքերուն նայելու կը վախնայ:

—Յւ վախնալու ալ իրաւունք ունի. այդ տեսակներէն վախնալու է:

—Այնպէս որ, շարունակեց Գէորգ, մինակ յոյնուհին է քիչ մը բաց, խօսող, խնդացող, բանի մը նման:

—Տեսնար, Բագրատ. ի՞նչ կ'ուզես ըսէ. արդէն Գէորգը իրենը ընտրեր է:

—Քու ըսածդ ի՞նչ է. վրայ նետեցաւ. Գէորգ տաքցած: Այն, եկեր ենք ուտենք, խմենք ու աղջիկներուն հետ քե՛ս ընենք. ըսէ, տեսնեմ, մեր ի՞նչը կը պակսի:

Պակսի. այդ ո՞վ ըսաւ. ընդհակառակը՝ կ'աւելնայ. այն ալ սիրուն, փափուկ, քնքուշ, նուրբ հակներ... Բագրատի ճաշակը նրբացընելու համար:

Երկուքը սկսան կոկորդալի խնդալ: Բագրատ ուզեց ինքզինքը զսպէ՝ չի յաջողեցաւ. ու ինքն ալ խնդալ սկսաւ:

Բ.

Դեռ ծիծաղը բոլորովին չէր աւարտած, որ դուրսը զանգաւը զարնեցաւ. ու պահմը վերջը դեռ տան դռան մէջէն լսեցաւ հնչուն առնական ձայն մը, որ բարձր ծիծաղի մը հեղհեղին մէջէն բարեկեց դուռը բացողը ու սկսաւ Ֆրանսերէն խօսակցիլ. մէկ կողմէն ալ մէջէմէջ իր բոլոր ուժովը.

—Գե՛ճ. պոռալով:

—Սարգիսն է. ըսաւ Գէորգ ու դուրս նետեցաւ:

—Ի՞նչ. ան ալ ձեզի հետ է. հարցուց Վասակ Բագրատին:

—Ո՛ր. բաց շաբաթը մէկ-երկու զիշեր մեզի պիտի անցնէ. առտունները այս կողմերը զործ ունի:

Այդ միջոցին սենեակի դուռը ետ հրեցաւ. և սեմի շրջանակին մէջ երեցաւ գիրուկ-միջահասակ, գեղեցիկ մարդ մը, կրոր, կարճ մօրուքով, ոսկի ականոցները քիթին, թւին տակ փաթթոց մը թուղթ. իր մէկ ոտքը թէև սենեակէն ներս, բաց դուռն իրեն դարձած կը խօսէր աղջկան հետ ու կը խնդար իր սուր, ամուր խնդուկովը: Խնդալով ալ այս կողմ՝ դարձաւ ու Վասակը նշմարելով բացականչեց.

—Հա՛. լաւ էք իրար գտել. խուփը դուրաւ, պոռկը դուաւ: Գե՛ճ, ըսէ ջուր մը բերեն. փո՛ւ, ի՞նչ տաք է այսօր, է:

Ֆէսը հանեց գլխէն, նետեց սեղանին վրայ՝ ձեռքի թղթերու

հետ. ինկաւ բազկաթուին մէջ, զլուխը յենեց, գոցեց աչքերը ու անշարժ մնաց:

—Այդ ինչպէս հոգներ ես, քան ես քաշել, ինչ է, հարցուց Բագրատ:

Սարգիս նորէն սկսաւ խնդալ՝ ցընցելով ամբողջ մարմինը և մարմնին հետ ալ ամբողջ բազկաթուը:

Աղջիկը լըւացւելու ջուր բերաւ:

Սարգիս ելաւ ոտքի, հանեց ժաքէթը, բաճկոնը, շապիկին օձիկը ու թւերը վեր քաշեց: Միւսնոյն ժամանակ անդադար ալը-տընջալով տաքէն, ճանապարհի ղառիվերէն, աղոց բնակարանի երկար սանդուղէն, զրաշարներու ապուշութենէն, իր նոր գնած կօշիկին նեղութենէն:

Գէորդ ջուր կը լեցնէր. իսկ Սարգիս կը լացուէր արդէն ահագին աղմուկով ու մէկ կողմէն ալ խմբագրին հետ ունեցած իր վերջին կռիւը կը պատմէր:

Սարգսի դէմքն ու մօրուքը ամբողջ օճառի փրփուրով ծածկուած էր, երբ յանկարծ լըւացելը ու իր պատմութիւնը ընդհատելով զարձաւ Բագրատին.

—Իրան, է, տես, ինչպէս ալ մոռցայ. Բագրատ, աչքդ լոյս. գործդ կարգին է, այսօր խօսեցայ Մինասեանին հետ. ամեն բան յարմարեցած եմ. կիրակի կ'երթաս, կը ներկայանաս հոգաբարձուներուն... ու՛ր, ջո՛ւր, աչքս օճառ դնաց:

—Ե՛, քեզի ո՞վ ըսաւ գործդ չլմընցուցած խօսքի սկսիս. ըսա՛. Գէորդ ջուրը լեցընելով:

—Ի՞նչ ըսելով հոգաբարձուներուն ներկայանամ. ինծի ո՛չ հրաւէր է եկած, ո՛չ բան. նկատեց Բագրատ:

—Տղայ, դեւ քու խելքդ գլուխդ չեկաւ. մոռցիր, մոռցիր այդ բաները. հոս այդ ապրանքը չի քշւիր:

—Նս այդ տեսակ պարսպ խօսքեր չեմ հասկընար. եթէ իրենց ուսուցիչ է պէտք՝ զոնէ ինծի պարզ նամակ մը թող գրեն: Ի՞նչ երթամ, մուրամ պիտի. «խնդրեմ ինծի պաշտօն մը, էֆէնդիմ»:

—Վասնի, զոնէ զոնէ այս խելօքին խօսք հասկըցուր. տես, ինչ պաշտօնական բառեր:

—Ո՛ր, պաշտօնական չէ. ես ինքս պաշտօնականութեան հա-

կառակ եմ. բայց կան խնդիրներ, որ պէտք է. այդ մարդիկը սովոր են ուսուցչի հետ ծառայի պէս վարւին. ճանչցընելու է վերջապէս անոնց իրենց չափը: Մինչև կարգին հրաւիրագիր մը չըստանամ՝ ոչ դպրոց կ'երթամ, ոչ հոգաբարձութեան:

—Այն ատեն մինչև Քրիստոսի գալուստը պաշտօն մը ստանալու սպասէ: Բարեկամ, քիչ մը վար իջի՛ր երկընքէն. ու չորս կողմէ նայէ. այդ քու ըսածներդ շատ սիրուն, բայց հասկըցողը ով է: Դուն միտքդ դրեր ես դործ տեսնես և հիմա, յիմար բանի մը համար՝ շինած, կարգի բերած գործս պիտի աւրես. տես, է, յիմարին. չես երթար՝ մեծ բան կ'ընես, կարծես անոր հոգն է. Կիրակոսն է եղեր, թէ՛ Մարկոսը. ձին չեղաւ, էշը կը կապէն ու կ'եւնեն մէկդի: Բագրատ գլուխը կախած սկսաւ մտածել:

—Բագրատ, խենթութիւն պէտք է, շարունակեց Սարգիս ծանր ու փաղաքշող ձայնով մը. դիտեմ իրաւունք ունիս, բայց առնելիք չունիս. գործ տեսնել ուզող մարդ այդ տեսակ մանր բաները պիտի չըմտածէ:

—Այդ տեսակ մանր բաներ. ո՛հ, այդ է ինձի կաողեցընողը, է. սրուաց Բագրատ ոտքի ցատկելով բռունցքը սեղմած: Գիտե՞ս, դեռ երկու ամիս չեղաւ Պոլիս ոտք դնելս. բայց իմ համոզումներէս քանի՛ այդպէս մանր բաներ ծալլեցի ու մէկդի դրի. ի՛նչ, կը տարակուսիս, անշուշտ այս ալ ծալլեմ պիտի...:

—Ի՛նչ ընենք, սիրելիս, յարմարելու է տեղին, ժամանակին:

—Յարմարելի, յարմարելի. տեղին, ժամանակին. ուրիշ խօսքով թափել մէջէդ այն ինչ որ սուրբ է քեզի համար. մաքրութիւնդ, ազնւութիւնդ սկզբունքներդ. նետել վրայէդ մէկիկ-մէկիկ մինչև որ հասնի կատարեալ յարմարումը, կատարեալ նոյնացումը. մինչև որ դուն ալ կը դառնաս այն հազարաւոր բարի մարդիկներէն մէկը, որոնցմով կը վիտայ մեր հասարակութիւնը, որոնք խլուրդի չափ կամք չունին, ոչ ալ մուկի մը չափ սկզբունք: Ե՛, խեղճ երազներս. իսկ ես կը կարծէի թէ մէջս ուժ կայ:

—Խեղճ, խեղճ երազներս. կրկնեց Վասակ կեղծ արփասող ձայնով մը. բայց չկրնալով ծիծաղը զսպել՝ սկսաւ փռնդտալ:

Նոյն միջոցին յոյնուհին ներս բերաւ սամավարը:

Գէորգ աղջկան ձեռքէն առնելով՝ սկսաւ երգել:

«Ամամվարի կանթն է ոսկի,
 Չայ բերողը չի դար խօսքի.
 Իր մէկ պաշը հազար ոսկի»:

Անոր միացան Վասսակն ու Սարգիսն ալ. ու դուրս եկաւ հիանալի տրիօ մը: Ամեն մէկը իր կողմը կը քաշէր:

Իսկ Բագրատի մօտեցաւ լուսամուտին, ճակատը կրթնցուց ապակիին ու աչքերը դուրս, մութին մէջ յառած՝ սկսաւ մտածել:

Երբ երգը վերջացաւ Վասակ մօտեցաւ Բագրատին, քաշեց թևէն ու կատակ մը ընել կ'ուզէր. բայց, տեսնելով անոր ղէմքի ցրւած ու տխուր արտայայտութիւնը, կանգ առաւ. լուրջ շեշտով մը ըսաւ.

— Ճշմարիտ որ մարդիկ շատ յիմար են. կարծես իրենց չարանք կը պակսի. կարծես աշխարհի վրայ մտառանջութենէն զատ ուրիշ բան կայ, և ահա չեղած տեղէն նոր մոմաուքներ ու հոգեր ալ հնարել կ'ուզեն: Իսկ դուն մասնաւորաբար խորանարդ յիմար ես. նախ յիմարութիւն մը՝ իդէալ ունենալը. երկրորդ աստիճանը՝ ցաւիլ այն ատեն, երբ դեռ կորսնցուցած ալ չես: Երանի չէ՛ր, որ մէջդ եղած այդ բոլոր ցընդաբանութիւնները մէկէն կորսւէին: Իդէալ. ինչ է այդ պարապ բառը, որուն տակը իմաստ չի կայ. շիններ էք պէպէք մը, դրեր էք վերը ու առջևը կ'երկրպագէք. ճիշտ, ինչպէս որ ժողովուրդները իրենց համար ասուածներ են հնարեր, ու իրենց հնարած ասուածները իրենք ալ կը պաշտեն. սակայն...

— Վերջ տուր, ըսաւ Բագրատ կտրուկ ձայնով մը. թոթաւեցաւ ու մօտեցաւ սեղանին, որու շուրջը նստէր էին միւսները և որուն վրայ սամավարը կը ֆըշ սր:

— Ուրեմն վերջացած է. ըսաւ Գէորգ ուրախութեամբ. է, Բագրատ, հիանալի դպրոց մը պիտի ունենանք. ամեն բան մեր ձեռքը, անկախ. տղայքը սրամիտ. դպրոցը նոր, յարմար, ծովուն դէմ:

— Այո՛. ես ալ հիմա ճիշտ այդ կը մտածէի. ուրիշ տեղ դժւար է այս բոլոր պայմանները իրարու կից գտնելու: Լո՛ւրջ, լո՛ւրջ գործ տեսնելու է. և որքան ընելիք կայ. ուսուցիչները պատրաստել, առաջնորդել անոնց, աշակերտներուն հոգի տալ, կամք առաջաց-

նել, ոգևորել. ծրագիրները պատրաստել. կազմել զասերը, մատենադարանը հոգալ. ընթերցանութիւնը, շարադրութիւնը. ա՛յ, ոչինչ ոչինչ չի կայ. ամեն բան ճայրէն պէտք է սկսել: Աւհ, վերջապէս. մէկ գործի մէջ նետուիմ. ոտքով, գլխով. առաւելնէ մինչև իրիկուն շաբաթման, կեսնօրի, ներշնչման ու աշխատանքի մէջ. որ կը մտածեմ՝ ուրախութենէս սիրտս կը ցատկէ: Նետուիլ այդ անմեղ, մոմէ սրտերուն մէջ. սիրել, սիրելի ու մարդ պատրաստել. մարդ, անհատական մարդ, ամուր մարդ. որոշ ձգտումներով, կեանքը վալլելու և ուրիշներին վալլեցընել տալու տենչանքովը բըռնկած, ա՛յ, որ մէկը ըսեմ:

Այս տղան շնորհքով խենթ է. ըսաւ ծիծաղելով Սարգիսը. քիչ մը առաջւան տախտակաւորացութիւնդ, թէ հիմուկւան ոգևորութիւնդ:

—Այո՛. նախ ուսուցիչներէն սկսելու է, գործին արմատը հոտ է. կը շարունակէր Բագրատ կարծես ինքն իրեն. այս իրիկուն նըստիմ դասախօսութիւններու ծրագիրը պատրաստելու աշխատիմ. մինչև շաբաթ...

—Տղայ, քիթդ քիչ մը ամոնեակ քաշէ, որ խնկդ զուխդ գայ. ընդհատեց Վասակ: Խեղճ Գեորգ, ես մինակ քեզի կը մեղքընամ: Երեք չէ, որ երեք անգամ երեքի եռապատիկը աղջիկ ալ որ լինի տան մը մէջ, նորէն հոն ապրիլ չլինիր այս տեսակ գժի հետ. երկու ամիս չանցած մարդ կամ մեծ կղզին երթալու կը հարկադրւի իր ջշային զրգուումը կազդուրելու համար, և կամ ուղղակի Փրկչի հիւանդանոցը իր ուզեղի խախտած մասերը նորոգել տալու համար:

Բագրատ չէր ըսեր. իր մտածումներուն մէջ թաղւած՝ արագ կ'երթէկէր սենեակին երկայնքովը:

Գ.

Քանի մը շաբաթներ անցեր էին այդ իրիկունէն և Ղալաթիայի յայտնի ապարտմանի երկրորդ յարկի սենեակին մէջ կեանքը կատարեալ զեղման մէջ էր:

Կեանք մը, որուն եռումը ամէնէն տաջ և ամէնէն աւելի Գեորգի համար զգալի էր:

Գեորգ Կարնի ազգային վարժարանը հալիւ էր աւարտած, որ ինկաւ իր տարեկիցներու շրջանին մէջ. և վերջին խառնութիւններու ատեն լսնաւարկեցաւ իբրեւ «Ժողովրդեան անդորրութիւնը վրդովող»: Իր հարուստ ազգականները թէեւ կերպ մը տղան բանաէն հանելու յաջողեցան, բայց յամենայն դէպս լաւ համարեցին, որ առ ժամանակ մը իր ծննդավայրէն հեռու մնայ: Եւ Գեորգ եկաւ Պոլիս, դեռ հազիւ քսան տարեկան: Նախ մտածեց դպրոց մը մտնէ իր ուսումը շարունակելու. բայց դրամական դժւարութիւններ ու իր տարիքը արգելք եղան. ուստի մտածեց նորէն դպրոց մտնէ, միայն այս անգամ ոչ թէ սովրեւել, այլ սովրեցնելու համար: Վճռեց ուսուցիչ լինել, և մասնաւորաբար Սարգիսի ազգեցութեան տակ:

Սարգիս, որ գրեթէ նոյն պայմաններուն մէջ Վանէն Պոլիս էր եկած ու ուսուցչութիւն սկսած, կարճ ատենուէն մէջ յաջողած էր իր զարգացման համար բաւական գործ տեսնելու. միւս կողմէն ալ սկսած էր գրականութեամբ զբաղուիլ, այնպէս որ 8—9 տարեան մէջ Պոլսի օրագրութեան մէջ յայտնի դիրք մը գրաւած էր: Վերջին ատենները բոլորովին ձեռք վերցնելով ուսուցչութենէն՝ ամբողջովին հրապարակասօսութեան նւիրեր էր ինքզինքը: Սարգիս Պոլսի մէջ շատ բան դիտեց, սորւեր ու փոխեր էր. միայն իր սիրտը միշտ կապւած էր քնացեր իր հայրենիքին՝ որ միշտ կարօտով կը չլիշէր: Եւ կարծես կերպ մը իր պանդխտութիւնը մոռնալու համար ինքզինքը միշտ գաւառացիներով կը շրջապատէր. իր մէկ ոտքը խաներն էր: Եւ հոն էր, որ հանդիպեցաւ Գեորգին ու առաջին տեսութենէն իր խնամքին տակը առաւ. իսկ Սարգիս խնամքը Գեորգի համար շատ թանկագին էր. որովհետեւ ան գրէթէ բոլոր Պոլսի ջոջերուն հետ յարաբերութիւն ունէր, բոլոր դրագէտները, բոլոր քիչ թէ շատ ազգեցութիւն ունեցող մարդիկը կը ճանչնար. ոչ միայն կը ճանչնար, այլ և տեսակ մը ազգեցութիւն էր ձեռք բերեր անոնց վրայ իր յանդուգն, անկախ, ազնիւ ու ամուր բընաւորութեամբը:

Գեորգ նախ չէր համարձակած Պոլսի պէս քաղաքի մը մէջ ուսուցչութեան պաշտօնը յանձն առնելու. բայց Սարգիս համոզումներուն ենթարկւած՝ վերջապէս վախժիտելով դպրոց մը մտաւ, իբ-

րև մնայուն ուսուցիչ «վարի» կարգին: Սակայն որքան եղաւ զարմանքը, երբ հետզհետէ սկսաւ նկատել, որ ամբողջ դպրոցին մէջ սկսած էր դիրք մը գրաւել. ոչ միայն փոքրիկներէն, այլ և բարձրագոյն դասարանի աշակերտներէն սկսաւ սիրելի. պարզ էր, անկեղծ անձնւէր ու ոգևորւած. մեծ աշակերտները զբօսանքի ժամանակ միշտ իր շուրջն էին, որոնց կը պատմէր գաւառի կեանքէն. միշտ կը խաղար անոնց հետ: Միւս կողմէն ալ նկատեց, որ իր պաշտօնին մէջն ալ ոչ միայն անկարող չէր, այլ և Պոլսի մէջ եղած բոլոր իր նմաններին բարձր. գոնէ խղճի մօտ զասերը նախապէս կը պատրաստէր, ամէն կերպ կ'աշխատէր տղոց օգուտ տալու. ինքը ճարպիկ տղայ՝ սկսաւ հոս ու հոն. ացցելել, դիտել միւսները, հետզհետէ ինքզինքը սրբագրել. սորեցաւ քանիմը մանկական երգեր ու խաղեր. Աովկասէն քանիմը մանկավարժական գրքեր բերել տւաւ, թէև ոչինչ չհասկնալով մինչև վերջը առաջին երեսին վրայ մնաց. իր փորձերէն սկսաւ օգտուիլ. իրեն համար դասաւանդման եղանակ մը յարմարցուց. և այս բոլորի հետևանքը այն եղաւ, որ տարի մը չանցած Ս. Թաղին մէջ յայտնի էր, իբրև լաւ դաստիարակ ուսուցիչ, որ «նոր մեթոդներով» աշակերտները կը կրթէ. դպրոցին մէջը ձայն ունէր. անտեսէն բռնած մինչև հոգաբարձուները կը յարգէին ինքը և խաթրէն չէին ելներ. աշակերտներուն սիրելին էր:

Դպրոցէն դուրս բացառապէս մէկ-երկու ուսուցչի հետ մօտիկ ծանօթութիւն ունէր. կը պտտէր անոնց հետ. և կամ սրճարանը նարդ կը խաղար, ուրն մէջ անպարտելի էր ճանչցւած: Իսկ քիչ մը աւելի ազատ ժամանակ գտածին պէս՝ խաներն էր, համալներուն քով, որոնց հետ կը կարդար, կը վիճէր, կ'երգէր ու չափազանց կ'ազդէր. մէկ երկրացի, իրար ցաւերէ հասկըցող, մէկէ աւելի կապեր ունէին իրարու հետ:

Գիշերները կը պառկէր դպրոցը իր մասնաւոր սենեակին մէջ՝ կատարելապէս չոր պանդուխտի կեանք մը վարելով: Իբրև ընտանիք չաճախ կ'երթար Սարգսենց տունը՝ Գաղը-գիւղ, ուր երբեմն գիշերներն ալ վար կը դնէին:

Այսպէս անցաւ երկու-երեք տարի միշտ. նոյն կեանքն էր ամէն տեղ, թէև քանի մը անգամ դպրոցները փոխեց զանազան պատճառներով:

Օգոստոսի սկիզբները սիրուն առաւօտմբն էր, որ դպրոցին տնօրէնը Գէորգի դասարանը մտցուց վայելուչ երիտասարդ մը, որուն արտասանած առաջին խօսքէն Կովկասէն լինելը կը մատնէր: Երիտասարդը ներկայ եղաւ Գէորգի դասին, ու վերջը քանի մը նկատողութիւններ ըրաւ անոր կատարեալ պարզմտութեամբ. միւս կողմէն իր ուրախութիւնը յայտնելով Գէորգի սիրալիր ու ոգևորւած աշխատութեան համար: Գէորգի վրայ շատ մեծ տպաւորութիւն ըրաւ երիտասարդի այդ պարզ ու անկեղծ վարմունքը. և անոր համեստութենէն աւելի գրաւեցով՝ սկսաւ աւելի մօտէն հարցեր տալ, ուրկէ դուրս եկաւ, որ պարոնը իր ուսուցչը Ռուսաստան աւարտած էր, եկած էր Պոլիս առժամանակ հոն ուսուցչութիւն ընելու, կրթական կեանքին ու գործերուն նախապէս կեդրոնին մէջ ծանօթանալու համար, ուրկէ մէկ կամ երկու տարիէն անցներ պիտի իր ծննդավայրը Կարին... Կարին, Գէորգի ոտքը գետնէն կորեցաւ. նոր հարցեր յաջորդեցին իրարու, և երկուքն ալ իրարմով այն աստիճան սկսան ոգևորուիլ, որ խեղճ տնօրէնը իր հոն բոլորովին աւելորդ դէմք մը լինելի զգալով՝ կամաց մը դուրս սուրբեցաւ:

Այդ վայրկեանէն Գէորգն ու Բագրատը իրարմէ անբաժան էին: Բագրատ Գէորգի համար դարձաւ հեղինակութիւն մը գիտական ու մանկավարժական ամեն խնդիրներուն մէջ. Գէորգը Բագրատին համար թարմ ու առողջ ուժ մը, որ կարելի էր զարգացնել ու գործադրել. իսկ երկուքը իրարու համար բաղդակից հայրենակիցներ ու նպատակակից ընկերներ:

Բագրատ առաջի օրերէն սկսաւ դրդել Գէորգը, որ թողնէ իր խլուրդի ծակը, դպրոցին փոշիները ու շնորհքով տեղ մը, ընտանիքի մը մէջ ապրի: Իսկ երբ վերջնականապէս իր Պոլիս մնալը վճռեցաւ, ինքը աշխատեցաւ, որ միասին դպրոց մը լինին՝ Փլնտըւեց, ու Սարգսի միջոցով գտաւ Ն. արւարձանին դպրոցը: Եւ երբ դպրոցի գործը արդէն յաջողուելու վրայ էր՝ ինքը եկաւ սենեակը վարձեց ու Գէորգն ալ քովը քաշեց:

Այն օրէն այդ սենեակը տեսակ մը կեդրոնատեղի դարձաւ որոշ խումբ մը երիտասարդներու. մեծ մասով գաւառացի ուսուցիչներ:

Շաբաթը մէկ-երկու գիշեր կը ժողովէին հոն, որ սովորաբար «գուրսեցիներուն սենեակը» կ'անուանէին:

Այդ գիշերը տարօրինակ կեանք մը կ'առնէր սենեակը:

Ամեն դիւսէ ճաշն մը կ'եղնէր. կը պուպկէին, կը ցատկէին. ձեռքի ու խօսքի կատակները վերջ չունէին. սենեակին մէջ ոչ մէկ իր իրեն տեղը չէր փնար: Մէկ ալ տեսար կը բըռնէր վէճը. մանկավարժութիւն, դպրոց, լրագրութիւն, գրականութիւն, ընկերական-հասարակական խնդիրներ— ոչ մէկը հանգիստ չէր փնար, կը քաշէին մէջ ու անվերջ կը ծեծէին: Վէճերուն աւելի կրակ կուտար քոնեակով թէյը. իսկ թէյի գոլորշիներուն հետ երգերը կը բարձրանային. արևելեան քնքուշ, ծածուկ մաշող սիրոյ երգերը. ցաւի ու հալածանքի տխուր, դառն երգերը. ժողովրդի ընկճած կեանքին, վշտոտ օրերուն մեղամաղձիկ բողոքը: Եւ տղայքը աւելի կը գըրգըռէին, արիւննին կ'եռար, զգացումները կը յուզէին, ու խօսակցութիւնը աւելի մտածկոտ, աւելի լուրջ ու աւելի կծու շերտեր կ'առնէր: Ու զայրոյթի, յոյսի, վրէժի վէճերը նորէն կը բորբոքւէին. և կէս գիշերուան մօտիկ՝ ընդհանուր, կենսալից աղմուկը հազիւ տեղի կու տար դուրսի տիրող խաղաղութեանը:

Դ.

Այս բոլորը տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընէր սկիզբները Ֆրանսացիներուն վրայ. բայց շուտով վարժեցան այդ «կրակոտ» հայերուն, ինչպէս կ'ըսէին. և ոչ միայն վարժեցան, այլ նոյն իսկ սկսան աւելի մոտերիմ յարաբերութիւններ: Բազրատ իր լուրջ պարզութեամբ, Գէորգ իր միամիտ պարզութեամբ մեծ ազդեցութիւն գործեցին: Տանտիկինը իր զաւակներուն պէս կը սիրէր և ամեն կերպ գոհացնելու կ'աշխատէր: Իսկ աղջիկները արդէն մէկ ընտանիք դարձեր էին՝ Գիշեր, ցորեկ բաց էր տղոց սենեակը. զգրոց, դարան՝ ամեն բան աղջիկներու խնամքին տակն էր:

Տանտիկնոջ մեծ աղջիկը Լուիզ աւելի լուրջ էր ու ծանր. արդէն ժամանակին մեծ մասը նւիրած էր իր դաշնակին. դաշնակի դասեր կուտար: Քսանի մօտիկ, երկար, առատ շագանակադոյն մագերով, մութ աչքերով, մաքուր-ձերմակ դէմք մը. ծննդին տարօրինակ սպէս գեղեցիկ սրութիւնը և շրթունքներուն կոր, զիւթիչ զիծը մասնաւոր հմայքով մը մարդու աչքը կը գըգըէր: Ինքը բացառապէս Ֆրանսերէն կը խօսէր, մինչդեռ միւսները յաճախ տաճ-

կերէն ալ կը խառնէին, մանաւանդ սկիզբները, երբ Գէորգ բնաւ չէր հասկընար: Տղոց հետ թէև միշտ պարզ ու անկեղծ կը վարէր, սակայն միշտ իր բարձրութիւնը պահել զիտէր: Բագրատ, իբրև աւելի զարգացած, բնականօրէն աւելի մօտ էր աղջկան, որ յաճախ տղու օգնութիւնը կը խնդրէր իր ընթերցանութեան խրթին կէտերուն: Նոյն իսկ երբեմն իրիկունները միասին կարգալու սովորութիւնը մտաւ անոնց մէջ, մանաւանդ այն իրիկունները, երբ Բագրատ առանձին կը լինէր ու իր սովորական աշխատութիւններուն տրամադրութիւն չէր ունենար: Այդ ընթերցանութիւնները երկուքի համար ալ հաճելի էին. մտքերու այդ ազատ փոխանակութիւնը երկուքին ալ զարճութիւն կը պատճառէր:

Լուիզի փոքր քոյրը՝ Օգիւստոս՝ ասանըմէկի մօտիկ չարաճճի աղջիկ մըն էր. ծիշտ քրոջը զէմքը. տարօրինակ աղմկոտ, կեանքոտ էակ մը. երբ իրիկունները դպրոցէն կը դառնար՝ կարծես մէկէն տունը կը լեցւէր. ծիծաղ, կըղււտութիւն, երգ, ուտում: Առաջին օրէն տեսակ մը տարօրինակ համակրութիւն ինկաւ անոր ու Բագրատին մէջ. աղջիկը ամեն կերպ տղուն հաճոյանալու կը ձգտէր. Բագրատ ալ շարունակ հետը խաղի կ'իլնէր, քնքուշ զգացում մը ունէր զէպի այդ փոքրիկ չարաճճին ու յաճախ կը համբուրէր:

Օգիւստոսի աւելի հասուն ձևն էր Ելէնին՝ յոյնուհին, որբ աղջիկ մը, որ մանկութենէն ինկած էր տիկնոջ ձեռքը և անոր քով մեծցած էր անոր աղջիկներուն հաւասար: Տասներեթը-տասներութը տարեկան, սև աչքերով, կարճ, բաց գոյնի մազերով, ակորժելի կարմիր աչակերով, արտասովոր լեցուն կրծքով աղջիկ մը: Առւըսընէ մինչև իրիկուն ոտքի վրայ էր. տարօրինակ կերպով բաց, խօսուն, ծիծաղկոտ, աղմկասէր արարած մը: Լեցուն, յորդած կեանք մը, որ կարծես իր ամանին մէջ չէր սղմեր. կ'եռար. աչքերուն մէջ միշտ կրակոտ արտայայտութիւն մը, հաստ շրթունքները միշտ կիսաբաց:

Տղոց այդ տունը մոտձ օրէն շարունակ անոնց շուրջը կը զառնար. անդադար, զանազան պատրասկներով կը մոնէր սենեակին ամենամանջարմար ժամանակներ, անդադար կը շաղակրատէր. իր շարժումներն ալ, իր խօսածքին պէս, բաց էր ու անփոյթ:

Նոյն իսկ առաջին օրէն խոր տպաւորութիւն մը ըրաւ Գէոր-

դին վրայ: Խեղճը իր տնտեսի ընկերակցութենէն յանկարծ նետուած էր այդ աղջիկներու շրջանին մէջ. Ելէնին պէս աղջկան մը հետ գիշեր ցորէկ: Աղջկան համար ալ գէշ չէր Գէորգի խոշոր, խաժ աչքերը, որոնց մէջ գաւառացիի կրակը կար, անոր առողջ, ջղոտ կազմածքը և երկար, նուրբ պեխերը:

Շաբաթ մը չէր անցած, որ երկուքը իրար բարեկամ էին դարձած արդէն: Իրիկունները միասին սամովարը կը պատրաստէին և յաճախ խոհանոցը երկար խօսքի կը բռնւէին: Ալ ամէն իրիկուն սովորութիւն եղաւ օրւան բոլոր դէպքերու մասին իրարու պատմելը, կատակելը ու խնդալը. կամաց կամաց իրարու խօսք նետել սկսան, իրար հնգնել ու ծաղրել. իսկ հոսկէ միայն քայլ մըն էր ձեռքի կատակին անցնելու համար: Իրար ձեռքէ բան մը կը խլէին, կը զարնէին իրարու, կը վազէին իրար ետեւէ ահագին աղմուկով. այս քաջագործութիւններուն կը մասնակցէր յաճախ և աղմկասէր Սիւստան, և կարելի է երեւակայել, թէ ինչ ճրճըւոց ու վայնասուն կը բարձրանար. դուռները թափով կը բացւէին ու կը գոցւէին: Եւ, երբ երբեմն Գէորգ աղջիկներէն փախչելով կը մտնէր իրենց սենեակը ու դուռը կը կողպէր, Բագրատ կը պոսար երեսին՝ պահ մը գրիչը ձեռքէն վար դնելով:

—Այս ինչ խաչտառակութիւն է. մէկ կեցիր զոնէ ամիսը լրանայ, է:

Որուն սովորաբար Գէորգ կը պատասխանէր.

—Նղբայր, քեզի ինչ ըրած ունիմ. գիրդ գրէ դուն. դուն փիլիսոփայ մարդ այս տեսակ բաներէն ինչ կը հասկընաս:

Եւ իւրաքանչիւր կատակ բան մը կ'աւելցնէր Գէորգի ու Ելէնիի զգացումներուն: Այդ իրարու սեղմումները, իրար ձեռքէ քաշքըշուկը նոր տպաւորութիւններ կուտար անոնց: Գէորգ դպրոցը յաճախ տան մասին կը խորհէր և իրիկունները ըստ կարելի ոյն շուտ տուն կը վազէր և դեռ տան սեմէն կատակները կը վերսկսէին:

Գէորգ իր ըրածը չէր հասկնար. այդ կեանքը, որ կը վարէր, երազ մը կը թւէր իրեն, անուշ երազ մը. և ան ոչ կը մտածէր, ոչ ալ պէտք կ'ըզգար այդ երազէն արթննալու: Երբեմն իր ըրածներէն ինքն ալ կը զարմանար ու կ'ամհնար: Սր մը հայելիին առջև աղջկան մեղալիօնը գտաւ, որ աղջիկը սովորաբար վիզը կը կրէր.

առաւ ձեռքը ու տեսակ մը նախանձով սկսաւ երկար դիտել և այդ անշունչ, մինիսիկ առարկան իրմէն շատ ու շատ աւելի երջանիկ կը համարէր և վայրկեան մը բոլոր սրտէն ցանկացաւ, որ ինքն ալ յանկարծ գերբնական զօրութեամբ մը այդ փոքրիկ մեղալիօնին վերածւէր ու աղջկան վզէն կախւէր. բայց իսկոյն ինքը իր մտածման վրայ խնդաց ու զարդը ձեռքէն վար դրաւ։ Անգամ մըն ալ աթոռ մը բերելու համար աղջկան սենեակը մտնելով՝ մահճակալին վրայ ինկած դտաւ աղջկան քորսէն. անդիմադրելի հետաքրքրութեամբ մը վերցուց ու սկսաւ ուշադրութեամբ դիտել պալէնները, կարւածքը, եզերքի ժանեակները, ծիծերուն դուրս փորւածքը։ Քորսէն բուրող հոտ մը սկսաւ ջիղերը դրգուել. Գէորգ աւելի լաւ հոտ մը տալու համար մօտեցուց դէմքին և յանկարծ իր կամքին հակառակ՝ բոլոր ուժովը սեղմեց ու իսկոյն ետ քաշեց. վախով նայեցաւ շուրջը, կարմրեցաւ, նետեց քորսէն նորէն անկողնին վրայ, խլեց աթոռը ու սենեակէն դուրս փախաւ։

Իրիկուն մը Բագրատ գործով մը դպրոցը ուշացած էր. և Գէորգն ու Էլէնին իրենց սենեակը առանձին էին. սովորական շրջանով խօսքը—հեգնելու, հեգնութիւնը—կատալի, կատակն ալ կըղււղտուքի էր անցած։ Գէորգ աղջկան ձեռքէն խլած էր անոր գըզրոցին բանալիները և կ'ըստառնար այլ ևս չի վերադարձնել մինչև որ անգամ մը մանրամասն խուզարկութենէ չանցնէ աղջկան իրերը։ Աղջիկը նախ խնդրեց, ետքը սկսաւ պահանջել ու վերջապէս սկսաւ թեւերէն քաշքըշել ուժով առնելու համար։ Գէորգ բանալին հասակը ներածին չափ զլխէն վեր բռնած՝ կը խնդար. մինչ աղջիկը բոլոր ուժովը ճիգ կը թափէր բանալիին հասնելու. մէկ ձեռքով տղու թեւին փաթթւած, միւսով շարունակ վեր կը ցատկէր, կը քաշէր, կը սեղմէր։ Տղան անուշ հեշտանք մը կ'ըզգար ամեն անգամ, երբ աղջկան թեւերը, կուրծքը իր դէմքին ու ուսին վրայ կը սահէին. կը դողար։

—Տո՛ւր բանալիս, թէ չէ կը խածնեմ, ճշմարիտ կը խածնեմ. կը կրկնէր աղջիկը ակռաներուն մէջէն։

—Խա՛ծ. կը խնդար Գէորգ աւելի զրգռելով։

Աղջիկը ետ քաշւեցաւ, վայրկեան մը դիտեց ու յանկարծ, կառուի մը պէս, ցատկեց տղու վրայ, փաթթւեցաւ ու պինդ մը խածաւ բարձրացուցած թեւը ուսին մօտիկ։

Գէորգ աղջկան այտը իւր դէմքին վրայ զգաց. և ալ առանց ուշք դարձնելու թեի սոսկալի ցաւին, ազատ ձեռքովը աղջկան գլուխը շրթունքներուն սեղմեց ու սկսաւ համբուրել:

Էլէնին ցնցւեցաւ. զայրացած գլուխը ետ քաշեց, ակռաները սեղմած, հազիւ շնչել կարողանալով՝ հարցուց.

— Ինծի ինչո՞ւ համբուրեցիր. քեզի ո՞վ ըսաւ, որ ինծի համբուրես:

— Դուն ինծի ինչո՞ւ խածիր. պատասխանեց Գէորգ խնդալով:

— Ինծի ինչո՞ւ համբուրեցիր. պատասխան տուր. կրկնեց աղջիկը ակռաները աւելի սեղմելով:

Գէորգ անձարակցաւ. մօտեցաւ քաղցրութեամբ.

— Խաւ, նեղացա՛մ, բարկացա՛մ ըրածիս. կ'ըսէր:

— Ինծի ինչո՞ւ համբուրեցիր. քեզի բան կը հարցնեմ, կրկնեց Էլէնին ոտքը գետին զարնելով, աչքերը տղու աչքերուն դամած ու բոլոր ուժովը բռունցքները սեղմելով:

— Բայց կը սիրեմ քեզի:

— Կը սիրես ինծի. ստախձս. մըմնջեց ու տղու երեսին ամուր ապտակ մը փակցուց:

Գնաց դէպի դուռը, կանգ առաւ դարձաւ ետին, պահ մը նայեցաւ քարացած Գէորգին ու անոր իր ապտակէն վառւող այտին. և յանկարծ ետ ցատկեց ու ակռաներուն մէջ անհասկանալի բառ մը մընջալով՝ իր ճապուկ թեւերուն բոլոր առանձկականութեամբը տղուն վիզը փաթթեցաւ ու սկսաւ անձրեւի պէս համբոյր տեղալ:

Գէորգ սարսուաց կրքի այս տարափին տակ ու զրկեց:

Հազիւ աղջիկը դուրս փախաւ, որ Գէորգ ուժասպառ ինկաւ բազկաթոռին մէջ. պահ մը անշարժ մնաց. այտերը կ'աչրէին. ջիշեց ապտակը ու աչն ծծող, լեցուն, ուժեղ շրթունքներուն ջերմ փաղաքշանքը. և ներքին ճմլումէն ոտքի ցատկեց:

Առաւ գլխարկը ու դուրս նետւիլ կ'ուզէր, որ սեմին վրայ երևցաւ Բագրատ:

Գէորգ նետուեցաւ ընկերոջը վիզը խենթի պէս համբուրելով:

— Խէր լինի. խենթեցա՛մ, Գէորգ, ինչ է պատահեր. կը հարցընէր ազան զարմացած՝ անոր տաք համբոյքներուն տակ հազիւ խօսելու ժամանակ դռնելով:

— Բայց ի՞նչ կայ, ինչո՞ւ համար է այս, կը կրկնէր:
 — Անոր համար, որ դուն բարի, աննման տղայ մըն ես:
 — Տէր ողորմեա. այդ նոր միտքդ ինկաւ:
 — Ա՛յ, Բագրանոյ, եթէ զիտնաս սրբան ուրախ եմ:
 — Այդ կը տեսնեմ. բայց ի՞նչ է պատահեր. ինչո՞ւ համար:
 — Է՛, ի՞նչպէս հասկըցնեմ. վարանեցաւ Գէորգ:
 Եւ յանկարծ զաւառացիի սլարզմիտ կոշտութեամբ.
 — Էլէնին պագի. ըսաւ ու մութին մէջ աներևոյթ եղաւ:
 Բագրատ ժպտեցաւ. յիմար, ապուշ ժպիտով մը, որ ո՛չ պատ-
 ճառ ունի, ո՛չ արտայայտութիւն:

Գնաց նստեցաւ զոց պատուհանի առջև. ու սկսաւ դուրսի
 մթութիւնը դիտել մտածկոտ. միշտ նոյն ապուշ, փիլիսոփայական
 ժպիտը շրթունքին:

Է.

Նոյեմբերի հով առաւօտ մըն էր:
 Լիաթոք ծծելով թարմ օդը՝ արագ-արագ դէպի կամուրջ
 կ'իջնէր Վասակ:
 Վասակ ալ երկար ատեն չէր, որ Պոլիս կը գտնէր:
 Ինքը բուն արապիզոնցի էր. կարող ընտանիքի զաւակ. իր
 ուսումը ստանալու ուղարկած էր Թիֆլիս Ներսէսեան վարժա-
 րանը, ուր իրար յաջորդող խռովութիւններուն միշտ մասնակից՝
 վերջապէս վաճառած էր վերջընթէ՞ր դասարանէն: Տարւան մը չափ
 պարապ Թիֆլիսի փողոցները չափաւրեցին վերջը՝ վերադարձաւ
 Տրապիզոն: Երկու տարիի չափ ալ մնաց իրենց տանը և ժամա-
 նակին մեծ մասը ագարակը կ'անցնէր: Թէ Թիֆլիս և թէ տանը
 կը կարդար շարունակ ինչ որ ձեռքը հասնէր. վերջերը մասնաւոր
 հակում մը ստացած էր դէպի բնական գիտութիւնները՝ դէպի
 դարւինիզմ:

Տրապիզոն քաշած կ'ապրէր ու շատ քիչերուն հետ յարաբե-
 րութիւն ունէր: Վերջապէս ձանձրացաւ այդ կեանքէն ու մտածեց
 Պոլիս երթալ: Ծնողքը ուրախութեամբ համաձայնեցան, յուսալով
 որ «ուսումնական» տղանին հոն վերջապէս գործի մը կը փակչի:

Զէքերը ամսէ ամիս կանոնաւորապէս Պոլիս կ'երթային. բայց

տղանին գործի մը փակած լինելու լուրը Պոլէն գալու կ'ուշանար միշտ:

Վասակ արդէն եօթը ամէն աւելի է Պոլիս էր: Առաջին օրերը նոր կեանքի մէջ կարծես նոր տպաւորութիւններ ստացաւ. բայց այդ նորութիւնը անցաւ շատ շուտով. ու նորէն քաշեցաւ իր Պերա վարձած խցիկը և կարդալու վերսկսաւ: Իսկ կարդալէն բաց մնացած ժամանակն ալ Պոլսի շրջակայքը պտտելով կ'անցնէր:

Նոյեմբերի այդ առաւօտն ալ նմանապէս պտոյտի էր ելած:

Երբ գաւազանը խաղցնելով՝ իր ճամբան խաչաձևող փողոց մը մտաւ՝ դէմ ու դէմ գտնուեցաւ Բագրատի ու Սարգսի հետ, որոնք տաք-տաք խօսակցելով նոյնպէս դէպի կամուրջ կ'իջնէին:

— Փահ, ըրաւ Վասակ՝ կանգ առնելով:

— Այս ուր բարով, Պերայի երկրաչափ. հարցուց Բագրատ քրմ-ծիծաղ:

— Կղզի. քիչ մը մաքուր օդ ծծեմ. իսկ դուք:

— Մենք քեզի պէս ազատ մարդ չենք. պատասխանեց Սարգիս: Ե՛ս տպարան, ան դպրոց: Հնչ, նոր յօլւածս տեսնը:

— Ոչ միայն տեսայ, դեռ կէսն ալ կարդացի:

— Վնչ, այդչափ ժամանակ ուրկէ ես գտեր:

Երէկ գիշեր քունս չտարաւ. լրագիրը ձեռքս առի, որ քունս գայ. քու յօլւածիդ կէսին էի, որ քնացեր եմ:

— Հ'րմ. երևի շատ բան հասկըցած կը լինիս. ըսաւ Սարգիս հեգնօրէն:

— Գրածդ ինչ է, որ ինչ հասկընամ, է. եղաւ պատասխան: Խենթին մէկը ելեր է քանի մը տասնեակ ցնդաբանութիւններ է գրեր. այն ոտաւոր ցնդաբանութիւններէն. ոտանաւոր կ'ըսէք, ինչ է: Ուրիշ խօսքով որքան ապուշ, չհասկըցած զաղափարներ ու մտածումներ որ կան խելապառակին մէջ՝ գրի է անցուցեր. զարդարեր է այդ բոլորը ըստկարելւոյն անբնական դարձեալներով, առտառոց բառերով. և հայտէ, տարեր է տպարան, որպէս զի դուք ամենքդ ալ այդ ուղեղի փսխունքը վաշելիէ չի զրկւիք:

— Լաւ, մարդուն գրքոյկը կարդացեր ես, որ այդպէս կը խօսիս. ընդհատեց Սարգիս:

— Զէ, բարեկամ. այդ տեսակ բաներ կարդալու չափ ալ ապուշ

չեմ՝ զեռ. բանաստեղծութիւն չէ՞ անունը. հերիք է, պարզ է թէ ինչ պիտի լինի: Ձէ, շիտակը ես այդ պարոն բանաստեղծներուն զրածներուն շատ ալ չեմ զարմանար, որովհետեւ արդէն իրենց գլուխներն ալ բանաստեղծացած է, ծռած է, բնականէն ելած է: Բայց ինչ ըսեմ քեզի, որ հեղինակին աւելի նւազ զլուծ չըհամարելու համար ելեր ես այդ բոլորը քննելու:

—Է՛, արդէն խենթ էի, որ քեզի բան հարցուցի. նկատեց Սարգիս: Քալէ, քալէ, ճամբադ քալէ, ինչ քու պղնձէ զդացում՝ ներուդ բանն է այդ բոլորը հասկընալը. ինչ քու հաստ գլխուդ բանն է այդ զգացումներու նրբութիւնը:

—Գիտեմ, գիտեմ. այդ զգացումներու նրբութեան պատճառ-
թիւնը յօգւածիդ մէջն ալ կար, մինակ բարեբաղդաբար կէս մնաց:
Բանաստեղծութիւնը զգացումներ կը նրբացնէ եղեր. հա՛, հա՛, հա՛.

Սկսաւ խնդալ. մէկ ալ յանկարծ ինչուկը կտրեց, և փողոցին մէջ՝ կռուղի մը չիրքով՝ Սարգսին դէմը կեցած արագ արագ վրայ
սւլաւ.

—Զգացումներ կը նրբացնէ եղեր: Հերիք է, հերիք, որքան զգացումներ նրբացուցիք: Աչքդ շուրջդ դարձուր. դիտէ մէկ մեր ողորմելի երիտասարդութիւնը. կամքէ զուրկ, վախկոտ, գլուխին անյետք չօռ-չօփով լեցուն, բառերով խաղացող անբնական թուլամորթները: Ահա այդ բոլորը ձեր զպրօցներու, ձեր լրագրութեան, ձեր փիլիսոփայութեան, ձեր բանաստեղծութիւններու պտուղն է: Մեղք, ափսոս ձեր երկուքի ուժերուն. մէկը վարժապետ է եղեր գլխուս, միւսը հրապարակախօս. մեծ գործի վրայ էք: Կործանելու է ձեր բոլոր գպրօցները, ձեր խմբագրատունները. ձեր գրավաճառանոցները գլխունուդ փլցունելու է. կարելի է այն ատեն քիչ մը շունչ առնենք. կարելի է մեր յաջորդները քիչ մը աւելի բնական լինին, բնական մարդու նմանին. մարդ, որ իր բնականին համեմատ զարգանայ մարմնով ալ, հոգով ալ. որ բնութեան իրեն տւած ուժերը չի ծռէ, չի հիւանդացնէ. մարդ լինի, մարդ:

—Ինծի նայէ, սիրելիս, ատոնք բոլոր դատարկ խօսքեր են. ըսաւ Բագրատ Վասակի թեւէն քաշելով: Որ մեր կրթական, լրագրական և ընդհանրապէս բոլոր ընկերական-հասարակական կազմութիւններուն մէջ լեցուն հինցած, փոտած բաներ կան՝ ատոր տա-

րակոյս չի կայ. մեր բոլորիս ջանքերն ալ այդ փառածները կտրել ու առողջով փոխարինելն է: Բայց ոչ թէ քեզի պէս ամէն եղածին անխտիր ոտքով աքացել. և հիմա քու ըսածդ ինչ է. դպրոցը աւելորդ է. գրականութիւնը, գեղարւեստը, լրագրութիւնը աւելորդ է:

—Այո, ոչ միայն աւելորդ, այլ և պարզապէս վնասակար է. ատոնք բոլորն ալ բնական ճամբէն դուրս են ելած. ատոնք մարդկային զարգացման ծուռ բուսած ծիւերն են, որոնք մեր բնական զարգացմանը արգելք կը դնեն: Նետելու է, նետելու այդ բոլորը մէկըի: Դպրոց, ինչ յիմար բան. բնու. մը, որ բնութեան օրէնքներուն դէմ կը թքնէ. աղան բացը, բնութեան ու ընկերութեան մէջ ազատ մեծնայ պիտի և պէտք է մեծնայ իր հակամներուն, իր կամքին թողնելով, ոչ թէ մեր նախագծած ծրագիրներուն, մեր փիլիսոփայական ծթուած պահանջներուն ենթարկելով. այս բոլորը գլուխդ կը մանէ, պարոն տեսուչ:

—Բրաւօ. այդչափ մանկավարժութիւն ալ կայ եղեր զլիսուդ մէջ. այդ ինծի համար անակնկալ էր. նկատեց Բագրատ ժպտելով:

—Խնդս դուն. բայց ես կը կրկնեմ. այդ բոլորը, որ ձեզի հիմա այդպէս կ'ոգևորէ, որու իրագործման համար իբրև թէ կ'աշխատիք, այդ բոլորը պարասլ է, զեռօ է. սխտը է, սխալ: Մո. քեզի մէկն ալ այս հրապարակասօսը. մեծ բանի վրայ է. կը գրէ ու կը գրէ. զեռ չի համոզեցաք, որ ոչ ոք ձեր գրածին կարևորութիւն տուող չի կայ. եթէ գրածնիդ կը կարդան՝ պարզապէս ժամանցի համար է. և վերջապէս գրածնիդ արդէն ինչ է որ. ինքնին հին, անպէտք բաներ, որ անպաղար հովին կու տաք: Այսօր կ'ենես ժամին ու տիրացուն, տէրտէրին ու թաղականին նետած. և ճինճերած պատմութիւնները կրկնելու, հաշիւները տեսնելու, խորհրդներ տալու. կարծես զլուխնիդ դեռ չէ նստեր, որ ատոնք բոլորը անցած-գացած ժամանակներու թափթփուկներն են. թողէք իրենց հալին, մինչև որ հալին ու վերջանան: Վաղն ալ տեսար կ'ենես զլիսուս փիլիսոփայ կը կտրիս. բարոյախօսական խրատներ կը կարդաս, ամուսնական վէճեր կարգադրելու կ'ենես, կրօնքի կամ թատրոնի նշանակութիւնն բացատրել կ'ուզես. ես ինչ գիտնամ. դատարկ խնդիրներ շատ: Եթէ պատահի որ գրելիք չունենաս, այն

ատեն ալ կ'ենես ուրիշի գրածները քննադատելու. ալ որ օրւան համար արհեստակից էք: Շատ ալ որ նեղը իցնաս, կը նստես ինքզ բանաստեղծութիւն մը թխելու: Իրան, առանց կատակի, քեզմէ բան մը պիտի խնդրեմ. արդեօք կարելի չէ, որ ինծի համար ալ ոտանաւոր մը գրես, ուր կատարեալ մանրամասնութեամբ նկարագրւած լինի մարտդական գործողութիւնը մէկ ծայրէն մինչև միւսը. և ի հարկէ բանաստեղծական բոլոր նրբութիւններուն ու գեղագիտական բոլոր պահանջներուն համեմատ:

—Որ ի՞նչ դուրս գայ. հարցուց Սարգիս հազիւ ծիծաղը զսպելով:

—Որպէս զի գէթ անգամ մը կեանքիդ մէջ ճշմարիտ բանաստեղծութեան շիտակ ճամբէն անցած լինիս:

— Լաւ, տափակ սրախօսութիւնները մէկզի. ըսաւ Բագրատ լրջութեամբ: Հարցի արմատին դառնանք. վայրկեան մը քեզի հետ ընդունիմ, որ մեր բոլոր ըրածը ծուռ է, մեր ամբողջ հասարակական գործունէութիւնը սխալ է. շատ լաւ. դէհ, հիմա ըսէ ինծի որն է ճիշտը. Ռեր ըրածը սխալ է՝ չընենք. ի՞նչ ընենք ուրեմն:

— Տեսնո՞ւք, հիմա հարցի ճիշտ գլխուն զարկիր. այդ տարբեր խնդիր է, և ճիշտ այդ է, որ ինծի ալ կ'ըզբաղեցնէ: Ո՞րն է բնական ճանապարհը. նախ այդ պէտք է ըմբռնել և ատոր համար նախ պէտք է հին նախապաշարունները բացարձակապէս վրայէն վար նետել և միւս կողմէն բնութիւնը ուսումնասիրել. այո՛, նախ այդ հարցը պէտք է փնտրուել:

— Ե՛, բարեկամ, դուն փընտըռէ. երբ որ գտնես մեզի ալ հեռագրէ: Սենեակին մէջ պէտք է գոցւիլ և առանց գիշերնոցը վրայէն հանելու՝ գրքերու մէջ պիտի թաղւիլ ու անվերջ պիտի փնտռել, թէ որն է մեր գործունէութեան շիտակ ճամբան: Ե՛, խելօք, կեանքը այդ տեսակ յիմարութիւնների չի հասկընար. ան գործ կ'ուզէ, գործ. կեանքին չես կրնար ըսեր. «կեցի՛ր նախ մտածեմ, գտնեմ, ետքը առաջ գնա՛ն: Այդ քու ըրածդ հին ճգնաւորական դրութեան մէկ նոր վարիանսն է. այն մարդիկը գործունէութենէ ու հաճոյքէ քաշւած կը ճգնէին երկնքի արքայութեան նեղ ճամբան գտնելու համար. դուն ալ նոյն գործունէութենէն ու հաճոյքներէն զրկւած կը ճգնիս գործունէութեանդ շիտակ ճամբան գտնելու համար:

—Ճգնաւորը դուն ինքդ ես, որ հին, փտտած, հոտած կարգ ու սարքէն չես կարող գլուխդ դուրս քաշեր և քիչ մը անկախ մտածեր ու դուն ալ կապկօրէն կամ հիպնոզացած կը կրկնես միւս հարիւրաւոր-հազարաւորներու ծանծաղ դատողութիւնները: Եւ որ աւելի ծիծաղելին է՝ կը կարծես թէ մեծ գործի վրայ ես, ու դեռ դդումնութեամբդ ալ կը հպարտանաս: Հն, հն, հն. ճգնաւոր եմ եղեր, ինչո՞ւ. որովհետեւ անկախ, ազատ դատելու կարող եմ, որ միանգամ ընդ իշո հինին, աւելորդին, ծուռին, քայքայւածին աքացելու ուժ ունիմ մէջս և անգամ մը սխալը ըմբռնելէս վերջը այլ ևս այդ ճանապարհով չերթալու. քաջութիւն կայ մէջս, որ քան ալ որ այս բոլորը եղած կարգերուն հակառակ լինի. անոր համար ճգնաւոր եմ, հն. խելքի տուրակ:

—Ազատ, անկախ դատելը բոլոր եղածը ոտքի տակ առնելուն մէջը չէ. այս անգամ մը գլուխդ խօթէ. ամեն բան անխտիր ոտքի տակ տալը՝ հաստատ սկզբունքներ չունեցող, ցրւած ուղեղի գործն է:

—Հաստատ սկզբունքներ. այսինքն մեր հնարած կամ ենթադրած դոգմաները ըսել կ'ուզես. այո՛, ես ատոնք չունիմ և փառք աստուածներուն:

—Ինծի նայէ, սիրելիս. կը կրկնեմ՝ ատոնք պարանպ, ուռուցիկ խօսքեր են. ինծի համար Փակտը այս է. դուն քու բոլոր երիտասարդութեամբդ, բոլոր ուժերովդ, բոլոր «ազատ ու անկախ դատողութեամբդ» ոչ քեզի և ոչ ալ քու շրջապատին դրամի մը օգուտ չունիս. պարանպ, անգործ մարդ ես. ահա Փակտը:

—Իսկ դո՞ւք մեծ գործի վրայ էք, չէ՞ բանաստեղծ փիլիսոփաներ: Հասած էին կամուրջի մօտերը, ուր ճանապարհները կը բաժնւէին:

—Լաւ, շարունակելի. ըսաւ Սարգիս:

Երեք բարեկամները իրար ձեռք թօթեցին:

—Յոեսութիւն:

—Յ'ը:

—Յ'ը:

Բազրաւ ծռեցաւ ձախ. Սարգիս դէպի աջ. Վասակ շիտակ դէպի կամուրջ: Բազրաւ իր դպրոցը մտածելով, Սարգիս իր յօդւածը. իսկ Վասակ խառնեցաւ կամուրջ մտնող բազմութեանը մօրլուսով:

— ձգնաւոր. ես. պարապ, անգործ մարդ եմ եղեր. ես. իսկ խրեմք. խեղճեր, բայց ինչ շունշանորդի ոգևորութիւն, ինչ շունշանորդի վստահութիւն է իրենց ըրածին. ինչպէս ալ պինդ փակած են իրենց միջնադարեան գաղափարներուն. մարդ հարցընէ՝ ինչ քանի վրայ են դրեր իրենց վստահութիւնը. կոյրեր. փիլիսոփայ կապիկներ:

2.

Թէև դեռ այնքան ուշ չէր, բայց խիտ ամպերէն այնպէս մթնած էր սենեակը, որ վառարարին ու պատուհանին մէջտեղը քանապէհին վրայ փռւած Գէորգը գիրքը ձեռքէն մէկդի դրաւ ու շփեց աչքերը, որոնք լարւած ձիգէն տեսակ մը կը կըսկըծային:

Շուրջութեամբ կոտորուեցաւ ու դարձաւ միւս կողմ:

Կիրակի էր. տնեցիք հիւր էին գացած. իսկ Բագրատ գացեր էր Թորոսեանին, որ Բագրատի սիրելի վաճառական երիտասարդներէն մէկն էր. հոն լինելու էին նաև ուրիշ քանի մը երիտասարդ առևտրականներ, և Բագրատ կ'ուզէր հանգամանքէն օգուտի: Ան, վերջին ատենները տաք կերպով կպեր էր մանկական գրքերու ածանադին հրատարակութիւն՝ մը հիմնելու գաղափարին: Ամեն բան կարգադրած էր արդէն, կը մնար զլիաւորը՝ դրամական հաստատ ֆոնդ մը դնել. և այդ նպատակով ալ այսօր գացած էր Թորոսեանի տունը:

Գէորգ վառարանի տաքէն թուլցած և երկար ընթերցումէն յոգնած՝ գիրքը վերջնականապէս գոցեց, նետեց պատուհանին մէջը, ու պառկեցաւ կռնակին վրայ՝ ձեռքը զլիտուն տակը դրած:

Կը մտածէր. Նախ քիչ մը կարդացած վէպին մասին մտածեց. վերջը կամաց-կամաց անցաւ իր վէպին՝ Ելէնիին՝ ու ժպտեցաւ. ինչպէս արագ կատարւած էր այդ բոլորը և ինչպէս ալ արագ անցած:

Բոցի մը պէս եկեր պատեր էր այդ զգացումը ամեն կողմէն. բոռ ուժ մը այդ երկու վայրենի սրտերը իրարու էր քաշած, բայց հազիւ իրարու զարկած՝ ոչնչացած էր արդէն ինքը՝ այդ ձգողական ուժը: Հազիւ քանի մը շաբաթներ անցեր էին այն տաք հրապոյրի օրերէն, այն առաջին փութորկոտ սիրոյ օրերէն՝ և արդէն անցած հանդարտած էր ամբողջ փութորկը: Հիմա Գէորգ երբ

իր առաջին յուզումները, ոգևորութիւնը, աղջկան իր վրայ ըրած առաջին տպաւորութիւնները կը յիշէր՝ ինքն ալ կը զարմանար:

— Է՛, ցտեսութիւն, ուրիշ ոչինչ. կը կրկնէր ինքնին՝ փորձ-
ւած կեանքի մարդու մը հովերով:

Բազրատ, որ առաջ տեսակ մը վախ ունէր երկուքի չափա-
զանց մերձումէն, հիմա այլ ևս փոյթը չէր ընէր: Հիմա ինքն էր,
որ կը կատակէր շարունակ ու Ելէնին համար «նշանածդ» կ'ըսէր
Գէորգին:

Գէորգ կը ժպտէր և ուսերը կը ցնցէր անտարբեր:

— Գէորգ, շիտակ ըսէ՛. հարցուց անգամ մը Բազրատ անոր
այդ տեսակ վայրկեանի մը: Շիտակ ըսէ, այդ աղջիկը կը սիրեմ.
քու զգացումներուդ խելքս բնաւ չէ հասած:

— Խելք չհասնելու բան չի կայ. սէրը ինչ բան է. աղւոր
աղջիկ մըն է, կեանքով լեցուն. խենթ-խելօք հետը կը խօսիս,
կը կատակես, կը գրկես, կը համբուրես. ըսէ, այս բոլոր զւարճալի չէ:

— Լաւ, սիրելիս, բայց այդ աղջիկը քու զւարճութեանդ
առարկան է. ինչ իրաւունքով անոր հոգին կը վրդովիս:

— Է՛, լաւ. ես անոր զւարճութեան առարկան եմ. ինչ իրա-
ւունքով ան իմ հոգիս կը վրդովէ: Ձէ, Բազրատ, կը կարծէի, թէ
ես եմ մինակ միամիտը, բայց, հոգիս, գուն ինձմէ ալ խեղճ ես եղեր:

Ելէնին ինքն ալ արդէն սթափած էր: Անոր զգացումներուն
ջերմութիւնը արդէն հազիւ շաքաթ մը տեսած էր: Աղջիկը շատ
շուտով զգաց, որ իր եռացող յուզումները շատ էին շտապած.
Թէև ի հարկէ եղածէն ալ մասնաւորապէս տժգոհ չէր: Առտու, իրի-
կուն կատակներն ու համբոյրները իրենց սովորական կարգովը
կը կրկնէին, մինակ առաջնան կիրքն ու կրակը այլ ևս չի կար-
ծրաւ, աղջիկը երբեմն կը դողար, կը կարմրէր տղուն համբոյրնե-
րուն տակ, բայց վայրկեան մը միայն առանձին մնալը հերիք էր
անոր զգացնելու համար, որ այդ նոյնը պիտի զգար, եթէ Գէոր-
գին տեղը մէկ ուրիշը լինէր: Գէորգ այլ ևս շատ հասարակ կը թւէր
իր աչքին: Օրինակ եթէ Գէորգի տեղ լինէր Սարգիսը, որուն աղ-
ջիկը երբեմն շատ տարօրինակ նայւածքներ կը նետէր և կամ օրի-
նակ Բազրատը...

Աղջիկը սկսած էր հետզհետէ Բազրատի մասին շատ մտածել.

որքան Գէորգ պարզ ու հասկանալի էր, այնքան Բագրատ անըմբռնելի կը թւէր աղջկան՝ իր բոլոր ձգտումներովը, իր բովանդակ կեանքովը. որքան Գէորգ շուտ ու զիւրին նեւաճ էր իր գիրկը, Բագրատ այնքան անմատչելի էր. անմատչելիութիւն մը, որ ժպիտներու, կատակներու, սնկեղծ խօսակցութեան ու խորունկ հայեացքներու պարիսպը ունէր իր շուրջը: Ելէնին կ'ըզգար, որ ինքը Բագրատին համար եղած-չեղած մէկ հաշիւ է. միայն մէջէմէջ տղան տարօրինակ նայւածքներ ունէր, որոնք աղջկան սիրտը դող կը հանէին ու տեսակ մը անորոշ յոյս կու տային:

Միւս կողմէն Բագրատ աղօտ կերպով կ'ըզգար, որ իր ու Ելէնին մէջ բան մը կը դառնար: Ինքը իր կողմէն շատ կարեւորութիւն չէր տար աղջկան. բայց վերջապէս գիտակցելը, թէ աղջիկ մը քեզմով է զբաղւած, այն ալ Ելէնիի պէս տաք ու բոցոտ աղջիկ մը, որուն համար բոլոր իր ընկերները խենթ կ'ենէին, Բագրատին փափուկ հաճոյք մը կը պատճառէր: Եւ նոյն իսկ այդ պարագան, որ բոլորը այդ աղջիկով կը հետաքրքրւէին, Բագրատին վրայ ազդեցութիւն կ'ընէր, և ան ակամայ կը մտածէր. «Յրևի իրաւ չափազանց հաճոյալից է լինելու այդ անպիտանին գգւանքները»: Նոյն իսկ տեսակ մը զայրոյթ կ'ըզգար վերջերը, երբ իր ներկայութեանը Գէորգ աղջկան մը կը համբուրէր: Այդ տեսակ դէպքերէ վերջ երկու աղոց մէջ մտաւորապէս հետեւեալ խօսակցութիւնը կը կրկնուէր.

—Իր սենեակը գնա ու ինչ կ'ուզես այն ըրէ. կ'ըսէր Բագրատ:

—Եղբայր, քեզի ինչ ըրած ունինք:

—Ի՞նչպէս թէ ինծի ինչ ըրած ունիք. ես քարէ եմ շինած:

—Հա. ախորժակդ կը բանանք. կը քրքջար Գէորգ: Եղբայր, դո՛ւն ալ հրամմէ. ես չեմ նախանձիր, հոգս մի՛ ըներ:

—Պո՛ւշ. այդ աղեղ կատակ է, Գէորգ:

Աղջիկը տաք-տաք խօսւած այդ պտիկ վէճերը դուրսէն կը լսէր, և թէև հայերէն բան մը չէր հասկնար, բայց կարծես կը գուշակէր: Ու Բագրատի դէմ նոյն պատկերները յաճախ կը կրկնուէին: Գէորգ ինքզինքը արդարացնելու համար ամէն անգամ կը կրկնէր ծիծաղելով.

—Է՛, ի՞նչ ընեմ, որ աղջկան պագնելը քու դիմացդ կը բըռնէ:

Եւ նոյն իսկ այս առաւօտ էր, որ նորէն կը համբուրւէին, երբ

Բազրատ համբերել չկարողանալով՝ գրիչը վար նետեց ձեռքէն, ցատկեց ոտքի ու երկուքի ալ թևէն բռնած՝ սենեակէն զուրս հրել կ'ուզէր։

Աղջիկը թևը ազատեց տղու ձեռքէն, խորունկ ականարկ մը նետեց անոր աչքերուն ու յաղթական շեշտով մը.

— Հ'ը. կը նախանձիս. ըսաւ, մատը վրան թօթեց, նորէն փաթթեցաւ Գէորգին ու սկսաւ հնչիւն-հնչիւն համբուրել։

Բազրատ չի կրցաւ իր ծիծաղը զսպէ. անոնք ալ ծիծաղեցան. ու սիրուն պատկեր մը մէջտեղ ելաւ. ծիծաղկոտ համբուրող զոյգ մը, որ ծիծաղկոտ դէմք մը ծիծաղով զուրս կը վըռնուէր։

Գեորգ քանապէիս վրայ երկընցած առաւօտեան այս սեսարանը իր աչքերուն դէմ պատկերացուց ու սկսաւ նորէն բարձրաձայն խնդալ։

Բայց յանկարծ ծիծաղը քարացաւ իր շրթունքին, ետքը դէմքին մկունները թուլցան ու խիստ խոժուոյ նայւածք մը առաւ։ Առաւօտեան մտաբերումը յանկարծ անոր չիշեցուց այն աղտոտ խանը, բեռնակիրներու այն խոնաւ սենեակը, ուր զացած էր առտուն անոնց հետ մէկ-երկու լրագիրներ կարդալու. և այդ արտասահմանէն եկող լրագիրները ինչ լուրեր կուտային. սո՛վ, քոլերան, գաղթականութիւն, սպանութիւններ, պղծութիւններ, ամբողջ ժողովուրդ մը ինկած երեսի վրայ, ուրկէ ամենքը իրենց ձեռքը քաշեր են. միայն տառապանքն է, որ իր թաթերուն բոլոր ծանրութիւնը խեղճի թիկունքին է յենած։ Գեորգ սկսաւ մէկիկ մէկիկ չիշել այն բոլոր քստմնելի նկարագրութիւնները, թէ լրագիրներու, թէ իր հայրենակիցներուն ստացած մասնաւոր նամակներունը. չիշեց բեռնակիրներուն դէմքերը, անոնց արտասանած վշտի ու ցասուկի անէծքները. մտաբերեց և իր խօքերը ու զողաց...

«Հոն իմիներս կեղեքման ու յուսահատութեան մէջ. ես հոս տաքուկ սենեակին մէջ աղջիկներու մասին կ'իրագեմ. մըմնջեց քանապէիս վրայ նստելով։ Մ'յս էր իմ երեակայածը. ես այսպէս կը մտածէի իմ մասին. այսպէս կը խօսիմ ես ուրիշներուն. դեռ այս առտու էր, և ես ինչեր կը պահանջէի. վատութիւն, ստորնութիւն է այս»։

Ու ձեռքերով դեմքը ծածկեց։ Մեղամաղձոտ տրտմութիւն մը եկաւ վրան, տեսակ մը յուսահատութիւն, իր եսի ոչնչութեան

զգացում՝ մը, որ քիչ-քիչ սկսաւ թուլնալ, ու միայն անորոշ տխրութիւն մը մնացած էր վրան, երբ լսեց կարծես քունի մէջէն, որ դուրսը բանալիներ դարձան, քրքիջներ լաւեցան ու դռներ սկսան բացուիլ ու գոցուիլ:

Պահ մը վերջը իր սենեակի դուռն ալ ամուր մը բացւեցաւ, ներս մտաւ Բագրատ անհանգիստ շարժումով մը, նետեց գլխարկն ու վերարկուն անկողնին վրայ՝ պոռաւով:

—Ի՞նչ ես մութ տեղը շքնթրակեր. լոյսը չի վառեա:

Գէորգ ցնցըւեցաւ. նայեցաւ շուրջը:

—Ըսէ՛ թող վառեն. ի՞նչ է պատահեր. հարցուց անտարբեր:

—Ինչ է պատահեր. չգիտեմ. այդ մարդիկը ուղեղ չունին. բան հասկընալ չգիտեն. պարզ առեւտրական հաշիւ մըն է. կը բացատրեմ, ցոյց կուտամ օգուտը, շահը. ո՛չ, գլուխնին չի մտնիր. ես վաղ անցայ բոլոր բաղոյական ու չգիտեմ ինչական օգուտներ. թող պարզ շահի աղբիւր նկատեն. իրենք ալ արդէն վաճառական չե՛ն. թոքերս պատռտեցաւ նոյնը կրկնելէն. ո՛հ, որ կը մտածեմ՝ ճաթելս կուգայ. ի՞նչ փայտ-գլուխ մարդիկ. և ատոնք երիտասարդ են, հմուքանի ստակ կ'ընէ երիտասարդը առանց ձեռներէցութեան, յանդգնութեան. հովէն դողացող, անվստահ, կասկածոտ. թո՛ւ. ատոնք ալ մարդ են՝ խրուհլան:

—Այո. կամայ Գեորգ բոլորովին ցրւած:

—Մէկը ելաւ թէ դեռ կանուխ է այդ տեսակ գործի ձեռնարկելը. միւսը՝ թէ արդէն ժամանակը անցած է. դիւմ մըն ալ ելաւ, թէ մենք արդէն մանկական ընթերցանութեան զբքեր շատ ունինք, դեռ ասկէ առաջ մտածելու ուրիշ շատ բաներ կան. ո՞ր մէկը ըսեմ. կը համոզեմ, կը բացատրեմ, կը շեշտեմ՝ իրենց ստանալիք նիւթական օգուտը: «Այո, կ'ըսեն, բայց անյարմար է»: Մէկն ալ յանդգնեցաւ երեսիս ըսելու, թէ դուք վարժապետ մարդ էք, հաշիւներէ ի՞նչ կը հասկընաք. տեսականին մէջ ատոնք սիրուն են, բայց գործնականի մէջ զեռօ. զանգիս մէջտեղէն ճաթելս եկաւ: Ես շուտով նկատեցի, որ այս բոլորը պատճառաւոր են պարզապէս, և որ ատոնք իրենց քանի մը ոսկիները վտանգի ենթարկելէ կը վախնային. ալ չի կրցայ ինքզինքս զսպել. լեզուս բացի ու վերէն վար լացի. ատոնք ապուշ-ապուշ երեսս կը նայէին. մէջերնէն

մէկը կարծեմ ուզեցաւ բարկանայ. Թորոսեանը մէջ նետուեցաւ ու գործը կատակի զարկաւ. այս միջոցը ուրիշներուն ալ յարմար եկաւ, ամենքը սկսան կատակներ ընել, իբրեւ թէ իմ խօսքերս ալ կատակի տեղ ընդունելով. թո՛ւ, զղւելի էր. չի կրցայ այդ կեղծիքին զիմանալ. ձգեցի, դուրս նետուեցայ ու զայրոյթէս չգիտեմ ինչ ընեմ:

— Հը՛ր՛մ:

— Ո՛ւհ, Աստուծ իմ, գլուխս կ'այրի:

Քաշեց զանգակը ու լւաղւելու ջուր խնդրեց:

Օգիւստոսն ձերմակ ջրի փարչը ձեռքը ներս մտաւ ժպտելով: Բագրատ կ'ուզէր ձեռքէն առնէ՝ աղջիկը չաւառ և ինքը սկսաւ լեցնել տղու ձեռքերուն. բայց անդադար խաղալով մէկ քիչ և երբեմն ալ երկար սպասցնել կուտար:

— Օգիւստոս, խաղի տրամադրութիւն չունիմ. ըսաւ Բագրատ լրջութեամբ:

Աղջիկը մանկական հնչիւն ծիծաղով մը պատասխանեց ու նորէն իրը շարունակեց:

— Բայց վերջ տուր, կ'ըսեմ քեզի. սաստեց տղան խստութեամբ:

Աղջկան ժպիտը սառեցաւ. կարմրեցաւ, գունատեցաւ, ջրի փարչը դրաւ վար ու դուրս սպրդեցաւ:

Բագրատ հազիւ էր շորցեր ու բարկութեամբ սենեակին երկայնքովը կ'երթևեկէր իր մտածումներուն մէջ թաղւած, երբ ներս եկաւ տիկինը:

— Պարոն Սուրեմեան, ինչ է պատահեր. Օգիւստային բան մը ըրի՞ք:

— Օգիւստային. ես. ոչինչ:

— Զգիտեմ ներսը կուլայ. բոլոր հարցումներուս միայն ձեր անունը տաւ. գացէ՛ք, տեսէ՛ք անգամ մը ինչ է:

(Շարունակելի)

ԵՐԿՐԻ ՎԵՐԱՅ

ՍԻՆԼԼԻ ՊՐԻՆԴՈՄԻՑ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

Երկրի վերայ շուտ է մարում ծաղկի փայլը շողշողուն,
Շուտ է լռում և՛ թռչունի անոյշ, թռվիճ մեղեդին.
Բայց իմ պայծառ ցնորքներում—չունի վախճան ջերմ գարուն,
Վառ երգերով մի՛շտ լցած է իմ հոգին:

Երկրի վերայ, ուր ամեն ինչ և՛ զատարկ է, և՛ ունայն,
Քաղցր կիրքը լոկ կարճատև արեան խաղ է ու յուզմունք.
Բայց իմ պայծառ ցնորքներում—մի՛շտ հնչում է սիրոյ ձայն,
Եւ մի՛շտ եռում անխեղ սիրոյ ըզգացմունք:

Երկրի վերայ, ուր կեանքն, ասես, չունի խորհուրդ, նպատակ,
Ողբում են Սէր, Մտերմութիւն—նոցա կորցնում ու գանում.
Բայց իմ պայծառ ցնորքներում—որպէս մի զոյգ հրեշտակ,
Նոքա անվերջ և՛ ապրում են, և՛ խնդում:

18 նոյեմբերի, 1893 թ. Մոսկւա:

ԵՐԿՈՒ ԱԼԻՔ

(Նմանողութիւն)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

Մէկմէկու հետ համբուրւելով, խաղալով,
երկու ալիք ծովի երես բարձրացան,
եւ երկուան էլ լեզուն քնքոյշ, մե'ղմ սիրով
Դէպի ծովափ, բարձր եզերք սըլացան:
«Ծովի ափին քաղցր օրեր կը տեսնենք», —
Խորհում էին ու երազում ալիքներ.
«Այնտեղ խաղաղ ու անվրդով կը հանգչենք»,
«Այնտեղ դգւած ու փայփայլած օր-գիշեր,
«Թաւ ըստւերում գտած հա՛գիտօ օթեան,
«Ե՛ւ կը սիրենք, ե՛ւ կը տանջենք յաւիտեան...»
Եւ ալիքներն, որպէս մի զոյգ սիրահար,
Թըռան ծովափ, ոչ մի վտանգ չըզգալով,
Թըռան, հասան ու զրկեցին տենչավառ.
Բայց ծովափի կարծր կուրծքը խեղճերիս
Փշրեց խկոյն... փրփուր դարձրեց օդային...

Մոսկա:

Կ Ն Ո Ւ Ն Ք

(Le baptême)

Գ Ի Դ Ը - Մ Ո Պ Ա Ս Ա Ն Ի

Թարգ. ԲԺ. Թագ. Զաքարեանի

Տղամարդիկ՝ կիրակնօրեայ զգեստները հագին՝ կանգնած սպասում էին ազարագի դրան առաջ: Մայիսեայ արևը իւր պայծառ լոյսը սփռում էր ծաղկափթիթ խնձորենիների վրայ, որոնք ինչպէս հսկայական փունջեր՝ զարդարւած սպիտակ, վարդագոյն և անուշահոտ ծաղիկներով՝ հովանոցի նման ծածկում էին ամբողջ բազը. նրանք անդադար իրենց շուրջը շաղ էին տալիս ձիւնի նման սպիտակ ծաղկաթերթեր, որոնք օդի մէջ սաւառնելով ու ոլոր-մոլոր պտոյտներ գործելով թափւում էին կանաչ խոտի վրայ: Խոտերի արանքից փայլելում էին բոցավառ կակաչները և կարմրատակում էին խաշխաշի ծաղիկները, որոնք նմանում էին արեան բծերի:

Աղբակոյտի մօտ փռւած մրափում էր խոզը ահագին որովայնով և լիքը ծըծերով: Նորա շուրջը պտտում էին փոքրիկ խոճկորները իրենց բարակ, ոլորուն պոչերով:

Յանկարծ հեռւից, ազարակի ծառերի ետևից լսելի եղաւ եկեղեցու զանգակի ձայնը. այդ մետաղեայ ձայնը սահելով պայծառ մթնոլորտի արանքից հնչում էր ինչպէս հեռաւոր և թոյլ հրաւեր: Ծիծեռնակները սլաքի նման սլանում էին կապոյտ տարածութեան մէջ, որը չորս կողմից շրջապատում էին բարձրուղէշ և հաստաբուն բարդիները: Ախտուների գաղջ հոտը մէկ-մէկ խառնւելով խնձորենիների քաղցր և անոյշ բուրմունքի հետ անցնում էր այդ տարածութեան վրայով:

Նրան առաջ կանգնած տղամարդիկներից մէկը՝ երեսը զարձ-

նելով դէպի տուն՝ կանչեց.—Շուտ արն, Մելինն, շոապիր. զանգը արդէն տալիս են:

Նա մօտ երեսուն տարեկան տղամարդ էր. մի բարձրահասակ և խոշոր շինական, որի մէջքը դեռ ևս չէր կռացել զաշոպին դառն աշխատանքների ծանրութեան տակ:

Նորա հայրը, որ մի ծերունի էր, չորացած ինչպէս կաղնու կոճղր, կոշտացած ձեռներով և կորացած ոտներով, վրայ բերեց.

—Աստուած աղատի կանանց զուքւելուց. մարդու հոգի են հանում:

Ծերունու երկու որդիքը սկսեցին քահ-քահ ծիծաղել: Նրանցից կրտսերը դառնալով մեծ եղբօրը ասաց.

—Գնա՛ դուրս քաշիր նրանց, Պօլիտ, թէ չէ մինչև կէսօր նրանք տնից դուրս եկողը չեն:

Պօլիտը դիմեց դէպի տուն:

Տնային բաղերը, որոնք մինչև այդ րոպէն լուռ կանգնած էին շինականների մօտ, յանկարծ ահագին աղմուկ բարձրացնելով սկսեցին կշկշալ և թւերը թափ տալ. յետոյ իրենց հանդարտ և օրօրող քայլերով դիմեցին դէպի ջուր:

Տան դուռը բացւեց և շեմքի վրայ երևաց հաստափոր տատմէրը մի երկուամսական երեխայ գրկին: Նորա բարձր գլխարկի սպիտակ քօղերը կախւելով դէպի յետ փռւում էին ալ կարմիր շալի երեսին, որը փայլփլում էր ինչպէս հրդեհ:—Երեխան՝ փաթաթւած սպիտակ բալուէների մէջ՝ հանգստանում էր տատմօր դուրս ցցւած փորի վրայ:

Տատմօր ետեից երևաց երեխայի մայրը իւր մարդու թւից բռնած. նա հագիւ տասն և ութ տարեկան մանկամարդ կին էր՝ առողջ, թարմ և ծիծաղկոտ երեսով: Վերջապէս երևացին նաև երկու մեծ մայրերը՝ թոռումած և խորշումած ինչպէս ծառից վայր ընկած հին խնձորներ: Նրանց ծխրւած և վաստակած մէջքերը վաղուց արդէն կորացել էին երկարատու ու ծանր աշխատանքների տակ: Նրանցից մէկը, որ այրի էր, անցաւ մեծ-հօր թւը, որը կանգնած էր դրան առաջ. և ամենքը միասին շարժւեցին իրենց տեղերից կազմելով մի թափօր, որի գլուխը կազմում էին տատմէրը ու երեխան: Քափօրի ետեից գնում էին ընտանիքի մնացած

մեծ ու փոքր անդամները: Փոքրերը բռնած ունէին թղթեայ քըսակներ լի զանազան շաքարեղէններով:

Հեռուում անդադար հնչում էր փոքրիկ զանգակը և իւր բոլոր ոյժով հրաւէր էր կարդում նորածին երեխային: Գիւղական մանուկները բարձրանում էին թումբերի վրայ, ցանկապատերի ետևից ցցւում էին գիւղացիների գլուխները. ագարակում ծառայող զեղ-ջկուհիները վայր էին դնում կաթով լի կթիչները և երկու կթիչների արանքում կանգնած նայում էին անցնող թափորին:

Տատմէրը յաղթական կերպով տանում էր իւր կենդանի բեռը խուսափելով սալերի ակօսների մէջ հաւաքւած ջրերից, որոնք տեղ-տեղ կտրատում էին ծառազարդ լալն ճանապարհը: Մերուռիները ընթանում էին հանդիսաւոր՝ թէև դողդոջուն ու ծուռումուռ քայլերով: Նրիտասարդները թռչկոտում էին յառելով իրենց աչքերը գեղջկուհիների վրայ, որոնք կանգնած նայում էին անցնող թափորին:

Նորածնի հայրը և մայրը հանգարտ և լուրջ հանդիսաւորութեամբ դնում էին այդ փոքրիկ երեխայի ետևից, որը պէտք է շարունակէր աշխարհի երեսին նրանց անունը, Դանտիւնների անունը, որը հռչակւած էր ամբողջ շրջակայքում:

Թափորը թեքւեց դէպի վաշտ և ճանապարհը կրճատելու համար ուղղւեց արտերի արանքով: Այդտեղից արդէն երևում էր եկեղեցին իւր սրածայր զանգակառնով. երևում էր նաև զանգակի լեզակը, որը անդադար տարուբերւելով լեցնում էր օդը իւր սուր հնչիւնով և հրաւիրում էր նորածնին գործել իւր առաջին մուտքը Ողորմած Աստծոյ տան մէջ:

Մի շուն՝ ընկած թափորի ետևից՝ հետևում էր նորան, մանուկները շաքարեղէն էին ձգում շանը և նա սկսում էր պըտոյտներ գործել հանդիսականների շուրջը:

Եկեղեցու դռները բաց էին:—Սեղանի առաջ զգեւտաւորած սպասում էր քահանան, որ մի բարձրահասակ, շիկահեր, փոքր ինչ նիհար և ջրոտ երիտասարդ էր, նոյնպէս Դանտիւնների ընտանիքից, նորածնի հօրեղբայրը: Հանդիսաւոր ծիսակատարութեամբ նա կնքեց իւր եղբօր զաւակին—Պրոսպէր Սեղարին, որը ընդունելով իւր շըրթունքների վրայ մեռունի իւղը և ընկղմւելով մկրտութեան աւագանի մէջ՝ սկսեց բարձրաձայն լաց լինել:

Երբ ծիսակատարութիւնը վերջացաւ, հանդիսականները քաշ-
ւեցին եկեղեցու դուռը սպասելով քահանային, որը մտել էր խորան
զգեստները հանելու համար: Այնուհետեւ բոլորը միասին ծանաւոր
ընկան զէպի տուն: Այժմ արդէն նրանք վերադառնում էին արագ
քալլերով, որովհետեւ ամենքը մտածում էին ճաշի մասին:

Գիւղի բոլոր երեխաները հետևում էին նրանց. և ամեն ան-
գամ երբ մի բուռը շաքարեղէն էին ձգում սկսում էր մի սարսա-
փելի կռիւ. երեխաները ընկնում էին մէկ-մէկու վրայ, մէկ-մէկու
հրում ու մազերը քաշ էին տալիս: Շունը նոյնպէս խառնւում էր
այդ իրարանցման ցանկանալով մի բան էլ իւր բերանը ձգել. նորան
քացի էին տալիս, քաշում էին նորա սուրը, ականջները, թաթե-
րը. բացց նա աւելի յամառ էր քան գիւղի մանուկները:

Տառամէրը փոքր ինչ դադրած լինելով դարձաւ քահանային և
ասաց.

— Հայր սուրբ, նեղութիւն չլինի, առ երեխային, փոքր ինչ
բռնիր, ես մի քիչ հանգստանամ. փոքս կտոր-կտոր է լինում:

Աբեղան վերցրեց երեխային, որի սպիտակ բալուլը մի մեծ
փայլուն բիծ էր կազմում նորա սև վերարկուի վրայ: Նա չէր
իմանում ինչպէս բռնի երեխային, ինչ զիբք տալ նորան. այդ
թեթեւ բեռը ճնշում էր նորան. նա բարձրացրեց նորածինն և
ամուր կերպով սխմեց իւր կրծքին: Հանդիսականների մէջ ահազին
քրքիջ բարձրացաւ: Պառաւներից մէկը հեռւից բացականչեց.

— Աստ, հայր սուրբ, սիրտդ չէ ցաւում որ դու յաւիտեան
զրկւած ես մի այդպիսի երեխայ ունենալուց:

Աբեղան ունիչ չպատասխանեց: Նա գնում էր խոշոր քաջլերով,
անթարթ աչքերը յառած երեխայի կապոյտ աչքերին: Նա սաս-
տիկ ցանկութիւն էր զգում կրկին և կրկին համբուրել երեխայի
կլորիկ թշերը: Նա չկարողացաւ աւելի համբերել և, բարձրացնելով
երեխային զէպի վեր, սխմեց իւր շրթունքները նորա աչտերին:

Երեխայի հայրը դառնալով իւր եղբօրը ասաց.

— Հայր սուրբ, մի՛ ամաչիր. եթէ ուզում ես զուէլ երեխայ
ունենալ, ասա միայն...

Եւ ամեն կողմից սկսեցին հանաքներ տեղալ. այն հանաքները,
որոնց սովոր են գիւղի բնակիչները:

Երբ որ նստեցին ճաշի՝ հանաքները աւելի ևս սաստկացան։ Ճանտիրոջ միւս երկու որդիները ևս շուտով պէտք է պսակէին։ Նրանց հարսնացուները նոյնպէս ներկայ էին ճաշին։ Հանդիսականները ոչ մի բոպէ չէին դադարում ամենատեսակ ակնարկութիւններ առնել այն բոլոր ապագայ սերունդների մասին, որ պէտք էր սպասել մօտալուտ զուգաւորութիւններից։ Այդ ակնարկութիւնները համեմատուում էին ամենախոշոր և բացարձակ խօսքերով, որոնցից հարսնացուները շիկնում էին, իսկ տղամարդիկ ծիծաղից թուլանում։ Եւ այդ բոլորը նրանք լուսաբանում էին զանազան բացականչութիւններով ու բռունցքի այլևայլ շարժաճքներով։ Նորածնի հայրը և պապը գերազանցում էին ամենքին իրենց սրախօսութիւններով։ Մայրը ժպտում էր. իսկ պառականները մասնակցում էին ընդհանուր ուրախութեան խառնելով ուրիշների հետ նաև իրենց հանաքները։

Արեղան, որը սովոր էր գիւղական այդ խնճոյքներին, հանդարտ նստած էր տատմօր կողքին և մատներով խաղում էր երեխայի փոքրիկ շրթունքների հետ, աշխատելով ծիծաղացնել նորան։ Նա կարծես զարմացած էր այդ երեխայի տեսքով. կարծես կեանքի մէջ երբէք երեխայ չէր տեսել։ Նա նայում էր նորան մօտախոհ ու շաղկութեամբ մի առանձին լրջութեամբ և մի այնպիսի քնքշութեամբ, որը առաջին անգամն էր զարթնում նորա սրտի խորքում։ Նա մի նոր, մի անծանօթ, մի ջերմ բացց միւսնայն ժամանակ փոքր ինչ տխուր փաղաքշանք էր զգում դէպի այդ թոյլ էակը, որը ծնւել էր նորա եղբօրից։

Նա ոչինչ չէր լսում. նա ոչինչ չէր տեսնում. նա ամբողջապէս յափշտակւած էր միմիայն երեխայով։ Նա անդիմադրելի ցանկութիւն էր զգում վերցնել նորան իւր ծնկների վրայ. նա դեռ շարունակում էր զգալ իւր կրծքի և սրտի մէջ այն քաղցր յուզումը, որը նա ունեցել էր փոքր ինչ առաջ եկեղեցուց վերադառնալիս երեխային գրկած ժամանակ։

Նա յուզւում էր այդ մարդկային սաղմի առաջ ինչպէս մի անթափանցելի խորհրդի առաջ, որի մասին մինչև այդ օրը նա երբէք չէր մտածել։ Աքանչելի և մեծ խորհուրդ նորաստեղծ կեանքի, վեհապանծ և սրբազան խորհուրդ մարդկային նոր էակի արար-

չազործութեան, խորհուրդ զարթնող սէրի, խորհուրդ յարատեւութեան մարդկային սերնդի, որը յաւիտեան առաջ է ընթանում:

Տատմէրը կարմրած երեսով և փայլատակող աչքերով նստած ուտում էր. երեխան արդելում էր նորան ձեռները ազատ դէպի սեղանը մեկնելու:

Արեղան ասաց նորան.

—Տո՛ւր ինձ երեխային. ես կուշտ եմ:

Եւ նա առաւ երեխային իւր գիրկը:

Այդ ժամանակ ամեն ինչ անյայտացաւ, ամեն ինչ տեղի տւաւ նորա շուրջը: Նա իւր անթարթ աչքերը յառել էր այդ վարդագոյն, թխլիկ դէմքի վրայ: Փոքրիկ մարմնի ջերմութիւնը կամաց կամաց անցնելով բալուլի և վերարկուի արանքից հասնում էր արեղայի մարմնին և թափանցում էր նորա մէջ ինչպէս մի չափազանց թէթեւ, չափազանց քաղցր, չափազանց անարատ փաղաքշանք, որից արեղայի աչքերը սկսում էին տրտասւակալել:

Հանդիսականների աղմուկը գնալով-գնալով սաստկանում էր: Երեխան այդ ձայների վրայ սկսեց յանկարծ լաց լինել:

Սեղանակիցներից մէկը դուռաց.

—Հնչո՛ւր սուրբ, աջիդ մատաղ, ծիծ տուր երեխային, ձայնը կարի:

Մի փութորկալից ծիծաղ դղրդացրեց դահլիճը:

Մայրը տեղից վեր թռաւ, վերցրեց երեխային և տարաւ միւս սենեակը: Մի քանի րոպէից յետոյ նա վերադարձաւ յայտնելով որ երեխան հանգիստ քնած է օրօրոցում:

Ճաշը շարունակւում էր: Մարդիկ և կանայք մէկ մէկ դուրս էին գալիս բազր և յետոյ կրկին գալիս նստում էին սեղանի շուրջը: Մսեղէնը, կանաչեղէնը, սիւրը և գինին լցնում էին սեղանակիցների բերանները, ուռցնում էին նրանց որովայնները, վառում էին աչքերը և խառնում էին մտքերը:

Մութը արդէն ընկնելու վրայ էր երբ որ սուրճը ներս բերին:

Արեղան վաղուց արդէն անյայտացել էր և ոչ ոք չէր զարմանում նորա բացակայութեան վրայ:

Մանկամարդ մայրը վերջապէս տեղից վեր կացաւ որ գնայ երեխային նայելու: Երեխայի սենեակը բոլորովին մութն էր. նա

խարխափելով, ձեռքերը դէպի առաջ մեկնած՝ որպէսզի կահկարասիքին չկպչի, մօտենում էր օրօրոցին: Յանկարծ մի տարօրինակ աղմուկ կպաւ նորա ականջին, նորան այնպէս թւաց որ մի ինչ որ մարդ շարժւում է սենեակում: Նա ահաբեկւած յետ վազեց դահլիճ: Երեսի գոյնը թուած, դողդոջուն շրթունքներով նա հազիւ կարողանում էր բառեր արտասանել:

Տղամարդիկ հարբած և սպառնացող աղմուկներով տեղներից վեր թռան. երեսայի հայրը ճրագը ձեռին առաջ վազեց...

Արեղան օրօրոցի առաջ ծնկաչոք հեծկլտում էր ճակատը դէմ տաւած բարձին, որի վրայ հանգստանում էր երեսայի փաբրիկ գլուխը:

ՀԱՋԻ ԱԲՐԷԿ

(Պոէմն լէզգիների կեանքից)

Մ. ԻԻՐ. ԼԵՐՍՈՆՏՈՎԻ

Թարգմ. ՅԱԿ. ՏԵՐ-ԳԵՈՐԳԵԱՆՅԻ

Մեծ է և հարուստ առւլը Զէմնտ,
Նա և ոչ ոքին հարկ չէ վճարում.
Նորա պատերը—ամուր իբր պողպատ,
Մզկիթն էլ կանգնած է ուղղի դաշտում:
Նորա որդիքը ազատ են ծնւած
Յւ պատերազմի կրակով անցած.
Համբաւը նոցա քաջութիւնների
Բարձր հնչում է ամբողջ Կովկասում,
Հեռաւոր, օտար ազգերի միջին.
Նոցա գնդակը դեռ իրա օրում
Զի վրիպել երբէք սուսների սրտին:
Տօթագին օրը սահում է երկնով,
Շողի բարձրանում վաւառղ ժայռերից.
Արծիւը անշարժ իրա թևերով
Ամպերում հազիւ սեին է տալիս:
Խրճիթները խոր նիրհում են քնով,
Միայն առւլում չէ տիրում հանգիստ:
Դատարկում է առւլը խռոված,
Յւ այն սարի տակ, ուր քամին փչում,

Եւ որտեղ ժայռից գետակն է խփում,
 Մի խմբակ է մոտխոհ կանգնած:
 Ինչո՞ւ համար են արդեօք հաւաքւել
 Խորհուրդ անելու այն կարիճները,
 Ուզո՞ւմ են նորից սարը արշաւել
 Բռնելու օտար երամակները.
 Չե՞ն սպասում արդեօք ռուսաց զօրքերին—
 Արիւնաճարաւ, անկուշտ հիւրերին.
 Ո՛չ--կարեկցութիւն և զայրոյթ միայն
 Տեսնւում է նոցա զէմքերի վերան:
 Անսովոր, օտար զգեստներով ծածկւած,
 Մի քարի վերայ, նոցա մէջ տեղում,
 Մի ծեր, ալեւոր լէզգի էր նստած,
 Եւ դետի նման խօսքերն են հոսում:
 Եւ երբեմն էլ փայլող աչքերը
 Տխուր դարձնում էր իւր շրջակայքին,
 Եւ ծեր լէզգիի այն պատմութեանը
 Ողջը միասին ուշադիր էին:
 Լէզգին ասում էր --
 Ասաւաճ, իբր նեցուկ իմ թոյլ ծերութեան,
 Ինձ պարգևել էր
 Երեք քնքոյշ դուստր և երեք տղայ.
 Բայց բռնկեցին չար փոթորիկներ
 Եւ ծառի ոստերը խորտակեցին.
 Ահա կանգնած եմ այժմ միայնակ
 Ինչպէս մերկ արմաւ հովիտի միջին:
 Աւանդ, ես ծեր եմ. աւելի սպիտակ
 Այն սարի ձիւնից են իմ ալիքներ.
 Բայց երբեմն էլ նոյն իսկ ձիւնի տակ
 Հոսում են արագ փրփրող ջրեր:
 Այս կողմը եկէք, քաջեր Ձէմասի,
 Ձեր քաջութիւնը ցոյց տւէք դուք ինձ.
 Ո՛վ է ճանաչում իշխան Բուլատին
 Ո՛վ յետ կը դարձնէ դուստրս նրանից:

Գերի թողմեցին նորա քոյրերը,
 Եւ անհաւասար կուի մէջ ընկան
 Մընացած նորա ողջ եղբայրները.
 Օտարութեան մէջ երկունն են ապրում.
 Փոքրը իմ առաջ շիտապատ եղաւ.
 Նա դեռ ժպտում էր իւր հոգին տալիս,
 Երևի դրախտի կոյսն էր տեսնում
 Ուղիղ դէպ ինքը իւր մահւան ժամին՝
 Երփներանգ պսակը շարժելով ձեռքին
 Նրկնից իջնելիս:

Ես լուռ անապատ ահա քաշեցի
 Իմ վերջին աղջկանըս հետ միասին,
 Ողջ ունեցածս նա էր, և նորան
 Պահպանում էի մի սրբի նման:
 Ես հետս միայն նորան վերցրի,
 Նաև իմ զէնքը—ընկեր անբաժան,
 Եւ իմ հարազատ խրճից հեռու
 Նրա հետ բնակեցի մի քարաժայռում:
 Թշուառութեանը շուտ ընտելացայ—
 Իսկ ազատութեան՝ ես վաղուց էի:
 Բայց խփեց ժամը անխուսափելի,
 Եւ քնքոյշ թռչնակս հեռու թռաւ:
 Մի խուլ գիշեր էր: Ես քնած էի.
 Մատաղ հրեշտակս իմ գլխիս վերև
 Լռիկ նստած էր,

Եւ կանաչ ոստով երեսիս թեթեւ

Հովահարում էր:

Զարթնում եմ չանկարծ... Լսում. շշնջիւն,
 Թոյլ անզօր մի ճիչ—և ձիւս դոփիւն.
 Վազում տեսնում եմ հեռու սարի տակ
 Նրան ամուր բռնած իւր գրկի միջին
 Մի ձիւսոր է արշաւում արագ:
 Ես անխճեցի նոցա երկուսին.
 Ո՛ր, ինչու համար հասնել չը կարաց

Նոցա ետևից միւս սուրհանդակը.
 Արիւնոտ վրէժով այս տեղը պահած
 Իմ այս գնդակը:
 Ոչ չուենալով հանել վրէժը
 Իմ նախատինքիս,
 Ինչպէս ամբակով մի օձ ջախջախւած
 Ես թափառում եմ լեռների մէջը
 Այն ժամանակից:
 Եւ հանգիստ չը կար այլ ևս ինձ համար
 Այն շարքաշ օրից:
 Այս կողմը եկէք, քաջեր Ջէմառի,
 Ձեր քաջութիւնը ցոյց տւէք դուք ինձ.
 Ո՛վ է ճանաչում իշխան Բուլատին
 Ո՛վ յետ կը դարձնէ դուստրս նրանից:
 «Ես» — պատասխանեց կտրիճ սևաչեան,
 Իւր լայն դաշոյնը ամուր բռնելով.
 Եւ լուռ հիացմամբ ամբոխը նորան
 Շրջապատում է իրարանցումով:
 «Ես ճանաչում եմ իշխան Բուլատին».
 Վճռեցի արդէն.
 Սպասիր ինձ այստեղ դու երկու զիշեր.
 Անվեհեր հաջին դեռ ոչ մի անգամ
 Իրա նժոյգը իզուր չի հեծել.
 Բայց ժամանակին եթէ չըդառնամ՝
 Տւած երդումս մոռացիր այնժամ.
 Եւ մարգարէին իմ հոգւոյս համար
 Աղօթիր գնալիս հեռու ճանապարհ:
 Ծագեց արշալոյս: Մէդերի միջից
 Երկնի կապուտակ կամարի վերայ
 Գրանիտեայ հսկայ լեռները հեռից
 Սառչով պսակւած կանդնում են ահա:
 Եւ կրճի միջին մի ամպիկ զարթեց,
 Ինչպէս վարդազոյն առադասս փքւեց
 Եւ թողաւ վերև:

Ողջը շնչում է օրւայ թարմ օդը,
Խրամատի յետև

Սարի լանջի վրայ հանդարտ քայլերով
Ձէքէզն է գնում շուտընթաց ձիով:
Դեռ երկնային ծոյլ լուսաւորը
Բլուրների ցողը չէ ցամաքեցրել,
Բարձր ժայռերից նեղ ճանապարհը
Վայրի խաղողի որթն է ծածկել:
Նորա արծաթեայ փայլուն շիթերով
Յաճախ թռչում է տէրը և իւր ձին.
Բայց անհող թողած սանձը նրա կամքով
Գեղեցիկ մարակ շարժում էր ձեռքին.
Եւ մերթ հայրերի մի երգ այնտեղից,
Բաշի վրայ թեքւած հանդարտ նրբում է.
Եւ արձագանգը սարի ետևից
Ձէքէզի երգը վհատ կրկնում է:

Կայ մի շրջատեղ և կտրած ուղի
Անցնող սալերի ճռւան անխուփ,
Այնտեղ, ուր ծայրերն գեղ գրանիտների
Հանգում են իրանց ժանեոր պսակով:
Ինչպէս քթի տակ, ահա այնտեղից,
Խաղաղ առւն է մօտիկ որոշում,
Եւ փոշին, կանգնած հօտի գընացքից,
Եւ արթնացնելու առաջին հնչիւնն:
Եւ ուղիղ, սարի թեք լանջի ծայրին,
Իշխան Բուլատի խրճիթն է տեսնում
Եւ ինչպէս արծիւ լեռների զլխին
Տանիքին պայծառ հայեացք է յառում:
Ջահիլ լէզգուհի նստած է տխուր
Հով սաւերներում, հէնց մօտը շէֆի.
Նորա առաջը ձգւած է ուղի.
Բայց դէպի հեռու նայում է նա լուռ:
Որին ես սպասում, ասող արևելքի
Այգպիսի քնքոյշ հոգածուլ թիւնով.

Արդեօք բարեկամ գալու է հեռւից,
 Թէ քաղցրիկ եղբայրդ՝ մահացու կուից:
 Տանջւած հըրատապ խորշակից օրւայ՝
 Քո փոքրիկ գլուխը պատրաստ է արդէն
 Հանգիստ առնելու լայն կրծքի վերայ:
 Ծնկների վրայով նրա ձեռքը սահեց,
 Եւ քաղցր ոյժը հեշտասիրութեան
 Գերութիւնիցը ուսը ազատեց:
 Պայծառ հայեացքդ ծանրացաւ ահա,
 Թրջւեց արտոսրով մարգարտանման.
 Ինչպէս մէտէօր, քո այտերի վրայ
 Խաղում է բոցը հարաւի արեան:
 Այդ կախարդական քո շրթունքները
 Կանչում են սիրոյ ջերմ համրոյրները.
 Եւ, վրդովւած ես լուռ ցանկութիւնով,
 Ուզում ես կրծքիդ դու մի բան գրկել.
 Եւ սիրտդ անզօր, թոյլ թռոցով
 Ուզում է մի կողմ ծածկոցը նետել:
 Օ՛, ո՛ւր ես, սրտիս դու անգին ընկեր...
 Բայց ահա նսււ ոտի ձայն հեռւից
 Եւ ծանօթ փոշի բարձրանում է վեր—
 Նա շշնջում է. «իշխանն է գալիս»:

Յոյսը հեշտութեամբ մխիթարում է,
 Եւ աչքը նոյնպէս հեշտութեամբ խաբում.
 Արդէն ճամբորդը շուտ մօտենում է...
 Բայց, աւանդ, նորան նա չէ ճանաչում:
 Նա մի ճամբորդ է, դաշտում ուշացած,
 Առաջին անգամն է նորան տեսնում.
 Ծուխ է բարձրանում նոթիգից յոգնած,
 Հիւրասիրութիւն է ձեզնից խնդրում:
 Եւ նա իջնելու պատրաստ է արդէն...
 Դէ՛հ իջիր... Ի՞նչ է, կարծես վախեցաւ
 Իւր ապաստանից. և նայում է նա:
 Եւ մի հատ հառաչ կարծ և վշտալի

Սեղմեա՛ծ շուրթերից դուրս թռաւ յանկարծ,
 Ինչպէս տերեւը մի ջահիլ ոստի
 Ամառուայ սաստիկ փոթորկից զարկեա՛ծ:
 «Ի՞նչ ես զանդաղում շէմքի մօտ, ճամբորդ,
 Իջի՛ր արշաւող քո ձիուց թեթեւ.
 Քաղցրահամ կումիս և մեղր կայ ինձ մօտ.
 Զը սպասած հիւր ես—Աստուծոյ պարգև:

Դու, տեսնում եմ ես,

Աղքատ ճամբորդ ես.

Իսկ ես հարուստ եմ, ուրեմն յարգիր
 Հիւրասիրութիւնն իշխան Բուլաւոյի:
 Եւ երբ վերստին ճանապարհ ընկնես՝
 Քո աղօթքի մէջ չը մոռանաս մեզ:

ՀԱՋԻ ԱՅՐԷԿ

Թո՛ղ Ալլահը քեզ պահէ, Լէյիլա.
 Քո հիւրին քաղցր դու ընդունեցիր.
 Դորա փոխարէն բերել է քեզ նա
 Հօրիցդ ողջոյն իրա հետ ահա:

ԼԷՅԻԼԱ

Ինչպէս, իմ հայրս, մինչև այժմ ինձ,
 Երկար ժամանակ անջատւած ինձնից՝
 Դեռ չէ՞ մոռացել. որտե՞ղ է ապրում:

ՀԱՋԻ ԱՅՐԷԿ

Առաջւայ տեղը. մերթ օտար խրճթում,
 Մերթ անապատում:

ԼԷՅԻԼԱ

Ասո՛, ուրմիս է, երջանիկ է նա.

Տուր շուտ պատասխան:

ՀԱՋԻ ԱՅՐԷԿ

Նա կենդանի է, երբեմն թէև
 Յորդ անձրեների և ցրտի առջև
 Բաց է իր գլուխը. իսկ դժու...

ԼԵՅԻԼԱ

Ես երջանիկ եմ:

ՀԱՋԻ ԱԲՐԷԿ (ցածր)

Աւելի ևս վատ:

ԼԵՅԻԼԱ

Ի՞նչ, ի՞նչ ասացիր:

ՀԱՋԻ ԱԲՐԷԿ

Ոչինչ:

Սեղանի մօտին եկւորն է նստած,

Ձիւիրը արծաթափայլ ցորենով

Երկար ժամանակ առաջը դըրած

Դեռ ձեռք չէ տուել:

Ինչպէս նորա կոր ճակատի վերայ

Թափառում, խառնում են կնճիռները.

Ո՞վ է դրօշմել այն նորա վերայ,

Տարիքը արդեօք թէ խոր վշտերը:

Եւ, ցանկանալով զւարճացնել նորան,

Լէյիլան դափը իւր ձեռքն է առնում,

Քեքոյչ մասներով զարնում է վերան,

Պարում լէզզիկակա և ուրախ երգում:

Փայլում են սւքերն աստղերի նման,

Եւ փափուկ կուրծքը աշխոյժ բաբախում:

Եւ մի մանկական բաց ժիր բերկրութեամբ

Լցւած է նորա այն անմեղ հոգին.

Ինչպէս թիթեռը մուտքի շողերում

Պառլոս է գալիս նորա տառաչին:

Երբեմն էլ յանկարծ սպիտակ ձեռներով

Իւր հնչող դափը բարձրացնում է վեր.

Եւ գլխի վերայ պառլոս բերելով,

Հանդարտիկ իրա սեւորակ աչքեր

Ձորս կողմն է զարձնում:

Եւ, կարծես անխօս, նրա շրթունքներ

Քաղցր ժըպիտով ասել են ուզում.

«Դէ՛հ զւարճացի՛ր զու իմ տխուր հիւր,
«Թէ՛ բախտ և թէ՛ վիշտ—ցընորք է բոլոր»:

ՀԱՋԻ ԱԲՐԷԿ

Բաւական է այդ. սպասիր Լէյլիւն,
Քո զւարճութիւնը մոռցիր մի վայրկեան.
Ասա ինձ, մի՞թէ քեզ վրդովելու
Երբէք չէ եկել մեռնելու միտքը.

Տո՛ւր ինձ պատասխան:

ԼԷՅԻԼԱ

Ո՛չ, ի՞նչ պէտքս է ցուրտ գերեզմանը.
Իմ դրախտը երկրիս երեսին գտայ:

ՀԱՋԻ ԱԲՐԷԿ

Մի հարցում կրկին.
Ձեռ տխրել արդեօք հեռու, հարազատ
Քո հայրենիքի,
Մեր Դաղստանի անսմուլ ու պայծառ
Երկնքի համար:

ԼԷՅԻԼԱ

Բայց ինչո՞ւ համար. ես աւելի լաւ,
Աւելի ուրախ եմ այս լեռնային
Մէգերի միջին:
Ամեն տեղ շքեղ է Աստուծոյ աշխարհն.
Սիրտը սեփական չունի հայրենիք,
Նա չէ վախենում բռնութիւններից.
Կ'երթայ, կը թռչի ինչպէս մի թռչնիկ...
Երջանկութիւնը, հաւատան զու ինձ,
Աշխարհում միայն այնտեղ կը գտնես՝
Որտեղ սիրում են, հաւատում են մեզ:

ՀԱՋԻ ԱԲՐԷԿ

Սէրը... բայց արդեօք գիտե՞ս թէ՛ նրն է
Աշխարհում երկրորդ երջանկութիւնը.
Նրա համար, ով որ թաղեց ամեն բան՝
Ինչին հաւատում, ինչը սիրում էր:

Այն երջանկութիւնն ճիշտ է քան սէրը,
 Եւ արցունք, արիւն խնդրում է միայն...
 Այնտեղ է ահա մարդոց սփոփանքը,
 Երբ մեռնում է այլ մի երջանկութիւն.
 Այնտեղ է նաև ոճրի քաղցրութիւնն,
 Այնտեղ է հոգեոյս զրախտն ու դժոխքը:
 Միշտ և անսփոփոխ նա մեր մէջն է մնում,
 Մերթ ասնջում է մեզ և մերթ փաղաքշում:
 Ո՛չ, վրէժխնդրութեան մի ժամի համար,
 Երգում եմ ես չեմ վերցնի ողջ աշխարհ:

ԼԵՅԻԼԱ

Բայց դու դժգոյն ես...

ՀԱՋԻ ԱԲՐԷԿ

Լսիր. ես առաջ եղբայր ունէի.
 Եւ նա—բարձրից վճռւած էր այդպէս—
 Ընկաւ զնդակից իշխան Բուլատի:
 Ընկաւ նա անփառք, ոչ ազնիւ կուտւմ,
 Այլ ինչպէս գազանը անտառային—
 Զը ճանաչելով իրա թշնամուն.
 Բայց իւր վրէժը և ատելութիւնը
 Ինձ կըտակ թողեց իւր մահւան ժամին:
 Արդէն հանւած էր իմ դաշոյնը—
 Ես գտել էի նորա սպանողին—
 Բայց մտածեցի. «Ա՛յս է վրէժը...»

Մի՛թէ մի վայրկեանն

Կը հատուցանէ՞ իմ քաշած երկնի
 Վշտի, տխրութեան

Եւ տանջանքներիս փոխարէնը:
 Օ՛, ոչ. աշխարհում իշխանն անսխառնաւ.

Սիրում է մի բան.

Կը գտնեմ նորա սիրոյ առարկան,
 Եւ իմ հարւածս նորան կը կորցնէ:
 Վերջապէս ահա կատարւեց: Ժամ է!
 Քո ժամը դեռ ևս երէկ է խփել.

Տես, մուտքի շողը արդէն փայլում է.
 Լսում եմ ձայնը իմ թշուառ եղբոր:
 Առաջին անգամ երբ տեսա՛յ այսօր
 Քո քնքոյշ զէմքդ—խակոյն իմ հոգին
 Մի խըռովարար ու դառն վշտով
 Դժոխքի նման վառւեց վերստին.
 Բաց աց դգագմունքը սլացաւ շուտով...
 Վալլահ, երգումս համարձակօրէն

Նս կը կատարեմ:

Ինչպէս սարերում ձիւնը ձմեռւայ,
 Իրա թուլացած ծնկների վերայ՝
 Նրա առաջ դժգոյն ընկաւ նա գետին:
 Աղերս, հեկեկանք, արցունք, փրփուրներ
 Այն քարասրտի առաջ թափւեցին:
 «Օ՛, սոսկալի ես քո այդ հայեացքով,
 Ո՛չ, դարձրու զէմքդ, մի՛ նայիր այդպէս.
 Քո ողջ խօսքերը ահա իմ մարմնով
 Սահում անցնում են սառն թոյնի պէս:
 Աստուած իմ, մի՞թէ ծաղրում ես զու ինձ,
 Շուտ պատասխանիր, միթէ ոչինչ գին

Քո առաջ չունին

Արցունքներն, թափած անմեղի աչքից.
 Օ՛, զթան, աւան, քո հայրենիքում

Ինչպէս են լալիս:

Վանդ է, շատ վաղէ ինձ համար մեռնել,

Թող ինձ իմ կեանքս,

Ծաղիկ հասակս.

Դու ուրախութիւն մի՞թէ չես զգացել.

Զահիլ ժամանակ արդեօք եղև ես

Դու մէկից սիրւած, ինչպէս այժմ ես.

Օ՛, ոչ չիրաւիս:

Բայց օրհասական լռութեան միջին
Մռայլած դեմքով կանգնած էր Հաջին:

«Քո աչքերի մէջ, անգութ, չեմ տեսնում
Ո՛չ արտասուներ, ո՛չ կարեկցութիւն:
Ա՛խ, Ասուած իմ... ան... Թո՛ղ սպասեմ դարձեալ,
Գէթ մի ժամ միայն,
Գոնէ մի վայրկեան!...»

Սուրը շողշողաց, և մի վայրկեանում
Նորա գըլուխը գետին գըլորեց...
Եւ արնոտ ձեռքով գետնից վերցնելով,
Իւր կորիճ սրի սուր ծայրը սրբեց
Նորա մազերի ալեձև հիւսով:
Ապա նա շտապով արնոտ գըլուխը
Բրդոտ եսփնջու մէջը փաթաթած,
Գուրս եկաւ, Թռաւ իւր ձիու Թաւ. քը:
Հնազանդ նժոյգը կարծես Թէ բռնած
Մի գերբընական վախից նրա տակում,
Թաւամազ բաշը դիք ու ցից կանգնած,
Եւ խռմփալով,

Ու փրփրալով

Իրա պողպատէ սանձն է կրծոտում,
Եւ խրխընջում է ոնդները բացած:
Ո՛չ խօսք, ո՛չ սանձի չէ լսում կարծես,
Եւ ղէտի լեռներ Թռչում նետի պէս:
Ներկեց արշալոյս, ուշ է, շատ ուշ է,
Խոնաւ գիշեր աշնքան երկար չէ:
Եւ Կովկաս լեռան վեհ գագաթներից,
Ամպերը հանդարտ, բայց սպառնալից
Օձերի նման առաջ են սողում,
Եւ անկարգ ու խառն մի խաղ են կապում:
Խեղդիչ անցքերով անցընում են վեր,
Փշոտ Թփերից բռնելով ամուր.

Տերեւների վրայ թափւում են ակներ.
 Մոխրագոյն, պղտոր գետակ է հոսում.
 Ուր խոտի տակից խփում է փրփուր,
 Եւ ինչպէս մեռած գլխի զոյգ աչեր
 Մութ այրի մէզի միջիցն է նայում:
 Դէհ, շուտ շտապիր, ճամբորդ միայնակ,
 Լաւ պատսպարւիր քո եափնջու տակ.
 Կաշւէ սանձը դէպի քեզ քաշիր,
 Կաշւէ մտրակը եռանդով շարժիր.
 Քո ետեւիցը դեռ չէ սլացել
 Ո՛չ լեռան ոգին, ո՛չ գազան վայրի,
 Բայց թէ կարող ես դու աղօթք անել,
 Հէնց այս րոպէին—արգելք չէր լինի:
 «Թո՛ր իմ նժոյգ: Երկչոտ աչքերով
 Ինչո՞ւ ես այդպէս առաջդ նայում.
 Դա քար է՝ յարդած վարար հոսանքով.
 Դա օձն է այդպէս իւր մէջքով փայլում:
 Քո բաշով ռազմի դաշտերի միջին
 Սրբել եմ արիւն հզօր բազուկից:
 Խուլ անապատում, սոսկալի ժամին,
 Առաջին անգամ չես փրկում դու ինձ:
 Մենք հանգիստ կ'առնենք հայրենի երկրում.
 Քո փոքրիկ սանձը ամբողջը նորից
 Ես կը զարդարեմ ռուսաց արծաթով:
 Այնտեղ կը լինես դու կանաչ դաշտում:
 Վաղո՞ւց ես արդեօք դու այդպէս փոխւել,
 Պատասխան տո՛ւր ինձ իմ անգին ընկեր.
 Ինչո՞ւ ես տակս ծանր շունչ քաշում,
 Ինչո՞ւ ես այդպէս շուտ փրփուր կտրել.
 Ահա լուսինը ամպերի միջից
 Շուտով կը ծագէ,
 Եւ կատարները ծառերի, բարձրից
 Կ'արծաթագօծէ:
 Եւ մի դաշտավայր կը տեսնենք շուտով,

Ուր մեր առւելը ներհում է մթնով.
 Վառ պսպղալով կը փայլեն հեռւից
 Կրակներ Ձէմատի քաջ հովիւների.
 Եւ կը որոշենք մենք մօտենալիս,
 Խնւլ խրխընջիւնը երամակների,
 Միւս ձիաները շուրջդ կը խռնեն.
 Բայց բաւական է տեղից բարձրանամ—
 Նոքա վախեցած, ահով կը խորտկան,
 Եւ ողջը մէկ տեղ յետ-յետ կը քաշեն:
 Նոքա դեռ հեռւից պէտք է զգան որ մենք
 Ճակատագրի անվախ որդիք ենք...»:

Դեռ խաւարով են ձորերը պատած
 Առւել Ձէմատ
 Ներհում է հանդարտ.

Մի ծերուկ միայն այնտեղ չէ քնած:
 Միայնակ, նման շիրմի արձանին,
 Անշարժ, փոշեպատ ուղիի մօտին
 Մոխրագոյն քարի վերան է նստած:
 Նորա աչքերը խորին թախիժով
 Անթարթ, միշտ դէպի հեռուն են նայում.
 Բայց հիվ է արդեօք այս ձիաւորը.
 Հանդարտ իջնում է սարի թեք լանջից.
 Քաւամագ բաշով նորա ընկերը
 Գլուխն է կախել յոգնածութիւնից:
 Զգոյշ պահում է ձեռքում ինչ որ բան,
 Իւր ճամբորդական եփնջու տակին,
 Եւ պահպանում է աչքերի նման:
 Եւ մտածում է ծերը ու ասում.
 «Դա մի ընծայ է, յիրաւի, անզին
 Նա իմ սիրելի աղջկանից բերում:

Մօտ է ձիաւորն. սարի տակ իւր ձին
 Յանկարծ կանգնացրեց.

Դողդոջուն ձեռքով մութը ետփնջին

Կամացուկ բացեց:

Բացեց, և նորա արիւնտու ընծան

Հանդարտ գլըրուեց խոտերի վերան:

Ո՛հ, արդար Ասուած, թշուառն առջևը

Իւր Լէյիլայի գլըրուիսը տեսաւ:

Եւ նա կատաղի հրճւանքի միջին

Իւր շրթունքներին գլուիսը սեղմում էր:

Նա նորան իրա տանջանքը վերջին

Դառն կսկիծով կարծես յանձնում էր:

Մի հատ հաւաչի, մի համբոյցի մէջ

Իւր բոլոր կեանքը նա ողջը թափեց.

Անդուրթ մարդկանցից, վշտերից անվերջ

Նորա խեղճ սիրտը հերիք տանջւեց,

Նա ինչպէս վաղուց մաշւած մի թել

Յանկարծ կտրւեց.

Եւ նորա անշարժ, և խոր կնճիւններ

Մահւան զալկութեամբ ողջը ծածկւեցին:

Եւ այնպէս արագ դուրս թռաւ հոգին,

Որ իւր այն միտքը, որով ապրել էր—

Մինչ ժամը վերջին՝

Նորա երեսի պծերը թողնել,

Զը կարողացաւ նա ամենւին:

Մռայլ լուութիւն պահում էր Հաջին,

Եւ այդ բաներին նա չը զարմացաւ.

Նայեց մի անգամ իւր ձիուն, սրին,

Եւ զէպի սարերն արագ սլացաւ:

Տարին բոլորեց: Խուլ կրճի միջին

Երկու զարշահոտ զի դտան փոշում,

Երբ ճամբորդները թափառում էին՝

Նոցա թաղեցին մի լերան բարձրում:

Արիւնով նոցա շաղախւած տեսան.

Եւ չարիքը նրանց դէմքերի վերան
 Պայծառ դրօշմել էր կնիքը անէծքի.
 Եւ գետնի վերայ, ամուր զրկւած,
 Փետացած՝ փռւած տարածւած էին
 Երկու բարեկամ—գուցէ չարագործ! —
 Բայց միշտ թւում էր խեղճ անցորդներին,
 Որ նոցա դէմքերն միշտ փոփոխւում են,
 Որ միշտ սպառնում են նոցա շուրթերը:
 Նոցա զգեստները ողջ հարուստ էին,
 Եւ գտակները բաշխուղով ծածկւած.
 Մէկի մէջ նրանցից տեսան Բուլատին,
 Միւսին ճանաչել ոչ ոք չը կարաց:

1895 թ. օգոստ. 12, Թիֆլիս:

Ծ Ո Վ

Շ Ա Ն Թ Ի

Ծով, եկ բացւինք մենք իրար.
Եւ կը կարծեմ ես ու դուն,
Պիտի սիրենք անպատճառ
Իրար յոյզն ու տրտմութիւն:
Ես քեզ շուտով հասկըցայ.
Վեհ, ամենի բնութեան
Կապոյտ սիրտն ես դուն հրակայ.
Սիրտ, իմ սրտիս յար-նման:

Դուն ալ ունիս՝ ինծի պէս՝
Դժգոհութեան վայրկեաններ,
Երբ կընճըռոտ կը ճողբես
Խիճոտ, սեղոտ ափն ի վեր.
Ալիքներդ ծալիծալ
Կը տրանջան, կը շաղեն.
Հեզնութեան մը պաղ ծիծաղ
Դուրս կը պոռթկայ քու լանջէն:

Ս'երթ աստղերուն կը քըծնիս,
Գոհ կը խաղաս ծոցիդ հետ
Եւ յուզումէդ կ'առկայծիս,
Սարսուռ կ'անցնի ջիղերէդ.
Դմեն ալ վստահ՝ այդ պահուն՝

Կը փաթթըլիս յոյսերուդ,
Որոնք ժըպտով մը անհուն
Կ'իջնեն ծոցըդ քու ծըփուտ:

Այլ և անշարժ, անծըպտուն,
Ամեն բանի անտարբեր
Մեռելութիւն մ'ունիս դուն,
Որ իմ կրծքէս ես խլեր.
Ձեռ խլըրաիր, չեռ խորհիր,
Եւ ոչինչ ալ չեռ ըզգար.
Անխորհուրդ է ամեն իր
Այդ վայրկեանիդ ցաւագար:

Մերթ ալ յանկարծ փըրփըրուն
Ֆասուկով մը մոլեկին՝
Կը գալարիս ժայտերուն
Ու կը թքնես երկնքին.
Ըսէ, ինչո՞ւ այդ զայրոյթ.
Միթէ դո՞ւն ալ կապւած ես.
Միթէ և քո՞ւ ուժերուդ
Ազատ գործել չեն տար քեզ:

Եւ վրէժի շեշտերով
Ո՞վ կը կանչես, ապագան,
Երբ կրծքիդ մէջ ցաւ, կորով
Ու բաղձանքներ եռ կու գան.
Մեծ բնութեան դէմ հանդէս
Դուն անց կ'երգես զայրադին.
Թէև ժայտերն են ըստէս
Լոկ ուկընդիր մեր երգին:

1893 թ. չուլիս 18, Ռուդոլֆ:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱԻԱՌՈՒՄ

(Ճանապարհորդական յիշատակարանից)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՆՈՒՆՈՒ

Կ Ի Ն Ը

«Can man be free if woman be a
slave!» Shelley.

Անտեղ մարդ չի կարող ազատ լի-
նել, ուր կինը ստրուկ է:

Շեքսպիր:

Արաբական խալիֆազի խորհուրդը (որ վիշտով է Բաֆֆի իր «Հալ կինը
և հալ երիտասարդությունը» աշխատությունն մեջ) թէ՛ «երկու բան պետք
է ծածուկ պահել օտարի աչքից, մէկը—փողը, միւրը—կինը»,—ասած է
հէնց Հին-Նախիջևանի գաւառում բնակող ժողովրդի համար...

Ծանօթանալով այդ գաւառի կանանց դրութեան հետ՝ ակամա՛ մտա-
քերում ես հին Բիւզանդիոնը, որտեղ կինն իր մարդու աղախինն էր,
ստրուկն էր: Զուրկ ամեն տեսակ ուրախութիւններից՝ նրա կոչումն էր,
հնազանդելով իր «օնաքս»-ի ¹⁾ անառնական կրքերին, բաղմացնել մարդ-
կանց ցեղը: Տեսչին այն կարեւոր առարկաներից էր նա, որ կարող
էր լուպէական վարձութիւն պատճառել տանտիրոջը: Նոյնը մօտաւորա-
պէս, կատարում է աշտմ և Հին-Նախիջևանի գաւառում: Մարդ միանգա-
մա՛ն զարմանում է, թէ ինչպէս մի երկիր, որտեղ կան և՛ զպրոցական
ուսուցիչներ, և՛ քահանաներ, կա՛յ վարդապետ, կա՛յ ինտելիգենտ երի-
տասարդութիւն, — չի թողնում իր վալրենի կեանքը: Անշուշտ մեծ դեր
այդ գործի մէջ խաղում են մահմեդականները, որոնց նախկին՝ հալը չի
հեռանում իր «պապական» աւանդութիւններից: Խեղճ կինը Նախիջևան-
ցու ²⁾ համար մի «մեքենա» է, «կրաւորական էակ», որի վրա՛ բնու-

¹⁾ Յունարէն բառ է. նշանակում է՝ տէր—ГОСПОДВЪ, ВЛАСТИТЕЛЬ:

²⁾ Նախիջևանցի առելով՝ հսկանում հմ ամբողջ գաւառը:

թիւնը շատ պարտաւորութիւններ է դրել: Հաւախօյն վերկենալ տեղից ու մինչև արևի մալը մտնելը մի սորոկի պէս բանել, բազմաթիւ պատրաստել, կերակուր կիսել կամ կար անել — նկատում էք՝ ոչ մի մտաւոր գործ — դրանք են կնոջ պարապմունքները... Աստարեան աղախնութիւն... Ինչպէս աղախինը չգիտէ, թէ ինչ բանի է պսօր իր տէրը և կամ ինչ է անելու էքուց, աճյալէս և կինն աչտեղ տեղեակ չէ իր մարդու պարապմունքներին: Այդ նրա գործը չէ, նա բանում է, որ իր «հախն» առնի, «հախն» էլ հօ «մի փոր հացն է»:

Աղջկալ ծննդեան օրից հէնց նախիջկանցին նրա և տղալի մէջ մեծ տարբերութիւն է դնում... Աղջկալ ծնունդը աւելի դժգոհութիւն է պատճառում ծնողներին, քան թէ տրախութիւն: Ինձ պատահել է անձամբ ստուգել աղջիկ:

— Լսել եմ ուխտ էլի գնացել, իսէր լինի, ինչ կալ, — հարցրեցի մի օր դրօնակու ժամանակ իմ բարեկամից:

— Եսօր-էքուց կինս աղատելու է, գնացի սրբերից խնդրեցի, որ բերածը տղալ լինի, — պատասխանեց նա:

— Ինչո՞ւ, աղջիկը ինչո՞վ է պակաս:

— Ե՛հ, աղջիկը բէքախտ բան է, կը պահես, կը մեծացնես, չետոյ էլ կը դցես մէկի ձեռքը...

Աչտեղ մեր խօսակցութիւնը ընդհատեց, որովհետեւ վրահասաւ Ռ Գիւղի ուսուցիչը ու սկսեց տաք-տաք պատմել իր ուսումնարանի քնու-թիւններին մասին:

Վսկալն աւսքանն էլ հերիք է մեր ընթերցողին եզրափակելու, թէ ինչ ցաւ է հօր ու մօր համար աղջկալ ծնունդը...

Հազիւ մեծացաւ երեխան, կազդուրեց իր «տոտիկները», մալը նրան աղատութիւն է տալիս, բազմապատէ՞ղ, երբեմն էլ փողոցներ չափել (զըլ-խաւորապէս գիւղերում), — դրանք են փոքրիկ աղջկալ խաղերը:

Ինն-տասը տարեկան հայուհին սկսում է աչցելել դպրոցը: Ինչո՞ւ... ծնողները հէնց սկզբից ասում են իրանց աղջկան՝ «բալա, դասերդ լաւ ուրտիր, դասերիցդ ետ մի ընկնիր, կ'ասեն»՝ ֆլանքեասի աղջիկը փիս է սովորում, ուղող էլ չի լինիլ»:

Տասներկու տարեկան հասակում հալ աղջիկը թողնում է դպրոցը. ալժմ նա մեծացել է, «նրա կործքը սկսում է լցւել», ինքն էլ «հասնում է». ալժմ նա օրիորդ է, էլ չի կարելի ամեն օր տանից դուրս հանել նրան... Բացի ալդ, տանը մարդ չկալ, մալը մենակ է, նա էլ, փառք Ատուծու, մեծացել է, պիտի մնալ տանը՝ «մօր ձեռքի փուշը հանելու»: Ի՞նչ է տալու նրան ուսումնարանը, գիր-ղալամ անել գիտէ, հերիք է, էլի...»

Առհասարակ հաշ-ժողովուրդը, թէպէտ և շատերը հակառակն են պնդում, դեռ կարելի է ասել, ամենեւին չի հասկանում դպրոցի նշանակութիւնը: Իսկ եթէ նա ուղարկում է իր աղջիկը ուսումնարան,—այդ աչն պատճառով է, որովհետեւ այժմ չէր թւած աղջկա համար «մարդ ճարելը» դժւար բան է. և չետու—լոկ ձեռն համար՝ հարեանը չի կամենում ետ մնալ իր հարեանից: Դպրոցը Հին-Նախիջևանի գաւառում բնակող ժողովրդի համար մի առևտրական գործիք է, որի շնորհիւ «խրդում են» տան «բէբախտ բաները...» Դպրոցը համարեա ոչինչ չի տալիս հաշ օրիորդի մտաւոր զարգացմանը: Նա, որ պիտի զարգացնէ հաշ աղջկա խելքն ու միտքը, որ պիտի լափնացնէ նրա բարոյականութիւնը և հաշեացքները կեանքի աչս և աչն հարցերի վրայ,—տալիս է նրան մտաւոր դատարկութիւն: Դպրոցը, որ պիտի ճանաչել տալ հաշ օրիորդին նրա կոչումը, տեղը ընտանեկան, հասարակական գործերի մէջ,—տալիս է նրան «գիր-ղալամ անելու» շնորհք, լցնում նրա գլուխը չոր ու ցամաք, անկապ նախադասութիւններով: Եթէ դպրոցը մի բան տալիս է հաշ օրիորդին, աչն է՝ ժողովրդական մեղեդիները երգելը. աչդ էլ, պէտք է խոստովանել, առևտրական նպատակով է: Մի քանի տարի ուսումնարանը աչցելով, ժողովրդական երգերը լաւ կատարող և, որ ամենից գլխաւորն է, սիրուն օրիորդը՝ շատ «գլխանց կը լինի»:

Ուսումնական շրջանից հաշ օրիորդը մտնում է մի խորհրդաւոր շրջան: Այդ աչն, ըստ Ռաֆֆիի, «մտանդաւոր հասակն» է, որին հարկաւոր է մօտենալ մեծ զգուշութեամբ՝ փորձառութիւնով, մտաւոր և բարոյական զարգացմամբ զինաւորւած. խօսքս ամուսնական շրջանի մասին է: Դպրոցը պիտի նախապատրաստէ...

Տասներկու տարեկան հասակից աղջիկը սկսում է խառնել մօր տնտեսական գործերի մէջ: Շաբաթներով փակ նստում է տանը. մարդու երես չի տեսնում: Կեանքի ուրախութեան դռները նրա առաջ կամաց-կամաց սկսում են փակել: Նրան դնում են վանդակի մէջ...

—Տես, տղամարդի երեսին արձակ չնաչես. տեղ դնալիս աչս չանես, աչն չանես. աչքերդ միշտ ցած պահիր, խօսեցնելիս ձաչն չնանես, և աչն և աչն,—այդ անհրաժեշտ պատէրներն է տալիս մաչը ամեն օր իր աղջկան:

Աղջիկը ամենաչն սրբութեամբ է կատարում մօր պատէրները. հակառակ դէպքում մաչը, պատահելիս, նրան հարսանիք կամ «ժամ» չի տանիլ: Սկեղեցի, հարսանիք գնալն էլ ունի «ալիշվէրիչի» նպատակ: Արտաքուստ գեղեցիկ կոկած օրիորդները աչտեղ «փեսացու» են ման գալիս: «Փաչ» կամ «առլաս դէչրան», «մեղալեօնը» վղից կախ, «բիլազուկները» (ապարանջան) թևերին... արտաքուստ՝ «գեղեցիկութեամբ որպէս թագուհի»... Բայց, հաւատացէք, երկու խօսք կապելու ընդունակութիւն անդամ չունեն...

Բայց շարունակենք մեր խոսքը:

Ուրեմն՝ տասներկու տարեկան հասակից օրիորդը սկսում է մասնակցել մօր տնտեսական գործերին և միևնույն ժամանակ նա «հարսնացու» է. նա իր համար զուգ է որոնում... Խոչալ է ս, մտնելով կեանքի մէջ, ծանօթանալով սրա նրա հետ՝ իր բնաւորութեան համամիտ բնաւորութիւնը հտնելու... ինչ, լուկ որսալով, իսկ որսում է իր chique-ով, գեղեցկութեամբ, հարստութեամբ:

Բաֆֆին շատ ճիշտ է ասել չըջանը «վտանգաւոր» անւանել: Վտանգը մի կողմից սպառնում է աղջկան, իսկ միւս կողմից—ծնողներին:

Բացադրենք:

Օրիորդը աչտեղ կարող է «մարդու գնալ» մինչև 16—17 տարեկան հասակը. շատերը պսակւում են 14—15 տ. հասակում, ոմանք էլ 13 տ.—աչդ՝ քաղաքի մէջ. իսկ գիւղերում ես տեսել եմ 12 տ. «թաղա հարս»: Մեր սրբազնագոյն Սինոդը պէտք է որ ուշադրութիւն դարձնէր աչդ տեսակ պսակների վրայ և դասէր նրանց «ի շարս անհաւասար ամուսնութեանց» անւանեալ «հրեշտակն կամ տգեղ ամուսնութիւնք»:¹⁾ 17-ից վեր օրիորդը «տախտացել է», նախիջկանցու ասելով, աչսինքն՝ նրա ամուսնանալու ժամանակն անցել է...

Որովհետեւ օրիորդի պսակւելու սահմանը 17 (սակաւ՝ 18) տարին է, ուստի ծնողներն աշխատում են, որքան կարելի է, չուտ «մարդու տալ» իրանց աղջիկը, «պլխանց անել»,—հակառակ դէպքում աւելորդ բռն պիտի վերցնեն իրանց մէջքին. բացի աչդ—հարեաններն էլ կասեն՝ ֆլանքեասի աղջիկը պառաւեց, մնաց տանը... Երեխալութիւն...

Այժմ՝—օրիորդը աչդ չըջանի մէջ ծանօթանում է պէսպէս «դարդերի» հետ: Նա շատ հէքիաթներ է լսել փոքրիկ ժամանակը իր մօրից կամ առախից. նա խոր դրոշմաւորել էլ է իր սրտի մէջ հէքիաթներում պատահած սիրալին դէպքերը, կամ այս և այն ջահէլ աղջկաչ, երիտասարդի անուսները: Հիմա էլ՝ հազարից մի անգամ նա հանդիպում է անծանօթ երիտասարդի... Իսկ հանդիպելիս եռում է նրա երակների մէջ ջահէլ անփորձ արիւնը, սիրտն էլ «տուկտուկ» է անում: Երբեմն հանդէսներում պատահում է, որ մի համարձակ պատանի հաւանած աղջկան աչքով է անում: Խեղճ օրիորդը իսկույն կարմրում է և իր դէմքը դէպի գետին դարձնում: Եթէ մալը հարցնում է՝ ինչ է բալա, ինչ եղաւ քեզ.—խորամանկ աղջիկը պատասխանում է՝ ոչինչ. շատ չոգ է, մալրիկ:

Ոմանք մեր քերթողներից ասում են, թէ հաչ աղջիկը «սիրոյ վրայ մտածելու ոչ ժամանակ ունի և ոչ էլ կարող է»:¹⁾ Բայց աչդ աչդպէս չէ. Հաչ աղջիկը սիրոյ վրայ մտածելու ժամանակ ունի և մտածում է: Սակաւն

¹⁾ Տես. Բաֆֆի «Հաչ կիւնը», էջ 20:

Քնչպիսի սէր է նրա սէրը, երևակալական, անիրագործելի մի սէր, որ խեղդում, մեռնում է նրա սրտի մէջ աչն ընկնելիս, երբ նրան փեսայի հետ կանգնեցնում են պսակի տակ: Հաջ օրիորդը ունի՝ իր երևակալութեամբ ստեղծած՝ մի սիրելի, մի ետր, որին ներում է նա իր ազատ ընկնելը՝ երգելով նրան սրտաշարժ մեղեդիներ կամ մտածելով նրա մասին: «Ջան-գիւղում» ժողովրդական երգը գեղեցիկ սպասցոյց է մեր ասածին: Հաջ աղջկալ սրտի համար ետրից սիրելին չկալ, ալի պատճառով նա երգում է՝

Խնձոր ունիմ—կրծած ա,
Չորեք կողմն էրծաթ ա,
Ախպէրս ուզեց չի տըւի
Ասի ետրի ¹⁾ ղրկած ա ²⁾:

Որքան սիրում է նա իր ետրին, աչնքան էլ աւելի ատում է աչն խոչընդոտները, որոնք «խանգարող» են հանդիսանում:

Քանաքեռ բարձր տեղ ա,
Ջուրը հիւանդին դեղ ա,
Սիրած սիրածին չեն տալ,
Էս թնչ անիրաւ գեղ ա ³⁾:

և կամ՝

Ով իմ սիրածս առնի
Ձի վէլի (վալեւի) գլխի թաղը ⁴⁾:

Հաջ օրիորդի սէրը հաջ երիտասարդի սէրից, ի հարկէ, աւելի մաքուր, աւելի անկեղծ, աւելի ամուր ու տաք է, որովհետեւ նա սիրում է երևակալական, իդէալիստի սիրով, մինչդեռ երիտասարդը կուսական գեղեցկութիւնիցն է չլացած:

Ես քեզ խիստ շատ եմ սիրում ⁵⁾,
Քու սիրտն ինձանից հով ա,

ասում է հաջ աղջիկը իր ետրին:

Աղջկալի տիպեր, աչսինքն՝ երևակալական սիրով ապրող մարդիկ, զրականութեան մէջ շատ կան: Յույ տանք, օրինակի համար, Ներմոնտովի թամարի վրալ. միթէ նրա սէրը երևակալական չէր. չէ որ երևակալութեամբ ստեղծած էակի վրալ էր սիրահարել նա ⁶⁾: Մի օրինակ էլ, վերցնենք Շելլի անգլիական բանաստեղծի Ալատորին, որը նրա «Alastor or

¹⁾ Բոլոր կուրսիւները մերն են: ²⁾ Պերճ Պոստեանց «Սուս վարդիթեր», էջ 104:

³⁾ Նույն, էջ 105: ⁴⁾ Նույն տեղ: ⁵⁾ Նույն, էջ 106:

⁶⁾ Թամարի սիրող մասին տես. «Ներմոնտովի (Վե)-ը» լողաձու «Մուրճ»-ի միացեալ 11—12 համարներում, 1894 թ.:

the spirit of solitude» քերթածի հերոսն է։ Նուրբ զգացմունքներով և հանճարի ձեռներէցութեամբ թափանցած այդ երիտասարդը չի կարողանում գտնել իրական աշխարհում «ազգական մի սիրտ», որի վրայ մտադիր է «թմրել ու քնել»։ Այն ժամանակ նա ստեղծում է իր երևակաութեան մէջ մի էակ, որին ներում է իր ջերմ սէրը... Այդ խորհրդաւոր էակին նա սեպականացնում է հրաշալի հնաշխարհիկ լատիւթիւններ... Իզուր է նա լիտով աշխատում մարմին տալ իր կոնցէպցիային... Երեակաութեան սնունդը մարմնանալ չէ կարող... Հիասթափւած, խորտակւած լուսերի մէջ Ալաստոր գերեզման է մտնում... ¹⁾։

Ինչպէս Ալաստորը, չկարողանալով մարմնացնել երեակալիւն, հիասթափւած և խորտակւած լուսերի մէջ գերեզման է մտնում, ինչպէս Քա մարը ի վերջոյ զոհ է գնում իր երեակալական սէրին, այնպէս և շատ հաջօրիորդներ իրանց մաշում են այդ երեակալական սէրից, երբեմն էլ զոհւում նրան։ Ասիական խիստ հակողութեան ներքոյ պաշարւած հազար տեսակ մտածմունքներով, վանդակի մէջ հալուհին ծլել ծաղկելու փոխաբէն թառամում է, որպէս ամառնալին վարդը չջրած պարտիզում... Հիւանդը առանց բժշկի օգնութեան—մեռնում է. կաթճ առանց փշելու—հանգչում է. սէրը, եթէ նրան չտաքացնես—սառչում է. այդպէս էլ մատաղահաս օրիորդը, օրէջօր թառամում է, եթէ չտաքացնես նրա սիրտը, եթէ ճնշես, խեղդես նրա անմեղ վառ կրքերը...

Նարունակներ։

Օրիորդը, ասենք, 15 տարեկան է, և նրան «տալիս են մարդու»։ Մի պայծառ օր հարում են բակի դուռը. դուռը բացւում է. ներս են մտնում երկու կամ երեք անծանօթ երիտասարդներ։ Հարսնացուն, կարծես, բնականաբար խմանում է, որ եկել են «աղջիկ ուղեւում»,—ինչու և խկոնք թագնւում է։ Անծանօթ հիւրերին սենեակ են հրաւիրում. «երկար ու բարակ» խօսակցութիւնից լիտով հիւրերից մէկն ասում է տան տիրոջը, թէ եկել է նրա «աղջիկը ուղեւում» ²⁾։ «Ո՛րտեղացի ես, ո՞ւմ տղան ես, քննէ քարապնունքդ, քանի հոգոյ է բաղկացած ձեր ընտա-

¹⁾ Сочинения Шелли. Перв. К. Д. Бальмонта, выпускъ 2-й (1893 г.) էջ 32։

²⁾ Չինաստանում էլ «աղջիկ ուղեւում» ձեր միենուհին է, միայն թէ աշտոնը «փեսացուի» ծնողներն են ման գալիս։ Մեղանում էլ ծնողների ման գալը մնացել է մի քանի տեղերում։ Լիպերտ գերմանացին իր «Կուլտուրայի պատմութիւնը» աշխատութեան մէջ գրում է՝ «Արեւելեան Ասիայում «աղջիկ հաւանելը» բացառապէս ծնողների գործն է։ Այդ պատճառով Չինաստանում փեսան մինչև պսակի խորհուրդը կատարելու ընդհանրապէս տրամադրութեան մէջ է լինում, որովհետև նրան զեռն չտանի չէ իր ապագայ ամուսնու գէմբը։

ներքը»,—ալս կարճ հարցուփորձից չետոյ հալը տալիս է իր համաձայնութիւնը. (չատ սակաւ դէպքերում է նա մերժում). մնացել է մօր խօսքը լսել, թէպէտ և նրա խօսքը գրեթէ չունի նշանակութիւն... ալնպէս... ձեկ համար... Մալը զրականապէս շարժում է իր գլուխը աւելացնելով՝ «Ինչ անենք. աղջիկ է. մէկ օր պիտի գնայ, էլի. ինչքան շուտ գնայ, էնքան էլ լաւ է նրա համար»։ Այժմ մալը պէտք է իր աղջիկը ցոյց տալ ապագայ փեսային։ Մեծ «ղալմաղալով», սպառնալիքներով կանչում են օրիորդին թագնւած անկիւնից։ «Մարօ, եկ, ալս բեր, աչն տանք»,—անդադար կանչում է մալը աղջկան...

Խեղճ օրիորդ...

Փեսան, ենթադրենք, հաւանեց իր հարսին։ Նշան են դնում. երկու-երեք օրից չետոյ (սակաւ դէպքերում պսակը հտաձգւում է) պսակում են էլ։

Երկու արարածների կեանքը, որոնք առաջին անգամ են տեսնւում, որոնք իրարու չեն ճանաչում, երկու աղապիսի արարածների կեանքը միացնում են։ Գեղեցիկ ապագայ...

Պսակը ոչ թէ երկու մարմինների դաշնակցութիւն է, այլ և երկու հոգիների. երկու խելք, երկու կեանք միանում են՝ զործելու ընդհանուր ուղեբերով և ալդ դաշնակցութեան մէջ հոգեկան միութիւնը, ի հարկէ, մարմնական միութիւնից արժանաւորն է ¹⁾։ Ճշմարիտ միութիւն, ճշմարիտ դաշնակցութիւն միայն աչնտեղ կարելի է, երբ երկու արարած օժարակամ ²⁾, ներքին զգացմունքից լարւած, իրարու ձեռք են մեկնում, սիրոյ հաւատարմութեան, չարգանքի և հասարակութեան ձեռք։ Ճշմարիտ դաշնակցութիւն միայն աչնտեղ կարելի է, երբ երկու արարածների ներքին ձալը համաձայն է արտաքին հանգամանքների հետ անկեղծ չարաբերութիւններով, դործել միասին, անգամ աչն ժամանակ, երբ նրա թշերի վարդը կը թառամի, արեւի աչերը կը նսեմանան, խուճուճ սե մաղերը «ընչանք ծանկիշ կախ ընկած» ³⁾ կը ւարտակեն, կը կարճանան թափելուց, երբ «չարմաղ պոօյները» ⁴⁾ կը փետանան, իսկ «չիտակ տնկու» ⁵⁾ հասակը կը կորանալ, երբ նրա ջահէլ արիւնը կը սառչի, կրքերը կը հանգստանան...

¹⁾ «О современномъ положеніи женщины». Публичная лекція П. В. Безобразова. էջ 29։ ²⁾ Նոչն տեղ։

³⁾ Պերճ Պոօյեանց «Սոս և վարդիթեր». էջ 162։ ⁴⁾ Նոչն տեղ։

⁵⁾ Նոչն տեղ։

Հին-Նախիջևանի դաւառացիքն, զանց առնելով ալդ ամենը, իր ապա-
գաջ կեանքի համար ընկեր է ընտրում, կարելի է ասել, հէնց առաջին
տպաւորութիւնից, որ գործում է աղջիկը նրա վրա: Իսկ երբեմն էլ հաջրն
է աղջիկ «հաւանում» իր որդու համար, որին վերջինը տեսած չէ անգամ:
(Այդ պատահում է նոյն իսկ քաղաքում էլ): Այդ տեսակ ամուսնութիւնը
իր հետ, համարեա երբեք, չի բերիլ երջանկութիւն: Ամուսինների չարա-
բերութիւնները հէնց սկզբից վերին տատիճանի տգեղ ձև են ստանում:
Յերեկները նրանք բաժանւած են, մարդը կամ մինչև արեւի մալր մոտելը
տուն չի գալիս և կամ եթէ տանն է լինում՝ ալստեղի ընտանեկան օրէնք-
ներն են «գլուխ բարձրացնում»: (Այդ օրէնքները դեռ բացատրելու ենք):

Ալդտեղ անօգուտ սուրբ ամուսնութիւն՝

Նա մարմնական միացն ցանկութիւն.

Ալդտեղ տղամարդ կնոջ բռնաւոր,—

Կինը հնազանդ, կինն անձալն, անդոր ¹⁾:

Օրիորդը, ամուսնանալով, կատարելապէս կորցնում է իր ազատու-
թիւնը (Բաֆֆի): Զրկւած ծնողական օջախից, որտեղ թէպէտև չէր տես-
նում մեծ ուրախութիւններ, ալստեղեկանալի. ծանր լանդիմանութիւններ
էլ չէր կրում, ալնպէս չաճախ չէր ծեծւում, ալնքան լաց-կոծ չէր անց-
նում նրա գլխից,—զրկւած ծնողական օջախից՝ հաջ կինը անամանում
է: Նրա առանց ալն էլ սահմանափակ աշխարհագրութիւնը բոլորովին
սահմանափակւում է. օրիորդ հասակի մէջ նա, իրաւ է, զգում էր, որ
աւելորդ, հալածող մի արարած է ինքը, բայց միւսնոյն ժամանակ ցնո-
րում էր դեռ ամուսնացած կեանքի մասին. ալնտեղ էր նա տեսնում իր
բոլոր բազդը,—իսկ ալփմ, ամուսնութիւնից վետոյ, նա հասկանում է,
կարծես, որ ստրուկ ծնւել է, ստրուկ էլ պիտի մեռնէ. իր ազատութիւնը
ալփմ նա ցուրտ հողի տակ՝ նեղ պատանքի մէջ է միմիայն որոնում...
Տղամարդի վրա նա սկսում է նայել հիւսիս թափւած աչքերով. նա,
որ օրիորդ եղած ժամանակը՝ ցնորում էր գտնել իր ամուսնու կրծքի վրա
տաք սէր, փալաւեանք, բազդ, երջանկութիւն, իր գւարթ ու տխուր
գործերին արձագանք,—ալփմ տեսնում է, որ իր կոռւքի
խաղալիքը, դարձալիքն է դարձել. Գեռ ձիշտ չհասկանալով բանի էութիւնը՝
նա մի քանի անգամ բողոքում է ամուսնուն ալս և ալն անար-
գարութիւնների դէմ—սակալն իղձը... ամուսինը միշտ լուռ է նշանա-
կութիւն, չտալով նրա խօսքերին...

«Երկու նորապսակ ամուսինների չարաբերութիւնները հէնց առաջին
օրից խիստ օտարոտի ձև են ստանում, զրուս է Բաֆֆին իր «Գիւղական

¹⁾ Ս. Շահազիզեան «Լեռնի վիշտը». էջ 90:

երիտասարդութիւն» օգուածի մէջ.— Գիւղացու ¹⁾ ընտանեկան պալմաններէն անծանօթ մարդը, տեսնելով նրանց, կը կարծէ, թէ նրանք խռովել են, կամ միմեանց հետ անհաշտ են ապրում: Գրտումը միասին չեն չափոնում, իսկ տան մէջ միմեանց հետ չեն խօսում: Հարսը իր քողը չէ բարձրացնում և երեսը չի ցուց տալիս փեսային, եթէ աչնտեղ ներկայ է ընտանիքի անդամներէց մէկը: Միասին չեն ճաշում, ընթրիք չեն ուտում. որդին ուտում է հօր հետ, իսկ հարսը՝ սկեսրայ չհտ: Գիւղերում կանանց սեռի սեղանը տղամարդկանցից բաժանւած է: Ալըպէս անցնում են տարիներ և շատ տարիներ. հարսը տեսնում է իր ամուսնու հետ կամ գաղտնի, կամ զիշերը, երբ բոլորը քնած էին» ²⁾:

Շատ պարզ է ալը տեսակ չարաբերութիւնների արդասիքը: Կինը սովորում է մեքենալար կատարել իր ամուսնու, կամ, եթէ տանը մեծ կալ, մեծի հրամանները, մշակութիւն, աղանդութիւն անել նրանց առաջ, բաց մասնակցել ալս և աչն հարցի վճռելուն՝ ընտանեկան գործերին վերաբերեալ, չալտնել իր կարծիքը, ասել իր խօսքը,— իրաւունք չունի. «կնկալ ծամը երկալն է, բաց խելքը—կարձ»,—ալըպէս է մտածում մեր ժողովուրդը:

Ուր է ալստեղ ընտանեկան կեանք, ուր երջանիկ օրեր, որ պէտք է բերի իր հետ ընտանեկան կեանքը, և ուր քաղցր պտուղներ, որ միացած զուգի միացած ութերով գործած աշխատանքի հետեանքը պիտի լինի... Երջանիկ ընտանեկան կեանքը ստեղծում է երկու միացած սըր տերի ներդաշնակութիւնից, համաձայնութիւնից. միասին գործելով, իրարու օգնելով, նրանք միասին էլ պէտք է խնդան կամ արտասուք թափեն (П. В. Безобразов): Բաց միթէ բաղդաւոր կ'ապրեն աչն ամուսինները, երբ կինը «խաբար չի» իր մարդու գործերից, երբ նրան արգելւած է չանդիմանել իր մարդուն, խորհրդակցել նրա հետ իրանց գործերին վերաբերեալ հարցերի մասին: Միթէ կարող է բախտաւոր լինել աչն ընտանեկան կեանքը, որտեղ տղամարդը իրաւունք չունի իր կնոջ «պաշտպան հանդիսանալ», քանի որ սկեսուրը, սկեսրայրը կամ մեծ տեքըր (մարդու մեծ եղբայրը) ի զուր չանդիմանում են հարսին: Ալըպէս՝ միթէ ընտանեկան կեանքի երջանկութիւնը աչնտեղ պէտք է որոնել, որտեղ հարսը իր գէմքին կարմիր քօղ է գցում, և մեծ ամօթանք է նրան, երբ նա իր երեսը ցուց է տալիս տան մեծերին...

Ա'խ, ալը սկեսուրը, սկեսրայրը, մեծ տեքըր—ի՜նչ խաղեր են խաղում խեղճ հալ կնոջ հետ: Ամեն մի քալին «անէծքներ» թափել հարսի

¹⁾ Ալը կարելի է ասել Հին-Նախիջևանի, համարեա, ամբողջ գաւառի մասին:

²⁾ Բաֆֆի «Հալ կինը և հալ երիտասարդութիւնը», էջ 123—124:

հայացեով, հարսի, բոլոր գործերից անբաւական մնալ (թէպէտև նա բանում է հաւախօսից մինչև մութ գիշեր և բանում ջերմեւանդութեամբ, քրտինք թափելով), արձակ ճնշել նրան, բամբասել անարդարօրէն նրան վերագրած պակասութիւններից,— ահա սկեսորջ, սկեսրալրի և տեքոր տգեղ վարմունքները: Իսկ կարմիր քօղը... նա ուղղակի անամնացնում է հարսին... և ոչ միայն կարմիր քօղը, այլ դրութեան բոլոր վալրենի պալմանները: Հարսը պիտի ծածկէ իր դէմքը կարմիր քօղով. նա իր հրեւը իրաւունք ունի բացել ամուսնու և տան մէջ գտնուող փոքր երեխաների առաջ. խօսել էլ դրանց հետ միմիայն իրաւունք ունի: Տան բաղից դուրս երբեք պիտի չհամարձակի. նրա գործելը տան մէջ է: Եկեղեցի գնալ անգամ չի կարող՝ ցանկացած ժամանակ. դրան էլ նշանակած ժամանակ ունի. ամբողջ տարւալ ընթացքում հինգ անգամ (սակաւ բացառութեամբ) նա կարող է եկեղեցի գնալ՝ «Ջրօրհնէքին», «Ծաղկազարդին», «Մեծզատիկին», «Վարդավառին» և «Աստածածնին»: Ջրօսարաններ ալցելու, հանդէսներ դուրս գալ, «դօնադ» գնալ արգելւած է. ամիսներով պիտի նստի տանը և բանի՝ կարմիր քօղի մէջ փաթաթւած ¹⁾:

Հարեմական դրութիւն...

Ինչո՞վ է տարբերում, ուրեմն, Հին-Նախիջևանի գաւառում բնակող հալ կնոջ դրութիւնը նրան հողակից մահմեդականի կնոջ դրութիւնից: Եւ կասեմ, համարեա, ոչնչով: Մահմեդականի կինն էլ ծածկած ունի իր դէմքը, մահմեդականի կինն էլ չի խօսիլ օտարի հետ, չի ցուց տալ նրան իր երեսը, չի զբօսնիլ քաղաքային պարտիզում, մահմեդականի կինն էլ «խաբար չի» իր ամուսնու գործերից, մահմեդականի կինն էլ... իր ամուսնու խաղալիքն է... միայն թէ՛ մահմեդականի կինը աւելի չանդուգն, աւելի խորամանկ է. նա աջն քան չի բանում, որքան ապերձանիկ հալուհին: Բալց դեռ չհանած իր աչքի փուշը՝ Նախիջևանցի հալը ծտղրում է մահմեդականին:

Թշնառ հալ կին, ինչ քաղցր օրերով կարող է իր կնքել կեանքդ, բալց տեղալին անկիրթ սովորութիւնների շնորհիւ որպիսի դրութեան մէջ ես. որքան բախտաւորութիւն կարող է իր դու բերել քեզ ամուսնուդ գերդաստանի մէջ, բալց տեղալին անկիրթ սովորութիւնները շնորհիւ ինչ դեր են տւել քեզ: Տունդ քեզ համար կատարեալ բանտ է... Եկեղեցում, պոակի ըողպէին, իրաւ է, լսել է տէրօր խօսքերը թէ՛ «Թողցէ ալր զհալը և զմալը՝ և երթիցէ դհետ կնոջ իւրոյ, և եղիցի նրկոքն ան ի մարմին մի» (Մատթ. զԼ. ԺԺ, 5),—բալց «ծուռ» է լուսաբանել իր խաւար զլիւում ալդ խօսքերը... Նա միացել է քեզ հետ,---բալց, ոչ ընկերակաւ կան կապով, այլ ամուսնական (Բաֆֆի). իսկ թէ ինչպէս է նա

¹⁾ Այդ մի քանի տողերը խկապէս գիւղերին է վերաբերում.

ըմբռնում «ամուսին», «ամուսնանալ» հասկացողութիւնները,—դրա մասին արդէն խօսել ենք բաւականաչափ:

Իզուր չեն քո գանգատները՝ աչդ հարեմական կեանքից, հաչ կին... Հասկանում եմ աչժմ, թէ ինչն է քեզ ստիպում անդադար կրկնել՝ «անիծում էր աչն օրը, երբ ես աշխարհ դուրս եկայ»: Ակամազ վերականգնում է զլիսի մէջ Կոլցովի երգը, որտեղ նորապսակ հարսն իր անտանելի դրութիւնն է ողբում, և որ վերջանում է հետեեալ բողոքով՝

Говорять родимые:

Поживется—слюбится;

И по сердцу выберешь—

Да горчье придется.

Хорошо, состарившись,

Разсуждать, советовать,

И съ собою молодость

Безъ разсчета сравнивать!

«Поживется—слюбится» կամ «стерпится—слюбится», (կ'ապրի—կը սիրի)—աչպէս մտածում են և հաչ ծնողներն իրանց աղջիկը «խրդեղու», մի օտարի գիրկը գցելու ժամանակ.—մինչդեռ դրանից շատ անախորժ բաներ են ծագում:

«Աղջիկ մարդու տալը» հեշտ բան չէ. դա սուրբ և ամբողջ կեանքին վերաբերեալ մի հարց է. ինչպէս ես կարող եմ անել աչդպիսի մի վստահ քալ, քանի որ լաւ չեմ ճանաչում նրան, որի հետ ամուսնացնում եմ աղջիկս: Նախնիջանցու համար միևնույնն է. դրա մասին նա շատ քիչ հոգս է տանում: Բարեկամութեան առաջին շաբաթները օտար փեսայի, օտար խնամիների հետ անցնում են խաղաղ, անգամ սիրով. նրանք իրարու «խաթիր են անում»: Բայց չետոյ սկսում են մեծ խռովութիւններ, կռիւններ, ծեծեր, երբեմն էլ արիւնհեղութիւններ աչդ երկու՝ պատահմունքով բարեկամացած՝ խնամիների մէջ: Այս ամառ ես ծառօթացալ մի շարք խնամիների հետ, որոնք իրարու հետ խռով էին և մէկը չէր կարող խաղաղ սրտով լսել միւսի անունը.—Խեղճ հարսի վրայ է, ի հարկէ, թափւում աչդ բոլոր խռովութիւնների տաժան ծանրութիւնը: «Դաչեալիդ սրտիկը խորեմ. եկար մեր տունը էդ արեցիր. ոտդ բէխէր էր. գրողը քեզ տանի»... և ալն և ալն, դրա նման պարսաւանքներ անդադար լսում է հարսը իր սկեսրոջից. երբեմն էլ ծեծ ուտում:

Բայց աչդ դեռ ոչինչ. կան դէպքեր, երբ հաչ կինը բարբարոսական դրութեան մէջ է ապրում: Աչդ աչն ժամանակ, երբ որ երիտասարդը ամուսնանում է և մի քանի ամիսներից չետոյ տարիներով հեռանում օտար երկիրներ: Երեակաչեցէք ձեզ, դեռ ես գրեթէ մի երեխաչ, դեռահաս, ջահէլ՝ 13—14 տ. մի աղջիկ, որի միակ ցնորքը պսակն է, որ-

տեղ նա շատ հրապուրիչ և կախարհական բաներ է տեսնում. նա ամուսնանում է... ծանօթանում նոր կրքերի, նոր զգացմունքների հետ... Հաւանական է, որ ջահէլն, որպիսին է մեր հայուհին, այն էլ անփորձ, որին չափազանց է գրեթէ ոչինչ գաղափարական,—սկզբում մի առանձին առաւելութեամբ է լափշտակում այդ նոր կրքերով, նոր զգացմունքներով. նրանք նրա ոգին, նրա աստածը, նրա կուռքն են... Երեւակացե՛ք, որ ամուսինը՝ մի քանի շաբաթ, երբեմն էլ մի քանի օր (այդ էլ է լինում), ապրելով աչդպիսի ջահէլ հարսի հետ, թողնում է ընտանիքը ու գնում հեռու աշխարհներ՝ «փող աշխատելու»... երևակացե՛ք այժմ խեղճ հարսի դրութիւնը... Մի կողմից՝ լարած կրքերի, զգացմունքների ախտալ կալձը, միւս կողմից՝ սկեսրոջ, սկեսրալրի կամ մեծ տեքոր հալածանքները ամենեին ճնշում են նրան. նա մաշում է, հալւում և, շատ անգամ, չսպասելով ամուսնուն, հանգչում...

Այդ աստիճանի մռայլ երանգների մէջ է հանդիսանում, ահա, կինը Հին-Նախիջևանի գաւառում. Դոստոեւսկին իր շարադրութիւններից մէկի մէջ ասել է՝ вся ошибка „женского вопроса“ въ томъ, что они дѣлать нехѣляютъ, берутъ мужчину и женщину раздѣльно, тогда какъ это единый дѣловушный организмъ ¹⁾:

Մէկ օր հարցնում եմ մի նախիջևանցուց (քաղաքումն էր), թէ ինչո՞ւ ես հարսիդ երեսը ծածկում, դա մահմեդականի ձեռն է. ինչո՞ւ կնոջդ աղջիկներդ պահում ես չորս պատերի մէջ փակ. թող հարսդ էլ, աղջիկներդ էլ, կինդ էլ գնան քաղաքային պարտէզ դրօսներու, մարդ տեսներու, բան սովորելու. փակ դրութեան մէջ նրանք բոլորովին կը վաւրենանան, կ'անասնանան:

—Ե՛հ, բա ինչ անենք, ինչ քար գցենք մեր գլխին, թողնում ես—չի լինում, չես թողնում էլ, ձեր, պ. ուսումնականների ասածով, չի լինում ²⁾: Թէ որ թողնում ես, որ դուրս գան, չորս կողմը անհաւատ թուրքեր, հազար բան կարող է պատահել. չեն թողնում—դուք էք մեր գլխին կանգնել...»

¹⁾ Сочин. М. Достоевскаго. 1877 թ. հատոր I, էջ 355, աչխնքն՝ «կանանց խնդրի ամբողջ սխալը նրանումն է, որ բաժանում են անբաժանելին. փերցնում են մարդ և կին առանձին, մինչդեռ նոքա մի ամբողջական մարմին են կազմում»:

²⁾ Ամենեին զարմանում եմ, թէ ինչո՞ւ չարգելի պարոնս ինձ «ուսումնական»-ի տիտղոսը սեպհականացրեց. աչդպէս, երեւի, նա անւանում է ամեն մէկին, որ խօսում է օրւալ ալս և ալն «ալլող» հարցերի մասին և որ եւրոպական հագուստով է:

Իրաւ է, մահմեդականն է մասամբ մեղաւորը, որ նախընտանցի հաշուէին գտնուում է ճշշած փակած դրութեան մէջ. Ալսինքն, pardonez, ես կամենում էի ասել, թէ մահմեդականն է ր մեղաւորը առաջ, երբ տեղալին պոլիսականութիւնը դեռ իստ չէր և շատ անտարբեր դէպի մահմեդականի շուպութիւնները, անիրաւութիւնները թէ քաղաքի մէջ և թէ գիւղերում. բայց այժմ ասն առաջաւ տարիները չեն. այժմ ամեն ինչ ապահոված է. Մի քանի կրթւած օրիորդներ, հարսեր շեւապաներով կամ գլուխները թիֆլիսցի կնոջ մողալին կոկած՝ ժամերով ազատ զբօսնում են այժմ քաղաքալին պարտիզում, և մենք կարծում ենք, որ նրանք կարող են գեղեցիկ օրինակ լինել ուրիշների համար:

«Մինչև արօր, երբ կինը ասիական կեանքով էր ապրում, երբ հայր մահմեդականի հպատակ էր, նպատակաւարմար էր նրան արգելւած պահել: Իսկ այժմ կեանքի պայմանները փոխւել են. պէտք է բաց անել կանանցի դռները» ¹⁾:

Քանի որ տղամարդը կը նալի իր կնոջ վրայ ցանկաւորական աչքով, քանի որ նա կնոջ մէջ կը տեսնի լոկ դւարճութիւն, իր անասնական կրքերի չագուղը, քանի որ կնոջը իրան՝ ընկեր, խորհրդակից ճանաչելու փոխարէն՝ կը ստրկացնի, քանի որ նա չի պատուի իր հարսի երեսին գցած կարմիր քօղը, քանի որ նա չի բացիլ բակի դռները իր կնոջ, աղջկալ և հարսի առաջ,—հաշուու դրութիւնը չի կարող բարւոքւել... Բայց այդ դրութիւնը բարւոքելու, խաւարին չաղթելու ժամանակը արդէն վաղուց եկել է և կանչում է նախընտանցիներին: Սակայն նրանք չեն լսում... Քահանաների, ուսուցիչների և երիտասարդութեան ին տեւ լի գեւն տ մասի պարտաւորութիւնն է համոզել նրանց, ոչնչացնել նրանց նախապաշարմունքները և զնել նրանց ճշմարիտ ճանապարհի վրայ:

¹⁾ Բաֆֆի «Հալ կինը», էջ 91:

ԱՉԵՐ

(Նւէր Օր. Մ...-ին)

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Դու տեսնէլ ես սրբալայրում
Կանթեղ վառած սեղանին,
Ուր նա աղօտ լոյս է սփռում
Հեզ Տիրամօր պատկերին:

Կամ գիշերը դու տեսնէլ ես
Շեշտ կայծակը շանթելիս,
Սար ու անտառ նկատել ես
Նորա փայլից դողալիս:

Դու տեսնէլ ես խուլ աղմուկով
Հեղեղած գետն յուզելիս
Եւ ափերից հառաչանքով
Տուն ու աւար գերելիս:

Այդպէս էին այն աշերը,
Որոց անյադ սիրեցի,
Եւ ինչ... նորանց պաքները
Ինձ շանթեցին—գերեցին...

1895 թ. օգոստոսի 8 Թիֆլիս:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆՑԵԱԼԸ

(Վրաստանի պատմութեան համառոտութիւն)

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅԻ

Անցեալ ամիս մենք մի յօդած նւիրեցինք Պարսկաստանի շահ Աղա-Մահմադ-խանի արշաւանքին և Թիֆլիսի աւերման 1795 թ., որից քիչ տարիներ յետոյ Քարթալինեան և Կախեթեան թագաւորութիւնը 1801-ին և Իմերեթեան թագաւորութիւնը 1810-ին առևսաց հպատակութիւն ընդունեցին: Այդ յօդածին մենք մի նախադիտելիք քրինք Վրաստանի ընդհանուր դրութեան մասին 18-դ դարում, որից երևում էր թէ Վրաստանը վերածնութեան մի քանի նշաններ էր ցոյց տալիս այդ ժամանակները: Բայց թէ ինչ ընդհանուր քաղաքական վիճակի մէջ էր Վրաստանը—այդ մասին յօդածում գրեթէ բան չկար առած: Եւ կարող էր հեշտութեամբ այս տպաւորութիւնը ստացել, թէ Թիֆլիսի աւերումով ահա կործանւեց մի ամբողջ թագաւորութիւն: Այլ էր, սակայն Վրաստանի քաղաքական դրութիւնը, որը լաւ պատկերացնելու համար անհրաժեշտ է մի քանի դար ևս ետ գնալ: Այդ հանգամանքը մեզ մղեց Վրաստանի պատմութիւնը նաև ամբողջապէս աչքի անցկացնել և նորա ամփոփումը մեր ընթերցողների առաջ դնել: Յայտնւեց որ վրացոց պատմութիւնը չափազանց շատ ընդհանուր գծեր ունի հայոց պատմութեան հետ: Եւ մեր ընթերցողները, կարդալով վրաց պատմութեան այս մեր կազմած համառոտութիւնը, իրաւունք կը տան մեզ ասելու, որ այդ պատմութեան այն մասը, որ

վերջին դարերին է վերաբերում, նոյն իսկ ժամանակակից շահեկանութիւն է ներկայացնում, և ակամայ մեզ փոխադրում է մտքով ներկայումս Տաճկա-Հայաստանում բռնակալութեան կեանքի տակ կատարուող դէպքերի մահաշունչ աշխարհը:

Եւ զարմանալի է՝ արդեօք, որ հայ ընթերցող հասարակութիւնը, այլապէս ասած՝ մեր գրականութիւնը՝ այնքան ու այնքան անտեղեակ է մի ազգի սլաոմութեանը, որը ոչ միայն հնուց դրացի է Հայերին ու Հայոց աշխարհին, այլ և մի ազգի, որի հետ անցեալում այնքան ու այնքան քաղաքական և սնտեսական շփումներ է ունեցել և ներկայումս էլ ունի հայը! Այդ անուշադրութիւնը, և, կարող ենք ասել՝ այդ արհամարհանքը հետեանք է մի ուրոյն գաղափարի, որ ունեցել է մինչ այժմ հայութիւնը իւր մասին ազգերի շարքում: Այդ նեղ հայեացքը իրեն անմիջապէս շրջապատող վայրերի ու ազգերի մասին՝ անցեալներում ծնեցրել է և հաստատել հին հայերի մէջ մի նեղ քաղաքականութիւն, որը դրել է ազգը կղզիացած դրութեան մէջ. և ազգը հէնց մի այդպիսի նեղ քաղաքականութեան զոհ է գնացել անցեալ դարերում: Բայց կըղզիացման ոգին ժառանգաբար և աւանդաբար անցել է մեր նոր սերունդների վրայ. և հայը, որ այնքան կոսմոպոլիտական հակումներ և ընդունակութիւններ է ցոյց տւել գիտութիւններ ու լեզուներ իւրացնելու մէջ, այնքան ընդունակութիւններ է ցոյց տւել նոյն իսկ օտար և հեռու երկիրներին յարմարելու, այդ նոյն ազգը արհամարել է իւր դրացի ազգերի անցեալն ու ներկան ուսումնասիրելու և ընդհանուր պետական, քաղաքական սկզբունքներ զարգացնելով՝ օգտւել նոյն իսկ սեփական գոյութեան պայմանները արոշելու և դորա համապատասխան կեանքին նոր ուղղութիւն տալու համար:

«Մուրճ»-ի ընթերցողներին լաւ յայտնի է, որ մենք այդ աւանդութեանը հետ կտրել ենք մեր կապը, և որ մեր դրացիների կեանքը մի յայտնի չափով մեր սեփականն ենք համարում: Եւ դոցա մէջ վրացիք անշուշտ յետին տեղը չպիտի բռնեն: Նոցա գրականութեան մի քանի լաւ արտադրութիւնների հետ «Մուրճ»-ի մշտական ընթերցողները արդէն ծանօթ են, և դեռ էլի պիտի շարունակենք այդ գործը: Անցեալ անգամ ծանօթացանք վրացոց պատմութեան մի

էջի հետ. անցնենք այս անգամ կարճառօտ տեսութիւն անելու նոցա ամբողջ պատմութեան վրայ ¹⁾:

Վրաստանը մինչև քրիստոնէութիւն ընդունելը:

Վրաստանը նախ կառավարում են նահապետներ (մամայսախլիսներ) — Մցխեթում: Առաջինը թագաւոր Խոնդոսով եղաւ Ֆարնաօղ 2¹/₂ դար Քր. առաջ: Թագաւորութիւնը բաժանւած էր 8 էրիսթաւութեան, իսկ ամբողջ զօրքի զլուխն էր սպարապետը (վրացերէն սպասպետ): Արմազ (պարսից Որմիզդը, հայոց Արամազդը) կուռքի անունով թագաւորներն էլ մի ժամանակ կոչւում են եղել արմամազէլներ և նստում Արագւայի մօտ շինած Արմազ քաղաքում, Մծխեթին մօտ:

Քրիստոնէութեան մուտքը Վրաստան և վրաց կաթողիկոսութիւնը:

Քրիստոնէութիւնը սկսւում է տարածել Մծխեթից, IV դարում Ս. Նինայի ձեռքով (կապպաղովկիացի): Առաջինը ընդունեց Միրիան թագաւորը, ապա ամբողջ Մծխեթը և ապա մնացեալ թագաւորութիւնը: Կոնստանտին Մեծը ուղարկեց սուրբ անօթներ: Յունաց կարգերը ընդունեցին, և Վրաստանը հաշրւեց Անտիօքի պատրիարքութեան վրայ: Միրիանի որդի Բակուրիոսը Յունաստանից բերել տւեց զիտնականներ, ուսուցիչներ, հիմնեց դպրոցներ, ուր ուսուցանւում էին յունաց ու ասորոց լեզուներ. եկեղեցում յունարէնի տեղ նա մոցրեց վրացերէն, թարգմանել տալով ս. գրքերը: Նա բազմացրեց եկեղեցիները, աշխատեց տարածել քրիստոնէութիւնը լեռնաբնակների մէջ, հաստատեց առաջնորդութիւններ: Մանաւանդ նոցա թիւը բազմացրեց Վախթանգ Գուրգ-Ասլան թագաւորը V դարի երկրորդ կիսում: Մծխեթում փայտէ եկեղեցու տեղ շինել տւեց քարից հոյակապ եկեղեցի, (որը մի երկրաշարժից

¹⁾ Կեր գլխաւոր աղբիւրը պատմական ֆակտերի համար ծառայում է Դմիտրի Բակրաձէի և Նիկոլա Բերզենսկի «Тифлисъ въ историческомъ и этнографическомъ отношеніяхъ» Изданіе Густава Беренштетна. С.-Петербургъ, тип. Бенко. 1870.

յետոյ 14-րդ դարում նորից շինել տւեց Գէօրգի թագաւորը, իսկ Թամեքլանի ձեռքով կործանւելուց յետոյ՝ նորից շինեց նորան Ալեքսանդր թագաւորը XV-րդ դարում): Նոյն Վախթանգը ուժեղացրեց քրիստոնէութիւնը Աբխազիայում, Մինգրէլիայում և լեւնարնականների մէջ: Սբ. զրքերը նոր սրբադրութեան ենթարկւեցին և նորերը թարգմանւեցին: Առանձին ոյժ ստացաւ քրիստոնէութիւնը VI դարում երբ եկան 13 ասորի հայեր, որոնք ամբողջ Վրաստանում քարոզեցին, եկեղեցիք ու վանքեր հիմնեցին: Մանաւանդ քրիստոնէութիւնը ամուր հաստատուեց, երբ Բիւզանդիայի կայսր Յուստինոսի և Կ. Պոլսի յունաց պատրիարքի հաւանութեամբ՝ վրաց եկեղեցու գլուխ նշանակեց մի կաթողիկոս, որի նիստը Մծխեթում էր. նա կոչւում էր Կաթողիկոս Մծխեթի և Իւերիայի (Վրաստանի): Մինչև XVI-երորդ դարը Մծխեթի կաթողիկոսը միակ գլուխն էր վրաց եկեղեցու, իսկ այդ ժամանակից, երբ Բիւզանդեան կայսրութիւնը բաժանւեց Արևելեան Վրաստանից, Սև ծովի ափին շինւած Բիւլինտի նշանաւոր վանքում սկսում է նստել առանձին կաթողիկոս Արևմտեան Վրաստանի համար: Նա կոչւում էր Բիւլինտի կաթողիկոս:

Վրաց կաթողիկոսութեան իշխանութիւնը:

Մծխեթի կաթողիկոսը հաւասար պատիւ ունէր թագաւորի հետ և կատարելապէս անկախ էր: Նորա հոգեւոր իշխանութեանը հպատակւում էին՝ Վերին Քարթալինիա՝ն (այժմեան Ախալցխայի գաւառը և Տաճկական Վրաստանը), Ստորին Քարթալինիա՝ն (այժմեան Քարթալինիան, ուր Թիֆլիսն է), Կախեթիան (որի այժմեան գլխաւոր կենտրոնն է Սղնախ քաղաքը), Ալբանիան (այժմեան Գաղըստանը), Օսեթիան, Շաքին (Նուխի) և Շիրւան (Շամախի):

Ամբողջ գաւառներ նորան էին հպատակւում. եկեղեցական մատեաններով 1498 թ.-ից մինչ 1559 թ.ականը՝ Կաթողիկոսի կալուածքը կազմում էին 237 գիւղեր—հասարակ դասակարգով և ազնւականներով, գլխաւորապէս ազնաւորներով: Այդ կալւածներից կաթողիկոսն էր միայն հարկեր ստանում՝ թէ փողով և թէ բերքերով: Նա ունէր նաև մաքսատներ և ձկնորսութիւն Քուրի մէջ, Ալազանում և այլ գետերում: Նա ունէր իւր զօրքը, որ ստորադրւած էր իւր նշանակած զինեալներին: Պատերազմի ժամանակ

հրամայողը կամ ինքը կաթողիկոսն էր կամ նորա գեներալը: Նկեղեցու զօրքի առանձին ջոկատների գլուխ կանգնում էին կամ եպիսկոպոսները և վանահայրերը կամ նոցա կապիտանները: Ե՛րբ սկսեց այդ կարգը և տևեց այդ արդեօք մինչ XIX-րդ դարը—հաստատ յայտնի չէ: Կաթողիկոսը և հոգևորականութիւնը եկեղեցական կալուածներում վճռում էր նաև քաղաքացիական և քրէական դատերը. և նոյն իսկ վրաց թագաւորական հոգերի բնակիչները Կաթողիկոսի իշխանութեան ազդեցութիւնից ազատ չէին: Դորա հետ միասին՝ հոգևորականութեան ձեռքով էր որ կուլտուրա մացւեց և պահպանւեց Վրաստանում:

Վրաստանի մայրաքաղաքները:

Քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ՝ Վրաստանի, այսինքն Քարթալինիայի և Կախեթիայի մայրաքաղաք դառնում է Թիֆլիսը, որ մօտ էր Հայաստանին և Պարսկաստանին, և աւելի յարմար էր հաղորդակցութեան համար:

Վրաստանը, բաժանւած լինելով Արևելեան և Արևմտեան մասերի՝ մայրաքաղաքներն էլ ջոկ-ջոկ էին: Արևելեան մասում ռկղբում մայրաքաղաք էր Մծխեթ, ապա Արմազ, յետոյ և մինչև վերջը Թիֆլիս. Արևմտեան Վրաստանում Արխէօպոլ, Քութայիս և Ծխում կամ ալլապէս Սուխում:

Թիֆլիսի հիմնողն էր թագաւոր Վախթանգ-Գուրգասլան 469 թւականին: Թիֆլիսի վրայով անցնում էր ճանապարհը Նւրոպալից դէպի Հնդկաստան, սկսելով Սև-Ծովից և Ռիոն գետով ու անցնելով Սուրամի գաւիթայրով, Մծխեթով, Թիֆլիսով, ապա Քուրի ընթացքով մինչ Կասպից ծովը:

Թիֆլիսը մայրաքաղաք դառնալ սկսեց 499 թ. և 514 թւականի միջերբում:

Հին-Վրաստանի սահմանները:

Վրաստանը եթէ համարենք այն երկիրները, ուր խօսում էին վրացերէն և վիրական բարբառներով՝ ընդգրկում էր հետեւեալ երկիրները. այժմեան Լազիստանը Սև Ծովի ափերին, Բաթումից դէպի արևմուտք և հարաւ, որ մասամբ այժմ Տաճկաստանի մասն է կազմում. (լազերը այժմ մահմեդականներ են մասամբ վրացախօս), Ճորոխի աւազանը, Ախալցխայի գաւառը, Գուրիան և

Մինգրելիան, այժմեան Սամուրգականով և այժմեան Աբխազիայի մեծ մասով, և Իմերեթիան. ապա վրաց լեզուն մտնում էր Կովկասեան լեռների սիրտը՝ Սևանեթիան, Խելիան, որը ընկած է ռազմավիրական ճանապարհի վրայ. Թուշերի երկիրը և Խեւսուրիան. խեւացիք, Թուշերը և խեւսուրցիք տարածւում էին մինչև անգամ լեռների հիւսիսային կողմը. ապա վրաց լեզուն բռնում էր այժմեան ամբողջ Փարթալինիան (ուր Մծխեթն է և Թիֆլիսը) և Կախեթիան (ուր կան այժմ Թելաւն է և Սղնախը). վերջինս տարածւում էր Կովկասեան լեռնաշղթայով Ալազանից դէնը, վերջանալով Նուխալայ մօտերքը: Հայաստանի կողմում վրաց լեզուն սահմանափակւում էր լեռների այն գծով, որ ձգւում է Արաքսի և Փուրի միջով: Այդ լեռների հիւսիսային կողմը պատկանում էր Վրաստանին, հարաւային կողմը՝ Հայաստանին: Այդ տարածութեան վրայ երկու լեզուներն էլ՝ հայոց և վրացոց՝ խառն էին: Այդ պատճառով էլ այդ մասը կուրի առարկայ էր Հայաստանի և Վրաստանի մէջ. և երբ հայոց ձեռքին էր՝ նա կոչւում էր Փուլգարք կամ Վրաստան, իսկ երբ վրաց ձեռքումն էր՝ վրացիք նորան տալիս էին Սոմխեթի կամ Հայաստան անունը: Այդ կռիւների միջոցին երկու ազգերի մէջ՝ ինքը Թիֆլիսը երբեմն ընկնում էր հայոց իշխանութեան տակ:

IV դարու երկրորդ կիսում, Վարազ-Քակուր² թագաւորի ձեռքումն էին վերին Փարթալինիայի մի մասը, ստորին Փարթալինիան և Կախեթիան: Իսկ Վրաստանի այն մասը, որ հակած է Սև ծովին՝ հռոմայեցոց ձեռքումն էր:

Պարսից³ թագաւոր Նապուհ II Վարազ-Քակուրին, որպէս նորա ժամանակակից հայոց Արշակ II-ին՝ իրեն հարկատու դարձրեց: Վրացական գրերը:

Նոյն Վարազ-Քակուրի ժամանակ հայոց գրերի հնարող Մեսրոպը հնարեց նաև վրացոց հին եկեղեցական գրերը որ յայտնի են խուցուրի անունով. քանի որ վրացիք ունին նաև ուրիշ՝ քաղաքացիական կամ աշխարհական գրեր, որ կոչւում են մ խեղրուլի: Մեսրոպը նաև դպրոցներ հիմնեց Վրաստանում, ուր իւր ղեկավարութեամբ՝ ջայէլ տղերք էին ուսանում: Նա չաշխատեց քարոզներով մեղմացնել ժողովրդի կուլիտ բարքերը և կրօնը ազատել կոապաշտութեան հետքերից:

Վրաց թագաւորական տոհմերը:

Վրաստանի թագաւորական տոհմերը հինգ են եղել. քարթլոսեաններ (վրացի տոհմից), նեբրովթեաններ (պարսիկ տոհմից), Արշակունիք (հայկական տոհմից), Սասանեաններ (պարսից տոհմից) և Բագրատունիք (հրէական տոհմից): Քարթլոսեաններից Ֆարնաօզը (302—237 թ. Քր. առաջ) առաջինը կրեց թագաւորի տիտղոս:

Վերը յիշած Վարազ-Բակուրին պատկանում էր Սասանեան տոհմին:

Բագրատունիները երևում են Վրաստանում VІ-րդ դարում և ասորիճանաբար զօրեղանալով՝ իշխում են մինչև վերջ, այսինքն մինչև 1801 թւականը, երբ Վրաստանը առմիշտ միացւում է Ռուսաստանին և վերանում է վրաց թագաւորութիւնը:

Բագրատունիների վրաց թագաւորութեան ճակատագիրը սերտ կապւած մնաց Թիֆլիս քաղաքի վիճակի հետ:

Վրաստանը իբր կռուախնձոր՝ Բիւզանդիայի և կրակապաշտ Պարսկաստանի:

Կրակապաշտ Պարսկաստանը, որպէս Հայաստանի, այնպէս էլ Վրաստանի դէմ V-րդ դարից, Յազկերտ II-ի ժամանակից ի վեր հալածանքներ սկսեց՝ քրիստոնէութիւնը հալածելու և կռապաշտութիւնը պահպանելու համար: Այդ կռիւը Պարսկաստանին ընդհարման մէջ զցեց Բիւզանդիայի հետ V-րդ դարի կէսից մինչև VІ-րդ դարի կէսը, պատերազմներ, որոնց ասպարէզ եղաւ Բիւզանդիային պատկանող Արեմոեան Վրաստանը: Նոյն կռիւը VІІ-րդ դարու սկզբում պատճառ եղաւ որ բիւզանդական կայսր Հերակլը Ադերբէյջանի (Աորպատական) և Ալբանիայի (Ղաղստանի) վրայով Վրաստան եկաւ, պաշարեց Թիֆլիսը, որ բռնած էր պարսիկներով, ու խլեց նորան նոցա ձեռքից:

Արաբների իշխանութիւնը 633 թւականից Հայաստանը և Վրաստանը սկսում են ընկնել մահմեդականների իշխանութեան ներքոյ, արաբների նախաձեռնութեամբ: Օմարի յաջորդ Օթմանի ժամանակ, Ասորիքի փոխ-կառավարիչ Հաբիբ հայոց Դւին և Նախճաւանը վեցեցեւոց յետոյ՝ դալիս է Վրաստան, վերցնում Թիֆլիսը, ուր գարնիզոն է թողնում և բնակիչների վրայ հարկ դնում: Նւաճում է նաև այլ քաղաքներ:

717 թւին Խորասանի փոխ-կառավարի՝ Նզիզը նւաճում է Վրաստանը: 731-ին արաբական խալիֆ Մուրւան բնաջինջ անող պատերազմներ է մղում Կովկասի՝ երկու կողմերում: Քարթալինիայի վրացիք լեռներն են փախչում, վերին Խմերեթիայի բնակիչները այրերում են ապաստանում:

Ամբողջ Վրաստանից այդ ժամանակ քիչ բան մնաց Բագրատունիների ձեռքին. Կախեթիան կառավարւում էր էրիսթաւներով և քոր-եպիսկոպոսներով, անկախ թագաւորից. Աբխազիան անկախ էրիսթաւութիւն էր (նման մեր նախարարութիւններին, և էրիսթաւ երեւի հայոց նախարար խօսքին է համապատասխանում): Այդ էրիսթաւութիւնը, Արեւմտեան Վրաստանի հետ՝ Բիւզանդիայի իշխանութեան ներքոյ էր:

Ամբողջ 200 տարի Վրաստանը այնպէս ընկած էր քրիստոնեայ Բիւզանդիայի և մահմեդականացած Պարսկաստանի ազդեցութեան ներքոյ, որ վրաց Բագրատունիք չէին համարձակւում թագաւոր կոչւել, այլ կուրապաղատներ, կամ կայսերական տան կոմսեր, մագիստրոսներ, պատրիկներ, անտիպաններ և երբեմն նոբիլիտմա և սեւաստոս: Իսկ արաբների երեւալովը՝ Վրաստանը աւելի ևս թուլացաւ:

Արաբները նւաճեցին Հայաստանը և Վրաստանի ամենահարաւային մասը Թիֆլիսով միասին: Ինչպէս որ Հայաստանը կառավարելու համար խալիֆները էմիրներ էին նշանակում՝ նախճաւանում կամ Դւինում և կամ այլ քաղաքներում, այնպէս էլ Թիֆլիսի համար նշանակւում էր առանձին էմիր: Գրեթէ 300 տարի շարունակ Թիֆլիսում եղած էմիրների անունները պահպանել են վրաց ժամանակագիրները: Էմիրները իրենց իշխանութիւնը պահպանում էին այդտեղ (Թիֆլիսում) ունեցած արաբական զարնիզոնով:

Արաբացի էմիրների ժամանակ Թիֆլիսը Կովկասում համարւում էր երրորդ քաղաք՝ Բարդա՛յից և Դերբենդից յետոյ: Քաղաքը երկու պարիսպ ունէր: Մահմեդականները բռնում էին Գուրի աջ ափը: Մծմբային տաք ջրերը քաղաքի գլխաւոր հարստութիւնն էին կազմում: Դոցա բաղանիքներից օգտւողները միմիայն մահմեդականներն էին: Թիֆլիսից արտահանւող ապրանքներն էին՝ մեղր, հաց, գորգեր, բրդի գործւածքներ, մաքրւած բամբակ, բեռնակիր անասուններ և գերիներ:

Աբխազեան—Քարթալինեան թագաւորութիւնն թամարա թագուհին—Վրաստանը սկսում է միանալ ուժեղանալ։ Վրաստանի թուլութիւնը և օտարների ազդեցութեան և իշխանութեան ներքոյ լինելը երկրի բաժանբաժան լինելուն հր։ Այդ բանը սկսեցին հասկանալ Վրաստանում X-րդ դարի վերջում։ Միացման գործում մեծ դեր կատարեց Վերին-Քարթալինիայի Դաւիթ-կուրապաղատը, Բագրատունեան ցեղից։ Նա իւր իշխանութեանը հպատակեցրեց շատ թագաւորներ։ Որդի չունենալուն պատճառով՝ Դաւիթը որդեգրեց Պուրգէնի և սորա կնիւն արխագեան իշխանուհու որդի Բագրատին, որը, Դաւիթի և Քարթալինիայի էրիսթաւի (նսխարար) օգնութեամբ թագաւոր եղաւ Ստորին Քարթալինիայի և մի փոքր ժամանակ յետոյ՝ նաեւ Աբխազիայի։ Այդ եղաւ 985 թականին։ Վերին Քարթալինիան էլ իրեն պատկանեց իբր Դաւիթի որդեգրին, իսկ Կախեթիան համարեա իւրեց քորեպիսկոպոսների ձեռքից։ Այսպիսով Բագրատը իւր ձեռքում միացրեց Վերին և Ստորին Քարթալինիան, Կախեթիան և Աբխազիան։ Բագրատը հաւաքեց, ցրեց կամ բանտերում մաշեցրեց իրեն հակառակ Բագրատունի ցեղից ուժեղ հակառակորդներին։ Նա խոնարհեցրեց նաեւ Գանձակի պետերին և Թիֆլիսի էմիրներին։

Այսպիսով սկիզբ առաւ մի նոր թագաւորութիւն, որ յայտնի է Աբխազեան-Քարթալինեան անունով։ Դորա հիմնադիր Բագրատը կոչւում է Բագրատ III։

Այդ թագաւորութիւնը ծաղկեց նորա յաջորդների ժամանակ։ Բագրատ III-ի յաջորդներն եղան՝ Գէօրգի I, Բագրատ IV, Գէօրգի II, Դաւիթ III Վերանորոգիչ, Դիմիտրի I, Դաւիթ IV, Գէօրգի III և Թամարա։ Դոցանից Բագրատ IV ժամանակաւորապէս նւաճեց հայոց Անի մայրաքաղաքը և երկու անգամ Թիֆլիսից զուրա քշեց արաբացի էմիրներին, բայց երկու անգամն էլ ստիպւեց արաբներին վերադարձնել, հարկադրւած լինելով պաշտպանել իւր հարկատու Լիպարիտ Օրբելեանու ղէմ և մանաւանդ սելջուկեան սուլթան Ալփ-Ասլանի ղէմ։ Դաւիթ III, 1103 թ., բոլորովին միացնում է Կախեթիան վրաց թագին. հայ գաղթականների համար շինում է Գորի քաղաքը։ Նա, օգտուելով այն հանգամանքներէ, որ սելջուկ-

ները զրադած էին և թուլացած եւրոպական խաչակիրների պատերազմներով և արաբական փոխարքայութիւնը թուլացած էր՝ թիֆլիսը ազատեց արաբ էմիրներէն 1121 թւականին: Նա նւաճեց Շիրւանը և նորա իշխան Շիրւան-Շահին տեղափոխեց Վրաստան: (Այդ Շիրւան-Շահը նախահայրն է արեւմտեան Շիրւաշիէ'ների): Նոյն Դաւիթ III նւաճեց Դերբենդը: Գէորգի III (Թամարայի հայրը) երկու անգամ խլեց Անի քաղաքը սելջուկեան տիրապետութիւնից, Շիրակ դաւառով միասին, վերցրեց Դւինը, կործանեց մահմեդական մեշիդները և 60.000 հոգի զերի տարաւ:

Մանուանդ փայլուն էր Վրաստանը՝ Թամար թագուհու ժամանակ, որի անունը այնքան յայտնի է: Նա գահ բարձրացաւ 1156 թ-ին: Նորա օրերով Վրաստանը դառնում է մէկը ամենազօրեղ պետութիւններից Արեւմտեան Ասիայում: Հայաստանի մասը, Արաքսից դէպի հիւսիս, մտնում է վրաց թագաւորութեան մէջ: Սև ծովի արևելեան ափերը և Կովկասի այլ ցեղերը ընդունում են նորա իշխանութիւնը: Թամարը, վերցնելով Դւինը, Կարսը, Խելաուրը մտնում է Սորպատական, հասնում մինչև Կաղբին և Թաւրիզը: Սև ծովի ափերին խլում է անդական իշխաններից Տրապիզոնը և 1204 թ. հիմնում է Տրապիզոնեան իշխանութիւնը իւր ազգական Կոմնենի համար, որը ապրում էր նորա արքունիքում, իբր աքսորւած Կ. Պոլսից:

Բնակիչների թիւը և թագաւորութեան ստորաբաժանումները. Երիւթաւորութիւնները:

Արեւմտեան-Քարթալիսեան Բագրատունիների թագաւորութիւնը այդ ժամանակ, որպէս ասում են վրացի ժամանակագիրները, չորս միլիոն ազգաբնակչութիւն ունէր: Բագրատ IV-ի ժամանակ Վրաստանը կոչւում է Վերին Աշխարհ և Ստորին Աշխարհ, իսկ Գէորգի III-ի ժամանակ նա կոչւում է Ամիեր (յայտկոյս) և Իմիեր (յոյնկոյս): Ամիերը կազմում էին Քարթալիսիան և Կախեթիան, Իմիերը՝ ամբողջ Արեւմտեան Վրաստանը: Նոցա սահմանն էր Լիխ լեռը կամ այժմեան Սուրամի զառիվայրը: Թագաւորութեան ծայրերը ամրացրած էին: Մայր-քաղաքներն էին Փութային և Թիֆլիս: Երկրի լաւագոյն մասը՝ թէ բնակիչների թւով և թէ

մշակութեամբ, համարում էր արեւմտեան Վրաստանը, այսինքն Մեսխիան (այժմեան Ախալցխայի գաւառը) և Իմերեթիան:

Աբխազեան-Քարթալիների թագաւորութիւնը բաժանուում էր էրիսթաւութիւնների (որ, ինչպէս ասացինք, մեր նախա-րարութիւններին է համապատասխանում): Աբխազիայում (այժ-մեան Իմերեթիա՛ն, Մինգրելիա՛ն, Գուրիա՛ն, Սւանեթիա՛ն և Մես-խիայի մի մասը) 8 էրիստաւութիւն կար, Վախեթիայում՝ Գերեթի հետ (Քուրի և Ալազանի մէջ տեղը) եօթ էրիսթաւութիւն: Գլխա-ւորը քարթալիների էրիսթաւութիւնն էր, որի պաշտօնատարը կոչւում էր սպասալար կամ էրիսթաւների էրիսթաւ: Նա նախա-գահում էր մեծամեծների խորհուրդներում, նորա ստորագրեալներն էին ֆնացեալ էրիսթաւները, նա էր գանձում պետական հարկերը:

Արդ, այդ էրիսթաւները, XII-րդ դարից ժառանգական էին, մի հանգամանք, որ դառաւ թագաւորութեան անկման գլխաւոր պատճառներից մէկը: Նոքա ունէին ամուր դղեակներ, պիղեր ազ-նաւորներով (ազնւական) և գիւղացիներով: Սակայն որդին ստանում էր հօր իշխանական ժառանգութիւնը, երբ ընդունակ էր ճանաչ-ւում: Բիւզանդիան այդ էրիսթաւներին աշխատում էր զրգուել թագաւորի դէմ և շատ անգամ յաջողում էր:

Բիւզանդական լուսաւորութիւնը Վրաստանում: Բայց առհասարակ Բիւզանդիայի և Վրաստանի մէջ խնամա-կան յարաբերութիւններ էին պահպանւում—ամուսնութեան կապե-լով: Վրացիներից շատերը Կ. Պոլիս էին գնում ուսանե-լու համար, նոքա կացարան ունէին Կ. Պոլսում, և վանքեր Յու-նաստանի և Պալեստինայի զանազան տեղերում: ԱՖոնի լեռան վրայ շինած հուշակաւոր Իւերեան վանքի շինողն էր Մես-խիայի էրիսթաւ Թորնիկը: Այգաեղ վրացի կուսակիցների ընկե-րութեան ձեռքով թարգմանւում էին ս. գրքեր և եկեղեցու ս. հայրերի շարադրութիւնները: Կային Բիւզանդիայում կրթւածներ, որ Վրաս-տանում դրականութեամբ էին զբաղւում: Դոցանից ամենանշանա-ւորները հանգիսացան Իոհան Պատրիկ և Շոթա Ռուստաւելի: Առաջինը թարգմանեց Պատոնի և Արիստոտելի Փիլոսոֆայական շա-րադրութիւնները. իսկ Շոթա Ռուստաւելին՝ շարադրեց հուշակաւոր «Ընձի մութաւորը», որը բոլոր յաջորդ դարերում մնաց վրացոց

մէջ իբր ամենաօրինակելի դիրք և որը անգիր էին անում: Պատ-
րիկը ստեղծեց վրացոց գիտնական լեզուն, Շոթա Ռուստաւելին՝
բանաստեղծական լեզուն ¹⁾:

Բիւզանդիայի ազդեցութեամբ՝ յունաց լեզուն բաւականի տա-
րածւել էր Վրաստանում. եկեղեցիները շինւում էին բիւզանդա-
կան օրինակով: Մծխեթի կաթողիկոսները մի քանի անգամ Բիւ-
զանդիա գնացին, որտեղից բերում էին պատկերներ և սրբութիւն-
ներ: Նոցա ջանքերով վրաց եկեղեցին ձեռք բերեց մեծ հոգեր,
շինեցին շատ վանքեր, ուր հոգեւորականները իրենց կրթութիւնն
էին ստանում: Հոգեւորականներն էին գլխաւորապէս գրում վրաց
ժամանակագրութիւնը: Նոցանից ոմանք վարում էին նաև աշխար-
հական պաշտօններ. յայտնի է մանաւանդ Ճկոնդիդելի եպիսկոպոսը,
որը գլուխ էր պետական գրագրութիւն վարողների և միւլենոյն ժա-
մանակ զօրապետ էր:

Թամարի յաջորդները. բարքերի անկումն.
Րուսուդանա:

Թամարը մեռաւ 1212 թ.ին: Վրաստանը սկսւմ է ընկնել
թուլանալու գլխաւոր պատճառներից մէկը վրաց կառավարիչների
(մթաւարիների) ժառանգականութիւնն էր, որի սկիզբը դրեց զեռ
Թամարի ժամանակ: Երկրորդ՝ Թամարից յետոյ երկու հարիւր տարի
շարունակ վրաց թագաւորները այնպիսի անձեր էին, որոնք աւելի
բարձր չէին քան իրենց աւատական կառավարիչները: Թամարի յա-
ջորդը, նորա որդի Գէորգի Լոշա (1212—1223) անձնատուր էր
ամենաանասնական զարճութիւններին: Նորա քոյր Րուսուդանա, որ
թագաւորեց 1223—1247 թ. աւելի ևս յայտնի էր իւր անբա-
րոյականութեամբ: Երկու ցանկացողներից, որոնցից մէկն էր Խո-
րասանի Զելալ-Եգդին սուլթանը՝ նա ընտրեց իւր ամուսին Երզն-

¹⁾ Ռուստաւելու «Ընձու մորթաւորը» ընդհանուր համբաւ ստացաւ
մեր ժամանակներում, երբ նրանով սկսեցին զբաղուել հետապցիք. Եւ
իբրև վրաց աշխարհական գրականութեան միակ նշանաւոր արձան, որը
ունի, բացի այդ, բանաստեղծական անհերքելի բարձր արժանաւորու-
թիւններ, «Մուրճ»-ը իւր մօտագալ համարներից կը սկսի ծանօթացնել
նորա բովանդակութեան հետ, գէթ արձակ և ազատ փոխադրութեամբ:

բուժի սելջուկեան կառավարիչ Ղոզրիլ-Շահի որդի Թաւգիրիսիին, որից ունեցաւ մի ռղաց՝ Դաւիթ Նարին և աղջիկ՝ Թամարա: Վիրաւորւած դորանից՝ Ջալալ-Էդդին մեծ զօրքով (1226 թ.-ին) շարժւեց դէպի Թիֆլիս: Բուսուղանան փախաւ Քութայիս. Ջալլան-Էդդինը աւերեց Ումլեթիան (Գուգարք), բնակիչներին կոտորեց, պաշարեց և վերցրեց Թիֆլիսը, կոտորեց բնակիչներից շատ շատերին, եկեղեցիքը քարոքանդ արեց: Նոյն խժուժութիւնները արաւ. Խորաջի ափերին, Քարտալինայում, Տրիպլեթում, Ջաւախէթում և Արտանում: Բուսուղանան, դորանից յետոյ, իւր թիկնապահներից մէկին սիրեկան պահեց, անհաւատարիմ գտնելով դէպի իւր ամուսինը. ապա ամուսին ընտրեց Գանձակի մի մահմեդականի, որին չկարողացաւ քրիստոնէութիւն ընդունել տալ և որին նոյնպէս անհաւատարիմ մնաց:

Մոնղոլների իշխանութիւն: Բուսուղանան էր Վրաստանի թագուհին, երբ Կովկասում երեւացին մոնղոլները և թաթարները: Յիշեցնենք որ մոնղոլ Չինգիս-խան, (ծնւած 1155 թ.-ին), հպատակեցնելով իրեն Միջին-Ասիայի թաթար ցեղերը, նւաճեց Պարսկաստանը. յետոյ նորա զօրավարներից Սաբաղա Բաադուր և Ձեփե-Նոին մտան Ատրպատական, Իրան, Հայաստան և Վրաստան: Չինգիս-խանը մեռաւ 1227-ին, իւր իշխանութիւնը տալով իւր երրորդ որդուն Օգոչային: Մոնղոլների մի մասը զնաց Ռուսաստան Չինգիս-խանի որդի Զուլիի գլխաւորութեամբ: Նորա որդի Բատըյ նւաճեց Ռուսաստանը, որը ամբողջ երկու դար մնաց մոնղոլների լծի տակ: Եւ մինչդեռ Օգոչայը զբաղւած էր Չինաստանի նւաճումով, Չարմաղանը, տասն և եօթ զօրավարներով մտաւ Հայաստան և Կովկասեան երկիրները, ամեն տեղ աւերմունք տարածելով: Չարմաղանը վերցրեց Գանձակը և մտաւ Վրաստան: Բուսուղանան փախաւ Իմերեթիայի Ուսանեթի անտոյի բերդը: Երթաթաւները և այլ մեծամեծներ նոյնպէս փախան ապաստանեցին ամուր տեղերում: Չարմաղան և Գաթախան նւաճեցին Սեւանայ լճի շուրջը, Շամքորը, 1239-ին վերցրին Անին, որի հայ բնակիչները փախան Տրապիզոն, Արիմ, Հաշտարխան և այլն: Չարմաղանի յաջորդ Բաշու 1242 վերցրեց Երզնքում և նւաճեց Փոքր-Ասիան:

Վրաստանը երկուսի բաժանած՝ երկու թագաւորներով—մոնղոլների իշխանութեան տակ:

Վրաստանը խաղաղացնելու համար, Բաշու նշանակեց Վրաստանի թագաւոր նախ Գէօրգի Լոշաչի որդի Դաւիթ Սոսլանի՝ին, իսկ յետոյ նաև Բուսուգանի որդի Դաւիթ Նարինին: Առաջինը ստանում է Արևելեան Վրաստանը (Քարթալինիան, Վախեթիան, Սոմցխէ և Եիրևանի մի մասը), երկրորդը՝ արևմտեան Վրաստանը (Ռմբեթիա, Մինգրելիա, Սևանեթիա, Աբխազիա և Ջիգետ):

Հարկահանութեան համար մոնղոլները (կամ թաթարները) ազգահամար էին կազմում, հաշվելով արու և էգերին տասը տարեկանից վեր: Այդ տեղեկութիւնների հիման վրայ տկապեմիկոս Բրոստէ հիմնեց իւր եզրակացութիւնը Վրաստանի ազգաբնակչութեան թւի մասին, որ նա 4 միլիոն հաշվեց: Ով չէր կարող հարկ տալ—նրանից խլում էին աղաներին և աղջիկներին: Հողեօրականութիւնը միայն հարկից ազատ էր: Ամեն տասը հոգուց՝ որոնք զէնք կրելու ընդունակ էին՝ մէկը պէտք է մասնակցէր մոնղոլների արշաւանքներին: Այսպիսով Դաւիթ Նարինը պէտք է տար 10 բիւր (թուման), այսինքն 100,000 մարդ: Ժողովուրդը այդ ծանրութեան համար ապստամբեց, որի պատճառով մոնղոլները մի քիչ մեղմացրին այդ լուծը: Վրացիք մոնղոլների հետ մասնակցեցին նոցա արշաւանքներին եղիպոստում, Ալամուտում, Փոքր-Ասիայում, Իսոկիայում, Բաղդադում, Եիրևանում և այլն: Մոնղոլները լաւ կարծիք կազմեցին վրացոց մասին: Դաւիթ Սոսլանին, որը Բաղդադի առման մասնակցեց, իրաւունք ստացաւ խախանի (մեծ խանի) ներկայութեամբ նստել և ստացաւ երազու ջի կամ դատաւորի պատուաւոր կոչումը:

Թիֆլիսը մոնղոլների ժամանակ շարունակեց մնալ Վրաստանի մայրաքաղաք: Վրաստանի երկու մասի թագաւորներն էլ Թիֆլիսում էին նստում:

Անկախութիւն ձեռք բերած հինգ էրիւթաւները, մոնղոլների ղերիշխանութեան ժամանակ:

Վրաստանը մնաց մոնղոլների գերիշխանութեան ներքոյ մինչև XIV-րդ դարի առաջին կէսը, այն է Գէօրգի V-ի ժամանակ (1318¹—1346 թ.), երբ մոնղոլները անյայտացան Վրաստանից: Երկու թագաւորներն էլ իրենց ջոկ-ջոկ յաջորդներն ունեցան, որ-

ոնցից ամեն մէկը՝ զահ բարձրանալու համար՝ պէտք է խախտանից (մոնղոլների խոսնից) թոյլաւութիւն խնդրէր, հարկ տար, հեռաւոր արշաւանքներին մասնակցէր և այլն: Այդ ժամանակ թագաւորական իշխանութիւնը աւելի ևս նւազում է Վրաստանում, իսկ մտաւարների և էրիսթաւների (կառավարիչների) ոյժը աճում է: Սրբեմնեան Վրաստանում Գաւիդ Նարին թագաւորից յետոյ նորա որդիերանց մէջ սկսում են երկարատե կռիւներ, որոնց միջոցին մտաւարներից և էրիսթաւներից Գէօրգիա Պադիան իւր ձեռքն է գցում Սուխումի (Յիւմի) էրիսթաւութիւնը և իւր տոհմին է սեփականացնում Յիւմի մինչև Անկոպիան. Շերլաշիձէն յափշտակում է Աբխազիան, Գուրիէլը՝ Գուրիան, Սւանեթիայի էրիսթաւը՝ Սւանեթիան: Աւելի ևս ուժեղանում են Զագելիները Սրբեմնեան Վրաստանում, որոնցից Բեկա Զագելի վայելում է աւանձին յարգ մոնղոլական խախտնի կողմից, այնպէս որ Գաւիթ VI ստանում է իւր հօր ժառանգութիւնը, բացի Բեկա Զագելու կալածներից, որը հրաժարւում է գալ թագաւորի (Գաւիթ VI-ի) թագադրութեան հանդէսին: Բեկա Զագելու իշխանութիւնը տարածւում էր Սոմցխէի, Զանդաի (այժմեան Լազիստան) և Կարսի վրայ: Բեկա Զագելու ժառանգները բոլորովին անկախ են դառնում. Բեկայի որդին՝ Սարգիս Զագելի՝ XIV-րդ դարու առաջին կիսում ընդունում է Աթաբէգի տիտղոս, և այդ ժամանակից սկսած Սոմցխէն ստանում է Սաատաբէգօ անունը:

Վրաստանի այդպիսի դրութեան այլ հետեանքներն էին՝ անիշխանութիւն և բարքերի անկումը: Սրգարութիւնը ոտնակոխ էր արւած, մտաւարները և հոգեւոր իշխանաւորները անառակութիւններ էին անում: Գիւմիւրից II Զոհաբերողը երեք կին էր պահում. մտաւարները (կառավարիչ) կողոպտում էին նոյն իսկ եկեղեցիներ:

Գէօրգի Փայլունը և Վրաստանի ազատեւելը մոնղոլներից:

Գէօրգի VI-րդ, որ թագաւորեց 1318-ից մինչ 1348 թ., այդ անկման շրջանի սակաւաթիւ սլաշառ զէմքերից հանդիսացաւ. մոնղոլների իշխանութեան նւազումից օգուելով՝ նա ազատեց Վրաստանը մոնղոլական լծից, ջնջեց անհնազանդ էրիսթաւներին, նոցա տեղ նշանակելով իրեն արձնատուր մարդիկ. նա հարկ դրեց լեզգիների

վրայ. նա խլեց Քութաջիսը, և Իմերեթիայի (արևմտեան Վրաստանի) թագաւոր Բագրատին թողեց միայն Շորապանեան էրիսթաւութիւնը. Դադիանին, Շիրաշիձէին, Գուրիէլին սախակեց ճանաչել իւր իշխանութիւնը: Գէորգի V^Ի տարածում է իւր ազդեցութիւնը Նիկոպոսիս լից մինչև Դերբենդ: Ժողով է կանչում կաթողիկոսին և եպիսկոպոսներին՝ բարքերի լուծման ղէմ միջոցների մասին մտածելու համար: Լեռնաբնակ վրացիներին օրէնքներ է տալիս, որոնք մտան յետոյ 18-րդ դարում Վախթանգի կազմած օրէնագրքի մէջ: Ի տրիտուր այդ ծառայութիւնների ազգի օգտին, նա ստացաւ Փայլունի տիտղոսը: Նա թագաւորեց 1318-ից մինչ 1346 թւականը:

Թամերլանի ժամանակները: Գէորգի Փայլունի ժառանգները թոյլ էին, իսկ նորա ծոռնի՝ Բագրատի (1360—1395 թ.) և սորա որդի Գէորգի V^Ի (1395—1407 թ.) ժամանակ երևան եկաւ Քամերլանը: Սա վեց անգամ մտաւ Վրաստան, քանդեց Թիֆլիսը և Քութաջիսը, Մծխէթի տաճարը և այլ հին եկեղեցիներ, բերդեր, զղեակներ: Բագրատ V-ին և կնոջը զերի է տանում: Գէորգի V^Ի ընկնում է՝ Քամերլանի ղէմ կռուելիս: Քամերլանը քրիստոնեաներին մատնում է հրի և սրի և մի մեծ մասը իւր հետ գերի է տանում:

Վրաստանը բաժանւում է երեք թագաւորութիւնների: Գէորգի V^Ի-ի որդի Ալեքսանդրը յաջողութեամբ կռւեց թշնամիների ղէմ, վերստին շինեց քաղաքներն ու բերդերը, նորից շինեց Մծխէթի և Բուխի տաճարները, իւր իշխանութեան տակ զցեց սւաններին, աբխազներին, չերկէսներին և ջիգետցիներին. բայց իւր թագաւորութեան վերջում նա բաժանեց տէրութիւնը իւր երեք որդկերանց մէջ. աւագը՝ Վախթանգը՝ ստացաւ Իմերեթիան, Սւանեթիան, Օղիշը, Գուրիան, Աբխազիան, Ջիգետը և Ալանեաի՝ն. երկրորդ որդին՝ Դիմիտրիյ՝ ստացաւ Քարթալինիան, Ջերկեսիան և Սաստաբէգօ՝ն. երրորդ որդին՝ Գէորգիյ՝ ստացաւ Վախեթիան և Շիրւանը մինչև Դերբենդ:

Բացի այն որ Վրաստանը երեք ջոկ թագաւորութիւնների է բաժանւում՝ Իմերեթիայում անկախ կալաածքներ են գոյանում (կամ շարունակում մնալ) այն է Մինգրելիան, Գուրիան, Աբխա-

զիան և Սւանեթիան, իսկ Քարթալինիայում՝ Սաաթաբէզօն: Գոցա ծագումը մենք տեսանք վերև:

Այդ բաժանումը մահւան հարւած տւեց Վրաստանի քաղաքական անկախ գոյութեան: Վրաստանը սկսում է լուծուել: Թագաւորներ և մանր իշխաններ իրար դէմ շարունակ կռիւներ են ունենում, նենդութեամբ իրար սպանում են, գերի են բռնում, աչքերը հանում, ձեռքերը կտրում և այլն: Կողոպտում են եկեղեցիներ և վանքեր, հրի և սրի մատնելով ժողովրդի հակառակ մասը: Սպանութիւններ, կողոպտումներ, իրար կնիկներ խլել, զերեվաճառութիւն անել և այլն արեւմտեան Վրաստանում (Իմերեթիայում) օրակարգի երևոյթներ են դառնում, բայց նոյնը շատ թէ քիչ կատարւում է ամբողջ Վրաստանում:

Տաճիկներին, Պարսիկներին իշխանութիւն և Վեդզիներ: Վրաստանը, այդ դրութեան մէջ լինելով՝ որս է ընկնում մերթ տաճիկներին, մերթ պարսիկներին ու մերթ լեզգիներին: Դոքա իրար հետ մրցում են Վրաստանի համար: Այդ նպատակով նոքա տեղական իշխաններին կռուցնում են իրար հետ և հէնց յաճախ նոցա ձեռքով իրենց երկիրները աւերում են: Այդ կարգը տեւում է մինչև XIX-րդ դարի սկիզբը: Թիֆլիսը, Գորին և այլ ամուր քաղաքները դառնում են նիստ կամ տաճիկական ենիչերիների կամ պարսկական զարնիզոնների: Տաճիկները աւելի զործում են արեւմտեան Վրաստանում, պարսիկները՝ մեծ մասամբ արևելեան Վրաստանում:

Գերեվաճառութեան զարգացումը:

Տաճիկները զարգացնում են գերեվաճառութիւնը, որը այնքան ծաւալւում է Իմերեթիայում, Մինգրելիայում և Գուրիայում, որ սովորական փեշակ է դառնում, ծառայելով տեղական ազնւականութեան համար իբր եկամուտի զլխաւոր աղբիւր: Թէ որքան այդ բանը պիտի ազդէր ազգաբնակչութեան թւի վրայ, երևում է Փրանսիացի ճամբորդ Շըւալիէ Շարդէնի խօսքերից, որը այցելեց Վրաստանը XV^{II} դարու վերջը: Մինգրելիայի համար նա ասում է. «Մինգրելիան այժմ քիչ ժողովուրդ ունի. 20 հազար հօգուց աւելի չեն, մինչդեռ 30 տարի առաջ 80.000 հոգի էին: Վաղուց Մինգրելիայից արտահանում են

փողով կամ ապրանքների փոխանակութեամբ մինչ 12,000 հոգի ամեն տարի: Միմիայն Կ. Պոլիս ամեն տարի ուղարկում է մինչ 3000 հոգի, 12 նաւերի և 60 ֆելիւկների վրայ: Դեռ ևս Շարդէնից առաջ, Քարթալինիայի թագաւոր Թէյմուրազ գրում էր ռուսաց թագաւոր Միխայիլ Ֆէօդորովիին՝ թէ Մինգրելիայի իշխան Դադիանը «վաճառում է ամեն տարի 10-ից մինչ 15,000 երեխայ, որին ամբողջ աշխարհը վկայ է, և խլում է քրիստոնեաներից երեխաները և ուղարկում պարզե տաճիկներին, և սուլթանին ու վիզիրներին՝ տարին 120 հոգի ամեն մէկին: Դադիանը տւել է Գուրիան արքեպիսկոպոսին, որը ծախում է ամեն տարի 10-ից մինչ 12,000 երեխայ և հարկ է վճարում տաճիկներին, որին սպանում է, որին կախում, և պատարագ է մատուցանում, այն էլ ոչ քրիստոնէական կրօնի համաձայն»: Կախեթիայի թագաւոր Գէօրգի (նոյնը և Լեոն I) իւր գահի վրայ ամուր մնալու համար 1475-ին շահ Ուսուն-Ապանին ուղարկում է պարզեներ և նորա արքունիքի փայլի համար՝ զերիներ և զերուհիներ: Եւ այդ կրկնում է նաև յետոյ:

Տաճիկները խլում են Սաատաբեգօն: Մահմեդական ու թիւն:

Տաճիկները 1462 թ-ին վերցրին Տրապիզոնը և նւաճեցին Սաատաբեգօն, տեղական աթաբեգների դէմ սկսեց երկարատե պատերազմ և վերջապէս 1587 թ-ին բոլորովին նւաճեցին այդ երկիրը, բնակիչներին ոչոք մահմեդական դարձնելով:

Շահ-Աբասը Վրաստանում: Վրացի զերիներ:

Պարսկաստանի Շահ-Աբբասը 1616-ին մտաւ Վրաստան, Թէյմուրազ թագաւորի երկու որդկերանց ներքինիացրեց, իսկ թագաւորի մօրը, մահմեդականութիւն չընդունելու համար՝ սպանել տւեց. Լեզգիներին իրեն օգնութեան կանչելով՝ ինքը մտաւ Կախեթիա, աւերեց երկիրը, քանդեց եկեղեցիները և վանքերը: Մահմեդական պատմաբան Իսկանդէր-Մուշիի տսելով այդ կռիւներում վրացիներից ընկան 60.70.000 հոգի, իսկ գերի տարւեցին մինչ 100.000 հոգի, իսկ այլ աղբիւրներին նայելով՝ 80.000 հոգի: Նոցա տեղը բռնեցին 80.000 անատոլիական թուրքեր: Գերի տարած վրացիներին տեղաւորեցին Մազանդա-

րանում, Հայաստանում, Միդիայում և Ֆարսում, ուր նոքա մինչ օրս էլ իրենց հայրենի լեզուն պահպանել են: 1552 թ.ին Շահ-Քամազը 30.000 հոգի գերի տարաւ Վրաստանից: XVIII-րդ դարի սկզբում, պատմագիրների հաշուով, տաճիկների 10-ամեայ տիրապետութեան ժամանակ և պարսիկների մրցութեան պատճառով՝ Վրաստանը տաճիկներից խլելու համար՝ 75.000 հոգի տեղումն ընկան, 1.500 ընտանիք Քիւրքիա տարւեցին, և 800 ընտանիք՝ Պարսկաստան: Վերին Քարթալինիայում, իշխան Աւալմէների գաւառակից պարսիկները գերի տարան 5.000 հոգի, Սալիցիանո գաւառակից 500 ընտանիք, Քսանի էրիսթաւութիւնից՝ 1000 հոգի:

Մահմեդականութիւնը վրաց թագաւորական տոհմի մէջ:

Շահ-Աբբասից յետոյ պարսիկները թողին Վրաստանը տեղական թագաւորների ձեռքում, բայց միայն արագացնելու համար վրացոց մահմեդականացնելը: Այդ նպատակով նոքա աշխատեցին մահմեդականութիւնը հաստատել թագաւորական տոհմի մէջ: Այդ մտքով պարսից շահերը իրենց մօտ են պահում և կրթում երիտասարդ թագաւորացիներին, նոցա մեծ պաշտօններ են տալիս Պարսկաստանում, նոցա հետ և վրաց զօրքը կոչում են մասնակցելու պատերազմներում պարսից թշնամիների դէմ, և վերջը նոցա թողնում են հայրենիք գնալ՝ մահմեդականութիւն ընդունելու պայմանով:

Եւ իրօք, այդ ժամանակից ի վեր, Քարթալինիայի և Կախեթիայի թագաւորների մեծ մասը դաւանում է մահմեդականութիւնը, թէև նոցանից ոմանք սրտով քրիստոնեայ են մնում: Նոցա օրինակին հետևում են և մեծամեծները: Թիֆլիսի պարսից գարնիզոնը պաշտպանում էր թագաւորներին: Շիա մահմեդականների համար մեջիդ շինեց նախ 1522 թ., որը մնում է ցայսօր: Շահ-Աբբասից յետոյ վրաց մահմեդական-թագաւոր Ռոստոմ մի աչլ մեջիդ շինեց իւր պալատի առջև: Այդ մեջիդը քանդել տւեց Հերակլ II, 1783 թ.ին, ընդունած լինելով Ռուսաստանի հովանաւորութիւնը: Տաճիկներն ևս որոնք Թիֆլիսի իշխողներն էին 1735 թ.ականից՝ երկու մզկիթ շինեցին սիւննիների համար, որոնց սակայն քիչ ժամանակ անց՝ քանդեց պարսից Նադիր-Շահը, որը տա-

ձիկներին Թիֆլիսից դուրս քշեց և Վրաստանի կառավարութիւնը յանձնեց Թէյմուրազ II-ին և նորա որդի Հերակլին:

Պարսկական բարք ու վարք:

Պարսիկների երկարատև իշխանութեան շնորհիւ՝ Քարթալինի-ան ու Կախեթիան մօտանալով պարսկական բարք ու վարք: Մահմեդականութիւն ընդունած Ռոստոմ թագաւորը (1634-ից մինչ 1658 թ.) մօցրեց իւր պալատում և կառավարութեան մէջ պարսկական կարգեր և պաշտօնատարների պարսկական անուններ. նաև տարածեց Վրաստանում պարսկական փարթամութիւնը, զգեստը, պարսկական երաժշտութիւնը և այլն: Նոր պալատ շինել տւեց պարսկական ճաշակով. շինել տւեց նաև ամրացրած պալատ այն տեղում, որ յետոյ կոչւեց Կոջոր, և ուր ամառը բնակուում էին Ռոստոմ, Գէորգ XI և Վախթանգ V¹ թագաւորները: Թիֆլիսում 1638 թ. շինած պալատի նկարագրութիւնը տւել է Ֆրանսիացի ճամբորդ Նարդէնը (զետեղւած Իոսելիանիի 1866 թ. տպած գրքում «Iprevnosti r. Tiflis», էջ 240-246):

Լեզգիները և Կախեթիան:

Պարսիկները մի կողմից, տաճիկները միւս կողմից, լեզգիներն էլ երրորդ կողմից: Վրաց թագաւորութիւնը երեքի բաժանելուց յետոյ, դոցա մէջ էլ անկախ իշխանութիւններ կազմելով, ինչպէս տեսանք, Վրաստանը ոչ միայն չէր կարողանում ընդլիմազրել տաճիկներին ու պարսիկներին, այլ նոյն իսկ Վաղստանի քնակիչ լեզգիներին, որոնք շատ էին օգնում տաճիկների ու պարսիկների տիրապետութեանը Վրաստանում: Բայց լեզգիների ձեռքից մանաւանդ տանջւեց Կախեթիան, որը Վաղստանի սահմանակից է ¹⁾: Կախեթիայի առաջին թագաւորն էր, որպէս տեսանք, Դաւիթ, որի որդի Գէորգին ջնջեց էրիսթաւութիւնները և էրիսթաւների տեղ կարգեց մօռաւանք (կուսակալ): Լեզգիները սկսում

¹⁾ Կախեթիայի սահմաններն էին. հիւսիսում աչք լեռները, որտեղից ըզխում են Ալազան և իորա ղետերը. արեւելքում՝ աչք լեռնաշղթան որից դէնը ապրում էին լեզգիները. հարաւում՝ դաւանում էր Ելիսէնիի կալաածքը (Իշխանութիւնը). արեւմուտքից՝ Քուր գետը, որը կազմում էր Քարթալինիայի սահմանը: Կախեթիայի թագաւորութեան մէջ էր մտնում նաև լեռնալին Կիզիկիան, ուր ալփ 22 գիւղեր կան:

են փոքր խմբերով յարձակումներ գործել Կախեթիայի վրայ XV-րդ դարից, աւարառութիւններ անելով: XVII-րդ դարում նոցա արշաւանքները արդէն լուրջ հետեւանքներ են ունենում Քարթալի-նիայի և Կախեթիայի համար: Նոցա զէմ Կախեթիայի թագաւոր Քէյմուրազ I օգնութիւն է խնդրում ռուսաց թագաւոր Միխայիլ Ֆէօդորովիչից: XVIII-րդ դարի սկզբում, երբ Քարթալի-նիայի լաւագոյն զօրքը Պարսկաստանում էր, երկիրը այնքան թույլ էր, որ լեզգիները արդէն ազատ համարձակ սկսեցին լիւներից վայր իջնել և Քարթալի-նիա մտնել. նոքա աւերեցին Քիֆլիսը, այրեցին Սիոնի տաճարը և դերի դարձրին քաղաքի բնակիչներին: 1616 թուականին Շահ-Աբբասի պատուէրով լեզգիները աւերեցին Կախեթիան և դերի վերցրին փախչողներին: Շահ-Աբբասի դերի տարած վրացի ժողովուրդի տեղ՝ լեզգիները և թուրքերը բռնեցին Կախեթիայի հարաւային մասը: Նոցա մեծ մասը բռնեցին Ջարը (Կախ) և Բելաքանը և շրջակայքը, ուր նոքա մինչ այժմ էլ ապրում են: Պարսից շահերը և խաները թույլ էին տալիս լեզգիներին անպատիժ կերպով ապանել կախեթցուն, մինչդեռ մահմեդականի սպանման համար կախեթեցին մահով էր պատժւում: Այդ ժամանակից ի վեր լեզգիները մեծ խմբերով են յարձակում Վրաստանի վրայ. Ջարը և Բելաքանը իրենց ամուր ջենարանը դարձրած լինելով: Արշաւում էին Կախեթիա, Սոմխեթիա (Գուգարք), Քարթալի-նիա և մինչև անգամ այժմեան Ախալցխայի դաւաւը, ուր ծառայութեան էին մտնում տաճիկ փաշաների մօտ և, յարմար դէպքում՝ յարձակում Քարթալի-նիայի վրայ: Նոքա իջնում էին Ելիսուէի, Աուբայի, Նուխալ և Բելաքանի ձանապարհներով, բեւադի կոչւած առաջնորդների ղեկավարութեամբ: Յարձակումներ գործում էին նաև Դաղստանի Կունդախի իշխանը և Աւարիայի խանը:

Կախեթիան այնտեղը հասցրին լեզգիները, որ կախեթեցոց մէջ մարեց հայրենիքի սէրը. նոքա միանում էին լեզգիների հետ՝ հայրենիքը աւերելու համար: Կախեթիայում տեղ չէր մնացել, ուր արիւն չթափւէր լեզգիների ձեռքից: Նադիր-Շահը, երբ 1734 թ-ին Գանձակը վերցրեց, քարթալի-նիք ու կախեթեցիք միացան նորա հետ, ազատւելով տաճիկներից. դորա փոխարէն՝ տաճիկները լեզգիների հետ աւերեցին Քարթալի-նիան, Կախեթիան, Սոմխե-

Թիան և Սաբարաթիան'օն. բնակիչներ մնացին միայն ամրացրած տեղերում: Կախեթիացու, բացի աղնականներից (թաւաղներ, աղնաուրներ) և ներքին Կախեթիացի բնակիչներից, — մնացեալ ժողովուրդը մահմեդականութիւն ընդունեց:

Այժմեան Զաքաթալի օկրուգում (նահանգ), մինչ օրս էլ կայ հին վրացիների սերունդների մի աննշան մասը, որոնք յայտնի են ինգիլոյեցոց անունով: Իսկ Դադստան գերի վարած բացմաթիւ նախկին վրացիք ապրում են այժմ Զինդ, Սուազիլ, Յախուրի, Դիլ-Միձ, Մուսլախ և այլն գիւղերում, մահմեդականացած և լեզուն կորցրած:

Ինչ որ առեց Քարթալինիայի թագաւորների մահմեդականութիւն բնորոշելու մասին, նոյնը վերաբերում է նաև Կախեթիայի թագաւորներին: Օրինակ Կախեթիայի թագաւոր Դաւիթ III կոչւում էր Իմամ-Վուլի-Խան (որի ժամանակակից Քարթալինայի թագաւոր Վախթանգ VI Օրէնսդիրը կոչւում էր Հուսէյն-Վուլի-Խան):

Վրաստանը Ռուսաստանի գերիշխանութեան ներքոյ: Աղա-Մահմադ-խան:

Վրաստանը այդ յետին անկումից մի առժամանակ բարձրացնողը եղաւ Հերակլ II, որը անձամբ շատ քաջ էր. բայց և հասկացել որ եթէ այնպէս գործը շարունակւելու լինի՝ կարճ միջոցում Վրաստանը այլ ևս ոչ միայն իբր պետութիւն, այլ և իբր ազգ իսպառ չի ջնջէր երկրի երեսից: Նորա ամբողջ կեանքը անցկացաւ յաջող կռիւների մէջ տաճիկների, պարսիկների և լեզգիների դէմ: Երբ Կախեթիայի թագաւոր Թէյմուրազ II 1762-ին Ռուսաստան գնաց, նորա որդի Հերակլ II Կախեթիան միացրեց Քարթալինիայի հետ. իսկ 1783 թւականին Հերակլը Ռուսաստանի հետ դաշինք կապեց, որով ընդունեց Ռուսաստանի գերիշխանութիւնը, վերացրեց վրացոց կաթողիկոսութիւնը, ևնթարկելով վրաց եկեղեցին ռուսաց սինոդին:

Պարսից գերիշխանութիւնը չճանաչելուն համար էր, որ Աղա-Մահմադ-խանը եղաւ ու աւերեց Թիֆլիսը 1795 թւականին:

Այդ արշաւանքի մանրամասնութիւններին մեր ընթերցողները արդէն լաւ ծանօթ են:

Վրաստանի թագաւորութիւնների վերջը:

1798 թւականին վախճանւեց Հերակլ II: Նորան յաջորդեց Գէորգի XIII, որը 1801 թւականին երկրի աղնւակա- նութեան հետ ստորագրեց այն թուղթը, որով Վրաստանը, այս- ինքն Քարթալինիան և Վախեթիան, ընդունում է ռուսաց հա- տակութիւնը առ միշտ:

Իսկ Իմերէթիայի թագաւորութիւնը միացւեց Ռուսաստանին 1810 թւականին:

Ս մ փ ո փ ու մ ն: Ա զ զ ա բ ն ա կ ու թ ե ա ն նւազուումը ի բր վերջին պատճառ քաղաքական Վրաստանի թուլութեան և վերջնական կորուստի:

Վրաց պատմութեան այս համառոտութիւնից երևում է, որ՝

1) Վրաց ազգը, քոյր ցեղերի հետ միասին, կազմում է եղել մի ամփոփ ազգաբնակութիւն, որը տարածւում է եղել Վով- կասեան մեծ լեռնաշղթայից դէպի հարաւ, մինչև Հին-Հայաստանի սահմանները ոչ հեռու Թիֆլիս քաղաքից, և խառը հայերի հետ՝ մինչև մօտ Դիլիջանի լեռնաշղթան, և Սև-ծովի արևելեան ափե- ռից մինչև Շիրւանի մօտերքը:

2) Վրաստանը իբր մի ամփոփ պետութիւն գոյութիւն չի ու- նեցել գրեթէ երբէք, այլ կազմւած է եղել մեծ մասամբ երկու (Արևելեան և Արևմտեան Վրաստան) և վերջը նաև երեք պետու- թիւններից ու միաժամանակ մի քանի անկախ աւելի մանր իշխա- նութիւններից. ամենակարևորը վրացոց պետական զաղա- փարի և ազգայնութեան համար պիտի համարել Քարթալինեան պետութիւնը Թիֆլիս մայրաքաղաքով:

3) Գոյութիւն չունեցած լինելով իբրև մի ամփոփ պետու- թիւն՝ Վրաստանը, իւր երկու-երեք պետութիւններով, գրեթէ երբէք չկարողացաւ կատարելապէս ազգային պետական անկախու- թիւն ձեռք բերել. միապետները, որոնք ազգային լեզուով կոչւում էին թագաւորներ, իբրև անկախ պետեր չեն ճանաչւել հարևան մեծ պետութիւնների կողմից և գրեթէ միշտ գտնւել են որ և է զօրեղ հարևան պետութեան գերիշխանութեան ներքոյ՝ Բիւզան- զիայի, կրակապաշտ Պարսկաստանի, արաբների, սելջուկների, մոն-

գոյների, մահմեդական պարսիկների ու տաճիկների և վերջը Ռուսաստանի:

3) Վրաստանի ամենաբարգաւաճ շրջանը ընկնում է այն ժամանակամիջոցը, երբ նա միացել էր մի ազգային իշխանութեան ներքոյ, այն է 1200 թւականի շուրջը, գլխաւորապէս Քամար թագուհու ժամանակ: Այդ իսկ միջոցին ծաղկում է և գրականութիւնը:

4) Վրաց իշխանութեան անդառնալի անկումը պայմանաւորեց վրացի ազգաբնակչութեան մեծ նւազումով, որ յաւաջացաւ ա) մանուկ սերունդների գերեզմանութիւնով դէպի մահմեդական երկիրները, բ) գերեզմարութեամբ հասակաւորների՝ Շահ-Աբբասից սկսած՝ մեծ արշաւանքների միջոցին, գ) մասսային կոտորածներով վրացիների՝ մահմեդականների ձեռքով, դ) տեղ-տեղ մասսային կրօնափոխութեամբ, ե) օտար ցեղերի բազմանսլով Վրաստանում, որոնց մէջ չկար հաւատարմութեան զգացմունք դէպի վրացական պետութիւնը:

Ինչ վերաբերում է ազգաբնակչութեան նւազման, մենք ունինք մի քանի թւեր: Մենք արդէն տեսանք, որ Բրոսէն, հիմնելով մնացած զոկումենտների վրայ, որոշեց 4 միլիոն վրացոց թիւը մեզնից 6-700 տարի առաջ: Արդ, 1783 թւականին, Քարթալի-նիայի և Կախեթիայի բնակիչների թիւը հաշւած է 61.000 ընտանիք, ուրեմն շուրջ 300.000 հոգի: Իսկ Աղա-Մահմադ-խանի արշաւանքից յետոյ, և երբ արդէն Վրաստանը ռուսաց հպատակութիւն ընդունեց, գեներալ Կնորրինգ, իւր զեկուցման մէջ ռուսաց կայսրին, յայտնեց որ այդ տարին, 1801 թւականին, բնակիչների թիւն էր 35.000 ընտանիք, որ մենք կարող ենք ընդունել իբր ամենաշատը 200.000 հոգի: Իոյցա մէջ են անշուշտ նաև Վրաստանում եղած հայերը և թուրքերը: Այդ թւում հաշւած է հարկաւ և թիֆլիսը: Նոյն կառավարչապետ գեներալ Կնորրինգի տւած ոստիկանական կանոնադրութեան մէջ թիֆլիսի վերաբերմամբ ասւած է թէ թիֆլիսը ունի 2000 տնից աւելի և Հաւլաբար արուարձանն էլ 300 տուն: Ուրեմն ընդամենը մնացել էր 2300—2400 տուն, որ ասել է շուրջ 12.000 հոգի բնակիչ ¹⁾:

¹⁾ Հաշւում են որ Աղա-Մահմադ-խանը Վրաստանից (գլխաւորապէս

Մեր յօդաճում Աղու-Մահմադ-խանի արշաւանքի հարիւրամեակի առիթով՝ հետեւելով վրացի գրողների ցուցմունքներին, ասե՛ք էինք թէ Հերակլը սպասում էր 16.000 զինուոր Կախեթիայից և Կիզիկիայից, Քարթալինիայից 10.000, Արագւայ ձորի բնակիչներից 10.000, Ղազախ-Բորչալուից 10.000, ուրեմն միմիայն Քարթալինիայի և Կախեթիայի միացեալ թագաւորութիւնը կազմող երկիրներից 46.000 հոգի: Եւ տեսանք որ իւր անմիջական հպատակներից նա կարողացաւ կազմել միայն 5—6000 հոգի զօրք, որովհետեւ Խմերեթիայի 2000-ի զօրքը մենք առայժմ մի կողմն ենք թողնում: Ասւեց նաև, թէ ենթադրւած զօրքերի չգալու պատճառը դաւաճանութիւնն էր և անհնազանդութիւնը թագաւորին: Մենք սիրով կրկնեցինք վրացի գրողների խօսքերը այդ մասին. բայց այժմ, 18-րդ դարի վերջն եղած բնակիչների մասին մի քանի պաշտօնական թւերի հետ ծանօթանալուց յետոյ, մենք ետ պիտի կանգնենք մեր անցեալ յօդաճում արած մեղադրանքների մի մասից՝ որոնցով եթէ Հերակլը չկարողացաւ սպասած զօրքը գումարել՝ իբր թէ դա միայն Հերակլի որդիների կամ այլ իշխանների դաւաճանութիւնիցն էր: Թւերը զալիս են խնդիրը պարզելու: Եթէ, մտածում ենք մենք, Քարթալինիայի և Կախեթիայի թագաւորութիւնը 1783-ին ունեցել է միայն 61.000 ընտանիք, 1801 թւականին 35.000 ընտանիք, 1795-ին կարող էր ունենալ շատ-շատ 50.000 ընտանիք և կամ 250—300.000 հոգի բնակիչ¹⁾: Արդ, որքան իսկական զինուոր կարող էր զուրս բերել պատերազմի դաշտը մի պետութիւն

(Թիֆլիսից) գերի տարաւ 10.000 հոգի, նոյնքան էլ հարեան իշխանութիւնները և մի ալըքան էլ գաղթեց Ախալցխա, Կարս, Երեւան և այլ տեղեր:

¹⁾ Այժմ վրաց բովանդակ ազգի թիւը (Քարթալինցիք, Կախեթացիք, Խմերեղներ, մինգրելներ, գուրիացիք և այլն) մի միլիոնի չափ է: Եթէ չհալ 300.000-ի վրա՝ աւելցնենք Խմերեղացոյ, մինգրելացոյ և գուրիացոյ թիւը, որ կարող էր լինել մեզնից 100 տարի առաջ, դիցուք 100.000 հոգի, ուրեմն ընդամենը վրացիք կը լինէին 400.000 հոգի. ալը կը նշանակէր որ այս մի դարում վրացոյց թիւը 2½ անգամ աճել է. և դա մի սովորական աճումն է, հետեւապէս վերը առաջ բերած թւերը պիտի որ բաւական ճիշդ լինեն:

300.000 բնակիչներով: Ընդհանուր զինւորագրութիւն ունեցող երկիրները Արեւմտեան Եւրոպայում թէև, թղթի վրայ, հաշոււմ են թէ կարող են դաշտ դուրս բերել ամեն մէկը 2—3 միլիոն, բայց իսկը սա է, որ 1870 թւականի ահեղ պատերազմում մի-մի միլիոն զինւորից աւելի չկարողացան դուրս բերել Ֆրանսիան և Գերմանիան. իսկ դա անում է մօտ 40 հոգի (արական և իգական, հասակաւոր թէ երեխայ) բնակչից 1 զինւոր: Այդ համեմատութեամբ 300.000 բնակիչ ունեցած Քարթալինեան և Կախեթեան թագաւորութիւնը կարող էր դուրս բերել 7.500 մարդ: Եւ մօտ այդքան էլ հաւաքեց Հերակլ 1795 թւականին: Մեր խօսքը իսկական զինւորների մասին է, և եթէ կարելի էր զորա կրկնապատիկն ու քառապատիկը ժողովել, դեռ հարցէ թէ այդքան մարդիկ ինչ զինւորական պատրաստութիւն կարող էին ունենալ և այդքանի համար որքան պատերազմական մթերք և պաշար կ'ունենար Հերակլի թագաւորութիւնը: 2է որ պաշար չկար նոյն իսկ Իմերեթիայից եկած 2000 հոգու համար, որոնց կերակրողները քաղաքի բնակիչները եղան?!

Վերջացնենք այս տեսութիւնը մի քանի խորհրդածութիւններով:

Վերը առաջ բերած թւերը, ի միջի ալոց, ապացուցանում են, թէ որքան սարաափելի շովինիզմ կայ վրացի գրողներից ոմանց մէջ, որոնք, փոխանակ խոստովանելու թէ որքան ողորմելի էր Քարթալինեան և Կախեթեան թագաւորութիւնը 18-րդ դարի վերջում, փոխանակ պարզ թւերով համոզելու որ վրաց պետութիւնը ընդգիմադրութեան անընդունակ էր՝ ուժասպառ եղած լինելու պատճառով,— զբաղւեցին թւերով դաւաճանելուն, մի մեծ բաժին էլ տալով հայերին: Եւ զէպքից հարիւր տարի անցած՝ այսօր էլ մի վրացի բանաստեղծ, որը բարեբաղտաբար մտածող մարդու համբաւ չի վայելում նոյն իսկ իւր ազգակիցների մէջ—Ակակի Մերեթելին—իւր անհուն միամտութեամբ, դեռ զբաղւած է դաւաճաններ որոնելով հայերի մէջ: Վերևի թւերը որ մեր աչքի առաջ ունենք, մենք այդ ազգասիրական խուղարկութեան դէմ կարող ենք գոչել՝ o sancta simplicitas!

Մեր աչքի առաջ մի մահմեդական պետութեան՝ Տաճկաստանի՝ քաղաքականութիւնը այսօր էլ նոյնն է, ինչ որ էր ամեն մի մահմեդական պետութեան քաղաքականութիւնը անցեալ դարերում, իրենն էլ հետը։ Դարաւոր քաղաքականութեամբ նա արդէն կարողացել է Տաճկա-Հայաստանի հայ ժողովուրդը խառնել մահմեդականների սուլար թւի հետ. մի մեծ մասը ուղղակի կոտորել է, որ կորչի ազգաբնակչութեան ոյժը. և այսօր էլ, մեր աչքի առաջ, նա կոտորում է հայ ազգաբնակչութիւնը, համոզւած լինելով, որ ուր չկայ մի որոշ թիւ—այնտեղ չկայ ոյժ. և ուր չկայ ոյժ—այնտեղ վերանում է քաղաքական խնդիրը։

Մի երկու խնդիր ևս, և մենք կը վերջացնենք։ Մեզանում եղել են և թերեւս կան մտածողներ, որոնք կարծում են որ Հայաստանը քաղաքականապէս կ'ազատուէր, եթէ ստիպւած չլինէր քրիստոնէութեան համար այնքան ու այնքան արիւն թափել և ալլալիօն պետութիւնների մշտական վրէժխնդրութեան առարկայ լինել։ Դոքա ոչ միայն ներողամտաբար են նայում Արծրունի Մերութանների և Սիւնեաց Վասակների վրայ, այլ վերագրում են նոցա ինչոր բարձր և նուրբ քաղաքագիտութիւն, որպիսից զուրկ պիտի եղած լինէր քաջն Վարդան Մամիկոնեան։ Սխալ կարծիք. մենք ունինք նաև սեփական ազգային պատմութիւնից օրինակներ այդ կարծիքի թիւրութիւնը ցոյց տուող. բայց ահա և Վրաստանի պատմութիւնը. վրաց թագաւորներից և մեծամեծներից շատերի մահմեդականութիւն ընդունելը 17 և 18-րդ դարերում չէր հանդստացնում պարսիկներին, տաճիկներին և այլն. պարսիկների առաջ խոնարհւելով երկիրը ազատ չէր կացուցանւում արշաւանքներից, կոտորածներից. երկիրներ աւերելը, երբ միայն կարող են, այդպիսի պետութիւնների համար, ուր գիտութիւն և յառաջդիմութիւն, մոքի պրոգրես արհամարւած բաներ են, նոցա քաղաքականութեան զուղըն ու ծուծն է կաղմում. ոչ թագաւորների կրօնափոխութիւնը և ոչ որևէ կերպ հաճոյանալը այդ պետութիւնների առաջ չէր փրկել ոչ Հայաստանը և ոչ Վրաստանը, եթէ դորանով նոքա կամենային ազդ փրկել, ինքնավարութիւն փրկել։ Նոքա անընդունակ կը լինէին հասկանալու որևէ զոհաբերութեան գինը։ Միակ հնարը դոցա պէմ կանգուն մնալու՝ կարող էր լինել հայերի և վրացի-

ների խիստ գիտակցական քաղաքականութիւնը, այն է՝ միակ քրիստոնեայ ազգեր լինելով՝ նաև ընդհանուր արտաքին քաղաքականութիւն ունենալը: Այդ պայմանով միայն Հին-Հայաստանը ու Հին-Վրաստանը կարող կը լինէին պատերազմի դէպքում՝ երկուսի պատերազմական ոյժերը միացնել և հարևան ամեն մի պետութեան ոտնձգութիւնները յաջողութեամբ ետ մղել:

Ոչ Հայաստանը և ոչ Վրաստանը չեն զարգացրել և կամ միջոց չեն ունեցել զարգացնելու ազգաբնակչական քաղաքականութիւն, որ ոչ այլ ինչ է եթէ ոչ երկրի բարեկարգութիւն: Հայ և վրացի վաղեմի իշխանների հոգսը՝ որ նոցա իրաւունքները ճանաչեն այս կամ այն գերիշխող տէրութիւնից՝ չփրկեց նոցա սերունդներին կորուստից և հայրենիքը՝ անկախութիւնից, որովհետև այդ իրաւունքները տնողական կարող էին լինել, եթէ նոցա պաշտպանողը լինէր ոչ թէ օտար պետութեան կամքը, այլ սեփական ազգը. իսկ ազգը կարող էր ոյժ ունենալ՝ այդ իրաւունքները պաշտպանելու, եթէ իւր թիւը գնալով աճէր և ոչ նւազէր:

Պարսիկները և տաճիկները ունեցել են մի ազգաբնակչական քաղաքականութիւն—բայց միայն ամենավատ տեսակից. նոքա աշխատել են իրենց թիւը բազմացնել՝ բռնի կրօնափոխութեամբ այլակրօնների: Այդպիսի քաղաքականութիւն, որ անբարոյական լինելուց զատ՝ նաև ամենավտանգաւորն է, չի կարողացել ազատել պարսիկներին և տաճիկներին սեփական անկումից, նոյն իսկ ազգաբնակչութեան թւի տեսակէտից: Բաւականին լայնածաւալ Պարսկաստանը չի կարող այսօր զօրեղ յարձակման դէմ պաշտպանւել, ունենալով միմիայն այժմեան 6—7 միլիոն ազգաբնակչութիւնը. իսկ օսմանեան պետութեան մէջ, որը զարից աւելի է ինչ անկման շրջանումն է, իսկական օսման լինչպէս ամեն բանից երևում է, նոյնպէս չի աճում, այլ դեռ նւազում էլ է:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ԳԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Օ՛, եթէ այնտեղ, գերեզմանից յետ,
Դեռ կայ մի այլ կեանք անյայտ ու անհուն,
Եւ եթէ մահը դէպ՝ երանաւէտ
Այն կեանքի զիրկն է մեր հոգին տանում,—
Ա՛խ, ի՞նչպէս կեանքը ես կը թողնէի,
Ուր աղօթելու չկայ սուրբ տաճար,
Եւ դէպի այնտեղ կը սլանայի,
Դէպի այն կեանքը հեռու, փրկարար...
Եւ կամ գուցէ նա մի խորհրդաւոր,
Մի անվերջ կեանք է իր սարսափներով.
Ի՞նչ փոյթ, կ'երթայի շուտով, քանի որ
Կեանքը խորտակեց հոգիս իր թոյնով.
Ես կը թողնէի անմիտ հառաչանք,
Ինչու լալ, արժէ՞ դա կեանքի համար.
Ես կը թռչէի մութից էլ արագ
Դէպ հեռու, հեռու, անծանօթ աշխարհ...
Օ՛, եթէ այնտեղ, գերեզմանից յետ,
Կայ դարձեալ աշխարհ մի երանաւէտ...

ԽՈՇՈՐ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ¹⁾

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն)

Աշխատաւոր ընդհանրութեան շահերի պաշտպան՝ կրթւած, անձնէր երիտասարդութիւնը գլուխ անցնելով եռանդուն պրոպագանդին, տասնեակ տարիների ընթացքում ստեղծեց բանւորական տգէտ և ընկճւած մասսայից մի հսկայական կազմակերպութիւն,

¹⁾ Տես «Մուրճ» 1895 թ. № 1 և 7:

Ներկալ ջօղւածի ալս վերջին մասը տպագրում ենք առանց որ և է փոփոխութեան: Յաջոնում ենք միաժամանակ, որ որքան և մենք ուրախ ենք տպագրելու մի ջօղւած, որը գալիս է աւելանալու սոցիալական-բանւորական խնդրին («Մուրճ»-ում նւիրած արդէն պատկառելի թւով ջօղւածներին, և որքան ուրախ ենք որ մի անգամ ես խօսք է խօսւում ջօղւած մի դասակարգի, որի շահերը շատ թանկ են «Մուրճ»-ին,—բալց և ալնպէս «Մուրճ»-ի տեսակէտը լիովին ալն չէ, ինչ ջօղւածիս հեղինակին): Է: Մենք վերաբերում ենք դէպի սոցիալիզմը կրիտիկաբար և ընդունում ենք աստիճանական զարգացումը իբր առողջ զարգացման լաւագոյն ճանապարհը, ընդունելով նաև սոցիալիզմի մէջ զարգացման առողջ սաղմեր: մինչդեռ ջօղւածիս հեղինակը, որպէս մեզ թւում է, աստիճանական զարգացումը ընդունում է միալն անցեալի վերաբերմամբ (ալց երեւում է ջօղւածի առաջին մասերից), իսկ ապագայի համար կարծես նա ընդունում է մի անշարժ դրութիւն սոցիալիստական չրջանակի մէջ: Յօղւածիս հեղինակի համար գոչութիւն չունի կրիտիկական վերաբերմունք դէպի սոցիալիզմը, և սոցիալիստ գրողները ու գործիչները նորա համար մի մի մարգարէներ են ու նոցա խօսքերը մի-մի պատգամ-

օժտւած դասակարգային ինքնաճանաչութեամբ, լի գործելու եռանդով, ընդունակ մաքառելու, գիտակ ու պաշտպան իւր սեփական ինտերեսներին,—մի կազմակերպութիւն՝ որով իրաւամբ կարող է պարծենալ այսօր գերմանական բանւորութիւնը:

Ովքեր էին այն անկեղծ, գաղափարական անհատները, որոնք 60-ական և 70-ական թւականներին զլուխ անցան բանւորների կազմակերպութեան գործին: Դոքա մեծ մասամբ նոյն պրոլետարիատի հարադատ զաւակներն էին, որոնք ուսումնասիրելով իրենց նախորդների գրւածքները, ուսումնասիրելով պատմութիւնը և քաղաքատնտեսութիւնը, միևնոյն ժամանակ քննելով իրերի ժամանակակից դրութիւնը, բանւոր դասակարգի թշուառ, անելանելի վիճակը, կանգ առան որոշ հոգի վրայ, մշակեցին որոշ դաւանանք, որոշ սկզբունքներ և այդ սկզբունքներն իրագործելու համար մտան նոյն պրոլետարական միջավայրը, որից ծնունդ էին առել: Գաղա-

ներ, իսկ բոլոր մնացածները մի-մի սոցիալական հեթանոսներ են: Մենք այդ մեկնում ենք միակողմանի ընթերցանութեան և չրջանի ազդեցութեամբ: Դորադից է նաև ամեն տեսակ չափազանցութիւն խոստ սոցիալիստ կուսակցութեան և, դորա հակառակ, ձգտումն ամեն ինչ սեւացնելու ինչ որ զուտ սոցիալիստական հաւատամքի համառոտապատումից դուրս է: Որ այդպիսով իրողութիւնները իրենց իսկական լոյսով չեն երևալ—այդ արդէն դորա հետևանքը պիտի համարել Յօդածիս հեղինակը, որպէս մեզ թւում է, չի գնահատում այն բոլոր նոր պայմանները, որ թէ ստեղծել են և թէ ստեղծում են բանւոր դասակարգի համար՝ թէ ինքնօգնութեան և թէ մանաւանդ օրէնսդրական միջոցներով. պայմաններ, որոնց մէջ մեծացած բանւորական նոր սերունդները աւելի ու աւելի մեծ մտաւոր, բարոյական, սոցիալական, քաղաքական և նոյն իսկ նիւթական միջոցներ է կարողանում ձեռք բերել՝ իւր դասակարգի և դորանով նոյն իսկ ընդհանրութեան չափերը պաշտպանելու, քան առաջ էր. պայմանների վերջապէս, որոնց շնորհիւ նաև սոցիալիստական գործունէութիւնը թէ պարլամենտներում, թէ կոնգրէսներում և թէ ժողովրդական գումարումների մէջ ալժամ չափ աւելի լուրջ մտածողական և գործնական բնաւորութիւն են ստացել, քան մի քառորդ դար և աւելի տարի առաջ էր: Սկզբունքի խնդիրը սորանով աւելի չենք կարող արծարծել մի նկատողութեան մէջ մի պատահական խոսքի առիթով. մենք առիթներ կ'ունենանք պրինցիպիական խնդիրներին վերադառնալու:

Ման. «Մուրճ»-ի խմբ.

փարի մարդիկ՝ նոքա մղում էին երկար տարիների ընթացքում կուսակցական կռիւլ ընդդէմ ամեն ազատութիւն կաշկանդող հասարակական և քաղաքական խոչընդոտների. նոքա կուում էին բորբոսնած ռուտինայի դէմ հպարտ գիտակցութեամբ, որ մի օր վաղ թէ ուշ կը տապալւի ալի ռուտինան և նրանց քարոզած անմահ ճշմարտութիւնները կը յաղթանակեն: Լոկ համակրութիւնը չէր դէպի հարստահարած բանւորութիւնը, պրոլետարի մշտնջենական տառապանքները չէին, որ ստիպեցին այդ մարդկանց ասպարէզ գալ, իբրև որոշ վարդապետութեան դաւանողներ, այլ պատմութեան և ժամանակակից հասարակութեան խորունկ ուսումնասիրութիւնն էր, որ դրդեց նրանց ընդունել և տարածել այդ վարդապետութիւնը: Նրանցից իւրաքանչիւրը համոզւած էր, որ ամեն մի անհատ, եթէ միայն հեռու է նեղ, էգոիստական միտումներից, և դասակարգային ռուտինական նախապաշարումներից, վաղ թէ ուշ անպայման կը յարէ նոյն վարդապետութեան, կը կանգնէ նոյն հողի վրայ...

*
* *

Ընթերցողն անշուշտ կը հետաքրքրւի իմանալ—ինչ դեր է խաղացել արդեօք գերմանական ուսանողութիւնը պրոլետարիայի զարգացման պատմութեան մէջ: Ինչպէս է առհասարակ վերաբերում նա դէպի բանւորական շարժումները, դէպի ագիտացիայի, պրոպագանդի խնդիրը: Մասնաւորապէս է նա բանւոր դասակարգի ազատման գործին, կարեկից է նա աշխատաւոր տանջւած ընդհանրութեան ցաւերին. դէպի նոր դադափարները տածում է նա այն խորին համակրանքը, այն բուն, ազնիւ ոգևորութիւնը: Յաւօք սրտի պէտք է պատասխանել—հէ: ¹⁾

40-ական թւականներին, երբ անհատի լիակատար ազատութեան տենչանքները երկարատև թմրութիւնից յետոյ կրկին արթ-

¹⁾ Գերմանական համալսարանների քաղաքատնտեսութեան ամբիոնները գրաւած են գիտնականներ, որոնցից շատերը իրանց սրտին շատ մօտ են ընդունում բանւոր դասակարգի շահերը և այդ պատճառով նոցա խորհրդով և նոցա հաջնացքների համաձայն Գերմանիայում, Բիսմարկի ղեկավարութեամբ, առաջարկեցին և մտցեցին մի շարք բարենորոգումներ

նացան ժողովրդի մեծամասնութեան մէջ, գերմանական ուսանողութիւնն էր, որ երիտասարդական աշխուժող ասպարէզ եկաւ որպէս ազատութեան իսկական մարտնչող:

Համալսարանականները և ակադեմիկները անցան ժողովրդի շարքերը և սկսեցին խօսքի ու գործի տենդային պրոպագանդը: Գեմնիքատական ձգտումներով տողորած՝ գերմանական ինտելիգենցիան էր, որ զօրեղ օպպոզիցիա կազմելով, մղեց ազատական քաղաքականութիւնը:

Ամբողջ կէս դար անցաւ այն ժամանակից: Գեմնիքատների բաղձանքները մասամբ միայն իրականացան: Իւր սահմանափակ—մամուլի, ընտրողութեան, խօսքի և գումարման ազատութեամբ հաստատուեց գերմանական սահմանադրութիւնը:

Սակայն ժամանակն առաջ գնալով, հեռո՛հեռո՛ւ աւելի և աւելի ակներե կերպով երեան եկաւ, որ չիշեալ սահմանադրութիւնը տակաւին թերի է, պակասաւոր, որ նրա մէջ չկայ լիակատար ազատութիւնը: Ժողովուրդը զգաց որ «լիակատար» և սոսկ «քաղաքական» ազատութիւն տարբեր բաներ են: Նա համոզեց, որ ոչ

բանտը դասակարգի օգտին, կատաղի կռիւ մղելով մանչեստրեան թէորիաների վրա՝ մեծացած կուսակցութիւնների ղեմ: Այստեղ տեղը չէ մի առ մի լիշեւ ալք բարենորոգումների մասին: «Մուրճ»-ը առիթներ ունեցած է խօսելու, բայց չօգտածի հեղինակին անշուշտ քաջ չալտնի են: Չպէտք է արհամարել ալք բարենորոգումների սկզբնաւորութիւնը: Մտցնելով բանտների ապահովութեան օրէնքը՝ նաև թէօրիապէս նոքա հերքում են laissez faire, laissez passer-ի դոքտրինը, և բանտրի ապահովութիւնը չեն թողնում լոկ կոչը բաղդին, տնտեսական մրցման ազատ խաղին, ալ դորա համար երաշխաւոր են դարձնում թէ կապիտալիստներին և թէ ամբողջ պետութիւնը: Ընդունելով այն տեսակէտը, որ զուած է ապահովացման գործի հիմքում՝ օրէնսդրութիւնը կարող է դեռ ևս շատ հեռու գնալ բանտրական խնդրի մէջ. նախապատրաստել նոր սերունդ՝ ընդունակ՝ խնդիրը իւր ամբողջ ծաւալով ըմբռնելու՝ ահա ալք գործին անշուշտ ծառայում են քաղաքատնտեսութեան ամբիոնները Գերմանիայում, որոնք և անկասկած լուսավոյնն են ամբողջ Եւրոպայում: Ապահովացման սկզբունքը զարգանալով՝ կարող է մեծ չեղաչրջումների հասցնել ներկալիս չաբաքերութիւնները բանտրի ու գործատիրոջ մէջ:

Ծան. խմբ.

թէ միայն պաշտօնական հաւասարութիւնն է օրէնքի առաջ, այլ գլխաւորապէս անտեսական հաւասարութիւնն է, որը պայմանաւորում է անհատի լիակատար, իսկական ազատութիւնը:

Ուսանողութիւնը սակայն գոհ մնաց ներկայից: Նրա համար «կատարեալ» է իրերի ժամանակակից վիճակը: Այդ մանրամասնութիւնները այժմ այնքան էլ չեն հետաքրքրում նրան...

Որքան նրա անցեալը փառաւոր, նոյնքան խեղճ է, աննախանձելի է ներկան: Ուսանողութիւնը վաղուց արդէն հեռացել է քաղաքական աշխարհից. յանուն ժողովրդական ճնշած իրաւունքների այլ ևս չէ կուռում նա, չի մղում պրոպագանդը հարստահարած մասսայի մէջ: Նա դադարել է վեհ գաղափարներ փայփայելուց:

Ի՛նչ էր գերմանական ուսանողութիւնը 50 տարի առաջ և ի՛նչ է այժմ: Այն ժամանակ նա կուռում էր բուրժուազիայի հետ միացած՝ ընդդէմ քսողիւտ բռնակալութեան, նա կուռում էր յանուն ժողովրդական լիակատար ազատութեան,—մի ազատութիւն, որ պէտք է լինէր բոլոր ճնշածների և հարստահարածների երազած իրէալը:

Այսօր նա անհոգ է դէպի աշխատաւոր ընդհանրութիւնը, անտարբեր է դէպի ոսնակոխ եղած հասարակական և քաղաքական իրաւունքները,—նոյնքան անտարբեր, որքան և ինքը բուրժուազիան: Նա իզոխտ է. նեղ, սահմանափակ եսական կամ դասակարգային (բուրժուական) հաշիւներից դուրս՝ ոչինչ չի տեսնում նա:

Զուրկ ազնիւ համոզմունքներից, զուրկ ազնիւ իդէալից. փայլուն ղիպլում, միակողմանի մասնադիտական կրթութիւն, բարձր դիրք, չաղ պաշտօններ զինւորական և քաղաքացիական ծառայութեան մէջ, փայլուն հրապուրիչ կարիէր հասարակական գործունէութեան ասպարիզում—ահաւասիկ գերմանական ժամանակակից համալսարանի ամբողջ իդէալը: Ողորմելի է նա, իւր սահմանափակ մտաւոր հօրիզոնով, իւր փթած, ֆիլիսոփերական-բուրժուական հակումներով: Բազմակողմանի ուսումնասիրութիւնը բացակայում է ¹⁾, գաղափարական էլ ոչինչ չկայ...

¹⁾ Եւ սակայն ամենաերեսելի ուսումնասիրութիւնները բաւականի ժամանակից ի վեր լուս են տեսնում հէնց նոյն այդ Գերմանիայում, շնոր-

1848 թւականը, 60-ական և 70-ական թւականների սկիզբները նշանաւոր մոմենտներ էին գերմանական պրոլետարիատի կեանքում: Փետրւարեան յեղափոխութեան ահեղ փոթորիկների միջոցին հնչւում էր արդէն այն փրկարար վարդապետութեան ձայնը, որի ուրականը վաղուց շրջւում էր Եւրոպայում և որը կոչւած էր տապալելու կապիտալի բռնակալ տիրապետութիւնը: Նոր վարդապետութեան քարոզիչները աքսորեցան անմիջապէս, սակայն գաղափարները սերմանւած էին արգաւանդ հողի վրայ և իրենց ժամանակին տւեցին ցանկալի արդիւնք: 1864 թւին մենք տեսնում ենք արդէն «համագերմանական բանւորական միութիւնը», որ ունէր մի քանի հազար անդամներ և մեծածաւալ կասսա:

Բանւոր դասակարգի մէջ տարեցտարի աճում էր դասակարգային դիտակցութիւնը: 70-ական թւականների սկզբներին նա անցնում է քաղաքական ասպարէզ և ընդհանուր ընտրողական իրաւունք ձեռք բերելուց յետոյ արդէն Ռայխստագ է ուղարկւում իւր ներկայացուցիչներին: Այդ ժամանակից իրօք և սկսւում է բանւոր դասակարգի քաղաքական կռիւը: Բանւորական կուսակցութիւնը մեծ եռանդով իւր ձեռքն առաւ բանւորների կազմակերպութեան գործը և միևնոյն ժամանակ անընդհատ կռիւ մղեց ընդդէմ բուրժուական դասակարգի:

1871 թւականին Գերմանական բանւորութիւնը միակ դասակարգն էր, որ բողոքում էր Ելզաս-Լոտարինգիայի միացման դէմ:

Այդ այն արհաւիրակից ժամանակն էր, երբ գերմանացի յաղթական զօրքերը արիւն և կործան սփռելով, պաշարել էին Ֆրանսիայի մայրաքաղաքը: Պատերազմը վերջացել էր: Բիսմարկ մտել էր Պարիզ և պահանջում էր Ելզաս-Լոտարինգիան...

Անլուր բարբարոսութիւնների միջոցով Գերմանիան վաստակեց արիւնոտ յաղթանակը: Արիւնով էր ներկւել Ֆրանսիայի քաղաքները, արիւնով գետերը, դաշտերը, ամբողջ երկիրը արեան ծով էր դարձել... Եւ ահա այդ բոլորից յետոյ ծանր առաջարկներ հինգ միլիարդ և Ելզաս-Լոտարինգիա!..

Հիւ ուսման կատարեալ աղատութեան և գերմանական համալսարաններին:

Ծան. Խմբ.

Բիսմարկի այդ տմարդի պահանջների դէմ մեն-մենակ Գերմանական բանւորութիւնն էր, որ բարձրացրեց արդար բողոքի ձայնը և իւր համերաշխութեան (solidarität) զգացմունքները յայտարարեց Ֆրանսիական բանւորներին: Մեն-մենակ բանւորական կուսակցութիւնն էր, որ բողոքում էր ընդդէմ Ֆրանսիական պրովինցիաների միացման, այն ինչ բոլոր միւս կուսակցութիւնները, ամբողջ բուրժուական Գերմանիան խորին բերկրութեան մէջ խունկ էր ծխում Բիսմարկին: Ատելի շովինիզմը հրեշաւոր չափերի էր հասել...

Վրայ հասաւ 1878 չարագուշակ տարին: Բիսմարկի սատարանօք (? Խմբ.) երկու անգամ իրար ետեից սպանութեան փորձեր եղան Գերմանիայի զառամեալ թագաւոր Վիլհելմ I-նի անձնաւորութեան դէմ¹⁾: Այդքանը բաւական էր. Բիսմարկ՝ 19 տարւայ այդ դժնդակ բռնապետը անմիջապէս ներկայացրեց Բալխտտագին մի շարք «բացառիկ օրէնքներ», որոնց նպատակն էր բնաջինջ անել ընդ գաղափարները. Բալխտտագը մերժեց: Բիսմարկ լուծեց նրան, ենթադրելով, որ նոր գումարելիք Բալխտտագում կայսրի դէմ արած ատտենտատներէից յետոյ անկասկած մեծ կը լինի պահպանողական տարրը. այդպէս էլ եղաւ. Բիսմարկի ենթադրութիւնները արդարացան և նա անցկացրեց «բացառիկ օրէնքներ»:

Բանւորական կուսակցութիւնը կաշկանդւած էր: Կործանւեցին նրա կազմակերպութիւնները, յարքունիս զրաւեցան կուսակցական օրդանները, տպարանները... Պարագլուխներէից ոմանք բանտարկութեան, ոմանք աքսորի դատապարտւեցան: Արգելւած էր բանաւոր և զրաւոր ագիտացիան... Ամեն ինչ ըստ երևոյթին լուեց:

Երկու ամսւայ միջոցում ամբողջ Գերմանիայում փակւեցան

1) Բիսմարկի մարդիկ խուլն հրատարակեցին, որ իբր թէ չանցաւորները սոցիալիստ բանւորներ են եղել:

Մենք նոյն իսկ Գերմանիայում չենք լսել մի աջնալիսի հրեշաւոր խօսք, ինչպիսին իրեն թուէ տալիս լօղւածիս հալ հեղինակը, թէ իբր Բիսմարկը սովբեցրած կամ աջակցած լինի («սատարանօք» հէնց ալդ է նշանակում) Վիլհելմ I-ին սպանելու փորձ անելու:

200 բանուորական միութիւններ, 62 պարբերական թերթեր, կոնֆիսկացիայի ենթարկեցին մօտ 300 զանազան հեղինակութիւններ:

Այդ կատաղի հալածանքներից յետոյ բանուորական կուսակցութիւնը աւելի ոչ ժ ստացաւ. բացարձակ ազիտացիան արգելաձևեցին, նա դիմեց դադարի ազիտացիային: Բայց և այնպէս բանուորների կազմակերպութեան գործը քնեց ընդ երկար:

Իննսուևսական թուականները մի նոր կեանք բերեցին Գերմանիայի ժողովրդին և մասնաւորապէս բանուոր դասակարգին: Անցաւ «կրակի և երկաթի» ծանր շրջանը, անցան այն ժամանակները, երբ Բիսմարկի դաժան, անընկճելի կամքը բռնանում էր ժողովրդի ամենանւիրական իրաւունքների վրայ, երբ տակաւին գոյժածութեան մէջ էր «Volontus regis suprema lex». հանձարեղ քաղաքագէտ արտաքին քաղաքականութեան մէջ, հմուտ դիպլոմատ առհասարակ միջազգային յարաբերութիւններում՝ Բիսմարկ ազէտ, անընդունակ էր միևնոյն ժամանակ ներքին գործերի մէջ և մանաւանդ ողջիւղական խնդրի վերաբերմամբ:

Վիլհէլմ II արձակեց Բիսմարկին: Երիտասարդ կայսրը լաւ էր ըմբռնում ժամանակի ոգին, նա հասկանում էր, որ աբսոլյուտիզմը իւր դարը ժամանել է արդէն և որ Գերմանիան կարօտ է մի բոլորովին նոր, մի տարբեր քաղաքականութեան:

Բիսմարկ և Վիլհէլմ խիստ էին տարբերում իրենց հայեացքներով: Առաջինը—միապետական ընթերցանութիւն պաշտպան, երկրորդը՝ իւր գահակալութեան օրից հրատարակեց իրեն «սահմանադրական կայսր»:

«Աշխատաւոր դասակարգին պէտք է տրւի լիակատար իրաւունք պաշտպանելու իրենց շահերը, իրենց պահանջները, բոլոր օրինաւոր միջոցներով. չպէտք է արգելել բանուորական միութիւնները, չպէտք է սահմանափակել նոցա գումարումների, խօսքի և մամուլի ազատութիւնը»—ահա թէ ինչ էր յայտարարում ի միջի այլոց Գերմանիայի երիտասարդ թագաւորը: Նա յայտնում էր, որ ողջիւղական խնդիրը բացառիկ օրէնքներով անհնարին է լուծել, որ հալածանքները աւելի են ոչ թ տալիս հակառակորդին, որ հետեւապէս պէտք է դիմել անհրաժեշտ բեֆորմներին:

Համոզմունքների այդ արմատական տարբերութիւնների պատ-

ճառով կայսրի և Վերկաթեայ կանդլէրի մէջ լարեցին յարաբերութիւնները: Բիւսմարկի հրաժարականը եղաւ դրա հետեանքը:

Կապրիւլի օրով ոչնչացան բացառիկ օրէնքները: Հրատարակեց խօսքի, գումարման և մամուլի ազատութիւն:

Ազատ բացարձակ ազիտացիայի ասպարէզը կրկին բացեց բանւորական կուսակցութեան առջև և նա վաստակեց օր աւուր աւելի բազմութիւն համախոհներ:

Միանգամայն շարմանալի է այն առաջագիմութիւնը, որ գերմանական բանւորները արեցին վերջին տարիների ընթացքում, բացառիկ օրէնքների վերացումից յետոյ: Մինչդեռ 1881 թւին բանւորական կուսակցութիւնը ունէր ընտրողների միմիայն մի չնչին քանակութիւն—312.000. հոգի, 1890 թւականին նրանց թիւը հասնում էր 1.827.300, իսկ այսօր նա երկու միլիոնի մօտ է արդէն:

46 պատգամաւորներով բաղխատագի մէջ՝ բանւորական կուսակցութիւնը ներկայումս ամենաուժեղ և ամենաազդեցիկ կուսակցութիւններից մէկն է գերմանական Ռայխստագի բազմութիւն Ֆրակցիանների շարքում: Նա է, որի ձայնին այսօր խորին պատկառանքով ականջ են դնում ժողովրդի բոլոր խաւերը. նա է, որի դործունէութեան, տակտիկային ուշի ուշով հետեւում է քաղաքակիրթ աշխարհի համայն բանւորութիւնը. տաճում է դէպի նա հազարաւոր յոյսեր, քաղցր ակնկալութիւններ:.. Նա է վերջապէս, որի դէմ անընդհատ և ընդհանուր ոյժերով մաքաւում են բոլոր քաղաքական կուսակցութիւնները.—և՛ ազատամիտ, և ռազա մոաճող, և՛ պահպանողական, և՛ անտիսեմիտ և այլն և այլն ¹⁾: Բանւորական կուսակցութիւնը մեն-մենակ է մաքաւման դաշտում. նրա ամեն մի

¹⁾ Միմիայն սոցիալիստ կուսակցութիւնը չէ աղդ դրութեան մէջ: Նոյն դրութեան մէջ է ամեն մի կուսակցութիւն: Ովքեր են, օրինակ, օգնում կղերական (կենտրոնի) կուսակցութեան Կերմանիայում. և ռակաւն, գերմանական պարլամէնտում կղերականները (կենտրոն) ամենից զօրեղ կուսակցութիւնն են կաղմում. և կղերականների դէմ «անընդհատ և ընդհանուր ոյժերով» կուռում էին, Բիւսմարկն էլ հետը, տառնեակ տարիներ, շատ լաճախ և մեծ մասամբ առանց լաջողութեան: Յիշեցէք «կուլտուրկամպ»-ը:

աջողութիւնը ժողովրդի մէջ հակառակորդների պարտութեան է հաւասար, նրա ամեն մի սխալ քայլը, անյաջողութիւնը մեծ ուրախութիւն և աղմուկ է յարուցանում հակառակ բանակի մէջ: Խնդում էր բուրժուական մամուլը, երբ վերջերումս անբաւականութիւններ էին ծագել բանւոր-կուսակցութեան հիւսիսային և հարաւային ճիւղերի մէջ: Խնդում էին, կարծելով, որ կուսակցութեան մէջ պառակտումներ պէտք է լինին մօտ ապագայում: Սակայն զուր էին այդ յոյսերը:

Այսօր Գերմանիայի բոլոր ծայրերի բանւորական միութիւնները միացած, մի հոգի մի մարմին զարձած՝ պատրաստուում են արդէն ընդհանուր ոյժերով կուել իրենց նորեկ թշնամու—նոր բացառիկ օրէնքների» դէմ:

Նոր օրէնքներ են սահմանւել ընդդէմ հակապետական ձգտումներին, նոր օրէնքներ, որոնք յաւականութիւն ունին սանձահարել այդ ձգտումները:

Բիւմարկի տիրապետութեան ծանր, դժնդակ օրերը թերեւս պէտք է վերականգնեն... Այնինչ նոր օրինագիծը տակաւին չէ ենթարկւել ռալիստադի յատուկ քննութեան, մի քանի կուսակցութիւններ շտապեցին թեր և դէմ խօսել:

Հռչակաւոր Բիւտեր—«Ազատ մտածող» կուսակցութեան պարագլուխը, իւր պարլամենտական ճառերի մէջ քանիցս անգամ յայտնեց արդէն, որ նա դէմ է նոր սահմանող բացառիկ օրէնքներին, քանի որ այդ օրէնքները բան որ դասակարգի իդաւունքների վրայ բռնանալով, պէտք է աւելի ևս միացնեն բանւորական զանազան ճիւղերին, աւելի ևս ամրացնեն նրանց ներքին համերաշխութեան կապը, որ հեռւապէս նրանք (բացառիկ օրէնքները) պէտք է գործեն անտարակոյս ի վնաս կառավարութեան և բուրժուա դասակարգին:

Ռիխտերի օրինակին հիտեցին անտիսեմիտները և ժողովրդական կուսակցութիւնը (Volkspartei): Մնացած Ֆրակցիաները տակաւին չեն յայտնել իրենց կարծիքները. դժւար է կանխապէս գուշակել թէ ինչ է վիճակած նոր բացառիկ օրէնքներին ¹⁾:

¹⁾ Այսօր չալտնի է արդէն, որ այդ օրինագիծերը չեն ներկայացնւելու: Խմբ:

Ի՞նչ արգիւնք ունեցան 1878 թւականին հրատարակած օրէնքները՝ չընդդէմ բանւորական կուսակցութեան հանրավտանգ (gemein-gefährlich) ձգտումներին? Ի՞նչ եղաւ նրանց հետևանքը: Այդ օրէնքները պէտք էր հարիւրաւոր տարիներով ստրկացնէին բանւորական դասակարգը, տնտեսապէս, հասարակապէս, քաղաքականապէս պէտք էր ենթարկէին նրան բուրժուաշի ծանր տիրապետութեան...

Սակայն այդ բոլորը ունայն պատրանքներ էին: Բանւոր դասակարգն, ի տեղի ընկճւելու, աւելի ևս յանդուգն կերպարանք առաւ, բանւորական կուսակցութիւնը ի տեղի նւազելու, աճեց, զարգացաւ նոյն իսկ անողոք հալածանքների միջոցին... Յաղթութիւն չաղթուլթեան ետեւից շտապեցրին նրա քայլերը, ընտրութիւնից ընտրութիւն բազմացաւ նրա ձայների թիւը, կոնգրէսից-կոնգրէս—աճեց նրա հոգեկան ոյժը, նրա ազդեցութիւնը թէ աշխատաւոր և թէ իշխող շրջանների վրայ...

Եւ նա կը շարունակէ իւր յաղթական ընթացքը, մինչդեռ տնտեսական զարգացումը կ'երթայ իւր սովորական ճանապարհովը, մինչդեռ կապիտալները ամբարւելով, կը բարդեն միլիոններ, հազարաւոր միլիոններ, և մինչդեռ բիւրաւոր մտրդիկ ճակատադրական անհրաժեշտութեամբ կը մղւեն դէպի սեփականազուրկ պրոլետարիատ...

ՀԱՅ ԳՐՈՂԸ ՔՆՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆԻ

Կասկած չկալ որ գեղարեւտի որևէ ճիւղի ծաղկման և նոյն իսկ նորա հաստատուն գոյութեան համար նաև արտաքին նպաստաւոր պայմաններ են հարկաւոր: Ներկալ դէպքում մենք կը կամենալինք հետամուտ լինել մի քանի պայմաններին, որոնց մէջ գտնուում է գրական քննադատութիւնը հալերի մէջ: Քննադատութեան ծագումը, գրականութեան ալդ տեսակի նոյն իսկ բնաւորութեան համաձայն, իրրոր և է գրականութեան աւելի ուշ չրջան, բնականապէս իւր առջև պիտի ունենալ գրականութեան մի չալտնի հասակ, գրական մի չալտնի չալոլ նիւթ, բազալ: Որքան էլ տարբեր նալէն քննադատները իրենց գործի վրալ, նոքա անկարող են եոլա գնալ առանց հում գրականութեան նիւթի: Ալդպիսի նիւթ կալ հալերի մէջ: Հալերն ունին մինչև անգամ գրողներ, դէպի որոնց կարելի է վերաբերել լիակատար պատմական քննադատութեամբ: Արովեան և նորա չկոլան: Ալդպիսոլ քննադատութեանը հարկաւոր պայմաններից մէկը կալ հալերի մէջ: Առալլում մի կողմ թողնելոլ ալլ հանգամանքներ, որոնք բղխեցնում են գրական քննադատութիւնը և մինչև իսկ պահանջում որ նա իւր հեղինակաւոր ձալնը բարձրացնի,—տեսնենք թէ նա, ալդ հալկական քննադատութիւնը, ինչպէս օգտուեց ալդ գրական դրամագլխից, Համարձակ կարելի է ասել որ ոչինչ, կամ գրեթէ ոչինչ: Ապացոլցը թող լինի ալն, որ ալս ամբողջ ժամանակամիջոցին, որ հալերը ամսագրեր և օրաթերթեր ունին, նոցանում լոլս են տեսել ոչ աւելի քան վեց-եօթ ւօղաձներ պատմաքննադատական բնաւորութեամբ: Արովեանի, Բաֆֆիի, Աղալեանի, Սուհոլուկեանցի, Շիրաւնդաղէի չարագրութիւններից ոչ մէկը լուրջ քննադատութեան չենթարկեց, և թէ չլինէնք պատահական, մանր նկատողութիւններ, գրած պատահական մարդկանցից:

Դորան կարող են առարկել թէ ալդ նշանակում է որ հասարակութեան մէջ դեռ չի հասունալիլ կրիտիկական միտքը, որ դեռ հարկ չկալ եա նալել, դեռ պէտք է ստեղծել, ստեղծալործել, և որ նոցա քննադա-

տեղը կարելի է չհտուլ, կարող են առարկել, թէ քննադատութեան սկզբնաւորութեան համար դեռ պէտք է գրական մի շրջան անցնել ու հասնել մի չափնի հասակի, և որ ահա ժամանակ առաջ կը գալ քննադատութեան կարիքը, հետեապէս և նորա կարելիութիւնը, որից և կը ծագի նաւ. Ամինբե Է որ, քանի որ չկալ մեզանում խելաղէտ քննադատութիւն և չկան բոլոր ահա պալմանները, որոնք պալմանաւորում են նորա ծննդաւորութիւնը, յորինմն հէնց ալդպէս էլ պէտք է վարել,—գրել, ստեղծել և սպասել, մինչև որ նորա սկզբնաւորութեան համար պալմաններ կը ստեղծեն:

Բալց իսկապէս մենք ուրիշ բան ենք տեսնում. հնումը ասում էին թէ բնութիւնը դատարկութիւն չի սիրում, և ամեն դատարկութիւն պէտք է մի բանով փոխարինել. Նման մի բան պատահեց նաև հալկական քննադատութեան հետ—նա իսկ որ փոխարինեց, Բալց ինչով և ում ձեռքով փոխարինեց. ամեն բանով և ամեն ցանկացողի ձեռքով, բալց միայն ոչ պատմական քննադատութիւնով: Հալերի մէջ գրում են և քննադատում ամենքը, ով ունի ժամանակ, ախորժակ, թուղթ, թանաք և մուտք տպարանում կամ խմբագրութեան մէջ: Այդ քննադատութիւն է: Իբր ապացոյց կարելի է առաջ քերել անթիւ նկատողութիւններ, որոնց մէջ ոչ միայն Կրեում է կատարեալ անծանօթութիւն հալոց և եւրոպական գրականութիւնների հետ, ալ և պարզ քերականութեան հետ: Բացի գիտական նախապատրաստութիւնից՝ բացակայում է քննադատութեան նպատակների պարզ հասկացողութիւնը: Յօդածներում և նկատողութիւնների մէջ մարդ չգիտէ թէ լանուն ինչ սկզբունքների և նպատակների կրիտիկա անողը բարձրացնում է կամ իջեցնում քննադատող շարադրութիւնը: Բացառութիւն անւում է տպագրութեան, գնի և թղթի վերաբերմամբ, որոնց նկատմամբ հալ քննադատները սակաւ են սխալւում: Բալց հարց է ծագում. ինչով են ղեկավարւում ալդ նկատողութիւնների հեղինակները, ինչ սկզբունքներով կամ հալեացքներով: Հալոց թերթերում տպած քննադատական նկատողութիւններին հետեւող անձերը պատասխանում են, թէ նոքա ղեկավարւում են երեք բանով, որոնք են՝ շաբլոն, աչառութիւն և սուտ: Այդ մտքերով չեն ղեկավարւել միայն շատ քիչ հեղինակներ, որոնք գրել են, օրինակ, Պատկանեանի մասին «Մուրճ»-ում և Պռօչեանի մասին Նոյնտեղ:

Բացադրենք մեր խօսքերը: Ինչումն է կալանւում հալ կրիտիկոսների շաբլոնը? Նորանում, որ նոքա պահանջում են հեղինակից իղէալ—լուսաւոր թէ խաւար, բալց և ահապէս անպատճառ իղէալ: Նոցա հարկաւոր չէ և Նոյն իսկ հասկանալի չէ կեանքի հասարակ մարդը, բաղմաթիւ դիմագծերով, —նոցա հարկաւոր է իղէալ—գրական կամ բացասական: Անշուրհանութիւն որոշել և նշմարել տպերը, բալց կիրք՝ ամեն տեղ որոնել

իրդէալներ—դա առաջին մեղքն է հալ կրիտիկոսներին: Այդ մեղքը կրթւած ազգերը թաղել են դեռ ես անցեալ դարի վերջում՝ գերեզմանն ընկած կեղծ կլասիկականութեան հետ միասին:

Նրկորդ մեղքը՝ աշառութիւնն է: Համարձակ կարելի է ասել, որ կրիտիկոսի ամենագորեղ արգումէտներեց մէկը թեր կամ դէմ կարդացող գրքի, ալդ ալն է որ առաջուց իմանալ քննադատող հեղինակի անձի ու տնային կենցաղի մասին, և, իհարկէ, իմանալ թէ որ գրական բանակին է պատկանում: Այդ հանգամանքը շատ անգամ որոշել է մի հեղինակի գրքի հակադասութիւնը: Օրինակները հազարներ են. գրեթէ ամեն օր երկու իրար հակառակ թերթերում միաժամանակ լսում են չուղարկաւորութեան և չնորհաւորութեան երգեր միեմոն հեղինակի գրածքի մասին, նաեւ թէ ինչ չարաքերութիւնների մէջ է գրքի հեղինակը երկու իմբագրութիւնների հետ: Հասկանալի և ուրախալի կը լինէլ, եթէ պահպանողական հեղինակը ջարդէր աշատամիտ թերթի կողմից և ընդհակառակը, բաւց ցաւը ալն է, որ կոսակցական տեսակէտով չաճախ ջարդում են մասնագիտական գրքեր, ալն էլ առանց ցոյց տալու հեղինակի տեսական հալեացքների սխալմունքը, ալ միալն նեղ տնային և շատ հասկանալի դրդումներեց:

Նրկորդ մեղքը—սուտն է: Նա կալանում է ֆակտերի աղաւաղումների ու ալլափոխութեան մէջ, լուութեան և ալլ ամեն տեսակ ֆոկլանների մէջ, որոնց համար ընդունակ է սահմանափակ հողին չար զիտաւորութիւններով:

Այդ բոլոր մտքերը մտածար չղացել են իմ մտքում, երբ ես ինձ հարց էի տալիս՝ թէ ինչ պակասութիւններ ցոյց կը տալ ինձ քննադատութիւնը իմ չարագրութիւնների համար, ինչպէս նա կը գնահատի ալս կամ ալն պատմածքս, ինչ ուղղութիւն կը տալ նա իմ ընդունակութիւններին, եթէ նա կը գտնի ալդ բանը իմ գրածքներում,—և ալլ շատ հարցեր էի տալիս ինձ, բարձր գնահատելով իմեօք և շիտակ քննադատութեան նշանակութիւնը:

Բաւց ինչպիսի պատասխաններ ստացալ ես ալս բոլոր հարցերին? Այդ խնդիրը, որպէս ես կարծում եմ, մի չալտնի հասարակական հետաքրքրութեան է ներկալացնում, որովհետեւ դա լաւ նկարում է փոխաղարձ չարագրութիւնները գրողի և քննադատութեան մէջ հալոց կեանքում:

Ահա հետեանքները: Մի քանի տարի առաջ հրատարակեց իմ վէպը «Հեղինէ», որ տպւած էր «Մուրճ»-ում: Նոն ալլալեղ երեաց պ. Թառալեանի քննադատութիւնը ալլ ռոմանի մասին: Նորա գլխաւոր մեղադրանքը, որ կալանում էր նրանում թէ ինչու հերոսուհին չի վերցրած ժողովուրդից, ալլ բարձր դասակարգից,—միալն ժպիտ կարող էր չարուցել որքան և իցէ զարդացած մարդկանց մէջ: Նա կոմիզմից գուրկ չէր նորա բարկութիւնը, թէ ինչու իմ հերոսուհին չգիտէր հալերէն, և նորա բացատրութիւնը թէ նա չպիտի իմանար հալերէնը երեւի էնդուր, որ վէպի հե-

ղինակը թող է մալբերի լեզուով¹⁾։ Միթէ աղապիսի եղանակներով պիտի ղեկավարւի քննադատութիւնը? Յետոյ պ. Թառալեան գտնում է, որ 60-ական թւականների կեանքը ամենեին չի արտափախւում իմ վէպում և որ ամենը ինչ նկարագրած է նորանում՝ որ և է տարբերութիւն չունի 90-ական թւականների կարգերից։ Այդ ասելով՝ նա բաւականանում է միայն ընդհանուր մեղադրանքով, արհամարելով իմ առաջ բերած տեղեկութիւնները և ֆակտերը։ Այդ բոլոր մեղադրանքները ջարդւում են կրիտիկոսի հէնց իրա զէնքով։ 60-ական թւականներին Թիֆլիսում չկար և ոչ մի զարգացած հայուհի ոչ-արտօնեալ դասակարգից, ահա էլ մէկը որ հապերէն դիտենար, իսկ ապժամ աղապիսիներ քիչ չեն։

Եւ լիտոյ, ահա անհաւատալի վիրաւորանքները, որոնց ենթարկւում էր «Հեղինէն», իւր մարդուն թողնելուց լիտոյ նորա կուլը և չարչարանքները, որ կրում էր հերոսուհին՝ որ վճռած էր ապրել իւր սեփական աշխատանքով, երիտասարդների, ինտելիգէնտ մարդկանց զուր ջանքերը իրենց համապատասխան պարապմունք գտնել պիտական ծառայութիւնից դուրս, տիրապետող նախապաշարունակները և երկրիս անպատրաստ լինելը որ և է արգիւնադրածական ձեռնարկութիւնների համար և ալին, — ապէ ըստը երևութներ են, որոնք արտացոլում են ռումանի մէջ և ցոյց տալիս ահա ժամանակաւ և ալժման կեանքի տարբերութիւնը²⁾։

¹⁾ Տեսնել խմբագրութեան ծանօթութիւնը ներքև։

²⁾ Ման Խմբ. Մենք իրաւունք ունինք լօղած իս հեղինակ տիկին Խատիսեանին (նոյն ինքն և «Հեղինէն» վէպի հեղինակն) մեղադրել ահա բանում, որ նա «Մուրճ»-ում լուս տեսած գրախօսականը իւր «Հեղինէն» վէպի մասին ուշադրութեամբ չի կարդացել։ Միթէ նոյն միտքը չի լաւունել «Մուրճ»-ի գրախօսականի հեղինակ պ. Ա. Թառալեանը, երբ նա իւր լօղածը վերջացնում էր այս խօսքերով. «վէպի մէջ բազմակողմանի կեանք չկայ, մենք տեսնում ենք հերոսներին անպատճառ կամ ճաշի վրայ կամ թէ խմելիս, կամ երեկոյթում պարելիս, կարծես թէ սրանից դուրս կեանք չկայ, թէ հասարակութիւնը դորանից աւելի բան չունի ներկայացնելու, հետեւապէս և վէպը ու է աւական վէպ, ճշգրիտ պատկեր է հասարակական ազդ շրջանի? Այդ պաշտանով «Հեղինէն» վէպը մի առանձին գին է ստանում իբր մի որ ոչ շրջանի հաւատարիմ պատկեր»։

Ուրեմն, եթէ ոչ խիստ շեշտով, բայց և ահապէս ասւած է «Մուրճ»-ի գրախօսականի մէջ, թէ Հեղինէն վէպում զուրս բերած գործող անձերի կեանքի դասարկութիւնը քնորոշում է 60-ական թւականների մի որ ոչ շրջանի կեանքը։

Իսկ լիտոյ Զօղած իս հեղինակ տիկին Խատիսեան մեղադրում է «Մուրճ»-ի գրախօսին, երբ սա պահանջում էր որ վէպի հերոսուհի Հեղինէն և սորա վրայ բարոյական ազդեցութիւն ունեցած վրթմանէ տեանը հապերէն գիտենալին և ոչ թէ արդարանցիւնէին նրանով թէ «ալդ ժամանակ մալ-

Անցնում եմ այժմ «Փեսալ որսողներ» վէպիս: Գորա մասին քննութիւն գրեց պ. Սեթեան (Տարազ)-ում: Այդ քննադատութիւնով կարելի է ճանաչել թէ ինչ միջոցներից են օգտւում չղաճների հեղինակները՝ քննադատող գրածքների նկատմամբ: Այդ վէպի քննադատութիւնը շատ բնորոշ է: Ես դուրս վրալ աւելի կանգ կ'առնեմ, մի առ մի ցոյց տալով ան աճեն սուտը, որ իրեն թույլ է տւել Սեթեան՝ վէպի բովանդակութիւնը պատմելիս: Գրքիս 11-րդ էջի աչս խօսքերը՝ «լիտիները և քիմարեները միշտ չաջողութիւն են ունենում», որ արտասանում է Տէր-Անդրէասեանը, Տարազի քննադատը վերագրում է Սոնեալին, որի բերանում ալդ խօսքերը, ինչպէս ճիշդ նկատում է քննադատը, շատ անտեղի են թւում:

րենի լեզուն գիտեալը անհրաժեշտ չէր համարում»: Արդարեւ զարմանալի կը լինէր, եթէ մի վիպասանից պահանջէին որ նա մի գործող անձին անպատճառ աչս ու աչն լեզուի դիտութիւնը վերագրէր, երբ ալդ գործող անձը, մի որոշ չրջանի և ժամանակի ծնունդ լինելով, չպիտի գիտեալար ալդ լեզուն, մանաւանդ որ ալդ լեզուն (մալրենին) չգիտեալը կապ ունի նոյն իսկ վէպում պատկերացրած կետքի հետ:

Բաց այդպիսի բանի պահանջ է արել արդեօք «Մուրճ» ի գրախօսը?

«Մուրճ»-ի քննադատը նկատել է որ վէպի հեղինակը Վրթանէսեանին ներկայացնում է իբր իւր «հայրենակիցների» (հայերի) համար աշխատելու ձգտումով մի մարդ: Եւ անկարելի է ուրանալ, որ վէպի հեղինակը իւր համակրութիւններով Վրթանէսեանի կողմն է: Արդ, ալդ Վրթանէսեանը, որ իւր հայրենակիցների համար աշխատել է ձգտում, չգիտէ և անհրաժեշտ էլ էլ համարում իւր հայրենակիցների լեզուն լաւ սովորել, ալդ լեզուով խօսել, և ալդ նոյն գաղափարն էլ նա հաստատել է Հե. Ինէի մէջ:

Հեղինակը կ'ասի՝ «ալդպէս էին մտածում 60-ական թւականներին, ալդպէս էլ ևս ալդ տիպերը դուրս եմ բերել»:

Խնդիրն էլ հէնց նրանումն է, որ «Մուրճ»-ի գրախօս պ. Թառախեան ջանք է արել ապացուցանելու, որ Հեղինէ վէպը «տեղեկացիա ունեցող վէպ է», որ նա «ձգտում է ժամանակակից հատարակական հարցեր լուծել» (տես «Մուրճ 1893 № 7-8, էջ 1228»). նա ասում է թէ «տիկին Մարիսեանի գրածքի վրալ չենք նախում որպէս լոկ նկարագրական վէպի վրալ»:

Եւ բերում է իւր հիմունքները, որ մենք չանձնարարում ենք թէ վէպի հիղինակին և թէ միւր ընթերցողներին նորից կարդալ:

Այդ հիմնական տեսակէտից բխում է «Մուրճ»-ի գրախօսի կարծիքը վէպի մէջ իբր համակրելի դուրս բերած գործող անձերի «հատարակական արժէքի» մասին: Դատողութիւնները Վրթանէսեանի և Հեղինէի հայրենի գիտեալու կամ չգիտեալու մասին բխում են ալդ հիմնական հարկացքից, և ոչ թէ «առհասարակ» պահանջ է դնում, որ 60-ական թւականներին, աչն էլ ինստիտուտում կրթւած, հալ աղջիկը վէպի մէջ

Յետոյ Սեթեանը (Տարազի քննադատը) զարմանք է չապնում, որ 17 տարեկան պատանին իւր ծնկների վրայ է նստեցնում 12 տարեկան, աղջկան, ասելով, որ, տարիքների աղքատ անշան տարբերութեամբ՝ աղջկանուքը բաւականի զարմանալի է։ Արդ, Լուսեանի և Սոնեակի մէջ տարիքների տարբերութիւնը 5 տարի չէ, ալ 9 կամ 10, ինչպէս աղջկանը է տեսնել վէպից։

Եւ ապա, լիշեւով Լուսեանի չարաբերութիւնների մասին զէպի վարեան, քննադատը ասում է, թէ Լուսեանը լանկարծ, անսպասելի կերպով, սիրով վառւեց Սոնեակի համար և որ հեղինակին հարկաւոր է եղել աղքատ հաստական միջոցին դիմել միմիայն նրա համար, որ վէպը շարունակաբար բնաւորութիւն չկրի։—Եթէ աղջկէս լինէր՝ նկատողութիւնը ճիշտ կը լինէր. մինչդեռ ամենափոքր ուշադրութիւն է պահանջում վէպը կարգաւիտ, համոզելու համար որ Լուսեանի համակրութիւնները հէնց սկզբից պատկանում էին Սոնեակին, և որ նա կցւեց վարեալի հետ միմիայն հանգամանքների շնորհիւ. հետևապէս Տարազի քննադատի մեղադրանքը բծախնդրութիւն է։ Իմ խօսքերին իբր ապացոյց թող ծառայեն այս հանգա-

շինծու կերպով հալախօս դուրս բերէր ի միութալութիւն հալ աղգի!

Եւ լուսով ենք, որ տիկին խառնեան կը համոզւի այս բացատրութիւնից չետոյ (որ սակաւն ինքը կը գտնէր գրախօսութեան մէջ) որ «Մուրճի գրախօսի դատողութիւնը հալերէնի մասին «ժպիտ լառաջ բերելու» չափ միամիտ չէ։

Եթէ տիկին խառնեան վերը լիշած հիմնական հալեացքին համաձայն չէ՝ աղջկայի վիճելի մնար և աղջկայի մասին վիճէր։ Յամենաւն զէպս աղջկայ տեսակէտը շատ աւելի լուրջ է, քան թէ աղջկայ, ինչով որ չարգելի տիկին հեղինակը սողորում է կարծում հալ քննադատներին առհասարակ։ Բացի աղջկայ տիկին խառնեան անշուշտ կարգացած կը լինի ակնարկւած գրախօսութիւնը («Մուրճ» 1893, № 7-8) ամբողջապէս որ բռնում է ամուսնի 20 սինակը կամ 10 երեսը, ուր կան մի շարք անալիտիկական նկատողութիւններ վէպի հոգեբանական և ալ կողմերի մասին։

Դուցէ հեղինակը հաստատի, որ աղջկայ քննադատութիւնը աշուղամենաւնիւ «անբաւարար» է։ աղջկայ ինքիւրը մենք պատրաստ ենք բաց համարելու։ Բայց որ ալ զէպքում չարգելի հեղինակը լաւ օրինակ չի ընտրել իւր հալեացքները հալական կրիտիկայի մասին պարզելու համար,—աշու աղջկայ է որ մենք պնդում ենք։

Մի նկատողութիւն ևս «Մուրճ»-ի աղջկայ որ երեսունն է գտել տիկին խառնեանը թէ ամուսնի գրախօսը վէպի հերոսուհի Հէղինէի հալերէն չգիտենալը բացատրած լինի նրանով թէ «երևի վէպի հեղինակը (իմա տիկին Մարիսեան կամ խառնեան) թող է մալրենի լեզուով»։ Մենք հրապարակօրէն չապնում ենք, որ գրական էթիկային ամենին հակառակ չենք համարում, եթէ մի քննադատ, որ և է գրւածքի ոգին բացատրելու համար, իբր օժանդակ միջոցի դիմէ նաև նորա հեղինակի անձնաւորու-

մանքները: Երբ Լուսեանը առաջին անգամ Գնունուն ալցելում է (էջ 31), նա հիանում է նրանից և բացականչում է. «Ինչ հիանալի արարած է դարձել այդ փոքրիկ աղջիկը»: Էջ 50 Լուսեանը կրկին սքանչանում է Սոնեալից: Էջ 71 նա ասում է. «Նրիտասարդն՝ ակամա՛ մի տեսակ հակունքն էր զգում դէպի այդ աղջիկը» և ալն խօսքեր, որոնք պարզ վրկալում են թէ Սոնեան ինչ տպաւորութիւն էր գործում Լուսեանի վրայ: Էջ 89, Սոնեալի և Վարեալի մէջ համեմատութիւն անելով և ստուգելով իւր զգալի մանքները, Լուսեանը աչկարա կերպով Սոնեալին նախապատուութիւն է տալիս, մտածելով այդ ժամանակ թէ՛ «Ձուր չէ ասւած, թէ հակառակ ծալրալեզութիւնները միշտ իրար քաշում են»:

Կարելի էր դեռ շատ ուրիշ տողեր առաջ բերել, ցույց տալու համար որ Լուսեանի մէջ խաղացած սէրը երկնքից չէր վաչր ընկել, ինչպէս այդ հաւատացնել է ուզում Տարազի քննադատը, որը մինչև 185-րդ երեսը չէր նկատում երիտասարդի մէջ որևէ հակունքի դէպի Սոնեան, ալ որ այդ սէրը արդիւնք էր վաղուցաւ համակրութեան դէպի Սոնեան, որը զսպում էր միայն աղջկայ սառնութեան պատճառով դէպի նա, բայց որը ալժամ լիապէս պարզեց, շնորհիւ Սոնեալի կողմից տրւած գրգռմաներին:

Թեան ուսումնասիրութեանը, ծանօթանալով թէ ինչ յամանակի և կրկնութեան ներքոյ է մեծացել և իւր զաղափարները հասունացրել քննադատող գրքի հեղինակը: Բայց այդ թողնենք. որտեղ է ասւած «Մուրճ»-ի մէջ թէ «Հեղինէ»-ի հեղինակը «թող է մայրենի լեզուի մէջ»? Մենք նորից կարդացինք պ. Ս. Թ-ի գրախօսութիւնը և ալդպիսի խօսք չգտանք, ալ գտանք ալսպիսի խօսք, թէ ինչու հեղինակը «իւր վէպը տնկել է անհրաժատ հողի վրայ, որտեղ մայրենի լեզուն անհրաժեշտ չէ համարում: Գուցէ ալն պատճառով, որ տ. Մարիսեանը (վէպի հեղինակ տ. Խատիսեանը) ալ չըջաններ ի հետ ծանօթ չէ և ինքն էլ մաչրենի լեզուն անհրաժեշտ չէ համարում: Բայց մենք մեղաւոր չենք: Հալերի համար վէպի գրողը ոչ միայն պիտի նորա լեզուն պարտք համարէ, ալ և անհրաժեշտութիւն: Մեզ համար պարզ է, որ ալստեղ պարտք ու անհրաժեշտութիւն խօսքերը վերաբերութիւն ունին վէպի մէջ գործող Հեղինէին ու Վրթանէսեանին—(ալսինքն՝ վէպի հեղինակը, եթէ Հեղինէին ու Վրթանէսեանին իբր հալերի լաւ տիպի է նկատում, պէտք է նոցա հալերէն գիտենալը պարտք ու անհրաժեշտութիւն համարէր): Ո՛ւր է ալստեղ որևէ խօսք տիկին Խատիսեանի հալերէն գիտենալու կամ չգիտենալու մասին?

Ալսպիսով, ուրեմն, լօղւածի հեղինակ տիկ. Խատիսեանի կողմը «Մուրճ»-ի գրախօսի վրայ, իբր օրինակի որևէ անբարեխղճութեան, — սոմն կողմից անաջող է: Եւ ալդ նամանաւանդ ցաւալի է, որ իւր լօղւածի սկզբում՝ հակական քննադատութեան բնորոշումը տալու ժամանակ՝ տիկին Խատիսեանը կամ նոքա, «որոնք», ինչպէս ինքն է ասւած, «հետեւ են հալց թերթերում տպած քննադատական նկատողութիւններին» և որոնց ասելովն է դատում ինքը տիկին Խատիսեանը, ալդ պարոնները

Քննադատի վերջին սխալը կաշանում է նրանում, որ նա կեղծ կերպով է բացատրում Սոնեալի չարաբերութիւնները զէպի իշխան Աղբատովը՝ նորա (Սոնեալի) մարդու գնալուց չտույ, Նա ասում է թէ իշխանը նորա սիրեկանն է, և բարկանում է, թէ ինչպէս նորա (Սոնեալի) մալը կարող էր ծածկել իւր աղջկալ անհաւատարմութիւնը զէպի ամուսինը: Որ Սոնեան անհաւատարիւմ չէր իւր մարդուն աչնպէտ, ինչպէս ալդ սովորապէս հասկացում է, և որ Աղբատովը նորա սիրեկանը չէր, թող ծառալի հետեւալ ապացոյցը: Նախ իշխանը չէր ասիլ նրան. «Յրդում եմ, ձեզ տիրապետելու համար ես պատրաստ եմ հողիս սատանին գրաւ դնելու (Էջ 231): Երկրորդ, իշխանը հրաւէրք ստանալով Սոնեալից՝ ժամանակ անցնել մնացած կոմպանիալի հետ, չէր ասիլ նրան՝ «Էլի ամենքի հետ միասին», և Սոնեան էլ չէր պատասխանիլ նրան. «Միք մոռանալ որ մենք երկուսս ազատ չենք: Այլ խօսքերը պարզ ցոյց են տալիս որ Սոնեան երբէք նրան միաշնակ ժամադիր չէր լինում:

Որ չալէլ կնիկը, ունենալով դրեթէ զգւանք զէպի իւր փեսացուն, մարդու գնալով նոբան չտրեց—դա շատ բնական է. որ սղջկութեան ժամանակ կոքեւ լինելով՝ նուէն մնաց նա նաև ամուսնացած ժամանակ դա եւ բնական է. որ նորա մալը ալդ բոլորը գիտէր և հաշտում էր իրերի դրութեան հետ—դա մի շատ սովորական երևութ է մեր կեանքի մէջ: Եւ իզուր ենք փակում մեր աչքերը մեր շուրջը կատարող երևութաների վրալ, աշխատելով հաւատացնել, թէ մեր կանաչք նահապետակալութեան են հետեւում: Կարելի է որ գաւառը դեռ պարծենալ կարողանալ

ուրեմն, անկասկած Վրթանէսեանի օրումն են. դոքա «զիջանում են» իրենց «հայրենի» գրականութեանը «ծառալել» կամ առանց գիտնալու հալերէնը և կամ առանց հետեւելու մեր թւով աչնքան քիչ պարբերական թերթերին: Այլապէս չենք հասկանում թէ ինչպէս աչն մի քանի հարիւր գրախօսական կամ քննադատական լօղւածները, որ տեւ է մինչև ալժմ «Մուրճ»-ը, կարող էին մկրտել աչն ածականներով, որ թւում է չարգելի հեղինակը իւր այս լօղւածի սկզբներում: Մեզ կ'ասու թերեւ թէ «մեր խօսքը «Մուրճ» ի մասին չէր, ալ ուրիշ թերթերի մասին էր»: Գուցէ և իրօք ալ է եղել լօղւածիս հեղինակի գիտաւորութիւնը, մենք ալ չգիտենք. գիտենք միայն աչն, որ աչն եթ տարում գրքերի քննութիւնով զբաղողը մեր մամուլի մէջ եղել է գլխաւորապէս «Մուրճ»-ը և գիտենք նաև աչն, որ ե' հեղինակներից ե' ընթերցող հասարակութիւնից ալ բանը ըստ արժանւոյն նկատւած է ու նուէն իսկ գնահատւած...

Մեր աչն նկատողութեամբ, սակաչն ոչնչով չեն հոսեմանում մեր աչքում լօղւածիս հեղինակի աչն մի շարք նկատողութիւնները գրախօսական անբարեխղճութիւնների մասին, որոնց առթիւ նա խօսում է իւր լօղւածի շարունակութեան մէջ:

Ման. «Մուրճ»-ի խմբ.

հնի պահպանութեամբ, բայց մեզնում ալ ժամանակները անցել են: Ընտանեկան կեանքի սրբութիւնը վերջին քսանութինգ ու աւելի տարիներէից ի վեր խախտում է Թիֆլիսի հալուհիների կողմից նույնպէս, ինչպէս և ալ ազգերինը:

Յետոյ քննադատը անբնական է գտնում, որ ահի դասակարգի մարդիկ, որոնց պատկանում է իշխ. Աղբատով, կարողանալին թող տալ իրենց աշխարհի կոպտութիւններ օրինաւոր կանանց մօտ, ինչպէս համարում էին տ. Գնունի և նորա աղջիկը: Քննադատը պիտի գիտենար որ աղպիսի անամօթութիւններ իշխ. Աղբատովի նման մարդկանց աչքում քաջութիւն են համարում, որով նոքա պարծենում են ամեն չարմար դէպքում: Ինչ երկարացնենք ալ մասին, քանի որ մեր կեանքին քիչ չատծանօթին չալտնի է, որ մեր աչքպէս կոչւած բարձր դասակարգի հասարակութեան ներկայացուցիչների մեծամասնութիւնը, իրենց կրթութեամբ ու հասկացողութիւններով, եթէ ոչ աւելի ստոր՝ աւելի բարձր էլ չեն կանգնած միջին դասակարգից: Եւ դեռ աղպիսի չանդգնութիւններ է ցոյց տալիս ալ հասարակութիւնը, որոնք վրդովեցրել են «Տարազ»-ի քննադատին? Տասնութինգ թէ քսան տարի առաջ ամբողջ քաղաքը խօսում էր մի պարտամուրհակ կու տալու. դէպքի մասին մի իշխանի կողմից, որը աղպիսով ազատեց 1000 ռուբլու պարտքը վճարելուց: Քննադատը հարցնում է թէ կարող էր ամեն տան մէջ ընդունւած Աղբատովը աղպէս վարել? Հ'մ... մտածում եմ ես: Զարմանում եմ թէ ինչպէս մինչ աւտօր նա չգիտէ, որ մեր «կարգին» հասարակութիւնը, ալ որ *порядочное общество* ն, խալտառակութեան դրօշմ դնելով ահի մարդկանց վրա, որոնք մի վտրչիդել են ընդունւած բայց և իմաստը կորցրած գաղափարներից, չի լանդուրժում ընդունել իւր մօտ պարտամուրհակ կուտողին և Աղբատովի նման հարիւրաւոր մարդկանց: Ալ չգիտենալը, «Փետալ որսողների» հեղինակին արած չանդիմանութիւնը ամենից լաւ ցոյց է տալիս որ «Տարազ»-ի քննադատը ծանօթ է մեր աչքպէս կոչւած բարձր դասակարգի արտաքին կողմերի հետ, աչքինքն նա գիտէ միայն թէ երբ են նոքա քնից վեր կենում, երբ են ճաշում և ալլն, աչքինքն ահի, ինչ քննադատը հեղինակին է վերադրում: Եւ եթէ նկարագրականի կողմից չենք կարող վիճել առաջին մեծութեան աստղերի հետ, ինչպէս էմիլ Զոլան է կամ Օկտաւ Ֆելէն, որոնց քննադատը չի շատակում է, դորանից դեռ չի բղխում թէ մենք չպիտի տեսնէինք ահի, ինչ մեր չուրջն է կատարում:

Յետոյ պ. Սիթեան («Տարազ»-ի քննադատը) ծիծաղում է թէ ինչու Լուսեանը, որ լիքն է ձգտումներով դէպի ամեն բարին, իւր ճանապարհին խոչնդոտի հանդիպելով՝ զանազան հանգամանքներից զրկւած ընդունեց իրեն անչարմար մի ծառաւորութիւն: Բայց միթէ կեանքում նոյնը չի լինում ամեն քալափոխում, և ոչ ոքի մտքին չի վալիս պորա վրալ ծաղ-

րել: Ինքը քննադատն էլ ասում է թէ Լուսեանի պէս մարդիկ հարկւրաւոր են. և ալդ էլ ես եմ ուզել ապացուցել, ամենեւին միտք չունենալով նորանից մի իդէալ չիւնել, հակառակ քննադատի պնդածին: Ես միայն կամեցել եմ կարելիին չափ լուս սփռել Փակտերի և հանգամանքների վրայ, որոնց չնորհիւ մեզանում կան Լուսեանի պէս գործիչներ: Հարցը սա է, շատերը կը գտնեն, որոնք կարող են կուռել մինչև ծալք, ինչպէս ալդ «Տարազ»-ի քննադատն է պահանջում: Եւ, վերջապէս, ինչո՞ւ է վրդովեցնում քննադատին վարչական ծառայութիւնը? Նախ որ ոչ մի պարապմունք չի արատաւորում մարդուն, միայն թէ շիտակ վերաբերելի նա դէպի գործը: Երկրորդ՝ Լուսեանը միայն ժամանակաւորապէս ընդունեց ծառայութիւնը, որի մէջ նա միշտ իրեն ծանր արամադրութեան մէջ զգաց: Որ Լուսեանը հաւատարիմ մնաց իւր վանկավարժական կոչմանը, ապացուցը այն է, որ նա, հէնց որ առիթ եղաւ, վերադարձաւ դէպի նա:

Սոնեա Գնունուն հաւան չէ քննադատը, որովհետեւ իւր բնաւորութեան վատ չատկութիւնները հետ նա ունի: Նաև համակրելի կողմեր. բայց չէ որ կեանքը մեծ մասամբ բաղկացած է լաւն ու վատի խառնուրդից, և հանգամանքները միայն ուղղութիւն են տալիս աչս ու աչն կողմին: Ներկալ դէպքում Սոնեայի կողմն են խելքը, ընդունակութիւնները, զրաւչութիւնը և, եթէ կամենաք, Դոն իսկ բարութիւնը. բայց միջավայրը և կրթութիւնը խեղաթիւրել են նորան, դարձնելով նորան դատարկ բայց զրաւիչ կոքետուհի:

«Տարազ»-ի քննադատը անբնական է համարում Թիֆլիսի մէջ Սոնեայի պէս անձի գոյութիւնը, պնդելով թէ հալկական հողի վրալ չի կարող ֆրանսիական կոքետուհի զարգանալ: Բայց ի՞նչ կալ զարմանալու որ մեր անցողական շրջանում, երբ դէպի մեզ, Թիֆլիսցիներս, եւրոպական կեանքից շատ բան հասնում է ալլանդակած ձևով, և երբ մեր հասարակութիւնը արամադիր է բռնել քաղաքակրթութեան ծալքերը միայն, առանց նորա էութեան մէջ մտնելու: Ինչ կալ զարմանալու, ասում ենք, որ կարող են մշակել Սոնեայի և սորա մօր պէս անձնաւորութիւններ: Ես չեմ ուզում ասել, թէ նոքա չաճախ երևութիւնք են մեր կեանքում, բայց պընդում եմ, որ նոքա կան և, ի հարկէ, քանի գնալ՝ աւելի պիտի բազմանան նոքա, եթէ մեր կեանքի պայմանները չեն փոխւիլ:

Ինչ կարիք կալ մեզինքներս խաբել ու պնդել թէ հալուհիւնների մէջ իւր թէ անհնարին են աչնպիսի անձնաւորութիւններ, որոնց նմանները կան բոլոր եւրոպական հասարակութիւններում? Եւ ինչն է մեզ երաշխաւորում? Բարքերի մաքրութիւնը: Կրկնում եմ, որ դա միայն աւանդութիւն է: Բաւական է մեր Թիֆլիսեան կեանքը մի փոքր մօտիկից նալել՝ համոզւելու համար, թէ ինչպէս չաճախ մեր տիկիները անստորագրի նամակներ են գրում: Չալէլ մարդու առաջ սեւացնելու համար մի աղջիկ,

սորան խելու համար. ինտրիգներ, զազրելի միջոցներով իրենցը ցուց տալու համար՝ թէ ֆիզիկական և թէ մտաւոր կողմից: Միթէ այս ամենը բաւական չէ, որ մեզանում ևս զարգանան նույնպիսի կոքետուհիներ, ինչպէս Ֆրանսիայում:

Այսպէս եղաւ մի թերթի քննադատութեան վերաբերմունքը դէպի իմ «Փեսալ որսողները»: Կրկին անաչառ հարց եմ տալիս — ինչ կարող էի օգտել աղջկիսի քննադատութիւնից: Ինչ կրթիչ նշանակութիւն կարող էր ունենալ նա ինձ համար? Իրաւունք չունէի ասելու, որ «շաբլոնը, աչառութիւնը և սուտը» ղեկավարում են կրիտիկոսին աւելի քան որ և է սկզբունք? Էլ չեմ խօսում թէ ինչ անբարոյականացնող կերպով է ազդում հասարակութեան վրայ աղջկիսի գրականութիւնը, — դա ինքն իրեն պարզ է, — բայց կրկնում եմ՝ ինչ դաւ սարքէ գրող-հեղինակը կրիտիկոսի հետ? Չէ որ կրիտիկան միակ հրապարակալին դատարանն է, ուր դափնիներ են բաժանում և փշեր: Դափնիների համար չեմ գրել և հրատարակել վէպեր, այլ հասարակութեանը ծառայելու համար: Նոցանից իրաւունք ունիմ պահանջելու դատաւճիռ՝ եթէ խիստ էլ լինի, բայց և արդար: Ամեն գրող սպասում է բարեխիղճ ցուցմունքների և բազդաւոր կը համարի զնահատելի խորհուրդ ստանալու... Եւ թող իմ այս նկատողութիւնը ընթերցողն ընդունի ոչ իբրեւ վիրատուած ինքնասիրութեան կապիղի, այլ արդար բարկութիւն ալն արեւստական փշերի վրայ, որոնք տնկած են չար ձեռքով...

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՐԾՐՈՒՆԻ, Վահան (Ժիշկ).—Դպրոցական առողջապահութիւն: Հրատ. Թիֆլ շաջ. հրատ. ընկ., տպ. Յ. Մարտիրոսեանի գինն է 50 կոպ.

Շատ հազիւ է պատահում մեր շորաքողքով գրականութեան մէջ՝ կարգաւ աշխարհի խելացի գիրք, ինչպիսին է պ. Վ. Արծրունու «Դըպրոցական Առողջապահութիւնը»: Այդ գիրքը կարելի է «Հրատ. ընկերութեան» ամենալաջող հրատարակութիւնը համարել: Զնալած որ դպրոցական առողջապահութեան մասին հաղորդէ կան հրատարակած մի երկու գրքովներ, բժշկ. Ա. Բաբալեանին, և մի քանի լողածներ ալս վերջին քառորդ դարում, որոնք և չիւլած են լառաջարանի մէջ, բալց և աշխարհի նաև նիւթերի լիակատարութեան և ալ պատճառներով ներկալ գրքովը մի նորութիւն է մեր գրականութեան համար: Նա իր գրքում մի ամբողջ նոր աշխարհալեցողութիւն է բաց անում մեր ուսուցիչները ու մանկավարժները առաջ: Պ. Վ. Արծրունու գրքի մէջ, մի կողմ թողած միւս արժանաւորութիւնները (թեթև ու մատչելի ոճը, բարեխիղճ ու մանրազնին վերաբե-

րութիւնը դէպի գործը և ալլն), ամենից շատ աչքի ընկնող ու գնահատելին հէնց ալլ աշխարհալեցողութիւնն է: Դպրոցական առողջապահութիւնը՝ հեղինակի կարծիքով՝ անքան լալն հասկացողութիւն է պարունակում, որ նրանում շոշափում են համարեա մանկավարժական-դատարակչական բոլոր հիմնական խնդիրները, ի հարկէ, եթէ առողջութիւն ասելով հասկանանք ոչ միալն մարմնի ֆիզիկական ուժը, ստամոքսի, թոքերի, սրտի, ոտքերի ու ձեռքերի կարողութիւնը, ալլ և մարդու հոգու թարմութիւնը, ուղեղի ճկունութիւնը, — ալլ ժամանակ՝ կարելի է համաձայնել կլասիքական առածի հետ. *Mens sana in corpore sano!* Ուսումնարանական առողջապահութիւնը, ալս տեսակէտլց նալած՝ վերաբերում է ոչ միալն դըպրոցի շէնքի, նստարանները ու դասական աւարկաները չարմարութեանը, ալլ և դասատուութեան ձեռն, սովորեցրած գիտութիւններին, գըր-

քերին ու կանոններին, որոնք ընդունված են ուսումնարանում, մէկ խօսքով՝ ամբողջ ուսումնարանական գործին: Պր. Վ. Արծրունին հէնց աղպէս էլ նախում է խնդրի վրա և աչդ պատճառով պահանջում է, որ ուսումնական բժիշկը որպէս մի կարևոր խորհրդատու, նաև ուսումնական-կրթական գործում՝ մանկավարժի հետ միասին, ձեռք ձեռքի տւած՝ ղեկավար ու առաջնորդող հանգիստնալ: Դպրոցական առողջապահութիւնը կապել ընդհանուր դաստիարակչական խնդրի հետ և աչդ երկու խնդիրները օրգանական կերպով միացնել, — ահա ահի նոր աշխարհայեցողութիւնը, որ տալիս է մեզ պ. Վ. Արծրունու գիրքը: Աչդ ընդհանուր դրութիւնը հաստատելու և առաջնորդանելու համար՝ գրքիս հեղինակը մանրամասնօրէն ուսումնասիրում է մեր արդի դպրոցական գործը, իր ամեն կողմերից, բազմաթիւ գիտնական խորհուրդներով ու նկատողութիւններով լուսաւորում է շատ մութ և կնճռոտ մանկավարժական խնդիրներ, եւրոպական նշանաւոր հեղինակութիւնների կարծիքներով զարդարում է իր գրքի էջերը, և աչդպիսով ստացւում է մի գեղեցիկ, ներդաշնակ ժողովածու մանկավարժական-դաստիարակչական փաստերի: Կարծիքների և առաջարկութիւնների, որ ինքն ըստ ինքեան ահազին հետաքրքրութիւն են ներկայացնում ամեն մի մտածող ուսուցչի, դաստիարակի և ծնողի համար:

Պր. Վ. Արծրունու գրքի էական արժանաւորութիւններից մէկն էլ՝ նրա արած ինքնուրույն հետազոտութիւն-

ների արդիւնքներն են, որ ճիշտ թւանշաններից կազմած աղիւսակներով՝ առաջ են բերւած: Իբրև մշտական բժշկի, պ. Արծրունու խնամքին լանձնած են թիֆլիսի հետեակ վեց դպրոցները — Յովնանեան (օրիորդաց), Նորաշէնի (օրիորդաց), Ջգրաշէնի (օրիորդաց), Կիրակօրեաչ (տղաւոց), Ս. Նշանի (օրիորդաց), Կար ու ձևի (օրիորդաց), Բացի աչդ դպրոցներից, պր. Արծրունին իր հետազոտութեանց համար աչդել է նաև Գալեանեան, Թանդոյեան, Ս. Վէորգի (տղաւոց), Ջգրաշէնի (տղաւոց), Ս. Կարապետի, Զրկինեանց, Հաւարաբի Ս. Լէվրածնի (օրիորդաց) և Հաւարաբի Բամուկնց Ս. Գէորգ երկ. տղ. դպրոցները: Աչդպիսի լախ ծաւալ տալով իր զետեղութեանը, հեղինակը աւելի մեծ իրաւունք ունի կարևորութիւն տալ իր ստացած եզրակացութիւններին, և իր առաջ բերած թւանշանների ու աղիւսակների վրա նաչել, իբրև տեղիս հաչ դպրոցական կեանքի հարազատ արտապատկեան վրա: Շատ հետաքրքիր է, մանաւանդ թիֆլիզի հաչոց ուսումնարանների աչակերտների առողջութեան վիճակադրութիւնը: Աչդերցնելով միաչն ուսումնարանների մէջ ինձ զիմողների ստատիստիկան, մենք տեսնում ենք, ասում է հեղինակը, որ 2066 աչցելութիւններից՝ մօտ 112-ը չինձու տկարութիւնների համար էին, որոնք հանելով ընդհանուր գումարից, կը ստանանք 1954 աչցելութիւն: Աչթիւը բաժանելով աչակերտների ընդհանուր թիւի վրաչ (1954: 720) կը ստանանք 2.7: Աչս նշանակում է,

որ լւրաքանչիւր երեխայ, մեջին թւով, դպրոցում ինձ դիմել է 2., անգամ,—մի տոկոս, որը բարձր է Պետերբուրգի քաղաքային դպրոցներում նկատածից»։ Այս տեսակ մանրամասն վիճակագրական ֆակտեր՝ թէ մեր ուսումնարաններից և թէ Լւրոպացի, կամ ռուս հեղինակների աշխատութեամբ կազմած՝ օտար երկրների դպրոցական վիճակագրութիւնից—շատ կարելի է գտնել պ. Արծրունու գրքի մէջ։ Եւ այդ բոլոր ֆակտերն ու տեղեկութիւնները մանրամասն և պարզ բացատրած, պարզած ու հասկանալի դարձրած։

Մեր ծխական դպրոցների ուսուցիչները, հոգաբարձուները թեմական տեսուչները և հոգևորական պաշտոնեաները թող վստահ կերպով չլինեն պր. Արծրունու գրքի խորհուրդներին. համոզւած ենք, որ այդ գիրքը շատ օգտաւէտ առաջնորդ կարող է լինել դպրոցական խրթին ու պատասխանատու ձեռնարկութեանց մէջ։ Այնտեղ մենք առաջ ենք բերում գրքից մի կտոր, որ նմուշ կարող է ծառայել ամբողջի համար, և ցոյց տալ թէ ինչպէս է նախում հեղինակը մանուկների ֆիզիկական դաստիարակութեան վրայ։ «Մանուկը խաղի մէջ իր բնազդումին է հետ ունի, թէ շարժումների, թէ իր զարմանալու ձևի մէջ։ Խաղը, կատարելով առհասարակ բացօդային, մեծ բակի ու կամ ընդարձակ տեղերում, մի առանձին ազատութիւն է տալիս նրա մարդութիւններին, և մանկան սիրտը, կարծես, նոյնպէս լաւանդում է. երեխան խաղերի մէջ նմանում է մի թռչնակի, որը ազատ ձեզքում է օդը և թարմ ու զւարթ սաւառնում է,

պտուտներ տալով օդի մէջ, իր ուղղութիւնը փոխելով, բարձրանալով և իջնելով գետին, միշտ թռքերը լալն բացած, ազատ շնչելով։ Այնինչ ապարատների (մարմնամարզական) վրայ ճգնող երեխան չիչեցնում է նոյն թռչնակին, որին պինդ փակել են նեղ վանդակի մէջ, որտեղ խեղճը անկարող է թևերն անգամ պարզել, և գուք մթնոլորտում, ամեն շարժողութեան միջոցին վանդակի պատերին դիպչելով մնում է թևերը ծալած, կուրծքը սեղմած, տաղտկալի անշարժութեան մէջ... Խաղը, բացի ֆիզիկապէս կ թելուց մանկան, նրա բարոյական կրթութեանը նոյնպէս շատ նպաստում է.—նա սովորեցնում է երեխային հաւաքական աշխատանքի, որոյնքալ նպատակին հասնելու համար, մշակում է նրա մէջ ընկերական ոգի, քաջութիւն, կամք, արագ որոշում, ազատ և ազնիւ մրցման ցանկութիւն, չարժանք զէպի իր սեփական ոյժերը, Գոնէ ալս հանդամանքը պէտք է փ նկատի ունենան մեր մանկավարժները և ուսումնարանական մասնաժողովները, եթէ նրանք դպրոցական առողջապահութիւնը մի աւելորդ բան չեն համարում։ Նրանք պէտք է նոյնպէս չմոռանան, որ ֆիզիկական կրթութիւնը զուգընթաց է գնում մտաւոր կրթութեան հետ, և որքան լաւ է զրած մի դպրոցում առաջինը՝ նոյնքան և աջող է ընթանում երկրորդը»։ (Եր. 125—126)։ Մեր կողմից էլ ոչինչ չենք ուզում աւելացնել. միայն ցանկանում ենք, որ այդ օգտակար և խելացի գիրքը տարածւի մեր դպրոցական մանկավարժական շրջաններում։

(Երանոս Գ. Թադևոս)։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

I

Կոտորածներով յառաջացրած ընդհանուր
դրութիւնը

Հայկական ինդիւրը ներկայումս դառել է մի կատարեալ գոր-
դեան հանգոյց, որին պակասում է միայն մի Ալէքսանդր Մակեդո-
նացի: Դրութեան կնճռոտ լինելը պայմանաւորում է երևոյթների
բարդութեամբ՝ յառաջացած այն բանից, որ ոչ ոք չի կատարում
այն զերը, որ նա յայտարարում է և որ գլխաւորն է՝ դերակա-
տարներից ոչ ոք հաւատ չունի դէպի հակառակորդի խօսքը: Թիւր-
քիան հոկտեմբերի 5-ին ստորագրեց ռեֆորմների մի իրադէ. բայց,
բացի այն, որ այդ իրադէով Թիւրքիան հեռացնում է եւրոպական
պետութիւնների պահանջած կոնստիտուցիոն, բացի այն, որ այդ
իրադէով վերք չի բժշկւում, այլ նոյն այդ իրադէն՝ տաճիկ կառա-
ւարութիւնը նոյնութեամբ համարձակեց կամ չկամեցաւ հրատա-
րակել: Մեր ընթերցողները կը գտնեն ստորեւ սուլթանի իրադէն,
մի կողմից հրատարակւած տաճկական թերթերում, իսկ միւս կող-
մից այն, որ տպւեց Լոնդոնի Թաւմա թերթում: Տարբեր լեզու,
տարբեր խմբագրութիւն, տարբեր ոգի:

Եւ ռեֆորմներ պահանջւում են յօգուտ մի ազգի մի այնպիսի
պետութիւնից, ուր, կառավարութեան ակնյայտնի ձեռնտութեամբ,
սիստեմական կերպով կոտորում են նոյն իսկ Եւրոպայի պաշտպա-
նութեան տակ առնւած ազգը, և՛ քաղաքներում, և՛ գիւղերում,
և կոտորում են անխնայ և անպատիժ կերպով!

Բայց որքան Եւրոպան հաւատ չունի զէպի Թիւրքիան, որից շեփորմներ են պահանջում, նոյնչափ էլ Թիւրքիան հաւատ չունի զէպի Եւրոպան, մասնաւորապէս զէպի Անգլիան, թէ սա պիտի կարողանայ վարել իւր սպառնալիքների համաձայն: Թիւրքիան զիտէ, որ միմիայն Անգլիան էի վստահանալ իւր պահանջները պատերազմով պաշտպանել: Պատերազմի համար լոկ հայերի դատիօգտին՝ հարկաւոր կը լինի բոլոր վեց պետութիւնների միաձայն վճիռը, որովհետեւ առանց այդ հիմնական պայմանի՝ ամեն մի պատերազմ՝ Թիւրքիայի զէմ՝ մէջ տեղ կը դնի ընդհանուր արեւելեան խնդիրը, որը այսօր և արդէն ի վաղուց անտի Թիւրքիան բաժանելու խնդրի հետ հոմանիշ է: Իսկ այդ բանի մէջ մեծ պետութիւնները տարբեր հայեցակէտեր ունին: Եւ եթէ Անգլիան վճռի պատերազմի փող հնչեցնել, այդ նա կ'անի միմիայն այն զէպքում, երբ նա կ'ունենայ բաւականաչափ զօրեղ զաշնակիցներ, որպէս զի, ընդդէմ այդ խնդրում իրեն հակառակ պետութիւնների՝ կարողանայ մի կողմից Կ. Պոլսի և միւս կողմից Եգիպտոսի տիրապետութեան խնդիրները իւր շահերին ոչ-հակառակ եղանակով վճռել: Ներկայումս Անգլիան ունի միմիակ զաշնակից, որը արեւելեան խնդիրներում, հակառակ Զրաւսիային՝ իրեն հետ ըստ ամենայնի համերաշխ է, — իսկ Իտալիան է: Նա ունինաւ մի այլ բարեկամ — Աւստրիան, այս մոքով բարեկամ, որ Անգլիան նորա հետ աւելի հեշտութեամբ կարող է համաձայնութիւն կայացնել Կ. Պոլսի ճակատագրի մասին, որովհետեւ այդ երկու պետութիւնների միակ հոգսը Կ. Պոլսի վերաբերմամբ ոչ թէ այն է որ իրենց ձեռքը գցեն այդ համաշխարհային քաղաքը, այլ որ այդ նշանաւոր կենտրոնը հեռու պահեն Խուսաստանի կողմից տիրապետելու հնարաւորութիւնից: Կ. Պոլսի վերաբերմամբ այդ երկու պետութիւնների շահերը միատեսակ լինելով՝ Անգլիան, Իտալիայից յետոյ, աւելի շուտով կարող է միացնել իւր հետ Աւստրիան Թիւրքիայի խնդիրներում: Աւստրո-Ունգարիայի արտաքին գործերի մինիստր կոմս Գոլուխովսկու նորերումս արած քայլը, յօգուտ բոլոր մեծ պետութիւնների միաձայն միջամտութեան՝ կարելի է մեկնել միայն և եթէ Անգլիայի և Աւստրո-Ունգարիայի շահերի համերաշխութիւնով: Կ. Պոլսի վերաբերմամբ:

Բայց այդ երեք տէրութիւնները միասին այնուամենայնիւ

չեն վստահանալ միակ վճռել Թիւրքիայի ճակատագիրը, որովհետեւ Թիւրքիայի բաժանման գործը նոյն իսկ պատերազմից յետոյ կարող է վճռել մի վեհաժողովի մէջ, և եթէ այդտեղ մի կողմում լինեն միայն Անգլիան, Աւստրո-Ունգարիան և Իտալիան, այդ կը նշանակէր ժամանակաւոր զինադադար անել և ոչ պատերազմ վերջացնել՝ արեւելքում յարատեւ դրութիւն և կարգեր հաստատելու յոյսով։ Ահա թէ ինչու Անգլիան, Իտալիայի և Աւստրո-Ունգարիայի հետ միասին՝ պատերազմի բոլոր հետեւանքների պատասխանատուութիւնը իւր վրայ չի առնիլ անգլիական ազգի առաջ։ Բայց այդպիսի պատասխանատուութիւն նա կարող էր յանձն առնել, եթէ գէթ Գերմանիան ևս բախարձակ կերպով կանգնէր Անգլիայի կողմը։ Բայց կարող է արդեօք Գերմանիան, ոչ միայն զիպլոմատիապէս, այլ, հարկը պահանջած դէպքում—որ միշտ պիտի ի նկատ ունենալ—նաեւ զէնքով միջամտել մի արեւելեան պատերազմի մէջ? Դա կասկածելի է։ Մինչ օրս երբէք Գերմանիան արեւելեան որ և է պատերազմի մասնակցած չէ. իսկ ներկայումս, եթէ Գերմանիան կամենայ իւր աւանդական քաղաքականութիւնից շեղւել ու արեւելեան պատերազմում մասնակցել, ձեռք ձեռքի տաւով Անգլիային, Աւստրիային և Իտալիային,—այդ նա կարող է անել միայն այն դէպքում, եթէ իւր երկու հզօր հարեանները՝ Ֆրանսիան և Ռուսիան՝ նոյնպէս խառնուեն այդ արեւելեան պատերազմի մէջ թէկուզ իբր Թուրքիայի պաշտպաններ։ Որովհետեւ այդ դէպքում խնդիրը կը լինէր Անգլիայի, Իտալիայի, Աւստրո-Ունգարիայի և Գերմանիայի միացած ոյժերը փորձել Ռուսաստանի, Ֆրանսիայի և Թիւրքիայի միացած ոյժերի հետ, յաջողութեան դէպքում Թիւրքիան իրար մէջ բաժանելու ծրագրով։ Բայց, եթէ Ռուսիան և Ֆրանսիան մի այդպիսի պատերազմում զան Թիւրքիայի օգնութեան՝ և նոյն իսկ յաղթութիւն տանեն,—անկասկած է որ իւր դաշնակիցների յաղթութիւնը Թիւրքիային ձրի չէր նստիլ. Թիւրքիան ստիպւած կը լինի Ռուսիային և Ֆրանսիային բաւարարութիւն տալ. իսկ Ռուսիային Թիւրքիան կարող է բաւարարութիւն տալ ոչ թէ զիջանելով Տաճկա Հայաստանը Ռուսիային, այլ վերջինիս ապահովութիւն տալով Բոսֆորի և Դարդանէլի նեղուցների նկատմամբ. իսկ ապահովութիւն կարող էր տրւել ոչ թէ լոկ պայմանաթղթով, խօսքով, այլ

զիջանեիլով Ռուսիային այդ նեղուցները: Իսկ դա հաւասար կը լինէր Կ. Պոլսի զիջելուն Ռուսիային, որովհետեւ Պոլսի միակ ապահովութիւնը հէնց այդ նեղուցներն են: Ում ձեռքին որ լինեն այդ նեղուցները՝ նորա ձեռքին կը լինի նաեւ Կ. Պոլիսը: Իսկ եթէ այդպէս է, ինչ միտք կարող է ունենալ Թիւրքիայի համար Ռուսիայի դաշնակցութիւնը. չէ որ, ուզենալով Կ. Պոլիսը ազատել, Թիւրքիան աւելի ապահով կերպով կը կորցնէր Կ. Պոլիսը, եթէ Ռուսիան հանդիսանար իբր ազատող Թիւրքիայի:

Ահա թէ ինչու Թիւրքիայի ընդդիմադրութիւնը Անգլիային վերջ ի վերջոյ կորստաբեր կը լինի Թիւրքիայի համար, և այնքան աւելի կորստաբեր, որքան Անգլիան ստիպւած լինի պատերազմի դիմել. իսկ մի այլպիսի պատերազմ, որպէս սեսանք, կարող է լինել ներկայ պարագաներում, եթէ միայն Խալիպի և Աւստրո-Ունգարիայի հետ նաեւ Գերմանիան չարէ Անգլիային, որովհետեւ միմիայն այդ պայմանով յաղթութեան շանսը գրեթէ ապահով կը լինի Անգլիայի համար, ի դէպս եթէ Ռուսաստանը և Ֆրանսիան պաշտպան հանդիսանան Թիւրքիային:

Այդ հանգամանքներից բղխում է այս եզրակացութիւնը, որ Թիւրքիայի ընդդիմադրութիւնը Անգլիային հայկական խնդրի նկատմամբ (որը սպառնում է դառնալ ընդհանուր արեւելեան խնդիր) պայմանաւորում է Գերմանիայի բռնած դիրքով. և այդ ընդդիմադրութիւնը, Թիւրքիայի այժմեան ակնյայտի խաղերը ռեֆորմների խնդրի նկատմամբ՝ կը տեւեն այնքան երկար, որքան կը տեւի Գերմանիայի չէզոքութիւնը:

Բայց ինչու Գերմանիան որոշ դիրք չի բռնում ներկայ խնդրում, ինչու նա բացայայտ պատրաստակամութիւն չի ցայտնում Անգլիայի հետ միանալ? Պատճառը շատ ակնեւ է. միանալ—կը նշանակի պատրաստ լինել ծայրայեղ դէպքում նաեւ պատերազմին մասնակցել: Բայց Գերմանիայի համար առաջնակարգ հոգսը այդ դէպքում Ֆրանսիայի բռնելիք դիրքն է, մանաւանդ որ, եթէ Անգլիայի հետ արեւելքում միանան Խալիպի և Աւստրո-Ունգարիան, Գերմանիան այլ ևս չի կարող յոյս դնել Աւստրիայի օգնութեան վրայ այն դէպքում, եթէ Ֆրանսիան այդ ժամանակամիջոցը ընտրելու լինի իւր դաշնակից Ռուսիայի օգնութեամբ յետ խել Գերմանիայից 1870

Թ.ականին իւր կորցրած Ելզաս-Լոթարինգիա պրովինցիաները: Իսկ այդպիսի մի վախի հիմքը այն է, որ Ֆրանսիան, եթէ ներկայումս արևելեան պատերազմ լինի, յաղթուածին տանելու յոյս չունենալով մի այդքան ահեղ դաշնակցութեան դէմ, կը գերադասէր իւր քաղաքական հին վէրքը բուժել և իւր բոլոր ոյժովը յարձակել Գերմանիայի վրայ, եթէ վերջինս իւր նաւային և ցամաքային ոյժերի մի զգալի մասը զուրս բերած լինի երկրից արևելեան պատերազմի համար. իսկ այդպիսի դիրք Գերմանիան իւր համար ստեղծել չի ուզենալ ոչ մի պայմանով: Իսկ եթէ այդ չլինի՝ Ֆրանսիան, չեղօք դիրք բռնելով հանդերձ, եթէ յաղթականները նոյն իսկ մասամբ բաժանելու լինեն Թիւրքիան, նորան՝ Ֆրանսիային՝ մի բաժին կը տան, բոլորովին այնպէս, ինչպէս, օրինակ, Աւստրո-Ունգարիան Բերլինի կոնգրէսում ստացաւ Բոսնիան և Հերցեգովինան (Եթէ և անունով իբր թէ ժամանակաւոր կերպով), առանց որ այդ պետութիւնը մասնակցած լինէր 1877—78 թւականի ռուս-տաճկական պատերազմին: Բայց Գերմանիան չի կարող առաջուց իմանալ թէ ինչ դիրք կը բռնի արևելեան մի պատերազմում՝ դէպի ինքը վրէժխնդրութեան տենչ սնուցանող Ֆրանսիան, մանաւանդ որ նորա դաշնակից Ռուսիան ենթադրաբար չպիտի միանայ Անգլիայի հետ, հետևապէս պիտի զործէ Գերմանիայի դէմ, եթէ սա ընդհանուր գործ կատարի Անգլիայի և Աւստրո-Ունգարիայի հետ Կ. Պոլսին ու նորա մօտ եղած նեղուցների վերաբերմամբ:

Այս քաղաքական յարաբերութիւններն են, մեր կարծիքով, որ թույլ չեն տալ Գերմանիային ներգործական կերպով մասնակցել մի արևելեան պատերազմում, և դորանով էլ պէտք է մեկնել Գերմանիայի ներկայումս բռնած անորոշ դիրքը դէպի Աւստրո-Ունգարիայի արտաքին գործերի մինիստր կոմս Գոլուխովսկու առաջարկը, որով նա հրաւիրում է բոլոր մեծ պետութիւններին ընդհանուր միջամտութիւն անել Թիւրքիայի գործերին: Զէ որ նոյն իսկ ընդհանուր միջամտութեան դէպքում ռեֆորմների օգտին՝ Թիւրքիայի բռնելիք ընթացքը պիտի յարմարւի այն պարագային, թէ իւր ընդդիմադրութեամբ եթէ պատերազմ յառաջացնի՝ ինչ դիրք պիտի բռնեն զանազան տէրութիւններ: Իսկ տէրութիւնների բռնելիք դիրքը որոշուում է այն յարաբերութիւններով, որ տեսանք վերև:

Դորանով և սպանանաւորում է Թիւրքիայի այսքան յամառ ընդդիմադրութիւնը պետութիւնների միաձայն բաց մինչ այժմ լոկ բարեկամական առաջարկներին հայկական ռեֆորմների վերաբերմամբ: Այդ առաջարկները միաձայն են, քանի որ լոկ բարեկամական առաջարկներ են. բաց երբ խօսքը այդ առաջարկների ընդունել տալու մասին է, հակառակ դէպքում Թիւրքիան բաժան-բաժան անելու սպառնալիքով, ահա այդտեղ է որ Թիւրքիան զգում է իւր դրութեան յաջողակութիւնը, չնայած որ անցեալում նա միանգամայն նոյն յաջողակ դրութեան մէջ զգալով իրեն՝ միայն կորուստներ է ունեցել և երբէք օգուտ:

Լորդ Սալսբիւրիի արտասանած ճառերի մէջ Թիւրքիան բաժան-բաժան անելու սպառնալիքը քանիցս բաւականի պարզ ակնարկել է: Բայց առաջժամայն, ինչի մէջ կարողացել են տէրութիւնները համաձայնութիւն կայացնել, այդ այն է, որ ներկայ տագնապալից օրերում նորա, վեց մեծ տէրութիւնները, Թոյլուութիւն են ստացել սուլթանից մի-մի փոքրիկ պատերազմական նաւ կանգնեցնել Կ. Պոլսի առաջ և այժմ ջանք են անում այդ նաւային փոքրիկ ոյժը զօրեղացնել՝ ամեն մի պետութեան կողմից մի-մի աւելի մեծ (Թնդանօթաձիզ) նաւ անցկացնել Դարդանեւի միջով՝ նոյնպէս Կ. Պոլսի առջև կանգնեցնելու համար, այն նպատակով, որ որ և է շփոթութեան դէպքում Կ. Պոլսում՝ եւրոպական հպատակները պաշտպանութիւն գտնել կարողանան:

Իսկ մինչև այդ՝ մի կողմից կոտորած է լինում հայերի ասիական գաւառներում, և միւս կողմից խառնակութիւնների դէմն առնելու համար՝ հրամայում է պահեստի զօրքերը կոչել և զործի համար պատրաստ կանգնել: Տեղեկութիւններին նայելով՝ ներկայումս պատրաստ են հարիւր քսանութ բաւալիոն Փոքր-Ասիայում: Զօրքերի մօբիլիզացիայի գործը այնուամենայնիւ դանդաղ է առաջ գնում շնորհիւ պետական դրամարկղի դատարկութեան: Տաճկական արժեքաւոր թղթերի գները սաստիկ ընկել են, այնպէս որ տէրութիւնը, իւր պարտքերի տոկոսները վճարելու համար՝ ստիպւած եղաւ չորս ամիս ժամանակամիջոց պահանջել իւր պարտատէրներից և փոխառութիւն անել Օստոմանեան բանկից:

Ըստ ամենայն հաւանականութեան՝ մինչ մի ամիս դրութիւնը

աւելի ևս բարդւելու է: Անկարելի է երկու ամսից ի վեր սկսւած և այժմն էլ դեռ շարունակող սարսափելի կոտորածներից յետոյ՝ ռեֆորմների պահանջով բաւականանալ: Մի քանի տասնեակ հազար հայեր են կոտորւել, բացւել է մասսային գաղթականութեան դուռը ողջ ֆնացածների և վերջին աղքատութեան մէջ հեծող հայ ժողովրդի համար, կրած նիւթական վնասները անհաշւելի են: Եւ զարմանալի չէ, որ Անգլիայում, և մասնաւորապէս Անգլո Հայկական կոչւած ընկերութեան կողմից, առաջարկներ են լինում՝ Թիւրքիան բաժան-բաժան անելով՝ Կիլիկիան դարձնել անկախ հայկական իշխանութիւն, մի առաջարկութիւն, որ մի քանի ամիս առաջ անհնարին կը համարէր արտասանելն անգամ, թէ և այժմ էլ այդ գաղափարը թէ Ռուսաստանում և թէ Գերմանիայում ու թերեւս այլ տեղեր միմիայն ծիծաղ է շարժում. արհեստական ծիծաղ թէ սրտանց՝ զորս պատասխանը մեզ վրայ չենք վերցնում:

Բայց, ինչ և է, այս բանը միայն թւում է մեզ հաստատ, որ տաճկահայերի փրկութեան կամ ապահովութեան խնդիրը այլ ևս չի կարող կապւել որ և է թրքական ռեֆորմի խնդրի հետ, այլ նա պիտի կապւի մի միջազգային քաղաքական խոշոր գործողութեան հետ, որով կ'որոշւի հայկականից աւելի լայնածաւալ Արեւելեան խնդիրը իւր ծանրակշիռ հետեւանքներով Թիւրքիայի պետական անկախութեան համար, անկախութեան, որ այդ այլանդակ պետութիւնը այնքան անարժան կերպով վայելում է ցայժմ Եւրոպայի աչքի առաջ:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ:

II

ՏԱԶԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՓՈՐՄՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՓՈՐՄՆԵՐԻ ՍՈՒԼԹԱՆԻ ԻՐԱԴԵՆ

5/17 հոկտեմբերի

(«Թաւ աւստ» լրագրից)

I. ՎԻԼԱՅԵԹՆԵՐ ՆԻ ՄՈՒԹԷՍԱՐԻՖԱԹՆԵՐ

Յօդ. 1. Իւրաքանչիւր վիլայէթում (ընդհանուր-նահանգապետութեան մէջ) նշանակուած է մի մուաւին (դէպուտատ) ու-մահմեդական դաւանութեան պատկանող, համաձայն 1286 թւի շէւալի 9-ի վիլայէթների կառավարութեան վերաբերեալ օրէնքի II գլխի տրամադրութեան՝ Այդ օրէնքի համաձայն, մուաւինի պարտաւորութիւնն է մասնակցել և վարել վիլայէթի գործերը և զիւրացնել գործավարութիւնը:

Յօդ. 2. Ոչ-մահմեդական դաւանութեան պատկանող մուաւինները տրուում են նաև իբրև օգնական մահմեդական մութասէրիֆների և գայմագամներին սանջակների և կազանների մէջ, եթէ այդ արդարացնւի քրիստոնեաների թւով:

II. ԳԱՅՄԱԳԱՄՆԵՐ

Յօդ. 3. Գայմագամները պէտք է ընտրւեն ներքին գործերի մինիստրից, առանց կրօնի խտրութեան, այն անձերի միջից, որոնք քաղաքացիական դպրոցների դիպլոմ ունեն, նոքա հաստատուում են իրանց պաշտօնի մէջ կայսերական իրադէտով:

Յօդ. 4. Այժմ ծառայութեան մէջ գտնւող պաշտօնեաները, որոնց ընդունակութիւնը ապացուցւած է, պէտք է թողնւեն իրենց

պաշտօններում՝ եթէ նոքա մինչև անգամ դիպում չունենան։
Եթէ ոչ-մահմեդական զաւանութեան պատկանող և դպրոցական
դիպում ունեցող բաւարար թւով անձինք չգտնեն՝ կը նշանակեն
և դիպում չունեցող անձինք, եթէ համարեն ընդունակ գալմա-
գամների պաշտօնը կատարելու։

III. ԳՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՄԱՀՄԷԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԻԻԸ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Յօդ. 5. Վարչական պաշտօններ կարող են վարել կայսրու-
թեան մահմեդական և ոչ-մահմեդական հպատակները՝ իւրաքանչիւր
վիլայէթում գտնւած մահմեդականների և ոչ-մահմեդակ սնների թւի
համեմատութեամբ։ Ոչ-մահմեդական պաշտօնեաների թիւը ոստի-
կանական և ժանդարմերիական վարչութիւնների մէջ պէտք է որոշի
մնայուն վերահսկող յանձնաժողովի կողմից։

IV. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍԱՆՋԱԿՆԵՐՈՒՄ ԵՒ ԿԱԶԱՆԵՐՈՒՄ

Յօդ. 6. Սանջակների և կազանների վարչական Խորհուրդ-
ները, որոնք կազմւելու են ընտրւած և ex-officio նշանակւած ան-
ձերից, պէտք է գոյութիւն ունենան առաջւայ պէս և կառա-
րեն իրենց պարտաւորութիւնները 1286 թւին հրատարակւած
ընդհանուր նահանգապետութիւնների ընդհանուր կառավարութեան
օրէնքի 61-րդ յօդւածի և վիլայէթների մասին 1267 թւին հրա-
տարակւած օրէնքի 77 և 78 յօդւածների հիման վրայ, որի համե-
մատ այդ Խորհուրդները կազմւել էին։ Նրանց իշխանութեան սահ-
մանը որոշւած է վիլայէթների ընդհանուր կառավարութեան մա-
սին օրէնքի 90, 91 և 92 յօդւածներով և ընդհանուր կառավա-
րութեան վերաբերեալ 1293 թւի հրահանգի 38, 39 և 40 յօդ-
ւածներով։

V. Ն Ա Հ Ի Ա Ն Ե Ր

Յօդ. 7. Նահիաները պէտք է կազմեն համաձայն 1287 թւի
վիլայէթների ընդհանուր կառավարութեան օրէնքի 94—106 յօդ.
և 1292 թւի մարտի 25-ի Համայնական Կառավարութեան վերա-
բերեալ օրէնքի 1—19 յօդւածների։

Յօդ. 8. Ամեն մի նահիա ունենալու է, իբրև կառավարիչ, մի միւլդիր և մի խորհուրդ, բաղկացած 4 անդամներից և ընտրւած տեղական բնակիչների ձեռքով: Այդ խորհուրդը իւր անդամների միջից պէտք է ընտրի մի միւլդիր և մի պատգամաւոր: Միւլդիրը պէտք է պատկանի այն անձերի դասակարգին, որոնք կազմում են ազգաբնակութեան մեծամասնութիւնը, իսկ պատգամաւորը — փոքրամասնութեան: Խորհուրդը պէտք է ունենայ քարտուղար:

Յօդ. 9. Եթէ նահիայի բնակիչները պատկանում են միեւնոյն դասակարգին, այսինքն միեւնոյն ազգութեան՝ այն ժամանակ խորհրդի անդամները պէտք է բացարձակապէս ընտրւեն նոցա միջից: Եթէ համայնական շրջանի ազգաբնակութիւնը խառն է՝ այն ժամանակ փոքրամասնութիւնը պէտք է ունենայ իւր ներկայացուցիչ, իւր համեմատական նշանակութեան համաձայն, այն պայմանով, որ փոքրամասնութիւնը բաղկացած լինի ոչ պակաս քան 25 տնից:

Յօդ. 10. Նահիաների միւլդիրները և քարտուղարները ռոճիկ պէտք է ստանան:

Յօդ. 11. Նահիական Խորհուրդների անդամների կանդիդատները պէտք է համակերպւեն այն պայմաններին, որոնք նախատեսւած են Համայնական Կառավարութեան օրէնքի 18-րդ յօդաձեռով:

Յօդ. 12. Իմամները, քահանաները, ուսուցիչները և պետական ծառայութեան մէջ գտնւած բոլոր անձինք չեն կարող միւլդիր ընտրւել:

Յօդ. 13. Իւրաքանչիւր տարի խորհրդի կազմութեան կէսը նորոգւում է: Թէ անդամները, թէ միւլդիրը կարող են վերընտրւել:

Յօդ. 14. Միւլդիրի և նահիական Խորհուրդների իշխանութեան սահմանը որոշւած է Համայնական Կառավարութեան օրէնքի 20 — 27 յօդաձեռներով:

VI. ԳԻՒՂԱՆԵՐԸ ՆԱՀԻԱՆՆԵՐՈՒՄ

Յօդ. 15. Նահիայի ամեն մի գիւղը պէտք է ունենայ իւր մուխտարը: Եթէ գիւղը բաղկացած է մի քանի թաղերից և բնակիչների մի քանի դասակարգերից, այն ժամանակ ամեն մի թաղ և ամեն մի դասակարգ կ'ունենայ իւր մուխտարը:

Յօդ. 16. Ոչ մի գիւղ միաժամանակ չի կարող գտնւել երկու նահիաների իրաւասութեան տակ:

VII. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Յօդ. 17. Իւրաքանչիւր նահիպացում կը լինի աւագների խորհուրդ, մոլիտարի նախագահութեամբ: Այդ խորհրդի պարտաւորութիւնն է խաղաղութեամբ վերջացնել բնակիչների մէջ եղած աջն վէճերը, որոնք նախատեսւած են դատաստանական օրէնքներով:

Յօդ. 18. Հաշտարար դատաւորների պաշտօնը յանձնւում է գիւղերում աւագների խորհրդին և համայնքներում—համայնական խորհուրդներին: Նոցա իրաւասութեան ծաւալը և աստիճանը որոշւած են օրէնքով:

Յօդ. 19. Պատաստանական տեսուչները, որոնց թիւը չի կարող 6-ից պակաս լինել (հաւասարապէս կէսը մահմեդական, կէսը ոչ մահմեդական), նշանակւում են ամեն մի վիլայէթում՝ դատաւարութիւնը արագացնելու համար բոլոր ընթացիկ գործերի վերաբերմամբ և հսկելու բանտերի վիճակի վրայ, համաձայն քաղաքացիական դատարանների կազմութեան մասին եղած օրէնքի II-րդ գլխի: Ամեն մի տեսուչութիւն միաժամանակ կատարւում է երկու տեսուչների—մահմեդականի և ոչ-մահմեդականի—կողմից:

VIII. ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 20. Ոստիկանական պաշտօնեաները ընտրւում են կայսրութեան մահմեդական և ոչ-մահմեդական հպատակներից, համաձայն վիլայէթի երկու դասակարգի բնակիչների համեմատական թւին:

Յօդ. 21. Իւրաքանչիւր վարչական բաժանմունքի համար, զրա մէջ հաշւելով և նահիան, կը նշանակուեն բաւարար թւով պաշտօնեաներ: Նահիպացում ոստիկանութիւնը պէտք է ենթակայ լինի միւլի-րին և կոմիտարների գլխաւոր իշխանութեան տակ զանաւի: Նորա ղէնքը և համազգեստը ընդհանուր ընդունւած ձևով պէտք է լինեն:

IX. ԺԱՆԴԱՐՄԷՐԻԱՆ

Յօդ. 22. Ժանդարմէրիայի սպաները, ենթասպաները և գինւորները առնւում են լայսրութեան մահմեդական և ոչ-մահմեդական հպատակներից, համաձայն իւրաքանչիւր վիլայէթի մահմեդականների և ոչ-մահմեդականների համեմատական թւին: Ժանդարմէրիան պէտք է պահւի իւրաքանչիւր վիլայէթի գանձի հաշւով:

Ժանդարմների ռոճիկը պէտք է աւելի լինի, քան զօրքի զինւորների ռոճիկը, իսկ Ժանդարմերիայի սպանների ռոճիկը—հաւասար զօրքի սպանների ռոճիկին:

Յօդ. 23. Ժանդարմերիային է յանձնուած պահպանել կարգը և ուղեկցել պոստին:

X. ԳԻՒՂԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 24. Նահիական Խորհուրդը պէտք է ըն որի զիւղական ոստիկանութիւն ազգաբնականութեան զանազան դասակարգերից: Ոստիկանների թիւը որոշուած է Մնայուն Վերահսկող Ֆանձնաժողովը՝ համաձայն իւրաքանչիւր նահիայի կարիքների և միւղիւրի ղեկուցման, ինչպէս և վալիի առաջարկութեամբ: Նոցա համար համազգեստ և զէնք հայթայթուած է զինւորական դէպարտամէնտը:

XI. ԲԱՆՏՏԵՐ ԵՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐ

Յօդ. 25. Բանտերի կառավարութեան և նոցա վերաբերեալ գոյութիւն ունեցող կանոնադրութիւնները պէտք է խստութեամբ պահպանւեն:

Յօդ. 26. Նախնական հարցաքննութեան կոմիտէն, ղեկավարւելով ընդհանուր վարութեան վերաբերեալ հրահանգներով, հրաւիրուած է կատարել իւր պարտաւորութիւնները ամենաճիշդ կերպով:

XII. ՔԻՒՐԴԵՐԻ ՎՐԱՅ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ

Յօդ. 27. Քիւրդերի քոչերի համար կ'որոշեն առաջուց սահմանաժ տեղեր, և ուշադրութիւն կը դարձնի, որ թափառական ցեղերը չկարողանան որ և է վնաս հասցնել մօտակաջ բնակիչներին: Քիւրդ ցեղերի մի տեղից միւս տեղը չլեւելու ժամանակ նոյա կ'ուղեկցի մի սպայ, որ իւր կարգադրութեան տակ կ'ունենայ բաւական զօրեղ խումբ և Ժանդարմներ: Սպայի մօտ կը գտնուի մի ոստիկանական կոմիսար: Քիւրդերը պէտք է ներկայացնեն իշխանութիւններին երաշխաւորութիւն իրենց լաւ վարքի մասին: Անցաւիրների և զինաթափ անելու մասին եղած կարգադրութիւնը դործադրուած է և քիւրդերի վերաբերմամբ: Զուր և թափառական ցեղերին պէտք է առաջարկել բնակութիւն հաստատել այն տեղերում, որ ցոյց կը տայ կառավարութիւնը:

XIII. ՀԱՄԻԳԻԷ ՀԵԾԵԼԱԶՕՐՔԸ

Յօդ. 28. Ձէնք և համազգեստ կրելը պաշտօնավարութիւնից դուրս արգելւում է: Այդ շրջանից դուրս Համիդիէ հեծելազօրքը ենթակայ է սովորական դատարանների իրաւասութեան: Ամենամօտ ժամանակում կը հրատարակեն զինւորական կանոններ այդ հեծելազօրքի ծառայութեան մասին:

XIV. Կ Ա Լ Ի Ա Մ Ա Գ Ի Ե Ր

Յօդ. 29. Իւրաքանչիւր վիլայէթի կամ սանջակի գլխաւոր քաղաքում պէտք է հաստատուեն մասնաժողովներ կալւածագրերի վերաքննութեան համար: Այդ մասնաժողովները բաղկացած պէտք է լինեն 4 անդամներից — երկու մահմեդական, և երկու ոչ-մահմեդական, արխիւների զիրէկտորի կամ պետական կալւածների պաշտօնեայի նախագահութեան ներքոյ: Նոցա վճիռները կ'ենթարկուեն վարչական խորհուրդների քննութեան: Բացի դրանից, ամեն տարի Կ. Պոլսից կ'ուղարկուեն վիլայէթները չորս պատւիրակներ, հետազօտելու համար, թէ չեն գործւել արդեօք այնպիսի անկանոնութիւններ, որոնք վերաբերում են սեփականութեան խնդրին:

XV. ՀԱՐԿՆԵՐԻ ՀԱԻԱՔՈՒՄԸ

Յօդ. 30. Որպէս զի հարկերը հաւաքելու ժամանակ ոչ չգործադրւի, կը նշանակուեն յատուկ գործակալներ, որոնց չի տրւիլ իրաւունք պահանջել ուէն տա կամ ուտելիք, և որոնք ոչ մի գործ չեն ունենալ փողի հետ, այլ նոցա կը յանձնւի տալ զիւղերի և թաղերի բնակիչների կողմից ընտրւած մուխտարներին և հարկահաններին ցուցակներ, որոնց մէջ պէտք է մտցւած լինի, թէ իւրաքանչիւր բնակիչ ինչքան հարկ պէտք է վճարէ: Մուխտարների և վերոյիշեալ հարկահանների վրայ պարտաւորութիւն կը դրւի հաւաքել հարկերը և յանձնել պետական զանձարանը:

XVI. ՏԱՍԱՆՈՐԴԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Յօդ. 31. Տասանորդական տուրքի հաւաքումը պէտք է կատարւի կապալային սխտեմով: Առաջաց համազումար կապալը վերացւած է, և նրան պէտք է փոխարինէ ամեն մի գիւղում

առանձին՝ նորա բնակիչների անունից հարկ հաւաքելու սխաւէմը: Որ և է զժաւարութեան կամ տարաձայնութեան դէպքում, բնակիչները իրաւունք ունեն դիմել զատարաններին: Հարկադրիչ աշխատանքները վերացւում են, իսկ երկրի բերքերով և փողով վճարումը մնում է: Ժողովրդական լուսաւորութեան բիւջէն որոշւում է իւրաքանչիւր վիլայէթի համար առանձին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի ձեռքով: Արգելւում է ծախել պարտականի տուներ, նորան կերակրող հողը, երկրագործական գործիքները, տնային անասունները և հացահատիկները, նորա՝ պետութեան կամ մասնաւոր անձի ունեցած պարտքի համար:

XXII. ՄՆԱՅՈՒՆ ՎԵՐԱՀՄԻՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Յօդ. 32. Հիմնւում է Մնայուն Վերահսկող Յանձնաժողով Բ. Դրան մէջ մահմեդականի նախագահութեամբ և պէտք է բաղկանայ մահմեդական և ոչ-մահմեդական անդամներից՝ հաւասար թւով ու պէտք է հսկէ ուէֆորմների կանոնաւոր իրագործման վրայ: Դեսպանութիւնները կարող են յայտնել այդ յանձնաժողովին, իրենց պրագմանների միջոցով, իրենց բոլոր այն խորհուրդները, տեղեկութիւնները և ազդարարութիւնները, որոնք նոքա անհրաժեշտ են հտմարում՝ այս ակտով սահմանւած ուէֆորմներին և կարգադրութիւններին օրինական ոյժ տալու համար: Երբ Բ. Դուռը և զեսպանութիւնները միասին այն եզրակացութեան կը գան, որ յանձնաժողովը կատարել վերջացրել է իւր պաշտօնը՝ այն ժամանակ նա կը փակւէ:

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՇՔ ԿԸ ՄՅՅՆԻՆՆ ԸՆՃՈՐՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒՇՈՒՄԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՂ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՄԷՋ:

I. Բարձրագոյն կոմիտիսար ուէֆորմների գործադրութեան վրա հսկելու: Կառավարութիւնը կընտրի մի պաշտօնավար անձն, ամեն կողմից արժանաւոր, որ կը ստանայ բարձրագոյն կոմիտիսար (Միւլֆիէթիտ) կոչումը և կը գնայ զանազան տեղեր այն յատուկ նպատակով, որ հսկի ընթերմների գործադրութեան վրայ և նոցա կտարբել տայ: Այդ բարձրագոյն կոմիտիսարի բացա-

կայութեան կամ անընդունակութեան դէպքում, նորան պէտք է փոխարինէ մի ուրիշ բարձրագոյն մահմեդական պաշտօնեայ, որին կը նշանակի սուլթանը: Բարձրագոյն կոմիսարին կ'ուղեկցի նորա պաշտօնավարութեան ժամանակ ոչ-մահմեդական պատգամաւոր (մուաւին):

II. Ընդհանուր ներումն: Նորին կայսերական մեծութիւն սուլթանը ներումն է շնորհել 1895 թ. յուլիսի 23-ին այն հայերին, որոնք մեղադրուած են կամ դատապարտուած են քաղաքական յանցանքների համար: Այդ ներումը պէտք է տարածւի այդ թւից առաջ եղած բոլոր բանտարկեալների և դեռ բանտերում գտնւողների վրայ, որոնք մասնակից չեն սովորական քրէական յանցանքների:

III. Աքսորեալների վերադարձը: Աքսորած և իրենց հայրենիքից հեռացւած կամ ուրիշ երկիրներ գաղթած հայերը իրաւունք են ստանում վերադառնալ Թիւրքիա, եթէ հաստատուեն իրենց օսմանեան հպատակութիւնը և լաւ վարք ու բարքը:

IV. Անատոլիայի միւս նահանգների քրիստոնեաների վիճակը: Վերոյիշեալ սկզբունքների վրայ հիմնւած կարգադրութիւնները պէտք է մոցնեն ամեն տեղ, որտեղ ոչ-մահմեդականները կազմում են ազգաբնակչութեան մեծամասնութիւնը:

Նոյն այդ իրադէն Կ. Պոլսի տաճկական թերթերում (որոնց թարգմանութիւնը նաև Կ. Պոլսի հայոց թերթերում) պաշտօնապէս հրատարակեց ահա թէ ինչ ձևով.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՈՒՄ

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՍՆԵՐՈՒ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՐԱԴԷՆ

Հարկ չկայ յայտնել թէ օսմանեան պետութեան պաշտօնատարներուն ընտրութիւնը և անւանումը կը կատարւի յատուկ կանոններու համաձայն և կայսերական Խրադէօվ, զրութիւն մը որ կը բղխի թէ ներկայ գործադրեալ օրէնքներէն, թէ 1272 ձէմաղի-իւլ-ախըրի սկիզբը հրատարակած Բարենորոգումներու

Ֆէրմանէն և թէ 1255 Շաբան 26-ին Վեհ. Սուլթանին հօր
 դրախտաբնակ Սուլթան Մէճիտի կողմէ հրատարակած Խաթթը
 Հիւմայունի տրամադրութիւններէն: Ինչպէս որ ըստ այս դրու-
 թեան, օսմանեան կառավարութեան հպատակներէն որոնք որ կարող
 և ընդունակ են, ինչ ցեղի, ինչ դասակարգի ալ պատկանին, պաշ-
 տօններու մէջ ընդհանուրին նկատմամբ գործադրելի կանոնադրու-
 թեանց համեմատած գործածելնին՝ և օսմանեան հպատակ տղաք-
 ներուն ալ, առանց խարութեան, կառավարական դպրոցները լոկ
 քննութեան և տարիքի պայմաններուն հպատակելով ընդունելը
 խոստացւած և որոշւած էր, և, Կայսերական երկիրներուն ամեն
 մէկ կողմը, հարկ և հնար եղած բարենորոգումներ գործադրելով
 հպատակներուն վիճակին բարւոքման և երկրին զարգացման նպաս-
 տող տնօրինութիւններ ու օրէնքներ ի գործ կը դրէին, այսպէս ալ
 շնորհապարտ աչքով կը տեսնենք թէ Վեհ. Սուլթանը Իր գահակա-
 լութեան բարեբաստիկ օրէն ի վեր երկրին պէտքերուն համապա-
 տասխանող բարենորոգումներու և յառաջդիմութիւններու համար
 միջոցներ գործադրելէ թուէ մը դադար առած չունի, և Իրեն էա-
 կան փափաքն է որ Իր բոլոր հպատակները վայելեն լիութիւն արդա-
 րութիւն, ապահովութիւն, և զարուս պահանջներուն համապա-
 տասխանելիք եղանակով մը ստանան ուսում և կրթութիւն, ըլլան
 հարուստ և երջանիկ: Արդէն մինչև հիմա թէ դատական, թէ ոս-
 տիկանական և թէ ժանդարմացի յատուկ կազմակերպութեան
 մէջ մտցւած բարենորոգութիւնները և ընդհանուր լուսաւորութեան
 համար հաստատուած աստիճանական դպրոցները, երկաթուղիները,
 նաւահանգիստները, քարավանները և ասոնց նման ի լոյս եկած ան-
 համար հաստատութիւնները Վեհ. Սուլթանին խորհուրդներուն ապա-
 ցոյցներն են: Ինչպէս որ բոլոր կայսերական նահանգներուն մէջ,
 տեղական հանգամանքներու և բնակիչներու բնութեան համեմատ
 օգտակար բարենորոգումները աստիճանաբար գործադրելու վրայ են,
 այսպէս ալ, այս անգամ, որոշւեցաւ Անատոլիոյ մէկ քանի նահանգ-
 ներուն մէջ բարենորոգումներ ի գործ դնել, որոնք Դէսթուրի և Խաթ-
 թը Հիւմայունի մէջ պարունակւած տրամադրութիւններուն և կանոն-
 ներուն ամբողջական գործադրութիւնն են, և այս որոշումը ի գործ
 դրելու համար Վեհ. Սուլթանը Իրագէն շնորհել բարեհաճած է:

Այս բարենորոգումները հետեւեալներն են. 29 շէւալ 1287 թւականով նահանգներու ընդհանուր վարչութեան վերաբերեալ կանոնադրին գործադրութիւնը.— 25 մարտ 1292 թւականով Նահիէներու վարչութեան վերաբերեալ կանոնադրին յօդաճներուն գործադրութիւնը մինչեւ 27-րդ յօդաճը.— Նահիէներու մէջ, ի խթիցար մէճլիսի կոչւած դատարաններու կազմութիւնը, ընդ պաշտօնը պիտի ըլլայ, օրէնքին զծած սահմանին մէջ, հաշտարարութեամբ վճռել այն վէճերը, որոնք որոշւած են դատական օրէնքներու մէջ, և փութացնել դատերուն լուծումը.— Աեց հաշտարարական քննիչի անւանումը, որոնք պաշտօնը պիտի ըլլայ բանկտերուն վիճակին վրայ հսկողութիւն ընել.— Ոստիկան և ժանդարմա ընտրել տարբեր տարբեր ցեղերէն, իւրաքանչիւր նահանգի բնիկներուն թւին համեմատութեամբ, ըստ այն յատուկ կանոնադրին որ, ժամանակաւ, որոշւելով, կաշսերական կուսակալութիւններու և ժանդարմայի պաշտօնէութեան մէջ կը գործադրուի. — Նահիէ պէքճիլէրի տնուն պահապաններու պէտք եղած թւով գործածումը, Գէսթուրի մէջ գործադրւածին համեմատ.— Անոնց զէնքերուն և համազգեստներուն սահմանումը որ Բ. Դրան կողմէ պիտի կատարուի.— Բանտերու և արգելարաններու (թէֆկիֆ-հանէ) վերաբերեալ կանոնադրին անթերի գործադրութիւնը, որ նախապէս արդէն հրատարակւած էր.— Նախաքննիչ մարմինն իր պաշտօնը կանոնաւորաբար կատարելու պարտաւորութիւնը հետեւելով 11 և 12-րդ յօդաճներուն, որոնք զբւարձ են նահանգներու ընդհանուր վարչութեան հրահանգին մէջ.— Որպէս զի քիւրդ աշիրէթները Եալլագէ և Գըշլագ երթալու միջոցնին, իրենց անցուղարձին վրայ գտնուող երկիրներուն վնաս չկարողանան պատճառել, նախապէս որոշուիլք եղանակի մը համեմատ զինուորներու ու ժանդարմայի հսկողութեան տակ անոնց տեղափոխութիւններուն կատարուիլը.— Անցագրի և զէնք կրելու մասին հրատարակւած օրէնքներուն քիւրդերուն նկատմամբ գործադրուիլը.— Որպէս զի մնայուն բնակութեան վարժելին, կառավարութեան կողմէ թափառաշրջիկ քիւրդերուն հող բաշխուիլը.— Միմիայն հրահանգի յատուկ ժամանակներու մէջ, համիդիէ հեծելազօրքերուն զէնք և համազգեստ կրելը.— Անոնց զինւորական ծառայութեան մանրամասնութիւններ

քուն մասնաւոր կանոնադրով մը սահմանելը. — Կազմութիւն չորս անձէ բաղկացեալ մասնախմբի, որ դէժքէրը խազանիի տեսուչին նախագահութեան տակ, սեփականութեան թուղթերը (եմլաք սէնէդաթը) պիտի քննէ, և եթէ հողային սեփականութեան գործերու մէջ ապօրինութիւններ գործւած կան, զանոնք ուղղելու համար ամեն տարի Պոլիսէն գաւառները չորս պաշտօնեայի ուղարկումը. — Ժողովրդին կողմէ մուխթարներու և գաւազիմալներու ընտրութիւն, որոնք տուրքերու գանձումը պիտի կատարեն և գանձւածը պիտի յանձնեն մալ սանդըզներուն. Աշարը զիւզ զիւզ իլթիգամի եղանակով աճուրդի հանւելով պիտի տրւի. — Տարհապարհակ (անգարեա) աշխատութեան բարձումը որ արդէն ջնջւած ըլլալով, բանւորները պիտի հայթհայթեն, ըստ հանրօգուտ շինութեանց նախարարութեան կանոնին, կամ անձամբ աշխատութիւն կամ անոր զբամական փոխարէնը. — Անհատական կամ պետական առնելիքներու համար պարտապանին տանը, իր ապրուստին հարկաւոր հողին, գործիքներուն, տաւարին, հետաքուին վաճառումը, ըստ առաջնոյն, արգելւած կը մնայ:

III

ՀԱՅՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 18-ից, այն է Կ. Պոլսի հայկական մեծ ցոյցը և արիւնհեղութիւնները սկիզբ եղան զրեթէ ամբողջ Տաճկա-Հայաստանում անգէն հայերի մասսային կոտորածների, կատարւած թիւրք ամբոխի և զինւորների ձեռքով, անկասկած տաճիկ կառավարութեան հրամանով կամ նորա զրդմամբ ու խրախուսանքով:

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի կոտորածին՝ այդ մասին Կ. Պոլսի մեր յատուկ թղթակիցը մանրամասն տեղեկութիւններ տւեց, իւր նամակներով 20-ից և 24-ից սեպտեմբերի: Այդ նամակների շարունակութիւնը ընթերցողները կը գտնեն ներկայ համարում:

Անցեալ անգամ մենք յիշատակեցինք նաև Տրապիզոնի կոտորածը, որի մասին մանրամասնութիւններ դեռ ևս չունէինք: Տրապիզոնով սկսուած են մասսային կոտորածները բառիս իսկական մտքով:

ու մի ապստամբութիւն ժողովրդի կողմից զինւած թիւրքերը զօրքերով ուղղեկցած կամ այլապէս, ուղղակի յարձակուում են հայերի վրայ՝ գաղտնի որոշւած օրը և որոշ ժամերին, երբ հայ ժողովուրդը իւր առօրեայ գործերով էր զբաղւած:

Առաջին օրինակը այդպիսի մասսային կոտորածների տուեց Տրապիզոնում, սեպտեմբերի 26-ին: Այդ կոտորածից յետոյ, նման կոտորածներ տեղի ունեցան Տաճկաստանի հայաբնակ շատ տեղերում, որ պիտի թւենք ներքե: Ներկայ սերունդը երբեք ականատես չէր եղած մի այսպիսի բարբարոսութեան: Այդպիսի դէպքեր մեր սերունդը չիշատակւած է տեսել միայն անցեալ դարերի հայոց և Տաճկաստանի այլ քրիստոնեայ ազգերի պատմագրութիւնների մէջ, և նոցա վերագարձը արդէն այլ ևս անհնարին էր կարծւում, չնայած շատերի նախագուշակութիւններին:

Ներկայ սպանութիւնները կրկնութիւններ են Սասունի կոտորածների. բայց Սասունի մէջ յարձակողը և կոտորած անողը միմիայն տաճկական կանոնաւոր և անկանոն (համիդիէ) զօրքն էր. իսկ այժմ՝ կոտորածները կատարւում են մահմեդական ժողովրդի ձեռքով՝ կառավարութեան ակնյայտնի կամ ծածուկ թելադրութեամբ, շատ անգամ զօրքի պաշտպանութեամբ, բայց միշտ նախագծած ծրագրի համաձայն:

Կոտորածների բոլոր մանրամասնութիւնները և զոհերի թիւը այս ժամին որ մենք գրում ենք (10 նոյեմբ.) դեռ ևս լաւ յայտնի չեն, բացի Կ. Պոլսի և Տրապիզոնի, մասամբ նաև Երզնքումի կոտորածներից: Մնացածների մասին դեռ ևս միայն կարճ տեղեկութիւններ կան, որ և կը թւենք ներքևում:

Սկսենք Տրապիզոնից, որը կազմակերպւած կոտորածների տիպար կարող է համարւել:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏՐԱՊԻԶՈՆԻ կոտորածների մասին առաջին մանրամասնութիւնները սկսեցին մեզ հասնել Բաթումից, տրապիզոնցի փախստականներից: Դոցանից ոմանք եկան նաև Թիֆլիս, որոնցից երեքը, որոնք Տրապիզոնում

Վ) Տրապիզոն Ս. ծովի վրայ, Բաթումից ուղիղ զծով 160 վերստ հեռու: Բնակիչներ ըստ տաճկական պաշտօնական թւերի՝ մահմէդական

էին կոտորածի ժամանակ, մեզ պատմեցին եղելութիւնները մանրամասնօրէն:

Կոտորածը սկսեց մեր հաշուով 11-ին կամ 11¹/₂-ին, տաճկական հաշուով 5 ժամին: Նշանը տրւեց փող (պսոռզան) հնչեցնելով: Կոտորելը տեւեց 2 ժամ, որից չնոսր սկսեց հալերին կողոպտելը: Կոտորածի կենտրոնատեղը եղել է Մէջդանը (զլխատրհրապարակ) ուր թէ թուրքեր և թէ հալեր խանութներ ունեն: Բոլոր խանութների թիւը աչդտեղ կը լինէր մինչ 150, որից 45—45 հալ, ամեն միւսում 2—3—4 հոգի:

Ջօրքը և տաճիկ ժողովուրդը (որի մէջ և շրջակա գիւղերից եկածներ) սկսեցին դալ դէպի Մէջդանը քաղաքի հինգ կողմերից՝ հինգ խմբերով, ամեն մէկը կոտորելով ճանապարհին պատահած հալ-լուսաւորչականներին, առաջնորդութեամբ չատուկ մարդկանց (որ պնդում են թէ լուներ էին), որոնք ցոյց էին տալիս թէ պատահածներից որոնք են հալ-լուսաւորչականները: Խմբերը եկան աչս փողոցներից կամ թաղերից՝ Չարսից, Գիւղելի-սարալից, Ննի-Ջումալից, Պէս-Թեսպէից, Որթա-սարալից (դատարան):

Կոտորող խմբերի չտեսից կանգնած էին զօրքեր, հաճիկները կրում էին սրեր՝ փալա, դարաղուլախ և կամ մարտինի հրացաններ:

Կոտորածը անողորմ էր. փողոցներում եղած հալերը, որոնք չէին սպասում մի աչդպիսի արհաւիրքի, բնականապէս անգէն էին, և միաչն աշխատում էին փախչել, որ սակաչն ամենքին չէր լաջողում, մանաւանդ որ կոտորող խումբերը գալիս էին քաղաքի զանազան կողմերից: Կալին փախչողներ դէպի ծովափը, որ նաւերի և նաւակների վրալ ազատեն. բաց տաճիկները վրալ հասան և նոչն իսկ նաւակների մէջ կոտորած արին. կալին փախչողներ դէպի Փրանսիացոց ուսումնարանը, որը հարիւրաւոր մարդիկ պատուարեց, Փրանսիական հիւպատոսի հովանաւորութեամբ, հիւպատոսը իւր քարտուղարի և մի դաւաղի ուղեկցութեամբ, բաղմութեան միջից անցնելով՝ գնաց ու նստեց մի աթուռի վրալ Գումուլդի առաջ (որ մի թաղի ոստիկանատուն է) կոտորածը ղիտելու համար:

Կոտորածի օրը եկած էր աւստրիական լուգի շոգենաւ, որի բերած նամակները բաժանելու միջոցին, աջ են տալի (առանձին պոստատան) առաջ, որ Մէջդանի վրալ է, շատերը եկել էին նամակներ ստանալու. նոցա մէջ եղած հալերը կոտորեցին: Կոտորածներ եղան թէ փողոցներում և թէ տներում:

մատ 20.000, Յոյներ՝ 9000, Հալեր՝ 8000 հոգի, Եւրոպացիք և ալ ցեղեր 1500 հոգի: Հալերից 6.800 լուսաւորչական, 1000-ը կաթոլիկ, 200-ը բողոքական: Աչդ թւերը մօտաւորական են և ցոյց են տալիս որ աչդ քաղաքում հալերը կաղմում էին ընգհանուր թւի հինգերորդ մասը: Մի ալ աղբիւրի համաձայն՝ Տրապիզոնի բնակիչների թիւը ոչ թէ 38 հազար է ալ 50 հազար:

«Կոտորածը վերջացաւ երբ նորից փողը հնչեցին Մէլքանում, որից չետոյ 3 ժամ տևեց կողոպուտը թէ խանութներում և թէ տնտեսում—Մէլքանում, Չարսիում և այլն:

Ապահուածներին տաճիկները հաւաքել էին տալիս սալերով, շատերին ծովը նետեցին: Ինք մասամբ տարւեցին հալոց գերեզմանատուն, ուր մեծ փոսեր փորեցին, ամեն մէկը մինչ 7 հոգու համար: Ծովը նետածներին ալն դիակները, որոնք ջրի երես էին զուրս գալիս՝ հալիւր տանում էին գերեզմանատուն:

Կոտորած չեղաւ քաղաքի միայն հալաբնակ քիչ մասերում՝ Ենի մահալը (բոլորը հալ), Պաշիկ Մէլքան (հալ) և Խաչ-բագ (հալ):

Կոտորած հալերի թիւը պէտք է որ 700-ից պակաս չլինի:

Քաղաքի ալն փողոցները, ուր կապին զուտ կամ ալ ազգերի հետ խառը հալ բնակիչներ և ուր կոտորածներ տեղի ունեցան, հետեւեալներն են. Արաֆիլ-բուլի փողոց (բնակիչներ տաճիկ և հալ, առաջին չիւլաձները մեծամասնութիւն են կազմում), Ենի Ջումա (տաճիկ, չոյն, հալ), Չէլթունլուղ (չոյն և հալ), Ֆրէնդ-մահալէսի (չոյն, հալ և եւրոպացիք), Հաջի-Աասում փողոց (հալ և թուրք), Չեմուխլի (չոյն և հալ), Սարխոշ-օղլու բախչա (հալ), Նոր-Հողերը (հալ և տաճիկ), Իսկենդեր-փաչա փողոց (չոյն և հալ), Թաւանլի (տաճիկ և հալ), Թեքի-մահալ (տաճիկ և հալ), Թեկէ-մահալը (տաճիկ և հալ):

Քաղաքի մնացած փողոցները, ուր կոտորած և կողոպուտ չկար, որովհետև հալաբնակ չեն, տեքա են Ղաբաղ-մէլքան (տաճիկ), Ֆարուս (տաճիկ), Սոթխա (չոյն և տաճիկ), Ղալա-իչի (տաճիկ), Իմարէթ-մահալ (տաճիկ), Քինդինար (տաճիկ), Ուչ-կուլլէ (տաճիկ), Դաբախանա (տաճիկ):

Կոտորածից պիտի զերծ մնալին ուրիշ քրիստոնեաներ, թէև եղան թւով շատ քիչ սպանուածներ նաև չոյներից ու հալ-կաթոլիկներից: Բաց ալք քրիստոնեաներն ևս վախից ու սարսափից փախան ու պաշտպանեցին ու ինչպէս կարող էր:

Կոտորածից զերծ պիտի մնալին նաև հալ կանաչք և երեխաներ, թէև զոհեր եղան նաև զոցանից:

Այն հալ-լուսաւորչականներին, որոնք լաջորդ օրերը ցանկացան զուրս գնալ Տրապիզոնից, տաճիկ կառավարութիւնը մերժեց անցագիր տալ, իբր թէ հսկողութեան տակ են որպէս ապստամբներ: Մեր կողմերը (Բաթում) առաջին լուր բերողները եղան մի խումբ չոյներ, Տրապիզոնից և գիւղերից, որոնք ականատես էին եղած Տրապիզոնի կոտորածին և անգլիական նաւով հոկտ. 2-ին Բաթում էին հասել:

Կոտորած անելու մի առաջին փորձ եղած էր ուրբաթ օր Սեպտեմբերի 22-ին. երեկոյեան ժամ 9-ին: Բաց անպաշտ, որովհետև հալերը տնտեսումն էին: Խուժանը փորձել էր մտնել Ենի մահալը, բաց զօրքը չէր թողել, և բացի ալք՝ տաճիկների համար փոսնդաւոր կը լինէր ալք:

դուռ հալկական թաղը մտնել՝ երբ տղամարդիկ տանն էին, ուր ամեն տեղ զէնք կար։ Նիւ-մահալը մի ճեղ և երկար փողոց է, դէպի վեր բարձրացող։ հալերը պատուհաններից կարող էին տաճիկներին մեծ ջարդ տալ։

Նրկու օր դորանից առաջ չորեքշաբթի 20 սեպտ. Տրապիզոնում մի-երկու հալերի կողմից փորձ էր եղած սպանելու վանի նախկին նահանգապետ Բահրի-փաշային, որ վանից գալով՝ Տրապիզոնով պիտի անցնէր Կ. Պոլիս։ Բահրի-փաշան աղատել էր սահաճ թեթև վէրքով։

Պնդում են որ կոտորածի օրը (26 սեպտ.) Կ. Պոլսից գալով շոգենաւով ամի էին իջել 300 հոգի սոֆթաներ, որոնք ուղարկւած են եղել կոտորածը կազմակերպելու համար։ Մեր անմիջական աղբիւրները, սակաւն, ալ չեն հաստատում, թէ և հաւանական ենք գտնում։

Հատուտ է ալս իրողութիւնը, որ սեպտեմբերի 22-ի անլաջող փորձից չետո՞ տեղական նահանգապետը համոզւոյրել է հալերին որ իրենց խառնութիւնները բանան և որ ոչ մի ահ չկալ։ Եւ հալերը հաւատացել էին...

Առաջնորդարանը և հալոց ղալոցները խնաւեցին։

Կոտորածի օրը վաղ առաւօտը Բաթումից Տրապիզոն էր եկել «Ազու») չոքենաւը, ուր միայն չորս հալեր ալ օրը կարողացան ապաստան գտնել։

Նահանգապետը կոտորածի օրը նստած է եղել հեռագրատանը և թոյլ չի տւել որ և իցէ հեռագիր տան։

Ականատեսները պատմում են նաև, որ տեղական իշխանութիւնները՝ պաշտպանելու արդեօք թէ ալ ցանկութիւններով՝ կոտորածից չետո՞ մօտ 500 հոգի տարան քաղաքալին բանտը, 200 հոգի հալոց ակումբը և 150 հոգի խաներից մէկը։ Առաջին օրերը ճոցա տրւում էր ամենաշաննչան քանակութեամբ հաց, իսկ չետո՞ ղաղարեցրին որ և է ուտելիք տալ։ Նոցա մէջ եղան զէպքեր ինքնասպանութեան. մէկը (բողոքակոսն Արշակ Ֆիլիսեան) բանտի վերին չարկի պատուհանից չրեն բալը գլորեց և մեռաւ. զահեծի Սհաննէս չկարողանալով տանել իւր աչքի առաջ պատահածները՝ խելագարեց։

Շատ թէ քիչ կրթւած դասակարգից ձերբակալեցին 60 հոգի, որոնք մեղադրւում են թէ ճոքա ղրդել են ժողովուրդը զէպի ապստամբութիւն։ Կառավարութիւնը մտադիր է ճոցա դատելու զինուորական օրէնքներով։ Նոցա մէջ էև պ. Շահրիկեան փաստաբանը, մէկը քաղաքի ամենաառաջաւոր հալերից, 1892 թւականի կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ Տրապիզոնի պատգամաւորը։

Բոլոր խանութների ապրանքները, որպէս և սները մինչ վերջին ծալր կողոպտւած լինելով՝ ժողովուրդը մնացել է անտէր անօռնական, մանաւանդ որ տաճկի հետ ամեն չարաքերութիւն կտրւած է և անհնարին։

Կոտորածներ և աւերումն էր Տրապիզոնի նահանգի գիւղերում։

Տրապիզոնից կոտորածը, աւերումը և կողոպուտը տարածւեց նորա շրջակայ գիւղերի հալ-լուսաւորչականների վրայ, այն է՝ Զեփանոս (բուլբուրը հայ, 2-3 տուն տաճիկ, ալբաւած), Կրոմիլա (հայ և լոյն), Աղբիթ (թիւրք, լոյն, հայ), Թոփալլի (հայ), Դեղի-Բալթա (հայ), Անիֆա (հայ), Թոց (հայ և մի քանի տուն տաճիկ), Կոգոնա (տաճիկ և հայ), Պարեան (հայ), Սոփուղ-սու (լոյն և հայ), Նոխաճանա (հայ և տաճիկ), Զիզագոս (հայ և տաճիկ), Կոռքի (հայ, ալբաւած), Վերանա (հայ, ալբաւած), Արդալիա (տաճիկ և հայ, մասամբ կողոպուտած)։

Զերծ մնաց միայն Մալա հայ գիւղը։

Գիւղերում կոտորածների մէջ էին երեք քահանայ (Կրոմիլալի, Նոխաճանալի և Վերանալի)։

ԱԳ-ՍԱՐ, որ Ատաբաղարի մօտերն է, Պոլսից շոգեկառքով մի քանի ժամ հեռու։ Կոտորած եղել է սեպտեմբերի 27-ին, երբ հայերը իրենց սովորական գործերովն էին։ Կոտորածի ժամանակ 100—150 թիւրք ջարդուկ էին, իսկ հայերի կորուստը զեռ մեզ չալտնի չէ։ Ոսկորները, կոտորւանքները ածել են հորերը, սրտնցից չեռող սկսել են հանել։ Տեղեկագիրը տրեց պատրիարքարանին։

ԲԱՂԷՇ (ԲԻԹԼԻՍ)։ Մասնաւոր հեռագրով Կարաուրդանից հոկտեմբերի 18-ից, տեղեկութիւն հկաւ թէ Բիթլիսում չարձակումն գործեցին հայերի վրայ։ Տաճկական զեկուցումների մէջ ասւած է թէ Բաղէշում իբր թէ սպանւած են 163 տաճիկ։ Աւելի ուշ ոչ-տաճկական տեղեկութիւնների համաձայն սպանւածների ընդհանուր թիւն է 700 հոգի։

ԴԵՐԶԱՆ (Մարաշի շրջան) ամբողջապէս աւերակների կոչալ է փոխարկւած։

ԲԱՍԷՆ գաւառի հինգ գիւղ պաշարման գրութեան մէջ են։ Հաղորդակցութիւնը հայերի հետ ընդհատւած է։

ԴԻԱՐԲԵՔԻՐ, նահանգ։ Տաճիկ կառավարութեան հետևապէս ոչ-արժանահաւատ տեղեկութիւններով 25-ից հոկտ., Լիււսիկում հայերը չարձակեցին ¹⁾ պահակների վրայ, սպանեցին մի քանի մահմեդականների և ալբեցին բազարը։ Դէլլի Նիւսի Ա. Պոլսի թղթակիցը Նոյեմբերի 8-ին հեռագրեց թէ՝ «Հաստատւած է որ Դիարբէքիւրում 5000-ից աւելի մարդ է սպանւած։ Ֆրանսիական հիւպատոսը հեռագրել է, որ ինքը և ուրիշ ֆրանսիական հպատակներ վտանգի մէջ են»։

ԲԱԲԵՐԴ ²⁾։ Կոտորած հոկտ. 1-ին (նոր տոմարով 13-ին)։ Բաբերդի

¹⁾ Բաբերդ կամ Բալբուրդ, Էրզերումի նահանգում, Տրապիզոնի և Կարինի միջև. 10.000 բնակիչ, որից մեր տեղեկութիւններով 300 տուն կամ մօտ 2000 հոգի հայ են։

²⁾ Պէտք է նկատել, որ տաճկական աղբիւրները ամեն անգամ սկըսում են նրանով, թէ հայերը չարձակում գործեցին։

կոտորածի մասին Դէլլի Նիւս Լրագրին Ռէպտերի հեռագրական գործակալութիւնը հեռագրեց նոր տոմարով հոկտեմբերի 15 ին.

«Բալբուրդի գաւառի բազմաթիւ գիւղերի բնակիչները հոկտեմբերի 12-ին իմանում են, որ Տրապիզոնի նահանգի Լազիստան գաւառի մահմեդական լաղ բնակիչների մի ստւար խումբ արշաւում է Բալբուրդի վրայ՝ հալերին կոտորելու նպատակով»:

«Երկրորդ օրը, հոկտ. 13-ին, 600 լաղերի մի հրոսակախումբ, զինւած մարտիկներ հրացաններով, վրայ է հասնում: Իսկոյն տեղական թիւրք բնակիչները կազմում են մի երկրորդ հրոսակախումբ և միանում լաղերի հետ, և ալփախով կազմում է 1000 հոգուց բաղկացած մի զինւած զուեդ: Այդ հրոսակները միաժամանակ լարձակեցին անխտիր բոլոր հալերի վրայ և սկսեցին կրակ տալ դպրոցները, աները և գոմերը: Այլուղ շինութիւնների մէջ եղածներէից ով փորձում էր փախչել՝ ստանում էր հրացանի գնդակների հարածներ: Բալց ալն երիտասարդ տղամարդիկ և կանաչք, որոնք ընկնում էին աւաղակների ձեռքը, ալբում էին և ցից հանում: Բաղմաթիւ կանաչք լլկեցան և չետու սպանեցին: Նոյն իսկ նոքա, որոնք ապաստանեցին եկեղեցիներում, իրենց միւս ընկերների պէս անխնայ կոտորեցին: Յարձակողները չետու կողոպեցին հալերի տները, վաճառանոցները, խեցին պաշարեղէնները և բռնեցով իրենց կանանց վրայ, որոնց լատկապէս ալղ նպատակով բերել էին, ուղարկեցին իրենց գիւղերը: Մօտ 150 հալեր ջարդեցին ալղ կոտորածի ժամանակ: Հաստատւած է որ գիւղերի բնակիչները մարդ ուղարկեցին Բալբուրդի կառավարչին օգնութիւն խնդրելով, և նա ուղարկեց միալն երեք ժանդարմ, որոնք հասան միալն կոտորածից չետու Յարձակողների շատերի անունները լատելի են»:

Դէլլի Նիւսի մի ալ տեղեկութեան համեմատ՝ Բալբուրդ կոտորել են բոլոր հալ հոգևորականներին և ուսուցիչներին:

ԽԱՐԲԵՐԻ: Նոյն գործակալութեան հեռագիր 6-ն նոյեմբ., Խարբերդում հոգևոր իշխանութեան երկիւղն արդարացաւ: Յուսալի աղբիւրից ստացւած տեղեկութիւններից երևում է, որ Խարբերդը (Մամուրէթ-իւ-Ալլիզ նահանգի գլխաւոր քաղաքը) ամեն տեսակ բռնութիւնների վայր է դարձած: Սպանւած են 700 հոգի: Ամերիկական հոգևոր միախալի տունը մոխրի կոյտ է դարձած, բալց միախոնարներին աջողեւ է ազատուել: Խարբերդի անցքերի պատճառով Կ. Պոլսում սպասում են ամերիկական նաւախմբի դալուն:

ԴԵՐՍԻՄ և ԱԼԱՇԿԵՐՏ գաւառների շրջակայքում, նոյն գործակալութեան հեռագրի համաձայն 6 ին նոյեմբ., քրդերի ձեռքով սոսկալի աւերածութիւններ են կատարւած:

ՍԻԻԱՍԻ ՆԱՀԱՆԳ: Նոյեմբերի 6 ին հեռագիրը Կ. Պոլսից հաղոր-

դեց, որ Գ ու Ր ու Ն՝ ու մ քիւրդերը պաշարել են 4000 հալերի: Սիււսում (Սեբաստիա) 500 հալերի: Մի ալ հեռագիր լալտնեց, որ Սիւսսի նահանգի հալոց գիւղերում կոտորածներ և աւերումներ են տեղի ունեցել: Մ ա Ր զ ու ա ն՝ ու մ և Ա մ ա ս ի ա լ՝ ու մ ¹⁾ կոտորած է եղել: Կենտրոնական իշխանութիւնները չեն ուրանում, որ Կ իւ Ր ի ն՝ ու մ հալերը երկու անգամ լարձակման են ենթարկւել քիւրդերի կողմից, բայց չալտարարում են, որ հալերը ետ են մղել լարձակողներին: Սպանւածների թիւը ցոյց չի տրւած:

ԽԱՐԴՈՒՆ՝ ու մ ²⁾ ընդհարում տեղի ունեցաւ. կոտորւեցին 800 մարդ: Ամերիկական միսիոնարներին պատկանող մօտ 10 շինութիւն կողոպտւած են և ալրւած:

ԵՐԶՆԿԱՅ ³⁾ Ալգտեղ կոտորած եղաւ հոկտ. 9-ին: Կոտորածի սկզբնաւորութեան մասին տաճկական աղբիւրները ալրպէս պատմեցին. Հալերը երզնգիւսում սպանեցին Կիրիլ Խոջա անունով մի հին ֆանատիկոսի, որը արհամարում էր քրիստոնեաներին և քաղաքակրթութիւնը: Մահմէդականների մէջ նա վալ՝ ու մ էր մեծ լարգանք: Ալղ սպանութիւնը նշան եղաւ նոր զաղանութիւնների թէ քաղաքում և թէ Բ ա ֆ ա ս է թ հալ գիւղում, որը բոլորովին կործանւեց:

Նոյնպէս տաճկական աղբիւրների համեմատ՝ անկարգութիւնների ժամանակ երզնկալում սպանւեց մի իմամ, որից լետոյ տաճիկները լարձակեցին հալերի վրայ և սպանեցին 50 մարդ, իսկ տաճիկներից սպանւեցին 10 հոգի:

ՍԻՐԻԱ: Նոյեմբերի 6-ին հեռագիրը հաղորդում էր որ Սիրիալում քրիստոնեաների դէմ թշնամական շարժումը տարածւում է: Հաղորդում են Հ ա լ է պ ի շրջակայքում կատարւած նոր կոտորածների մասին: Հալէպի մօտ համիդիէ անկախոն հեծելադօրքը ջարդել է մի քանի գիւղեր: Ալղ առիթով օտար հիւպատոսները պահանջել են իրենց համար զինւած պաշտպանութիւն: Փ ա ս ա լ՝ ու մ, Նոյեմբերի 3-ին արիւմահեղ ընդհարումներ են եղել, որոնց ժամանակ մի հետեակ վաշտ առանց գործողութիւնների է մնացած եղել: Ա լ ե ք ս ա ն դ Ր է տ տ ա լ՝ ու մ ⁴⁾ և շրջակայքում մեծ անհանգստութիւն է տիրում:

¹⁾ Արդեօք ալղ քաղաքներում թէ նոցա գիւղերւմ՝ մեզ դեռ. ևս տալոց լալտնի չէ: Ամասիան իրիս (տաճկերէն իշիլ-իրմակ) գետի վրայ, 15,000 բնակիչ ունի՝ տաճիկ, հալ և լոյն և մի տաանեակ տուն էլ եւրոպացի: Հալիւրի թիւը մեզ լալտնի չէ. դիտենք միայն որ եզ իտները ալղտեղ դպրոց ունին, ուր լաճախում են 200 հալ մանուկներ: Տաճիկները ունին 18 մեղրեսէներ 2000 սոֆթա ուսանողներով:

²⁾ Ալղ տեղը մեզ անծանօթ է

³⁾ Երզնկեան կամ երզնկալ, քաղաք Երզնկում: վիլայէթում, ունի 15,000 բնակիչ:

⁴⁾ Փասա՝ Ալեքսանդրիտալից դէպի հիւսիս: Ալեքսանդրիտալ նա-

ԷՐԶՆՐՈՒՄ: Էրզերումի մէջ եղաւ մեծ կոտորած, որ և սպասելի էր: Դեռ ևս երբ քաղաքի չէին Հաղար-աղա կարճ հիւանդութիւնից չեալ վախճանեց սեպտեմբերին, տաճիկները ալդ առթիւ կասկածներ տարածեցին հայերի մասին: Ալդ լուրը բոլորեց տաճիկների մոլեռանդութիւնը, և ճոքա սպասում էին արմար դէպքի հայերի վրա լարձուկումն գործելու համար:

Կոտորածի մասին որ պատահեց հոկտ. 18-ին (մի ամիս կ. Պոլսի մեծ ցոլից և կոտորածից չեալ), Շաքիր փաշան և Էրզերումի վալին հեռագրեցին ալուպէս՝ «Մի քանի երիտասարդ հայեր ներս խուժեցին Նահանգապետի տունը ու հրաձգեցին ժանդարմների գլխատրիս: Բալց վալի-պեցին և սպանեցին մի եմթասպալի: Խուզարկութիւնը սկսած է»:

Տահապետ աղբիւրները ալ դեպքի մասին հաղորդեցին. «Ոստիկանները հրաձգեցին, հայերին, որոնք ուղում էին ներս խուժել Նահանգապետի տունը և վիրաւորեցին մի քանիսին: Հետեց կռիւ, որի մէջ սպանւած են և վիրաւորւած 50 հոգի»:

Ապա Թիֆլիսում ստացեցին հեռագիրներ տւած Էրզերումում 23 հոկտ. և քաշած սահմանադրութիւն Կարաուրգանից 25 հոկտ.: Ահա ալդ հեռագիրը.

«Ամսիս (հոկտ.) 18-ին, կէսօրուայ ժամ 12-ին, զինուորական փողերի ձայները առաջնորդեցին դէպի Էրզերումի շուկան զօրքեր լիւով 2000 հոգի: Զօրքերը ամեն կողմերից շրջապատեցին հայերի խանութները և տները, ամենքին հրաձգելով և թող չտալով ոչ մէկին դուրս գալ կորդոնից: Մի-աժամանակ կոտորածը սկսեց բոլոր թաղերում՝ Թաւրիզքալի, Դիւրճի քալի, Սպալքաղարում, Աթմէլզանում, Չալխարում, Դիւլիխանում, Գիւլ-բաթոլում, և ամեն տեղ ուր հայերը բնակւում կամ առուտուր էին անում: Բացի ալն թաղերից, ուր եկեղեցիներն են և Սանասարեան վարժարանը: Հրաձգութիւնը և կոտորածը տեւեց մինչև գիշերուայ ժամ 12. զօրքերի ետևից գնում էին բաշիրողուկներ: Քսան հաղարաւոր խուժանը կողոպտում էր հալոց տներն ու խանութները, մի քանի թաղերում հրդեհներ գցելով, որը, սակալն, չնորհիւ մեղմ եղանակին, չտարածեց: Սպանւած են 809 հոգի, վիրաւորւած 500, շատ շատերն էլ անչալտացան»:

«Վարչութիւնը գիշերը տարաւ դիակները քաղաքից դուրս, պցելով ճոցա առաջուց պատրաստած փոսերի մէջ: 19-ին ալրիաղած կանաչք գտան 350 դիակ, 20-ին կրկին 200: Վնասը՝ մինչ 500.000 ոսկի: Մի քանի դպրոցների աշակերտներ վաղեցին եկեղեցում ամբողջ օրերով: Մսերեան դպրոցի երկու սեռից աշակերտները ազատեցին: Պարսից հիւպա-

ւահանդիստ քաղաք Միջերկրականի ափին, Աղանալի վիլայէթում, 1,500 բնակիչ:

տոսարանը ապաստան տւեց 500 հոգի հաշերի. բայցի ալդ, պարսից հիւպատոս խիսակ-խան ապաստան տւեց աւելի քան 300 ընտանիքներին:

«Էրզերումի շրջականերում կործանեցին աւելի քան 80 հազ գիւղեր: Մարդկանց կոտորելով՝ տանում էին տան իրեղէնները, վերջին հացահատիկը ու անասունը: Մի քանի տասնեակ հազար որբեր և թշուառներ սովի մէջ են, մեռնում են անօգնական: Կանաչք և մի քանի սղամարդիկ թաղում են սպանւածներին:

«Հոկտ. 22-ին երեկոցիան, զօրքերը մեծ սարսափ գցեցին, սպանեցին մաքսատան մօտ ևս 2, լետոյ 7 հոգու:

«Հաշերը փախչում էին տանիքների վրայով, ճոցանից մի քանիսին պաշտպանեց անգլիական հիւպատոսարանը, իսկ մեծ բաղմուժիւնը տանիքներից իրենց դցեցին պարսից հիւպատոսարանի բակը: Զօրքերը նոցա հալածեցին: Կանանց ընդունեց հիւպատոսի կինը, որը, չնաչաժ որ իւր որդիքը հիւանդ էին, նոցա մխիթարում և հանգստացնում էր: Պարսից հիւպատոս խիսակ-խան լացում էր, և, դառնալով զինւորներին՝ աղերսում էր անմեղներին չկոտորել:

Նորագոյն տեղեկութիւնների համեմատ, տրւած Էրզերումից, ալդ քաղաքի կոտորածի ժամանակ աւերւեցին (սպանութիւններ և կողբալուտներ ու հրդեհումներ) հետեւեալ հալաքնակ թաղերը. Չալգարա (որ գլուխում է տաճիկների թաղի շարքում), Մոմջի թաղ, Մահլի-գլուխ, Գիւլի-Ալազ, Գիլիկ-մահլա. չարձակման են ենթարկւած նմանապէս Գեօմրուկի ետեի շարքը, ամբողջ Ղաւազը, Ալի-փաշա, Թարխան-Սողախ, Բոշի-մահլա, Սուբաշի թաղ և ուրիշ տեղեր:

Իէլի-Նիւսում տալեց ականատեսի վկայութիւնը Էրզերումի կոտորածի մասին. նորա մէջ ասւած է թէ կոտորած են 1000 քրիստոնեակ և կատարւած անլուր բարբարոսութիւններ. հաջոյ գերեզմանատունը հոկտ. 22-ին թաղւեցին 521 հոգի:

Պարիզի «Temps» լրագրի ատելով՝ եւրոպական հիւպատոսների ղեկուցումներից երեւում է, որ Էրզէ, ումում զտնւած են 320 սպանւածներ, որոնց մէջ միայն 6 տաճիկներ են:

Նոյեմբերի 16-ին Էրզերումի մէջ կրկնւել է կոտորածը. սպանւած են 15 հազեր:

Աւսքանն են առ աչմմ աչն տեղեկութիւնները, որ կարելի էր ունենալ մինչ Նոյեմբ. 15-ը: Կոտորածները շարունակւում են, և արդէն իսկ սրտակոտոր լուրեր են հասնում Արձէշից, Խիզանից, Վանի շրջականերից, Անթապից և ալին: Ալդ մասին ղեկուցումը կը լինի զաւ ամիս:

IV

ՍԱԼԻՍԲԻԻՐԻԻ ԺԱՌԵՐԸ

1

Նոյեմբրի 9-ին (նոր տոմարով) չաբաթ օր, բրիտանական մինստր-նախագահ Սալթիլերի Լոնդոնի Պիլգրիմում տարժած քաղաքագլուխ Վիլկինի բանկէտում հետեւալ ճառն արտասանեց:

Պարոններ. Անցեալ տարւոյ ընթացքում մեզ մեծ հոգս էին պատճառում հեռու Արեւելքում տեղի ունեցած անցքերը ¹⁾: Ես յոյս ունեմ, որ այդ երկիրներում խաղաղութիւնը վերականգնած կը լինի, յոյս ունեմ, որ մեր բոլոր երկիւղները արեւելեան-ասիական անցքերի վերաբերմամբ՝ ի դերեւ կ'ենեն:

Տեղեկութիւնները արտաքին քաղաքականութեան շրջանից, առհասարակ, մեզ առանձնապէս չեն յուզում կամ անհանգստութիւն չեն պատճառում: Բայց հեռու արեւելքում տեղի ունեցող անցքերին մենք ամբողջ տարին հետեւում էինք մեծ հետաքրքրութեամբ: Այժմ կռիւլ վերջացած է: Եւ, հաւատացէք ինձ, ինչ էլ պատահէր այդ երկիրներում, զինուորական թէ առևտրական տեսակէտից, մենք միշտ ոչ թէ կ'ունենանք դիմադրութիւն ցոյց տալու մեր այն մրցակիցներին, որոնք կարող են երեւան գալ: (Մաքիաւորութիւններ):

Բայց կայ աշխարհիս մի ուրիշ մաս, ուր գործերի դրութիւնը այնքան հանգիստ և յուսալի չէ, որպէս հեռու Արեւելքում:

Հայաստան խօսքը ահա արդէն մի քանի ամիս է, որ զբաղեցնում է մեր մտքերը: Ձեզ յայտնի է արդէն որ ներկայ տարւոյ մայիսին երեք մեծ պետութիւնների դեսպանները, իրենց կառավարութիւններից ստացած հրահանգների հիման վրայ, առաջարկեցին Բ. Գրանը մոցնել օրէնքների մէջ մի քանի փոփոխութիւններ՝ պաշտպանելու նպատակով հայերին այն սարսափելի տանջանքներից, որոնք խորը կերպով յուզեցին Անգլիան: Այդ առաջարկութիւնները եղել էին մեր նախորդների ժամանակ:

¹⁾ Ակնարկը 1894—95 թւականի չին-կապոնական (ներկաւ ապրիլի սկզբին վերջացած) պատերազմի մասին է:

Երեք ղեկավարների պահանջների միտքն այն էր, որ քրիստոնեայ պաշտոնեականների մի որոշ թիւ մտցնէր վարչութեան մէջ, որ կառավարում է այն նահանգները, ուր հայերը մեծ թւով են ապրում: Ինձ շատ անախորժ է, որ պետութիւնները կարող են գալ Թիւրքիա՝ մի կրօն մի ուրիշ կրօնից աւելի պաշտպանելու ղիտաւորութեամբ: Կառավարելով մի այնպիսի ընդարձակ կայսրութիւն, որպէս բրիտանականն է, մենք հետեւում ենք անսպաճման անկողմնապահութեան սկզբունքին: Քաղաքներն թաղաւորում է մահմետականների աւելի մեծ թւի վրայ քան թիւրքաց սուլթանը: Մենք պարտազանց կը լինէինք, եթէ գերադասէինք մի կրօն մի ուրիշ կրօնին: Մենք միշտ ցանկացել ենք միատեսակ արդարութեամբ վերաբերուել դէպի երկու կրօնների ներկայացուցիչներն ևս:

Ես երջանիկ կը լինէի, եթէ Բ. Դրան արեւած առաջարկութիւնը խլէր բանակցութիւններից կողմնապահութեան որեւէ նշոյլ: Ես կարող եմ հաւատացնել մեր մահմետական հայրենակիցներին որ նոքա կարող են սպասել թաղուհու կառավարութիւնից նոյնպիսի անկողմնապահութիւն, որպիսին նոքա արդէն մի դարից աւելի վայելում են Հնդկաստանում:

Մայիսին արեւած առաջարկութիւնները՝ իրենց էական գըծերով ընդունւեցին սուլթանից: Ես աշխատեցի դիւրացնել այդ գործը՝ առաջարկելով խառն վերահսկող յանձնաժողով կազմակերպելու մի ծրագիր. բայց սուլթանը գերադասեց ղեկավարների առաջարկած խմբադրութիւնը իմինից: Եթէ այդ ղեկորմները իրագործէին, հայերը կը ստանային ցանկալի բարօրութիւն, խաղաղութիւն և հանգստութիւն: Բայց արդեօք նոքա կարող են իրագործուել:

Եթէ ինքը սուլթանը կարողանար համոզուել, թէ անհրաժեշտ է արդարութեամբ վերաբերուել դէպի հայերը, այն ժամանակ միւս և նոյնը կը լինէր, թէ զորպիսի թշնամի վրայ են գրւած նորա խօստումները: Բայց եթէ սուլթանը չի կամենալ արդարացի լինել և չի բարեհաճիլ վերաբերուել հայերին սրտակից կերպով, այն ժամանակ ամենալաւ օրէնքն ևս անօգուտ կը մնայ: Այն ժամանակից, որ գոյութիւն ունի Թիւրքիան, միակ միջոցը ներգործելու նորա վրայ — թէ մեզ և թէ բոլոր եւրոպական պետութիւնների համար — նոյնիսկ սուլթանի իրեն վրայ ներգործելն է:

Բայց եթէ սուլթանը չհամոզւի—իսկ Կ. Պոլսից ստացւած տեղեկութիւնները միտիթարական չեն—ուրեմն ինչով աչգ բոլորը կը վերջանայ: Այդ հարցին ես կը պատասխանեմ, որ թիւրքաց կառավարութիւնը, չնայելով պետութիւնների բոլոր դաշնագիրներին և խորհուրդներին, ինքն է գնում դէպի ճակատագրական անդունդը: Բայց չպէտք է մոռնալ, որ գոյութիւն ունի և մեծ պետութիւնների հեղինակութիւնը: Արդէն կէս դար առաջ մեծ պետութիւնները համոզւեցին, թէ անհրաժեշտ է կանոնաւորել թիւրքաց գործերը, և ես չեմ կարծում, որ նոքա այժմ այլ կերպ մտածէին: Թիւրքիայի անկման վտանգը ոչ թէ այն հեռւանքները կը լինեն, որ նա կարող է առաջ բերել Թիւրքիայի նահանգներում, այլ այն, որ հրդեհը կարող է տարածւել ուրիշ երկիրներում և ընդհանուր եւրոպական խառնակութեան պատճառ դառնալ:

Այդ կարծիքն ունենալով, մենք միշտ պաշտպանում էինք Թիւրքիայի ամբողջութեան սկզբունքը: Այդ վտանգը, սակայն, վերացւած չէ և ապագայում: Կարող է պատահել, որ որ և է պետութիւն չեա կը քաշւի ընդհանուր համաձայնութիւնից և կը կամենայ գործը իւր կերպ վճռել: Ես բաղդաւոր եմ, որ կարող եմ ասել թէ այդ չի պատահիլ: (Աղմ կալի ծափահարութիւններ): Ես կարծում եմ, որ պետութիւնները միաբան կը լինեն՝ ընդհանուր եւրոպական գործի շահերը ի նկատի ունենալով: Մի ուրիշ վտանգ կարող է առաջանալ սուլթանի խորհրդատուներից, եթէ նոքա կ'երևակայեն, թէ կարող են ամեն բան անպատիժ կատարել:

Բայց դա մեծ մոլորութիւն կը լինէր: Ես կարծում եմ, որ պետութիւնները վճռեցին Թիւրքիայի վերաբերմամբ միաբան գործել: (Ծափահարութիւններ): Թէ ինչպէս կը գործեն նոքա, ես չեմ կարող նախագուշակել—եւս չեմ կարող գիտենալ, թէ ինչ կը պատահի,—բայց ոչ ոք չի կարող ասել, որ պետութիւնները խլացել են դէպի մարդկանց տանջանքները: Քանակցութիւնների ժամանակ ոչինչ ինձ այնքան չապշեցրեց, ինչպէս պետութիւնների հաստատ որոշումը՝ ընդհատել իրենց միաբան գործունէութիւնը՝ միակ ընդհանուր և ազնիւ նպատակին հասնելու համար—քրիստոնէութեան խաղաղութեան: (Ծափահարութիւններ): Դա շատ ուրախալի երևույթ է: Ես յոյս ունեմ, որ

գործունէութիւնների այդ սեստեմը վերջ կը դնի զինա-
ւորւած խաղաղութեան:

2

Լորդ Սալսբիւրիի վերը առաջբերած ճառը, սուլթանի կամքի հա-
մաձայն՝ իրեն հեռագրեց իւր ամբողջութեամբ. և նա, սուլթանը, շտա-
պեց այդ ճառին պատասխանել մի նամակով: Լորդ Սալսբիւրիին այդ
պատճառով մի երկրորդ ճառ արտասանեց:

Առաջ ենք բերում լորդ Սալսբիւրի ճառը, որ արտասանեց նա ի պա-
տասխան Սուլթանի նամակին պահպանողականների ժողովում Բրաչտո-
նում, նոր տոմարով նոյեմբ. 20 (հին տոմարով նոյեմբ. 8-ին):

Լորդ-դուքս, լէդիներ և ջէնտլմէններ.

Անմիջապէս մեզ վերաբերող ընտանեկան գործերի մասին խո-
սելուց առաջ, ես թոյլտուութիւն եմ խնդրում մի քանի օսք-
ասել ի պատասխան ամենայայտնի և հեռու թղթակցի, — եթէ կա-
րելի է այդպէս անւանել նորան, — որը խնդրեց ինձ խօսել նորա մա-
սին այս երկրի առաջ:

Դուք կը զարմանաք, եթէ իմանաք, թէ ով է այդ թղթա-
կիցը (Մափահարութիւններ): Ես զգում եմ, թէ որքան ան-
յարմար է առաջարկել ձեր ուշադրութեանը դիպլոմատիական
մանրամասնութիւններ, և յոյս ունեմ, դուք կը հասկանաք իմ ցան-
կութիւնը՝ չենթարկել քննութեան այդ նամակը, որ ես կը կար-
դամ, բացի մի քանի տեղերից:

Գիլգհոլում կայացած վերջին բանքէտում ես յայտնեցի, որ
շատ չեմ հաւատում այն բանին, որ ռեֆորմները կ'իրագործեն:
Նորին մեծութիւնը բարեհաճել է իր դրութեան մէջ նկատել, որ
իմ այդ յայտարարութիւնը շատ է վշտացրել նրան, որովհետեւ
ռեֆորմների մտցնելը նորա անձնական գործն է և որովհետեւ նա
ցանկանում է ի կատար ածել նոցա՝ հնարաւորութեան չափ: (Լսե-
ցէք): Նա շարունակում է. — Ես շատ անգամ արդէն խօսել եմ
այդ մտքով իմ մինիստրների հետ: Իսկ եթէ լորդ Սալսբիւրին կա-
մենում է կասկածի սուեր զցել իմ բարի դիտաւորութիւնների
վրայ, այդ ուրեմն պէտք է բացատրել կամ այստեղ եղող մի քանի
անձերի ինտրիգներով, կամ անճիշդ տեղեկութիւններով գործերի
դրութեան մասին: Ելի մի քանի նկատողութիւններ անելով, նո-

րին մեծութիւնը շարունակում է.—«ես կրկնում եմ, կամենում եմ իրագործել ռեֆորմները: Ես առջևս կը դնեմ ռեֆորմներին վերաբերեալ գրաւոր աքտը և ինքս անձամբ կը հետևեմ, որպէս զի իւրաքանչիւր յօդաձևը իրագործւի: Դա իմ հաստատ որոշումն է, և ես ազնիւ խօսք եմ տալիս, որ նա կ'իրագործւի: Ես ցանկանում եմ, որ լորդ Սալսբիւրին զինեմաց այդ, և ես խնդրում եմ և ցանկանում եմ, որ նորին պայծառափայլութիւնը (his lordship), հաւատալով այդ յայտարարութիւններին, բարեհաճի արտասանել մի ուրիշ ճառ, որը համապատասխանէր նորա դէպի ինձ և դէպի իմ երկիրն ունեցած բարեկամական տրամադրութեան: Ես ամենամեծ անհանգստութեամբ (with the greatest anxiety) սպասում եմ այդ գրութեան հետևանքին»: (Մ ա փ ա հ ա ր ու թ իւ ն ն ե ր և ա ղ ա ղ ա կ ն ե ր. «Երբալի ծափահարեցէք լորդ Սալսբիւրին»):

Ես կարծում եմ, որ նորին մեծութեան նամակի վերջին խօսքերը կը բացատրեն ձեզ, թէ ինչի ես հարկաւոր համարեցի կարգալ նամակը առանց որ և է փոփոխութիւնների: Ես քաղաքավարութեան պարտք կատարեցի, որը միևնոյն ժամանակ պարտաւորութիւն է դնում ինձ վրայ՝ զգուշանալ այդ գրութեան վերաբերմամբ որ և է մեկնութիւններ անելուց:

Ինչպէս ձեզ յայտնի է, մենք մասնակցում ենք պետութիւնների այն համաձայնութեան մէջ, որոնք վճռեցին միաբան գործել: Մի քանի անձինք, ըստ երևոյթին, երևակայեցին, որ Անգլիան է բոլոր եւրոպական պետութիւնների որոշումների ղեկավարը: Բայց այդպէս մտածել նշանակում է վերագրել մեզ աւելի մեծ ազդեցութիւն, քան թէ մենք ունենք: Ինչ էլ որ կատարւի,—պէտք է համաձայնութեամբ անւի, և ես կարող եմ խօսել միայն, յենւելով միաբան գործողութիւններին մասնակցող մէկ կամ մի քանի պետութիւնների գործակցութեան վրայ, և չեմ կարող թոյլ տալ, որ միմիայն Անգլիան յանձն առնէր թէկուզ այդ գործողութիւններից մէկի ամբողջ պատասխանատուութիւնը: Մենք և բոլոր եւրոպական պետութիւնները գտնւում ենք այն մարդկանց գրութեան մէջ, որոնք ցանկանում են միասին աշխատել, բայց որոնք հրաժարւում են մի այդպիսի աշխատանքից, եթէ հրաւիրւածները չեն ցանկանալ մասնակցութիւն ունենալ նորա մէջ:

Բայց ես, այնուամենայնիւ, այդ խօսքերով կամենում եմ յայտնել, որ ներկայումս պետութիւնների մէջ ոչ մի տարաձայնութիւն չկայ: (Մափահարութիւններ): Ես նոյնպէս պատշաճ եմ համարում իմ խորին ցանկացութիւնը յայտնել այն բանի մասին, որ թիւրքաց զեսպան Ռուստէմ-փաշան այնքան վտանգաւոր հիւանդ է, որ դժար թէ աողջանայ ¹⁾: Նա ամենաօգտակար միջնորդ էր օսմանեան կառավարութեան և թագուհու կառավարութեան մէջ: Բայց դորանով չէր, որ նա անուն էր վաստակել, այլ նորանով, որ, Նիբանանի նահանգապետ եղած ժամանակ,—մի տեղ, որը զանազան ցեղերի կռւի ասպարէզ էր,—նա կարողացաւ իր հաստատակամութեամբ, արդարասիրութեամբ և մարդկանց մօտեցնելու և հաշտեցնելու քաղաքականութեամբ՝ խաղաղութիւն հաստատել քարուքանդ եղած երկրում և բարօրութիւն վերադարձնել նորա բնակիչներին: (Մափահարութիւններ):

Այժմ այդ վեհանձն մարդը պառկած է մահւան անկողնում, և ես չեմ կարող չխոստովանել, որ եթէ դորա նման մի կառավարիչ դուէր այն նահանգների գլուխը, ուր տեղի ունեցան այդ բոլոր սարսափները, այն ժամանակ Եւրոպան հանգիստ կը լինէր, նորա խղճմտանքը չէր խոցուել այդ տանջանքներից և զազանութիւններից: Եթէ սուլթանին Ռուստէմ-փաշայի նման մարդիկ շրջապատելիս լինէին, այն ժամանակ հարցը լուծելու համար կարիք չէր զգացել, որ օտար պետութիւնները ձնշում դործ անեն: Նա իւր բնական ճանապարհով կը լուծէր—սուլթանի վճռով, մի վճիռ, որը հիմնւած կը լինէր այդ լուսաւորւած մարդկանց խորհուրդների վրայ: (Մափահարութիւններ):

Ես քննութեան չեմ առնիլ այն հարցը, թէ արդեօք կան այնտեղ այդպիսի մարդիկ, սակայն պէտք է ասեմ, որ Արևելքում օրէնքները ոչինչ նշանակութիւն չունեն, եթէ որ նոցա իրազօրժման համար արժանաւոր մարդիկ չկան: (Լսեցէք):

Պետութիւնները, ես յոյս ունեմ, կ'անեն բոլորը, ինչ որ հնարաւոր է: Բայց մի՛ կարծէք, թէ Թիւրքիայի ծանր հիւանդու-

¹⁾ Եւ իրօք Ռուստէմ-փաշան նոյն օր Երեկոյեան վախճանուեց: Ռուստէմ-փաշան ծնւած է ոչ տաճկական ծնողներից:

թիւները կարող են բուժել ասէք թէ դիւթական գաւազանով: Երկարամեայ սխալների հետեանքները այժմ են երևան գալիս, և, կեանքի խիստ կանոնի համաձայն, այդ սխալների համար տանջուում են անմեղները ¹⁾:

V

ՆԱՄԱԿՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ

Կ. Պոլիս, 29 սեպտեմբերի, 1895 թ.

Տասը օր անցաւ մեծ ցուցի արիւնալի օրէն ի վեր, ու բոլոր հաւերը զուգամբ դրութեան մէջ, իրենց չորս բոլորովը կը նաչեն կասկածանքով ու քիչ մօն ալ վախով: Շատեր ձգած են իրենց տունները, սենեակները և ապահով կարծւած տեղեր ապաստանւած են, շատեր ալ կղզիներն ու գիւղեր պահւրտած են:

Բազմ ինչ ըսել աւ միամիտ բալուցիներուն, որ նոյն իսկ ցուցին չափորդ օրը, կարծես ամեն բան մոռցած, մուշիկ անուշիկ կը քնանան Չուխուր խանի իրենց անապահով սենեակներուն մէջ: Թիւրքերու մոլեգնած խռովանքը, զինուորներու առաջնորդութեամբ, կուգան պահ մը ընդհատել անոնց քունը որ չաւիտենական կըլլայ: Յիսուն գիւակներ կը ձգեն հոն որ քիչ հոգը Մարմարան պիտի կըլլէր:

Ի՞նչ ըսել նոյնպէս Դասըմ-փաշայի հալ պանդուխտներուն որ նոյն իրիկունը, իրենց սովորութեան համաձայն, սրճատան մը կը հաւաքւին: Տաճիկ մուսուանդ ամբոխը հոս ալ կ'ալցելէ՝ հալ արիւնով ներկելու համար իրեն սուրերը: Ինքզինքնի՛ս մեղադրենք քիչ մըն ալ, պէտք չէր որ մինչև հիմա թիւրք կառավարութիւնն ու ժողովուրդը, իրենց ամեն աշխարհիկ ձիրքերովը, ուսումնասիրած ըլլալինք:

Դիտելի է որ, կանխամտածութեամբ և թերևս բարձրագոյն պատուէրի մը համաձայն, քանի մը տեղեր միմիայն երիտասարդները կը ջարդւին. իսկ զսառամած ծերունիներուն կը խնայւի: Որդին մեռցնել հօրը ներկայութեամբ: և հօրը մնասելու չափ անգութ չըլլալ, իրան, շատ գնահատելի և փափկանկատ վարմունք...

Իբրև թէ Պոլսի սոփիստները չբաւէին հաւերէն վրէժ առնելու ու հաւերուն պատուհաս ըլլալու համար, տաճիկ նաւավարներ, բեռնակիրներ, ջրհակիրներ, սոփիստի տարագրով, բացարձակապէս արտօնութիւն

¹⁾ Լորդ Սալսբիւրիի այդ ճառերը պարունակող անգլիական թերթերի մուտքը արդեւեց Թիւրքիայում:

կը ստանալ գեաւուրները ջնջելու, ամեն տեղ թիւրք ժողովուրդը իրենց հետը եղաւ, գաւազանով, հովանոցով, քարով, փայտով իջեցուցին ձեռք անցուցած հալու գլխուն: Պատեհ առիթ գտան իրենց վրէժը լուծելու թիւրքերէն, ամեն անոնք որ ալ կամ ահա պատճառով հալերու հետ ոխեր ունէին: Ոխ ունեցողը հաւտացուց մոլեգնած սոֆթաներուն որ ալ ինչ հալը չեղաւ իսկան է. ու ահա խառնիճ աղանձ բազմութիւնը իր կատաղութիւնը կը թափէ խեղճ հալուն վրա, և անոր ունեցածները իբր կողոպտաւ իրենց մէջ կը բաժնեն: Թիւրքաբնակ թաղերու մէջ գտնուող բոլոր հալ խանութպանները տուժեցին, քանիւնք իրենց անձը վրա տալով և շատեր իրենց ունեցած ապրանքները:

Մարրաման չկրցաւ իր ծոցին մէջ պարտիել հալ հերոսներուն գիակաները ու ինքն ալ կը մասնակցի մեր բողոքին, խոշտանգւած և անձանաչելի մարմիններ նետելով իր ափերը:

Ամեն օր Պատրիարքարան կը գլմեն մալեր որ լալով իրենց զաւակները կը հարցնեն, կիներ որ իրենց ամուսինները կը փնտռեն. ստուգ լուր մը կուզեն. բայց Պատրիարքարանը ուրիշ բան չի կրնար ընել, բայց միայն արձանագրել անլաւտին անունը և փնտռել... բայց ուր, ծովը երբեմն ալ գաղտնապահ է:

Բանտին զոհները տակաւին գոց կը մնան բանտարկւածներուն վրա, պարզ ենթադրութեամբ մը կամ կասկածանքով մը ձերբակալւած են իրենցմէ շատերը և տեսալ-տեսալ չարչարանքներէ ետքը նորէն չեն ազատ ձգւիր: Կեսպաններու թարգմանները բանտերը կ'ալցեւէն և կը պտտւիրեն որ ծանր լանցանք չունեցողները բանտէն արձակւին: Ոստիկանութեան նախարարը կը խոստանալ շուտով ազատ թողուլ բայց մինչ և հիմա խոստումը խոստում կը մնայ: Եթէ քիչ մը կաշառք ձեռք անցնեն, ան ալ շահ մըն է:

Մինչև երէկ ժողովուրդին մէկ մասը չամառեցաւ եկեղեցիներու մէջ մնալ, հակառակ կառավարութեան կողմէ եկած պատէրներու և սպառնալիքներուն: Բայց շարունակ քանի մը օր եկեղեցիներու դուռները թիւրք ոստիկաններ և զինուորներ պաշարած էին, և մարդ ներս մտնելը արգիլած: Նոյն իսկ ուղեցին ներս ուտելիք զրկելուն ալ արգելք ըլլան, բայց չեմ գիտեր ինչ նկատումներով չեկան ետքէն:

Երկու թիւրքասէր հարուստ հալ անձնաւորութիւններ, Աբիկ Ուն-ձեան և Յովհաննէս Նուրեան կալսերական սլաւատ կը կանչւին և սուլ-թանի կողմէ չորդօր կը ստանան եկեղեցիներէն ժողովուրդը դուրս հանելու, որովհետեւ սուլթանը կ'ուզէր հաւտացնել ամենուն որ Պոլսի մէջ նորէն անգործութիւնը կը տիրէ: Նուրեան չի համարձակիր

եկեղեցու մը սեմէն ներս մտնել. Ունձեան ալ նախ Մալր-եկեղեցին և լեռոյ Վասմփաշալի եկեղեցին կը խօսի թէ՛ վեհ. սուլթանին շնորհով խաղաղութիւն կը տիրէ. իւրաքանչիւր ձեր տեղերը դարձէք և ալլն: Փողովուրդը անոր երեսին «վատ, դաւաճան, տաճկասէր», կը պուռալ և նախատինքով կը ճամբէ:

Նոյնպէս պատահար մըն ալ Բաթում-ղիմէոս եպիսկոպոսին, երբ Պերալի եկեղեցին գնացած է. երիտասարդ մը անոր երեսին պուռացեր է. «վատ Բարթումէոս»:

Փողովուրդը հաճութեամբ մը զգալու համար չէր որ եկեղեցիներու շրջանակէն չէր ուզեր դուրս ելլել. պաղ սալապատակներուն վրայ օրնիբուն պոտիլ, գիշերը կարծր տախտակներու վրայ նստիլ և պառկիլ, աղտոտած զգեստներ հագած ըլլալու դատապարտիլ, ահագին բազմութիւնէն հրմշտկիլ, վերջապէս տնմաքուր և տաճոյ պալմաններու մէջ ապրել ոչ մէկ հալու երազած իդէալն էր:

Բաց ասոնք ուր գիմէին, ինչ ընէին. շատերը չարձակում կրած էին, շատերուն սպառնալիքներ եղած էր, ուրիշներ իբրև կասկածելի հաւանական էր որ դուրս ելածնուն պէս՝ իսկուց ձերբակալէին: Արդէն շատերն ալ 10 փարա չունէին կտոր մը հաց պնելու համար. հոտ իրենց ուտելիքը և ուրիշ քանի մը պէտքեր կը հագացէին.

Ամենէն համակրելի երեսութեանէն մէկն ալ սա էր որ ալս օրերս բոլոր հալերը՝ ուսումնական և ազէտ, դպրոցական ու արհեստաւոր եղբայրաբար իրարու հետ կը տեսնէին, կը խօսէին, առանց սկիզբէն իրար ճանչցած ըլլալու, ալ իրարմէ չեն կասկածեր. ամենքը նոյն վիշտը ունին և ազգին բախտը ամենքն ալ հաւասար չափով կը հետաքրքրէ. վեհ ձեռնադրուներու ժամանակ ստոր և անարգ հաշիւներ իսպառ պէտք է մոռացութեան տրւին:

Նրէկ վեց գեապանատուններու առաջին թարգմանները Պերալի Նրորդութեան եկեղեցին եկան և ջանացին համոզել հալերը որ իրենց տեղերը դառնան. ալ վախի բան մը չի կալ. միայն թէ ամեն անոնք որ քաղաքական չանցաւորներ են օրէնքի համաձայն պիտի պատժւին: Փողովուրդը և մասնաւորապէս ծանօթ խմբագիր մը կը պատասխանեն թէ աղ պալմաններով եկեղեցիէն դուրս ելլել կարելի չէ. քանի որ նախ ապահովութիւն չի կալ թէ տաճիկ խուժանը չպիտի ուզէ վրէժ առնէ և երկրորդ եկեղեցիները ապաստանողները բոլորն ալ կառավարութեան աչքին քաղաքական չանցաւորներ են: Թարգմանները ամեն կերպ վստահացուցին փողովուրդը—«Եկեղեցին ձերն է, նորէն, երբ պէտք ըլլալ, կրնաք հաւաքել» կրտսն և կը չուսադրին որ մօտ օրէն գոհացուցիչ լուծում պիտի

արի հազվական խնդրին. խոստացան իրենց կառավարութիւններու անու-
նով հարկ հղած պաշտպանութիւնը ընել հոն եղողներուն: ժողովուրդը
սակալն չէր կրնար համուզել թէ տաճիկ մոլեռանգ խուժանը հանդար-
տած և կառավարութիւնն ալ անչիշաչար պիտի ըլլար իրենց մասին: Այն
ատեն դեսպանական ալցեքարտեր տալ հարկ դատուցաւ, խառն, ամեն
հոն գտնւողներուն: Չէնքերը, և թէ կալին, պէտք էր եկեղեցիները ձգել
ու ալնպէս դուրս ելլել: Այս ալցելութեան և կարգադրութեան ճերկալ էր
Եզնիկ եպիսկոպոս Ապահունին:

Նոյն տնօրինութիւնները Ղալաթիաի և Պատրիարքարանի եկեղե-
ցիները ապաստանողներուն համար ալ եղան:

Ամեն դուրս ելնողներուն վրալ կը խուզարկէի, որ չըլլալ թէ զին-
ւած փողոց իննան և զիմադրեն տաճիկ ոստիկանութեան: Մինչև հիմա
արգելք կալ ներս մտնել ուղղողներուն: Մինչև ալսօր դեռ ամբողջապէս
չսարսլեցան եկեղեցիները:

Բալց ինչ վիճակ պիտի ունենան, երևակայելու է, ալն չէնքերը ուր ալս-
քան խուռն բաղմութիւն անցուց տասը օր. Կեղերական վարժարանի պա-
տուհաններէն դուրս կը նալեն հիմա ամեն տարիքէ ժողովրդի զաւակներ,
որ ուսանողներուն տեղը կը բռնեն:

Հալերու վաճառատունները սակալն գոց են մինչև հիմա, առևտրա-
կան որ և է գործառնութիւնն ալ տեղի չունենար, կառավարութեան ար-
ժեթղթեր հետգնտէ զինի մասին ահագին անկումներ կը կրեն: Ահաւանա-
ւորական թուղթեր չգանձւած կը մնան. պրոտէստը օգուտ մը չունի:

6 հոկտեմբեր, 1895 թ.

Տաճիկ պաշտօնատուներու մէջ պաշտօն ունեցող հալերը կը ճամբ-
ւին: Սուլթանը հրամայած է եղեր որ թուրքերը իրենց տունները հալ
չպահեն. մեր էֆէնդիները ալս բարձր հրամանը տարբեր կերպով կը մեկ-
նին՝ իրենց սուրը գնելով հալ սպասաւորներու կոկորդին:

Շատեր կը լուսան որ ալ վրդովելու պատճառ մը չիկալ: Երէկ վեհ.
սուլթանը վաւերացուց Բարենորոգումներու ծրագիրը: Հալերը սկսան
երէկ և ալսօր իրենց խանութները, վաճառատունները բանալ և ժպտա-
դէմ իրարու կ'աւետեն:

— Սուլթանը ծրագիրը ընդունած է:

— Գործադրութիւնը. — է, անշուշտ քիչ ատենէն կարգը անոր ալ
կուգալ:

20 հոկտեմբեր

Թիւրք թերթերը իրարու ետեւ տեսակ-տեսակ չօղւածներ կը հրատարակեն հաւերու խնդրի մասին, որուն գոլութիւնը չէին ուզեր հաւատալ. հալը թնչ է որ հաւկական խնդիր ալ (էրմէնի մէսէլէ) ունենալ. Նախ բացարձակապէս վճռեցին որ հաւերու իշխանութիւնն և նոյն իսկ առանձնաշնորհումներ չպիտի տրւի. չետոյ գրեցին որ քանի մը գաւառներու մէջ ընդհանուր բարեկարգութիւններ պիտի գործադրւին, անխըտրաբար ամենուն համար ալ նպաստաւոր:

Թիւրք ժողովրդին մէջ նորէն չուզում կալ, կ'ուզէ որ բնաւ հաւերու կարեօրութիւն չտրւի. ամեն անգամ որ հաւերը ձաջն բարձրացնեն բողոքելու համար, տաճիկ խուժանը, միշտ իր զինւորներովն ու սոֆթաներովը, զիտէ թէ ինչպէս պէտք է խղտել բողոքի ամեն ճիշդ:

Սոֆթաները զոյջացել են... թէ թնչու վարմարաւոր առիթը ձեռքէ փախցուցին քիչ հաւ ջարդելով. սպանող հաւերու թիւը զիրենք չի գոհացներ, մանաւանդ նորէն ամեն մէկ քաղաքիսի կը հանդիպին հաւերու որոնց ջնջումին աջն քան փութաւարութեամբ աշխատեցան:

Պոլսի լոյներէն շատեր կը համակրեն մեզի և կը պաշտպանեն իսկ. Կան լոյներ ալ որ նախանձոտ աչքով մը կը նայեն միզի, չունական դռնօղութիւնը չհանդուրժեր որ հաւերը չանդուզն և ժողովրդական Պատրիարք մը ունենան և գործելու մէկ ալ աջն քան քաջութիւն ցոյց տան:

Բաւց հրէաները, ամենքն ալ, կը տրտնջան հաւերու դէմ, որոնց համար քանի մը օր չկրցան առևտուր ընել. Պալատին թաղին մէջ ձուկ ծախող հրէալ մը, երբ ձուկին գլուխը կը կտրէ, մօտէ անցնող ոստիկանի մը հաճելի ըլլալու համար կը պռռալ. «է ֆէն դի, է ֆէն դի, էրմէնի պաշի քէսի չորսում» Տեղացի հաւերը իրենց առևտուրը կը զադրեցնեն հրէաներուն հետ. ուր էր թէ ամեն տեղ նոյնը ընէին:

Կ. Պոլիս, 5 նոյեմբ. 1895 թ.

Կարելի չէ Պոլսի ցոյցը չիշել ու մոռանալ օր. Մ.-ի արտասանած ձառը, որ իր մէջ կը խտացնէ չուտահատ ժողովրդի մի գալրութիւն ու բողոքը:

«Զմուռ կը համի, սրբազան, և Հալաստանի մէջ մեր քուրերուն, եղբայրներուն և ամուսիններուն վիճակը, որ աջն քան անտանելի է, աւելի դառն կըլլալ հետզհետէ: Ամեն օր լուրեր կը համի մեզի թէ առջի վիճակը ոչ միայն չէ թեթեւացած, այլ անչափ ծանրացած է որ՝ ձմեռն հետ մէկտեղ՝ մահը պիտի իջնէ մեր սիրելի երկրին վրայ:

«Ա՛լ չենք զիմանար, սրբազան, տարի մըն է որ Ներոպան Սասունի արինալի ջարդէն չուզած՝ մեր գատը ձեռք առաւ. ամբողջ տարի մը, որուն իւրաքանչիւր օրերը մէլմէկ տարի էին մեզի համար. անձկութեամբ ու պատեցինք որ արդարութիւն ու խաղաղութիւնը վերջապէս իջնեն մեր երկրին վրայ. այնքան հառաչանքներէ ետքը կարենանք վազել ապահով ու հանգիստ կեանք մը որուն իրաւունք ունինք. Վստահութիւն ունէինք Ներոպալի արդարադատութեան վրայ, որ ա՛լ աչս անգամ վերջ պիտի տար մեր ցաւերուն, մեր արցունքներուն, ու զիտէինք որ ձեր հայրական հոգածութեամբը ամեն առնեալ եւրոպական պետութեանց աչքին առջեւ կը դնէիք բոլոր այն հարստահարութիւններն ու խժոժութիւնները որոնց ենթակալ է հալ ժողովուրդը: Բայց անա զեռ բան մի չեղաւ մեր չղտերը արդարացիող, և անաւոր ճգնաժամը կը մօտենալ:

«Արբազան հայր, ձեզի կը զիմենք անա, խնդրելով որ մեր չուս հատութիւնն ու բողոքը ներկայացնէք եւրոպական պետութեանց, Անոնց զիմեցէք և ըսէք որ ա՛լ համբերելու կարողութիւն չմնաց, ա՛լ զիմանալու ուժ չունինք մեր մէջը. ժողովրդին քւէովն ընտրւած էք դուք, և զացէք հոն ուր կը գոչէ ձեզ ժողովրդին ձայնը:

«Ըսէք ալզ անկարեկիր Ներոպալին որ եթէ ընդհուպ բան մը չընէ մեզի համար, չատ չանցած, ամօթէն պիտի կարմրի՝ իմանալով որ քրիստոնեայ ժողովուրդ մը բնաջինջ եղած է: Ըսէք զեսպաններուն՝ մեզի իբր խաղալիք պէտք չէ թողուն աշխարհիս էն զարհուրելի բռնաւորութեան ձեռքը: Ըսէք աչս ամենը, սրբազան, և եթէ ան չարունակէ իր լռութիւնը, գոնէ մենք կը գիտնանք թէ ի՞նչպէս մեռնելու ենք»:

Արդէն երկար ատեն մերժւած, իրեսի վրա մնացած բարենորոգումներու ծրագիրը վերջապէս կընդունւի՝ Պոլսի ցոլցէն ետքը: Սուլթանը կը հաճի վաւերացնել զանի. նորէն ինչ ինչ պայմաններ մերժելով: Աւ ինչպէս չըսի, թէ՛ երբ նոյն իսկ իրենց երկրին համար օգտակար՝ ծրագիր մը ընդունիլը աչսքան չամառօրէն կը մերժի, հապա ատոր գործադրութեանը ինչքան դժարութիւններ և արգելքներ վերապահած չպիտի ըլլան:

Աւ պահ մը կարծեցաւ թէ անդորրութիւնը պիտի տիրէ գաւառներուն և Պոլսի մէջ, թէ իրան բարենորոգումներու ծրագիրը ընդունւած է և անոր գործադրութեանը պիտի սկսել անմիջապէս:

4 նուբմբեր

Նրէկի թիւրք յերթերու մէջ հրատարակեցաւ աա պաշտօնական գեկուցումը:

«Անատոլուի քանի մը նահանգներուն մէջ պատահած անկարգութիւններուն մասին վեհ. սուլթանի շնորհիւ ձեռք առնւած միջոցներուն իբրեւ սկզբնաւորութիւն» Դ. և Ն. զօրաբանակներու զինուորական ուժէն զատ պահեստի զօրքէն 128 վաշտ զէնքի կոչւած են և մաս-մաս կը ղրկւին ու կը հաւաքւին հարկ եղած տեղերը՝ Նոյնպէս որոշւած է քաղաքալին, զինուորական ու զատական վարչութիւններէն պաշտօնեաներ ղրկել պէտք եղած տեղերը, որպէս զի անդորրութիւնը և խաղաղութիւնը հաստատելու վերաբերող անօրէնութիւնները գործ դնեն։ Կաշերական իրադէյի մը համաձայն որոշեցան պետական խորհրդի անդամներ Սամի էֆէնդի, Ֆէրիզ Սաատէտդին ու Ապղուլլահ փաշաները, վիճակագրութեան լանձնաժողովին անդամներէ ձէմալ-պէշ, վճարեկ ատեանի անդամներէն Իպրահիմ պէշ և Հիւսէյին Րիւշտի էֆէնդի։

«Ասոնք երկու մասի պիտի բաժնւին. մէկ մասը Տրապիզոն, Դիւմիշխանէ, Բալլուրտ, Էրզրում, Մուշ և Բիթլիս, ու միւս մասն ալ Սամսոն, Ամասիա, Թոքատ, Սըւազ, Մալաթիա, Խարբերդ, Արջընի, Մատէն և Դիարբէքի։

«Այս պաշտօնեաները երեքշաբթի օր (31 հոկտ.) չատուկ չողենաւ երով մալաքաղաքէս ճամբալ ելան աղ կողմերը երթալու համար»։

Ոստիկանութեան նախարար Նաղմփաշա, հաշ թերթելու խմբագիրները կանչած և չորհորած է որ իրենք ալ մէկ-մէկ լողւած գրեն հաւերուն խողոված միտքերը հանդարտացնելու համար, կարելի եղածին չափ։ Աղ լողածով պէտք էր գովել վեհ. սուլթանի ամեն իմաստուն տնօրինութիւնները և անոր ամենուն մասին ունեցած հաւրական խնամքը, առանց ազգի ու կրօնքի խտրութեան. ինչպէս նաև քարենորոգումներու ծրագրին առաջ բերելիք բարիքները մատնանիչ ընել հաշ ժողովրդին և ըսել որ քառաւնները պատահած քանի մը պզտիկ սպանութիւններ այնքան վիշտ կը պատճառեն ճշմարիտ իսլամին, որքան ճշմարիտ քրիստոնեակին։

«Հալքենիք»-ի, «Արեւելք»-ի, «Ճէրիտէյի Շարգիէլ»-ի, մէջ երեեցան թղածներ երէկ և այսօր։

Մէկ կողմէն կը շարունակւին ձերբակալութիւնները։

Պանդուխտներէն ամեն անոնք որ կասկածելի կ'երևան կառավարութեան աչքին, բռնի իրենց հալքենիք կը ղրկւին։

Ս. Պատրիարքը առաջները կը դիմէ դեսպաններուն իր ժողովրդին պացութիւնը ներկայացնելով և անմիջական կարգադրութիւն մը խնդրելով. իրեն պատասխան տւեր է Բ. Դուռը որ հալոց Պատրիարքը թող իր ժողովուրդը զսպել գիտնալ և ամեն բան պիտի հանդարտի։

Կ. Պոլիս, 8 նոյեմբեր 1895 թ.

Օրը նոր, կոտորածը նոր, Տխուր և կսկծառիթ լուրեր իրարու հասեցան հասնին՝ արդէն վերաւորած սրտերը խոցոտելու համար։ Պոլսէն մինչև Տրապիզոն, Կարինէն մինչև Մարաշ և Սեբաստիա, կոտորածը, մեծ հրդեհու պէս, ծաւալեցաւ ճարակեցաւ բոլոր Տաճկաշաւաստանի և Կիլիկիայի նահանգները։ Թիւրքի սուրը խտրի չի դներ սեռի և տարիքի մէջ. երեխան իր մօրը գիրկը կը խողխողէի. մաւրը իր գաւակին առջև կը մորթէի, գաւակը իր հօրը ներկայութեանը կը լջոտուի։

Թիւրքերուն համար միակ նպատակ մը կալ. հալելը ջնջելը։ Միջոցները խիստ շատ են, և առիթն ու ժամանակը՝ չափազանց նպաստաւոր։

Թիւրք թերթերու մէջ հափերու թւի մասին քանի մի անգամ պաշտօնապէս բաներ գրեցան։ Հալերը չուզեցին հաւատալ և պնդեցին որ իրենց թիւը շատ աւելի է։ Ե՛հ, լաւ, կը քիչնաք օր մը, ըսին իրենք իրենց մէջ, ու աւսօր, առանց խտրութեան, ամէն քաղաք ու գիւղ կը կոտորենցէ իր հալ բնակիչներէն մի մասը։ Հաշիւով սկսածը անհաշիւ կը վերջանալ. կատղած խուժանը ոչ հաշիւ գիտէ, ոչ օրէնքը կը լինէ, ոչ կոգնութիւն կը դգալ, երբ կը ջարդէ, կը թալանէ, կ'աւերէ ու կ'ամապցնէ։

Առևտուր և շահ ալ գոյութիւն չունին հալուն համար. ով կրնալ չանդգնիլ բանալու իր վաճառատունը, եթէ ան արդէն կողոպտած չէ, ով պիտի կրնալ քանի մի ոսկի իրարու քով բերել։ Պետական զանազան և անվերջ տուրքերու փոխարէն ամեն բան կը գրաւեն ոտովկանները, կաթսալ, անկողին, ցորեն, ոչխար, ինչ որ գտնին։ Ղոր ծախելով կը գանձեն իրենց պահանջը։

Չքաւոր և կարեկցութեան արժանի է հիմա Տաճկա-Շաւաստանի հալերու մեծամասնութիւնը։ Անօթութիւնը և աղքատութիւնը մէկ կողմից, մոլեռանդ և մոլեգին թշնամուն նորնոր սպառնալիքներն ու նախճիրները միւս կողմից ընկճած և ահաբեկած են զիրենք։

Ամէն մէկ գաւառի առաջնորդ հեռագրով խմացուցած է ժողովրդին վիճակը հոս Ս. Պատրիարքին. բալց հեռագիրները իրենց հասցէին չեն եկած։ Պանդուխտներ Պոլսէն կը հեռագրեն իրենց ընտանիքներուն անոնց վիճակը հասկնալու համար. անդէն՝ ստորագրութիւն եղած հեռագիր մը կուգալ իբր պատասխան՝ խմացնող թէ առողջ և հանգիստ են։ Տեղական կառավարութիւնն է պատասխան տուողը։

Չի կալ քաղաք մի սակաւն ուր հանգիստ և ապահով լլլալին հալերը։ Տրապիզոն, Օրդու, Աք-հիսար, Դիարպէքիր, Հալէպ, Վան, Բիթլիս, Կարին, Նրզինկալ, Խարբերդ, Ակն, Բինկիան, Սեբաստիա, Դիվրեկի, Արմստան, Ամասիա, Մարզուան, Կեսարիա արիւն կը հոսին։ Անցած տարի միաջն Սասունի վրա կը մտածէինք։

Չէթունցիներն են միաւն որ հերոսաբար կը կռւին և միշտ չաղթա-

ճակէ չաղթանակ կ'երթան: Բիշկեան ալ 15 օր կը դիմադրէ, բայց վերջապէս թիւրքերը երրորդ փարձակումով ներս կը մտնեն և կըսկսեն ջարդել կատաղաբար:

Սերաստիաչի մէջ կաշերական զինւորներուն և խուժանին օգնութեան կը հասնի Միհր-Ալի չէրքէզ աւագակապետը իրեններովը: Նրեք օր շարունակ կը ջարդեն, կը կողոպտեն, կ'աւերեն: Զառա, Թոտուլա, Ախր, Կովսըն հալաքնակ գիւղերն ալ կը պաշարեն և գիւղացիներու ամբողջ ունեցածները կը թալանեն. 700—800 սպանւած կալ մեզմէ:

Որպէս զի չըլլալ թէ սխալումով թիւրքեր ալ սպանւին, դրոշակներ կախւած են եղել տաճիկներու տուներուն վրայ:

Նրդնկալ 400—500 հալ սպանւած կալ:

Տրապիզոն 700—800:

Դիարպէքիւր (Տիգրանակիրտ) 3000—3500 քրիստոնեակ:

Աք-հեսար 40:

Տիվրիկի տաճնհինգ հալ գիւղերը աւերակ դարձած են. քաղաքի մասին դեռ լուր մը չիկալ:

Արաբկերի Տանծիկ գիւղի հալերը իսլամականութիւնը ընդունած են՝ կառավարական ճշունքներ վրալ: Կը վախցւի որ ուրիշ տեղեր կրօնափոխութեան զիմեն: Կասմա, Զիմառա գիւղերը (Ակն) ամալացած են. երկու քահանայ սպանւած:

Վերջին վալրկենին կ'իմացւի որ Ամասիա և Մարզան ալ ջարդեր եղած են:

Պոլսի լրագիրները ամէն օր կը հրատարակեն պաշտոնական դեկլարումներ թէ՛ մեծ եպարքոսին ուղղւած հեռագիրները կը ծանուցանեն որ նահանգներուն մէջ, չնորհիւ վեհ. սուլթանին, կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ (!!!):

ԽԱԶ.ՊԱՊԵԱՆ:

ԴՐԱՄԱ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԳԵՂԱՐԻՆԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

II

Բարեգործութեան դիմակի տակ, դրամա 5 գործողութեամբ Էմին Տէր-Պրիգորեանցի:—Սամէլ, պատմական դրամա հինգ արարւածով, Հէքիմեանի:—Ակամալ բժիշկ, կոմեդիա 3 արարւածով, Մոլիէրի:

Հոկտեմբերի 19, հինգշաբթի: «Բարեգործութեան դիմակի տակ», դրամա հինգ արարւածով, հեղ. Էմին Տէր-Պրիգորեանցի: Այս պիեսի մասին մենք արդէն չալտնել ենք մեր կարծիքը այս տարւոյ «Մուրճ»-ի համարներէից մէկի մէջ. (տես «Մուրճ» 1895. № 2). Դրախօսութեան մէջ մենք ցոյց էինք տւել, որ ներկայ դրաման չէ դիմանում քննադատութեան, ինչ տեսակից էլ վերլուծելու լինինք նորան՝ թէ գեղարեստական, թէ իրական և թէ հոգեբանական: Մենք միտք չունենք աչտեղ նորից վերադառնալ այդ ինդրին, որովհետեւ այդ պիեսը բեմի վերաջ տեսնելուց չետոյ մենք ոչ միայն չկարողացանք հրաժարել մեր չալտնած կարծիքներէից, այլ աւելի ևս հաստատուեցինք նոցա մէջ:

Ներկայացումը անցաւ աչնպէս, ինչպէս նա պէտք է անցնէր—վատ: առաջին երեք արարւածները անհետաքրքրական և ձանձրալի էին վերին աստիճանի: Չորրորդ արարւածի մէջ փոքր ինչ կենդանութիւն երևաց այն տեսարանում, երբ մի խումբ գիւղացիներ մահակները ձեռներին աղմուկով բեմն են թափուում: Հինգերորդ արարւածը կատարեալ վողըւիլ էր, աւելի քան վողըւիլ:

Թատրոնում բարձրացել էր մի հոմերեան ծիծաղ. խոստովանում եմ, ես ինքս այդ ժամանակ սրտիս խորքից ծիծաղում էի միւսների հետ: Եւ այդպիսի ծիծաղով ահա ճանապարհ դրեց հասարակութիւնը դրամայի հերոսին՝ դէպի չաւիտենականութիւն, իսկ դրաման՝ դէպի վերջնական անկում:

Ինչ կարող եմ ասել դերակատարների մասին? միմիայն աչն, որ նոցանից իւրաքանչիւրը տքնում աշխատում էր անշնորհակալ դերից մի բան տեսողեւել, բայց ոչինչ չէր դուրս գալիս, որովհետեւ ոչինչ չէր կարող դուրս գալ, երբ շինծու էր դրաման ամբողջապէս և մանրամասնութիւնների մէջ։ Բացառութիւն կազմում էր միայն պ. Ստեփանեանը, որ կատարում էր Աեղեքեանի գործակատարի դերը, շնորհիւ աչն բանի, որ աչդ դերը միակն է բոլոր գործող անձանց մէջ, որ ներկայացւած է փոքր ի շատէ՛ճ գրկիտ գծերով և չիշեցնում է իրականութիւնը։—Մենք աչն կարծիքի ենք, որ չաջող դերակատարութեամբ չէ կարելի փրկել պիեսը։ Գերասանը, ճիշտ է, կարող է չաջող դերակատարութեամբ լրացնել աչն, ինչ հեղինակը չէ ասել, կամ մեղմացնել աչն բանը, որ չափազանցացրել է հեղինակը, ուրիշ խօսքով, կարելի է ուղղել աչն, ինչ ուղղելի է։ Ինչպէս կարող է բնական լինել բնմի վերաջ աչն, ինչ բնական չէ գրքի մէջ? Նկարչի հմուտ ձեռքը կարող է ուղղել մի պատկեր, որը ընդհանրապէս լաւ է, բայց ունի աչքի ընկնող պակասութիւններ։ Բայց նա չէ կարող ուղղել պատկերը, երբ նա խզմզած է անշնորհ և անվարժ ձեռքով։ Թող, օրինակ, դերասանը, որքան կամենալ, գոռալ և գոչէ և ոտները գետնին խփէ, Աեղեքեանի բարկութիւնը ցուց տալու համար։ Թող նա, որքան կարող է, քաղցր դարձնէ ժպիտը իւր դէմքի վերայ, երբ աչդ հարկաւոր է Աեղեքեանի հրճանքը արտապատելու համար,—և ոչ մի տպաւորութիւն, քանի որ ես չեմ հաւատում ոչ նորա բարկութեանը, ոչ նորա ուրախութեանը, ինչ որ շինծու է դրածքի մէջ, նա շինծու կը լինի և քեմի վերաջ։

Բայց չպէտքէ ուրանալ մի բան։ Աչդ պիեսը մի տարւալ մէջ մեծ ազմուկ հանեց. և նա կ'մնալ անմոռանալի, իբր մի բնորոշ ֆակտ, որ նկարագրում է մեր ժամանակակից քննադատութեան դրութիւնը։

Հսկտեմբերի 26, հինգշաբթի. «Սամէլ», պատմական դրամա հինգ արարւածով, Հէքիմեանի։ Սորա հիւքը կազմում է հայրասպանութիւն չանուէն մի բարձր գաղափարի։

Խօսել առանձնապէս «Սամէլի» մասին մենք հարկ չենք համարում։ Դա մէկն է աչն բազմաթիւ պիեսներից, որոնք պատկանում են միևնույն ուղղութեան, որոնց մէջ տիրապետում է միևնույն ոգին, որոնց արժանաւորութիւնները և թերութիւնները ընդհանուր են։ Աչդ պատճառով ես օգուտ եմ քաղում դէպքից մի քանի դիտողութիւններ անելու մեր պատմական ողբերգութիւնների վերաբերմամբ։

Ինձ չաչանի չէ մի ուրիշ ազգ, որի գրականութիւնը մի քանի տասնեակ տարիների ընթացքում արտադրած լինի համեմատաբար աչն քան մեծ թւով իւր պատմական անցեալից վերցրած՝ դրամաներ, որքան աչդ արել է հաջոց նորագոյն գրականութիւնը։ Կարելի է, առանց զօր տալու քիչողութեանը, առաջ բերել տասից աւելի պատմական պիեսներ։ «Շու-

չանիկ», «Սանդուխտ», «Արշակ II» (Երկուսը), «Երևանդ II», «Գալլ Վահան», «Սև հողեր», «Անիի աւերումը», «Վահան Մամիկոնեան», «Վարդան Մամիկոնեան», «Սամէլ», և այլն: Բայց մինչդեռ այդքան հարուստ է մեր պատմական դրաման եթէ ոչ զեղարւեստական արժանաւորութիւններով, գոնէ քանակութեամբ, մեր ժամանակակից կեանքին վերաբերեալ, կենցաղագրական պիեսներ համեմատաբար շատ սակաւ է արտադրել մեր գրականութիւնը: Դա, ի հարկէ, մի տարօրինակ և անհասկանալի երևույթ է, ալլ, ընդհակառակը, շատ հատկանալի է և բնական: Դրամալի պատմական ուղղութիւն տուողը նոյն ստեղծող մալր գաղափարն է, որ անցեալներում, երկար ժամանակ ծառայում էր իբր ոգեորութեան աղբիւր: Գամառ-Վաթիպալի և Բաֆֆու համար Մեր վէպը՝ չանձին Բաֆֆու, մեր քնարական բանաստեղծութիւնը՝ չանձին Ռ. Պատկանեանի և մեր պատմական դրաման—ալս երեք ճիւղերն էլ վերաբերում են միևնոյն բունին, մեր նորագոյն գրականութեան գերիշխող միևնոյն հոսանքին: Այսպէս ուրեմն չպէտք է զարմանալ, որ մեր ողբերգակների ոգիերը սպառուել են աւելի պատմական, քան թէ կենցաղագրական դրամալի վերայ: Այդ պատմական պիեսները շատ անգամ ներկայացել են թիֆլիզում, զաւառական քաղաքներում և գիւղերում: Նոքա միշտ գրաւել են ուկնդիրների մեծ բազմութիւն: Նոքա հազորդել են հանդիսականներին աջնալիսի՝ դադափարների, աջնալիսի տեղեկութիւններ, որոնցից զուրկ կը մնալին լսողներից շատերը՝ առանց ալ պիեսների: Նոցա սիրել է ժողովուրդը հասկանալի պատճառներով: Նոքա իրենց համեստ գերը կատարել են, և ապերախտութիւն կը լինէր մեր կողմից, եթէ մենք մեր զեղարւեստական չափով և խիստ քննադատական պահանջներով վերաբերելով ալդ պիեսներին, արհամարհանքի մատնէինք նոցա: Ոչ միայն մեր թատրոնի պատմութիւնը, նոյն իսկ մեր կուլտուրալի պատմութիւնը պատմական դրամալից չէ կարող խլել նորա կատարած գերը: XVІІ-դ ռուս ողբերգակ Սումարոկովի սրագեղիաները ալժմ չեն ներկայացում, չեն կարդացում և համարում են կեղծ դասական: Բայց չնայելով դորան, ոչ մի ռուս քննադատ չէ մտածում խլել նորանից ալն կուլտուրական գերը, որ նա մի որոշ չափով կատարել է իւր ժամանակում իւր կեղծ-դասական դրամաներով: Պատմական դրաման, ի հարկէ, իւր գերը կատարած և լրացրած չէ դեռ ևս, և կենցաղագրական դրամալի հետ զուգահեռաբար նա երկար կը մնալ բեմի վերայ, քանի գոյութիւն ունի թատրոնը: Միայն ալժմ, ներկալ օրերում, շատերին էլ գոհացում չեն տալիս մեր եղած պատմական դրամաները, շնորհիւ հոգեբանական և զեղարւեստական մեծամեծ թերութիւնների: Նախ և առաջ գործող անձինք, որոնք կազմում են դրամալի սիւները, կենդանի մարդկանց սոցալտրութիւն չեն գործում: Նոքա հերոսաբար և գլինւած բեմ են գտնու գալիս, գեղեցիկ խօսքեր արտասանում, սրեր շողողաղնում, կեցցէներ ասում:

գետոյ սպանում, կամ մեռնում: Բնաւորութեան բարակողմանի նկարագրութիւն դուր կը լինի վնտրել պատմական դրամաների մէջ: Եթէ մէկը քաջ է և հալոյնասէր, նա մահից չէ վախենում, նա պատրաստ է մեռնելու, երբեմն նոյն իսկ ուրախ է մեռնելու: Կանաչք ևս, որոնց աչնքան քիչ տեղ է տրւած մեր պատմական պիեսների մէջ («Սամէլի» ի, «Երչակ»-ի մէջ ոչ մի կին), նոյնպէս զաղափարական են, նոյնպէս մահից չեն վախենում: Վարանում ասած բանը, որ աչնքան զօրեղ է զարծնում հերոսի դրամատիկական գրութիւնը, գրեթէ անպաշտ է մեր պատմական պիեսներին հեղինակներին. մի խօսքով, բնաւորութեան նկարագրութեան մէջ ասին անդ զօրծ է ածւած իրէակազմի: Բայց նոյն իսկ միակողմանի նկարագրութեամբ մասամբ կարելի էր բնականի տպաւորութիւն գործել, եթէ աչնքան թող չլինէին պարզաբանւած հերոսի գործերի հոգեբանական շարժառիթները: Մեր պատմական պիեսների հեղինակները կարծել են, որ եթէ աշխու և քաջ հերոսը մի վտանգաւոր գործ կատարելուց առաջ տատանւի վճիռների մէջ, կը նսեմանալ քաջութեան և ազնւութեան նշանակութիւնը, մինչդեռ ալը հանգամանքը աւելի բնական զարծնելով հերոսի բնաւորութիւնը, աւելի պիտի բարձրացնէր աչն զաղափարը, որի համար մարտնչեց հերոսը զժաւր տատանումներից չետոյ: Բայց արդար լինելու համար ևս պէտք է լալտենմ, որ պատմական պիեսների մէջ երբեմն միայն երևում են դրամատիկական գրութիւններ և փոքր ի շատէ լաջող պատկերացրած անձինք: «Սանդուխտի» մէջ, օրինակ, հալըրը (Սանատուրուկ) տատանւում է և լալիս իւր աղջկան (Սանդուխտին) սպանելուց առաջ: «Սամէլի» մէջ Սամէլը տատանւում է հալրասպանութիւնը կատարելուց առաջ:—Բայց աչն, ինչ պէտք է կազմէր դրամալի հիմքը և հետաքրքրական մասը, նոցա մէջ, մանաւանդ «Սամէլի» մէջ, չէ չեղած աչնքան, որբան ալը հարկաւոր է: Բայց որքան զօրեղ և հետաքրքրական կը լինէր, օրինակ, «Սամէլը», եթէ կարմիր թեւերի պէս անցնէին պիեսի մէջ սկզբից մինչև վերջ մի կողմից՝ հերոսի սէրը կամ պարտաճանաչութիւնը դէպի իւր հալրը, և միւս կողմից՝ նոյն ալը հօրը սպանելու ըոպէ առ ըոպէ ածող անհրաժեշտութեան գիտակցութիւնը:—Բաւականին լաջող նկարագրւած կարելի է համարել Սամէլի հօր պատկերը՝ որ կենդանի մարդու տպաւորութիւն էր գործում, մանաւանդ շնորհիւ աչն հանգամանքի, որ նորա դերը կատարում էր պ. Վրոյրը, որը միշտ ձգտումն է ցոյց տալիս, ինչքան հնարաւոր է, տիպական դարձնելու իւր դերը:—Ամբողջ պիեսի մէջ, սակայն, գեղարեստի տպաւորութիւն գործեցին երկու տեսիլներ՝ մէկը աչն, երբ հալրը, վշտացած, որ դիմադրութեան է հանդիպում իւր հարազատ որդու կողմից, ծածկում է երեսը և լալիս, միւսն էլ՝ Սամէլի (պ. Սքելեան) հալրասպանութեան տեսարանը: Աչն մոմէնտը, երբ Սամէլը, իւր սուրը համբուրելով, մղում է նորան հօր կրծքի մէջ, պ. Սքելեանը կա-

տարեց աջնպիսի ձկունութեամբ և աջնքան գեղեցիկ, որ լաւ նկարիչը կարող էր ալդ մոմենտը չափշտակել և մի գեղանկարի նիւթ դարձնել:

Հինգշ. նոյ. 2. «Ակամաւ բժիշկ», Մոլիերի, կոմեդիա երեք արարածով: Սա ոչ աջնքան բնատրուծիւնների, որքան ինտրիգալի կոմեդիա է: Ճշմարիտ է, աչտեղ սկզբից մինչև վերջ թագաւորում է ծիծաղը, բայց ալդ ծիծաղը առաջ է գալիս գործող անձանց կոմիկական դրուծիւնից և ոչ նոցա կոմիկական բնատրուծիւնից: Մի մարդ, որ բժիշկ չէ, ստիպած է իրան ձեռքնել բժիշկ, և ալդ պատճառով աչն ամենը, ինչ ասում կամ կատարում է, իբր բժիշկ, կամաւ ակամաւ ծիծաղ պիտի չաբուցանէ: Ծիծաղելի է և աչն անձանց դրուծիւնը, որոնք նորան բժշկի տեղ են ընդունում և հարկադրում են, որ նա մի կողմ թողնէ իւր համատուծիւնը և բժշկէ հիւանդին: Կոմեդիան հիմնւած է թիւրիմացութեան վերաւ: Բաւական է, որ հէնց առաջին արարածում փարատէր թիւրիմացութիւնը, կոմեդիան իսկոյն կանգ պիտի առնէր. և առաջ զնալ չէր կարող: Այդպէս է և Շէքսպիրի «Սիալների կոմեդիան», որ սեղ բոլոր գործողութիւնները հիմնւած են մի թիւրիմացութեան վերաւ, աչն է՝ որ մի քանի անձինք իրար սոյնքան նման են արտաքուստ, որ նոցա տեսնողները ալդ չեն հասկանում. բայց աչն լուրէին, երբ ալդ թիւրիմացութիւնը փարատեց, կոմեդիան մի քալ առելի անել չէ կարող: Այդպիսով Մոլիերի ներկալ կոմեդիան, իբր դրամատիկական երկասիրութիւն, լուրջ հետաքրքրութիւն չէ ներկայացնում, որովհետեւ, ինչպէս չափնի է, թէ դրամալի և թէ կոմեդիալի սիւները — բնատրուծիւնները կամ տիպերն են:

Բայց չնայած դորան, հեղինակը հասնում է իւր երգիծաբանական նպատակին: Նորան հարկաւոր էր ծիծաղի միջոցով մտրակել իւր ժամանակաւ բժիշկների կեղծիքը և տգիտութիւնը, և հասաւ ալդ նպատակին: Նա մեղ ստիպեց սրտով ծիծաղել աչն անձի վերաւ, որ բժշկական գիտութիւն և կոչում չունենալով, հանդամանքից հարկադրւած, իրան ձեռքնում է բժիշկ, Արիստոտելի անունով և լատինական բառերով թող է փչում միամիտների աչքին, բժշկում է պանիրով և դորա նման դեղերով: Նա մեղ ստիպեց սրտով ծիծաղել և աչն անձանց վերաւ, որոնք աչնքան տղէտ են, որ չեն կարողանում տեսնել իրանց կեղծ բժշկի տգիտութիւնը, և աչնքան միամիտ, որ հաւատում են նորա բժշկական ծիծաղելի միջոցներին:

«Ակամաւ բժիշկը» իւր բովանդակութեամբ լիչեցնում է փոքր ինչ Մոլիերի մի ուրիշ կոմեդիան՝ «Ուշող բժիշկ», որ նորա դրամատիկական գործունէութեան առաջին շրջանին է վերաբերում և որի մէջ նոյնպէս, իսկական բժշկի տեղ, դուրս է բերւած մի ծառալ, որը իրան ձեռքնում է բժիշկ: Եթէ ի նկատ առնենք աչն հանդամանքը, որ Մոլիերի ժամանակ բժշկական գիտութիւնը դեռ ևս չատ ետ էր և նոր էր դուրս գա-

լիս միջնադարեան ոխուլատիկայից, իսկ բժիշկները պահանջը աւելի պահաւոր չէր, քան ալժամ, մեզ հասկանալի կը լինի, թէ ինչու հանձարեղ կատակերգակը չաճախ դիմում է ալդ դասակարգին, և թէ ինչու ալդ դասակարգը ծիծաղի աչնքան առատ նիւթ է մատակարարում նորա պիւսնիներին: Բալց պէտք չէ մոռնալ ալստեղ և մի ուրիշ բան: Մոլիերը ինքը անձամբ իւր մարմնի վերաջ փորձել էր իւր ժամանակաւ բժիշկների արւեստը: Կեանքի մանաւանդ վերջին տարիներում նա չաճախ տկարանում էր, ծառայում անկողնին: Նա ունէր կրծքացաւ և հազ: Նա զիմում էր բժիշկների օգնութեանը: Նորա սեղանի վերաջ շարւած էին լինում դեղերի մեծ ու փոքր շիշեր: Բալց չնայելով իւր բժշկելու ցանկութեանը և բժիշկների տւած խորհուրդներին և դեղերին, նորա առողջութիւնը գնալով քաղքալում էր, և նա մեռաւ համարեա բեմի վերաջ, երբ ինքը կատարում էր և բնական աւակաւ հիւանդի դերը համանուն պիւսի մէջ:

Նա ուրախ եմ, որ պ. Տէր-Գաւթեանը իւր բենեֆիսի համար ընտրել էր Մոլիերի պիւսնիներից: Բալց աւելի ուրախ կը լինէի, եթէ մեր ներկա դերասանական խումբը տարին գոնէ մի քանի անգամ հնչեցնէր բեմից Մոլիերի առողջ, կենդանի հանձարեղ ծիծաղը: Իսկ թէ նա ալդ կարող է անել, դա անկասկած է: Նորան անպաւման մատչելի են Մոլիերի պիւսներից շատերը: Միայն մի ցանկութիւն—լաւ սովորին իրանց դերերը: «Ակամալ բժշկի» մէջ, ինչպէս առհասարակ՝ շատ անգամ պատահում է, դերակատարները աչնքան էլ լաւ չգիտէին իրանց դերերը: Նամանաւոր ահալ է ծակում, երբ ոխալ կամ անկապ նախադասութիւններ է ասում գլխաւոր դերակատարը. պ. Տէր-Գաւթեանը (Չգանարէլ), իհարկէ, ծիծաղեցնում էր, բալց նորա դերակատարութեան վերաջ չէր երևում ուսումնասիրութեան գորշմ: Իբր Չգանարէլ, նա աչնքան հետաքրքրական չէր: Մեր առջև խօսում էր և գործում մեր լաւ չալանի դերասանը իւր սովորական շարժումներով և ձալնով:—Սւելի չալող կատարեց իւր դերը պ. Վրոյը (ժերոնտ), որ միայն իւր արպական գրիմով, միայն իւր աչքերի և շրթունքի շարժումներով կարող կը լինէր արտապատել ալդ անձի միանութիւնը, հրճանքը և բարկութիւնը, առանց նույն իսկ մի խօսք արտասանելու:—«Ակամալ բժշկից» վետոյ ներկայացրին «Օսկան Պետրովիչը գծոխքում», Գ. Սունդուկեանցի վալքրիկ հին պիւսը, որի մէջ պ. Տէր-Գաւթեանը, ինչ ասել կ'ուզէ, լաւ էր և արպական՝ թէ գրիմով, թէ հագուստով, թէ շարժումներով:

Թատրոնը գրէթէ լի էր և ներկայացման տղաւորութիւնը աւելի քան բաւարար:

Հինգչ. նոյ. 9. «Հրէսահի», հեղ. Հալի, թարգմանութիւն Ն. Արէլեանի: Սորա մասին երկար խօսելու բաներ չունիմ: Սա շատ շքեղ բաղմամարդ և աղմկալից պիւսնիներից մէկն է, չօրինւած տաղանդաւոր ձեռքով:—Դրամալի իղէան քրիստոնեաների հալածանքն է հրէաների գէմ:

Մեր հետաքրքրութիւնը, աւելի և աւելի լարւելով, միշտ կենդրոնացած է մնում հրէայի և իւր աղջկայ վիճակի վերաջ: Պիեսը վերին աստիճանի սրտաշարժ պիես է: Գծախտաբար, նորա վերջը (հինգերորդ արարւածը) որքան բնական է և ճիշդ պատմութեան տեսակէտից, այնքան էլ հակա-էսթետիկական է: Բեմի վերաջ շինած է խարոյկ, որի տակը բոցավառւում է կրակը: Խարոյկի վերաջ դրւած է մի անազին սև կաթնաջ եռուն ջրով լի: Սև ալդ դժոխային տանջարանի վերաջ պէտք է ալրեն անմեղ աղջկան հօր հետ—Հանդիսատեսը, իհարկէ, իւր երեակալութեամբ լրացնում է այս վապերի տեսարանի պակասը: Նս ինձ վատ էի զգում աչն ըսպէին, երբ դահիճը, իսկելով աղջկան հօր գրկից, պատրաստուում էր բարձրացնել նորան խարոյկի վերաջ և ձգել կաթնաջի մէջ:—Նս գոհ չէի, որ ներկայ եմ աղպիսի տեսարանի:—Ալդ տեսարանը նորքան հակա-էսթետիկական է, ուրեմն և հակաբեմական, որքան «Տիտոս Անդրո-նիկոս» տրագէդիան, որ վերագրում են Շէքսպիրին և որի մէջ հանդիսականների աչքի առաջ ձեռքեր և լեզու են կտրում և ցոլց տալիս մարդկանց տապալկած մտերը... Նս չեմ չիշում, որ մալրաքաղաքի թատրոններում գէթ մի անգամ ներկայացրած լինին ալդ պիեսը, և ես՝ կարծում եմ դրա պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ վերջին արարւածի հակաէսթետիկական լինելը:—Տեսնել «Հրէուհի» օպերան միևնույնը չէ, ինչ որ «Հրէուհի» դրաման: Մենք այնքան չենք չուզում, երբ մարդ երգելով է մեռնում, բայց դրամայի մէջ իլլիւզիան աւելի շատ է: Պ. Աբէլեանը հրէայի դերը (Նզիազար) շատ չափող և ազդու կերպով կատարեց: Գեղեցիկ էր նա աչն տեսարաններում, որոնք երևում էր տանջւած հօր սէրը դէպի իւր աղջկը: Նրբ նա գրկում էր Հռաքէլին, քնքշ և անհուն սիրով գլուխը թեքում նորա ուսին և ալդ զրո թեան մէջ կատաղի հալեացք ձգում իւր հալածողների վերաջ, ալդ ըսպէին նա նման էր վագրի, որ պաշտպանում է իւր ձագին չարձակող թշնամիներից:—Տ. Մելիքեանը (Հռաքէլ) լաւ էր միայն վերջին արարւածում: Յուսահատական էին աչն հալեացքները, որ նա ձգում էր խարոյկի վերաջ: Ազդու էր նա, երբ, իւր տանջարանի տեսքից սարսափած, ճչում և հօր գրկին էր ընկնում:

Նզիազարը բաւականին նման է Շէլլիին: Ահա ինչու ինձ թուում է որ պ. Աբէլեանը, եթէ ուսումնասիրէ Շէլլիի դերը, համարձակ կարող կը լինի ներկայացնել մեր բեմի վերաջ Շէքսպիրի «Աենետիկ վաճառականը»: Իհարկէ, Շէլլիը աւելի բարդ և դժւար է դերակատարութեան համար: Բայց որքան մինչև ալժամ ինձ հնար եղաւ ծանօթանալ պ. Աբէլեանի բեմական ընդունակութիւնների հետ, ժամանակով նորան շատ պիտի չաջողէի Շէքսպիրի հրէայի դերը:

Թատրոնը գրեթէ դատարկ էր: Պատճառը մասամբ աչն էր, որ ալդ օրը եղանակը անձրևային էր և շատ անտանելի:

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵՆՑ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՅՈՒՄԸ: Ներկայ համարը լոյս ընծայելով՝ բացում ենք «Մուրճ»-ի բաժանորդագրութիւնը 1896 թւականի (ութերորդ տարեշրջանի) համար: Մանրամասն յայտարարութիւնը զրւած է այս համարի սկզբում: Ներելի է մեզ յուսալ, որ «Մուրճ»-ը, ունենալով երկարամեայ բաժանորդների և փորձաւոր բարեկամների մի հաստատ կոնտինգէնտ, այդ վերջինների օգնութեամբ 1896 թւականին կ'ունենայ բաժանորդների մի աւելի մեծ թիւ: Այս համարի հետ ուղարկում ենք մեր այժմեան բաժանորդներին մի-մի դրամական ծրար իրենց համար, և մի երկրորդ ծրար ևս իրենց որ և է ծանօթին տալու համար, որը ցանկութիւն կը յայտնի բաժանորդ գրելու: Խմբագրութեանս զործը մեծապէս թեթեւացած կը լինի, եթէ բաժանորդները կ'շտապեն իրենց բաժանորդագրութիւնը նորոգելու մինչև այս տարւայ դեկտեմբերի (№ 12) համարի լոյս տեսնելը, որ կը կատարուի դեկտեմբերի 20—25-ին: Որովհետև դեկտեմբերի համարի լոյս ընծայելուց յետոյ, առանց չափազելու սխտի ձեռնամուխ լինենք 1896 թւականի յունւարի համարը սլաորատելուն:

Բաժանորդագրութեան զործը դիւրացնելու համար՝ ցանկացողները, Թիֆլիսից դուրս քաղաքներում, կարող են դիմել նաև այն անձերին, որոնք չիշլած են ամսագրի կազմի վերջին երեսում, ստանալով նոցանից անդորրագիր:

«ՄՈՒՐՃ» № 9—10-ի համարը զրգեց ամսագրիս բարեկամներից շատերին թէ հաւաքական և թէ անհատական շնորհակալութիւններ և շնորհաւորութիւններ չալոնել խմբագրութեանս՝ բերանացի և թէ գրատր կերպով՝ Թիֆլիսից, Բաքուից, Պետերբուրգից, Վանձակից, Ներսիսից, Արգիճալից, Մոսկուից:

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ: Զէյթունը ապստամբութեան մէջ է հոկտեմբեր ամսի երկրորդ կիսից: Զէյթունցիք պաշարել էին մի տաճկական վաշտ զօրք և մի քանի թրքական զիւղեր: Ատուգ տեղեկութիւնները դեռ ևս պակասում են, և ապստամբութիւնը դեռևս շարունակում է աւելի ու աւելի մեծ ծաւալ սաանալով ու տարածելով սուրճացիներին ու մարոնիտներին վրա, չնայած որ, թրքական պաշտօնական տեղեկութեան համաձայն, իբր թէ Շաքիր փաշայի ջանքերով հաշտութիւն կապացաւ զէյթունցիներին հետ:

ՏԱՃԿԱ-ՀԱՅՏՐԻ ՅՐԻՆԵԼԸ: Տաճկաստանում կատարող սարսափներից բազմաթիւ հալեր աշխատում են իրենց կեանքն ազատել երկրից հեռանալով: Միմիայն Բաթումի մէջ ներկայումս կան մօտ 300 ալդալիսի հալ ընտանիքներ, որոնք գտնւում են անօգնական վիճակի մէջ:

ՏԱՃԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹԻՒՆ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ: Թէ ինչ սոսկալի հոգեկան վիճակի մէջ պիտի գտնւում լինեն և. Պոլսի թերթերը, ալդկարելի է եղբակացնել ալս հանգամանքից, որ ալս աւելի քան ամբողջ մի տարւալ ընթացքում՝ սկսած Սասունի կոտորածից մինչ օրս՝ և. Պոլսի թերթերը ստիպւած են կ'ատարեալ լռութիւն պահել հալական խնդրի և այն բոլոր իրողութիւնների մասին, որ վերաբերութիւն ունին նորան: Եւ դորա փոխարէն՝ նոքա բռնադատւած են գրեթէ ամեն համարում, կամ չաբաթը մի քանի անգամ, անփոփոխ ձևով տպագրել ներքին լուրերի մէջ ալս տողերը՝

«Նահանգներուն վիճակը: (Այս ինչ ամսի ալս ինչ «թւի) Մեծ եպարքոսին ողորած հեռագրեր կը ծանուցանեն թէ՝
«Հալէպի, Էնկիւրիի, Պէլուսի, Էրզերումի, Վանի, Տրապիզոնի նա-
«հանգներուն մէջ ալ, չնորհիւ Վեհ. Սուլթանին, կատարեալ ան-
«գորութիւն և ապահովութիւն կը տիրէ»:

Երբեմն լինում են փոփոխութիւններ նահանգների անունների չիշատակման մէջ—թէ չէ մնացածը միշտ միևնույնն է լինում: Ալդ կրկնւում է տարին տասերկու ամիս նոյն իսկ երբ արար աշխարհ զղրղում է Տաճկաստանից եկող սոսկալի լուրերով երկրի մէջ տիրող խառնակութիւնների և կոտորածների մասին: Նոյն իսկ և. Պոլսի մէջ սեպտեմբերին եղած ահաղին իրաբանցումի և մինչ մօտ 1000 հոգու սպանութեան մասին և. Պոլսի թերթում տպւեցին միայն մի-երկու կարճ «պաշտօնական» ծանուցումներ, ինչպէս այն որ տպւած էր «Մուրճ»-ի անցեալ համարում (տես էջ 1309—1310): Իսկ բարենորոգումների սուլթանի իրադէն, որի բնագրի հետ ծանոթացրեց «Թալատ» լրագիրը և որ մեր ընթերցողները կը գտնեն

ամսագրին ներկայ համարում, Կ. Պոլսի թերթերում ծանուցեց մի ալ խմբագրութեամբ (տես Նոյնպէս «Մուրճ» ի ալս համարը):

Այժմ, ինչպէս երևում է, տաճիկ կառավարութեանը բաւական չի եղել լրագիրներին հարկադրելու, որ ոչ մի տող չտպեն իրողութիւնների մասին. բաւական չի եղել նաև որ հալ թերթերը թարգմանաբար արտատպել են թիւրք թերթերից «Բարենորոգումների կալսերական իրադէն», նա կամեցել է բռնադատել որ հալ թերթերը մի գովեստ էլ «իրենց կողմից» գրեն ալդ իրադէն և կառավարութեան կարգադրութիւնների առիթով: Ֆակտը ալն է, որ ալդպիսի բռնադատում տեղի է ունեցել և որ, անձնատուր լինելով, Կ. Պոլսի Արևելքի ճիւղի տէր Շարգիլ է իրենց համարներում առ 3 նոյեմբ. և Հալբենիք առ 4 նոյեմբ. մի-մի լողած են նւիրել «Անատուրի բարենորոգումների» մասին: (Համեմատէք ալդ մասին նաև մեր թղթակցի «Նամակներ Կ. Պոլսից» ալս հալարում): Ֆակտ է նաև ալն, որ ալդ բաւականին երկար լողածները տպած են «Ներքին լուրերի» մէջ, բոլորովին հակառակ ալդ թերթերի սովորութեան, որոնք երբէք լողածներ չեն գրում «շուրի» բաժնում: Հալբենիքի միջոցով մենք ծանօթ ենք ալդ թերթի և Արևելքի գրած անստորագիր լողածներին: Բարոյական պարտք ենք համարում հրապարակով վկայել, որ, ինչպէս ալդ պարզ երևում է թէ գրածքների ոճից, թէ նոցա անստորագիր լինելուց, թէ «լուրերի» մէջ հրատարակած լինելուց և թէ խմատի անորոշութիւնից և ալն, ակնարկւած թերթերի խմբագրութիւնները ամեն ջանք գործ են դրել ալդ լողածների բռնութեամբ գրած լինելը մատնել և իրենց վրալից հեռացնել բարոյական արատը:

Բաց ալդ բռնադատումից չետոյ կառավարութիւնը սկսեց պահանջել որ ալդ թերթերը շարունակեն նաև ալսուհետև միշտ գրել կառավարութեանը նպատաւոր լողածներ: Դորանից ալդ թերթերը հրաժարել են և չեն գրել: Ապա լողածեր գրելը իւր վրա է առել ինքը կառավարութիւնը և սպառնալիքներով առաջարկել ալդ թերթերին, որ տպեն իբր խմբագրական լողածներ: (Ալդ լողածների խմատը թէ հալերը վալելել են օսմանեան տէրութեան բարի խնամքը. թէ գրողմունքը առաջ է եկել միալն մի քանի «սրկաներից» որոնք արտասահմանում լանձնախմբեր են կալմել. թէ հալոց կաթողիկոսը, պատրիարքը և բոլոր եկեղեցականները ոչ միալն լուռ հանդիսատես են ալ և նպատաւոր «խառնակիչներին» և ալն, (ղոքա լիչեցնում են իսկ և իսկ Նովոս Վրեմյա լրագրի Ռուսկի Ստրանիկ ծածկանունով գրած Կ. Պոլսի թղթակցութիւնները 18 սեպտեմբերի Կ. Պոլսի մեծ ցուցի առիթով): Յիշեալ

թերթերը սակա՛ն կարողացել են խոյս տալ և չտպել առաջարկած լռութեանը: Միակ հպերէն թերթը որ տեղի է տւել կառավարութեան թելադրութիւններին, եղել է «Լօս» (որը կը նշանակի հարկաւ «խաւար») շաբաթաթերթը, որի հրատարակիչն է Վահան վարդապետ Տէր-Մինասեան, Պարտիզակցի: Եւ այդ թերթը նոր է հիմնւած և համարւում է կառավարութեան բերան:

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Էջմիածնում, որի գործունէութիւնը աչնքան «բեղմնաւոր» է լինում, որ հասարակութիւնը այդ բանից տէ՛րն է լսում, բացի նորա կալմի պարբերական և անպտուղ փոփոխութիւններից, այդ Յանձնաժողովը ալժմ, Վ.հ. Կաթողիկոսի կոնդակով 17 հոկտեմբերից 1895 թ., նորից վերակազմւել է աչսպէս. Նախագահ՝ Սուքիաս արքեպ. Պարզեանց. անդամներ՝ տեսուչ ձեմարանի Կարապետ Կոստանեանց, ուսուցիչներ ձեմարանի՝ Կարապետ վարդ., Եզնիկ վարդ., Յուսիկ վարդ., Յովհաննէս Յովհաննիսեանց և Ստեփանոս Կանաքեանց:

ՂԱՐՍԻ ՆՈՐ ՅԱՋՈՐԴ Նշանակւած է Եղիշէ վարդապ. Մուրատեան, որ մինչև այդ՝ Գորու լաջորդն էր: Եղիշէ վարդապետից առաջ Կարսի լաջորդն էր Նահապետ վարդ. Նահապետեան, որ ալժմ Կաթողիկոսի դիւանապետն է: Եղիշէ վարդապետը առանձին լանձնարարութիւն է ստացել խնամելու Տաճկաստանի կոստորածներից ճողոպրահներին: Դոցա խնամելու համար լռութեամբ զաղթականները ժողովւած դրամահարից, ըստ Արարատի, մի որոշ գումար ևս լանձնեց Կարսի լաջորդին:

ԳՊՐՈՑ ԷՆՋԵԼԻՈՒՄ. Պարսկաստանի Կասպից ծովի ափին գտնւող Էնզելի աւանում, աչս տարի լացեց հաջոց դպրոց սղանների և աղջիկների համար:

Ի. ԴՈՐԵՄԸՑԿԻՆ Նշանակւած է կառավարիչ ռուսաց ներքին գործերի մինիստրութեան, ի տեղի ներքին գործերի մինիստրի, որ Գուրնովժն էր: Գորեմըկինը ներկաչ տարւաչ ապրիլին Նշանակւած էր ներքին գործերի մինիստրի օգնական:

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Նշանակեց Բէուֆ-փաշա, որի նշանակման ֆիրմանը մեծ հանդիսով կարողացեց հոկտ. 9-ին: Ներկաչ էր Շաքիր-փաշան, կառավարական և զինւորական պաշտօնեաներ և քրիստոնեաչ հասարակութիւնների՝ հոգեւոր պետերը, սոցա մէջ նաև հաջոց ս. առաջնորդը:

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Նշանակեց Բէուֆ-բէչ, որ առաջ Դէղէ Աղաջիի կառավարիչ էր: (Խարբերդի նահանգը թրքական Մամուրէթ-Իւլ-Աղիզն է):

ԱՅԴԷՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Նշանակւած է նախկին մեծ վեզիր Քեամիլ-փաշան:

ՊԱՍՏԵՐԻ ՅԱԶՈՐԻՇ: Պատեօրեան Ինստիտուտի վարչութեան խորհուրդը միաձայն ընտրեց Դ. Լ. Լ. Ի. Ի.՝ վերատեսուչ (գլխավոր) փոխառուտի՝ Ի. Լ. Լ. Ի. հանգուցեալ Պատեօրի: Դ. Լ. Ի. Լ. Ի. մինչև այժմ փոխատեսուչ էր ազդ ինստիտուտի, որի պաշտօնի համար խորհուրդը ընտրեց Դ. Լ. Ի. Լ. Ի., որ չալտնի է իւր աշխատութիւններով՝ վերաբերեալ գիտերիտի բժշկութեան:

Պատեօրի գիտական աշխատութիւնների մասին մեր ընթերցողներին տուած ենք «Մուրճ» 1893 թ. № 1 և 2 տպած պ. Ս. Բալադեանի ընդարձակ չօղածին («Լուի Պատեօր»), զբաղած մեծ գիտնականի կեանքի 70 ամեակի առիթով:

ՀԵՂԵՂԵՐ ԿՈՎԿԱՍՍՈՒՄ: Հոկտեմբերի վերջին օրերը անընդհատ անձրևներով, զխաւարապէս Քուրթալիսի Նահանգում, Բիոնը և թէ մանր գետակները սկսեցին բարձրանալ չտեսնած չափով: Կարիւրա գետը հոկտ. 29-ին դուրս գալով ափերից՝ տարածեց մի քանի վերտառչափ, հեղեղելով դաշտեր, երկաթուղու Սևրի կամուրջը ջուրը տարաւ, Աջամիտինը վնասեց, երկաթուղու գիծը ողողեց, հեռագրական սիւները տեղատեղ հեղեղը տարաւ: Բիոնը հեղեղել էր մեծ տարածութիւն: Հեռագրակ մեծ հաղորդակցութիւնը նոյեմբերի 1-ին Բիոն գետի դէպի Թիֆլիսի կողմը ընդհատեց: Երկաթուղակին հաղորդակցութիւնը Թիֆլիսի և Բաթումի մէջ ընդհատեց երկաթուղու դժին հասած մեծամեծ վնասների պատճառով: Պոստը Բաթումից Թիֆլիս սկսեց գնալ Նովորոսիսկի և Վաղիկակազի վրայով: Հաղորդակցութիւնը Թիֆլիսի և Բաթումի միջև կարող է վերականգնել միայն դեկտեմբերի վերջը:

Բարձրացաւ նաև Քուր գետը, թէև Թիֆլիսում ոչ աչքքան որչափ 1893 թ. դարձան: Բալց վնասեց Աւաղեան ջրանցքը, որի առունները հեղեղեցին շնորհիւ աչքքան որ ոչ մի նախապատրաստութիւն չէր տեսնած թումբեր շինելու՝ ջրի ընթացքը արգելելու համար: Զրանցքին հասցրած վնասը հաշուած են մինչ 30.000 ռուբլի:

ԳՈՐԻ քաղաքը հոկտեմբերի 31-ից սկսած հեղեղեց Մեջուղու գետակի չափազանց մեծանալուց: Ոչ ոք չի չիշում աչք քաղաքում աչքակիսի հեղեղ: Քաղաքը մի քանի օր ջրի մէջ էր: Մի քանի հարիւր տուն և աղիների հեղեղը տարաւ: Քարէ կամուրջը Մեջուղու գետակի վրայ կործանեց: Լոգական սլոպիմնաղիան ջրի մէջն էր: Նոյնպէս և քաղաքի բանտը: Վնասները միլիոնների են հասնում:

ՀԵՂԵՂ ԳՈՐԻՈՒՄ: Գորին հոկտեմբերի 1-ից մի քանի օր ամբողջապէս ջրի մէջ էր:

ՊԱՆԶԻ ԵՒ ԵՐԿԱՅԻ ՀԱՆՔԵՐ: Նախկին հալ ուռուցիչ, հանրածանօթ «Մարկենի լեզու» դասագրքի հեղինակ, ալ նաև Աղաբեանի ու Ման-

գինեանի զստագրքերի հրատարակութիւնների տէր պ. Ն. Կ. Տէր-Ղևոնդեան տարիներ շարունակ զբաղւած լինելով հանքալին խուզարկութիւններով իւր կալածներում Գանձակի նահանգում, նորերս ներկայացրել է Կովկասի Գլխաւոր տնտեսական Ընկերութեան պղնձի և երկաթի հանքերի նմուշներ Նորա պղնձի հանքերը երկուսն են՝ Շամքոր գետի մէկը ձախ, միւսը աջ ափին, Թաքնալու և Աէֆալու գիւղերի մօտ, Գանձակ քաղաքից 25 վերստ և Թիֆլիս-Բաքու երկաթուղու Շամքոր կայարանից 10 վերստ հեռու։ Թաքնալուի հանքը պարունակում է պղնձի և ծծմբի հրաւաքարեր՝ մօտ մի տոկոս նիկելի խառնուրդով։ Շերտի խորութիւնը մի արշինից անց է։ Աէֆալուի հանքատեղում, բացի պղնձի հանքից, կալ նաև առանձին հանք կոբալտի-մարգանցի։ Պղինձը 20—30 տոկոս է։

Երկաթի հանքերը գտնւում են Զինարլիջ կոչւած տեղում, Գանձակից 15 և Շամքոր կայարանից 12 վերստ հեռու և հարուստ է ամեն տեսակ երկաթահանքերով։ Երկաթի հանքերի խորութիւնը (լաշնութիւնը) 1-ից մինչ 10 սաժէն է։ պարունակում են մինչ 65% երկաթ։

ԿՐԻՋԻՍ ԿԱՍԵԹԻԱՅՈՒՄ։ Ներկալ տարին Կախեթիան անց է կացնում մի տնտեսական ճգնաժամ, որի նմանը չեն փչում։ Թէ գլխացիների և թէ մանաւանդ կալածատէրերի դրութիւնը անելանելի է։ Պատճառը՝ խաղողի ագիւնների անդրերութիւնն է։ Թէ որքան սակաւ է եղել գինին ալս տարի, կարելի է եզրակացնել նրանից, որ արքունի ագիւններից, որոնք ամենալաւ մշակածներն են, և որոնք առաջւալ տարիները տալիս էին 300—400 սալ (արբա) գինի, ալս տարի հազիւ 30 սալ են տուել։ Գորանից կարելի է եզրակացնել ուրիշ ագիւնների բերքի մասին, որնք նահապետական ձևով են մշակում։ Զարդարացաւ և ալն չուսը, թէ բերքը շատ քիչ լինելով թէ Կախեթիայում, թէ Խմրեթիայում, Քարտալինիայում և թէ Գանձակի նահանգում, գները կը բարձրանան։ Հացը առատ է—գնողներ դեռ չկան։ Անճարութիւնից Սղնախի շուկայում կը տեսնէք որ կովը, որ արժէ ամենապակասը 25 ռուբլի—ծախուում է 8—9 ռուբլով։ Թիֆլիսի գնողները առաջարկում են ցորենի փթին 40—45 կոպէկ, որ նշանակում է ձրի տալ, քանի որ ճանապարհածախքը մինչ Թիֆլիս նստում է 20 կոպէկ։ Սղնախի շուկայում ծախում են Ալազան գետի միւս կողմում գտնւած Ղաւասի գիւղից բերած ցորենի ալիւր 20 կոպէկ անհաւատալի գնով։

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ընտրւեց նոյեմբ. 5-ին Մ. Բուռիա Իեան քաղաքի խորհրդարանի (ղումա) կողմից 12 ձալնով ընդդէմ 8-ի փոխարէն իւր ժամանակից աւելի առաջ հրաժարական տւած բժ. Լևոն Տիգրանեանցի, Պր. Մ. Բուռիաթեանը մինչ ալժամ քաղաքագլխի

անդապահն էր: Նա միակ քւէարկւողն էր: Միւս առաջարկւածները՝ նահանգապետի մօտ առանձին չանձնարարութեանց պաշտօնեայ Թ. Քալանթարեան, կառավարութիւնից առաջին անգամ նշանակւած Նախկին քաղաքադուլիս Յ. Կորգանեան և ներկայումս՝ քաղաքային վարչութեան անդամ Մեխտի-բէկ Սուլթանով — հրաժարւեցին քւէարկւելուց:

ՊԱՆՁԱԿ քաղաքի ինքնավարութեան համար, քաղաքային կանոնադրութեան 24-րդ խորհրդի համաձայն կազմւած ընտրողական ցուցակից երեւում է, որ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունին 862 ընտրող, որոնցից 507 քրիստոնեաներ և 355 մահմեդականներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԻ 25-ԱՄԵԱԿԻ լրացաւ ներկայ նոյեմբերի 5-ին: Ահա թէ Ռուսաստանում զինւորագրութիւնը ինչ շրջաններով է անցել: Մինչև Պետրոս Մեծը (1682—1723) Ռուսաստանը չունէր մշտական կանգուն զօրք. զինւորական ծառայութիւնը իբր պատւի տուրք կրում էին ազնւականները և բուլաների որդիք, որոնք հրամանատարութեան պաշտօններ էին վարում. բուն զօրքը պատերազմի ժամանակ կազմւում էր կամաւորներից և որոշ թւով գիւղական տներ պիտի մի-մի զինւոր տալին: Պետրոսը զօրքը կանգուն և մշտական դարձրեց. ազնւականները ինչ-ինչ արտօնութիւններ ստացան, որով չատիրը ազնւականներից ազատւում էին ծառայութիւնից, իսկ 18-րդ դարի երկրորդ կիսում նոքա բոլորովին ազատեցին աչք պարտաւորութիւնից. ազատ էին նաև հոգևորականութիւնը, վաճառականները և պատւաւոր քաղաքացիք. բոլոր ծանրութիւնը գցեց գիւղացոց և մեչչանների վրայ: Ալեքսանդր II 1870 թականին մտցրեց ընդհանուր անձնական զինւորական ծառայութիւնը, որը Ներսիսի երկիրներից միայն Անգլիայում չի գործադրւում: Այդ օրէնքի համաձայն՝ ամենքը, որոնք 20 տարեկանը անցնում են, կոչւում են վիճակահանութեան և ում ընկնում է վիճակը՝ նա գնում է ծառայութեան:

ՏԱՄՆԱՍՏԵԱԿ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ Հոկտեմբ. 22-ին տօնեց տասնամեակը Թիֆլիսի առաջին կիրակնօրեայ դպրոցի (ռուսաց), որ հիմնել է օր. Օ. Վ. Կալչանովա: Դպրոցին մասնակցելու համար օր. Կալչանովան ալս տասը տարեալ մէջ հրաւիրած է քաղաքիս լաւագոյն ինտելիգէնտ կանացի ուժերը:

ՀԱՅՐ ԱՅՏԸՆԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ հանդիսաւոր կերպով տօնեց Վիեննայում նոր սամարով նոյեմբերի 3-ին (հոկտ. 22): Հանդեսս Ամսօրեայ ամսաթերթը, ուր տրւած են չորեքանի մանրամասնութիւնները, նոր ստացւած լինելով՝ չորեքանի հանգամանքների մասին տեղեկութիւնները թողնում ենք «Մուրճ» ի գալ համարին,

ենք չուսով ենք թէ կարող կը լինենք տալ նաև 1) Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մի ամբողջ պատմութիւնը, 2) Հայր Ալեքանդրի գործքերի գնահատութիւնը, 3) Մխիթարեան միաբանութեան տօնած հանդէսի գնահատութիւնը, Առ ալժմ ալսքան կարող ենք հաղորդել, որ Թիֆլիսի հալ մամուլի բոլոր օրդանները մասնակցեցին ալ չորեքեանին, բացառութեամբ «Մուրճ»-ի, որը իւր համար անհնարին համարեց տաճկա-հայերի կոտորածներու ամենաբարձր օրերին մասնակցել որ և է տօնախմբութեան:

ՌԱՅ. ԷՐԻՍՏՈՎԻ ՅՕԲՆԵԱՆԸ մեծ շուքով կատարեց հոկտեմբ. 22-ին, Վրաց ազնականաց թատրոնի դահլիճում: Ստացած էին 40 հեռագիրներ Ներկայ էին բազմաթիւ պատգամաւորներ, նաև Գուրիապից, Մինգրելիապից, Աջարիապից, Կարուլետից, Խեւսուրիապից և ալլն: Օտարներէց ներկայ էր ռուս բանաստեղծ Վ. Վ. Վելիչկօ, որ ոտանաւոր կարգաց: Տրեցին նաև արժեքաւոր ընծաներ: Երեկոյեան ներկայացումից լետոյ թատրոնի ընտորանում տրեց ընթրիք, որին մասնակից էին 203 հոգի: Ի պատասխան կենդանի յօբեկարը կարգաց իւր մի անտիպ ոտանաւորը: Ընթրիքից լետոյ եղան տեղական պարեր, որոնք տեցին մինչև առաւօտ:

ՅՐԱՆՍԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 100-ԱՄԵԱԿԸ. Ֆրանսիան ունի մի ուրոյն հաստատութիւն, որ իւր նմանը չունի—դա Ֆրանսիայի Ինստիտուտն է: Նա հիմնեց 1795 թ. հոկտեմբերի 25-ին, վոխարինելու կամ ամբողջացնելու համար Ֆրանսիական ակադէմիա կոչւած հիմնարկութիւնը, որ հիմնել էր հռչակաւոր մինիստր Ռիշլիօ 1635 թ-ին: Ֆրանսիայի Ինստիտուտը ունի 5 բաժանմունք, 1) Ֆրանսիական ակադեմիա, 2) Արձանագրութիւնների և գեղեցիկ դպրութեան ակադեմիա, 3) Գիտութիւնների ակադեմիա, 4) Գեղարեստների ակադեմիա, 5) Բարոյական և քաղաքական գիտութիւնների ակադեմիա: Դոցանից ամէն մէկը ներկայացնում է իւր ճիւղի ամենանշանաւոր ներկայացուցիչների ժողով, որը ունենում է իւր կանոնաւոր նիստերը, ուր կարդացւում են անդամների աշխատութիւնները և ալլն: Ամենահռչակւած բաժանմունքը՝ Ֆրանսիական Ակադեմիան է, որի անդամները, (ախպէս կոչւած «անմահներ»)՝ թւով երբէք ոչ աւելի քան 40 հոգի՝ ընտրւում են ամեն ճիւղի ներկայացուցիչներից, որոնք ամենափալուն անուն են վայելում և ամենից շատ գնահատւած են իրենց գրական կամ գիտական վատականերով: Նորա առաջին կոչումն է ասկան մաքրել ֆրանսերէն լեզուն, և նորա հրատարակած բառարանը մեծ ազդեցութիւն է գործում ֆրանսերէն լեզու վրայ: Ինստիտուտի անդամներ ընտրւում են նաև օտարներից, իբր թըղթակից-անդամներ: Նոր անդամները ընտրւում են համապատասխան

բաժանմունքի անդամների ազատ քաղաքակրթամբ: Առանձին շուքով կատարում է նոր անդամի ընդունելութիւնը Ինստիտուտի աջն բաժանմունքում որ կոչւում է Ֆրանսիական Ակադեմիա (Ակադեմի Ֆրանսէզ): Ֆրանսիական Ակադեմիայի անդամ ընտրւում են ամենաաչքի ընկնող ֆրանսիական գրողները, ֆիլոսոֆաները և ազգի պարծանք կազմող գիտնականները—ինչ ճիւղից և լինեն նոքա: Ըստ ժիւլ Սիմոնի, Ֆրանսիական Ակադեմիան այս 250 տարւում երկու անգամ է միայն սխալ սրժել, որովհետեւ երեւի ֆիլոսոֆա Գեկարտ և առակախօս Լաֆանտէն նորա անդամներ չեն եղած:

Ինստիտուտի հարկւրամեակի հանդէսը կատարւեց մեծ հանդիսաւորութեամբ, ներկա էր նաև հանրապետութեան նախագահ Ֆելիքս Ֆոր: Հանդիսին ներկա լինելու համար եկած էին նաև օտար թղթակից անդամներից շատերը:

ՆԻՒՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Իշխան Սիմէոն Արամելիք Լազարեանը, ներկայ հոկտեմբերի 13-ին Ս. ԼՂմիածին ուխտի գալով, ըստ ատուքեան Արարատ ամսադրի (հոկտեմբերի համար), խոստացաւ Պետերբուրգի եկեղեցու գումարներից տարեկան 5000 ռուբլի զրամ չատկացնել Գէորգեան ճեմարանին, որպէս զի աշնտեղ Լազարեանց անունով որդեգիրներ ուսանեն:

Պարտք ենք համարում չափնել, որ Պետերբուրգի հաւոց եկեղեցին ունի հոգաբարձութիւն, որը միայն իրաւունք ունի կարգադրութիւն անելու աչգ եկեղեցու գումարների վրայ: Այլ և աւելորդ չենք համարում լինեցնել, որ Վեհ. Կաթողիկոսի դէպի Պետերբուրգ արած ուղեորութեան ճկարագրութեան մէջ «Մուրճ»-ը (տես № 6, էջ 831) տպեց իւր ստացած հետեւալ տեղեկութիւնը. «...մեզ հաղորդում են իբր հաստատ աշն, որ Պետերբուրգի հաւոց մեծահարուստ եկեղեցու հոգաբարձութիւնը վճռել է եկեղեցու եկամտից միանւազ 5000 ռուբլի նւիրել Գէորգեան ճեմարանին»:

Անկարկոր չէ գիտենալ թէ Արարատի աշխհ հաղորդած լուրը որքան կապ ունի աշն իրողութեան հետ, որի արտապայտութիւնն եղաւ մեր վերոյիշեալ տեղեկութիւնը, որ տպւեց «Մուրճ»-ում գրեթէ չորս ու կէս ամիս աւելի առաջ:

ՕՐ. ՄԱՐԳԱՐԻՏ ԲԵԿԱՐԱՆԱՆ, որ Շէպարիալի Բերն քաղաքում աւարտել է բժշկական ուսումը գոքատրի աստիճանով, վիեննայում հոկտեմբերի վերջերքը մի դասախօսութիւն կարդաց Հալաստանի կանանց և նոցա մասնագական քոչրերի մասին:

ՍՈՒՒՄՈՒՄՈՒՄ: Կազմւում է բաժնաւոր ընկերութիւն հողեր և տներ գնելու: Սուխում քաղաքում: Ընկերութեան անգամ կարող է լինել

ամեն ռուսական հպատակ Դրամագլուխը կազմում է պալերից (300 ռուբլի ամեն մի պալը), պահեստի գումարներից, փոխառութիւնից և ընկերութեան գուքերի եկամուտների մի մասից:

Սուխոմի մէջ և շրջակայներում (Աբխազիա) հողեր և տներ գնողների $\frac{2}{3}$ մասը ռուսներ են:

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ: Հոկտեմբերի 14-ին Նահանգի Մագլակի գիւղից 3 տղամարդ և 4 կին քաղաքի հրէաների թաղով Քուլթալիս վերադառնալիս՝ տեսան հրէաների մի խումբ որ ծաղրում էր կիսախեղաքար մի լմերեկ աղջկան, որին նոքա պաշտպանեցին հրէաների դէմ: Սկսեց կռիւ. իմերէլներից մէկը Լուկա Կոստովա մերկացրեց դաշոյնը, բայց ստիպւեց փախչել և ընկնել Բիոն գետը, ուր նա դուրս եկաւ մի կղզու վրայ, որտեղից շորերը հանելուց փառլ, ուղեց անցնել միւս ափը: Այդտեղ նորա գլխին դիպաւ հրէաների գգած քարերից մէկը. նա ուշաթափւեց և խեղդւեց: Ոստիկանութիւնը բռնեց այդ դործում լանցաւոր 7 հրէաներ: Հրէաների ալդարարքից կատաղած՝ հոկտ. 16-ին առաւօտը իմերէլները ծեծեցին մի քանի հրէաների շուկայում: Ոստիկանական պահակախմբերին օգնական նշանակւեցին 20 կողակ մի օֆիցերով: Բայց վրդովմունքը աճեց, ամբոխին միացան զինուորագրական վիճակահանութեան համար քաղաք եկած 400 գիւղացիք: Ոստիկանութիւնը կարգադրեց հրէաներին հեռացնել շուկայից, և մի վաշտ զօրք աւելացաւ կարգ պահող ուժերի վրայ: Երեկոյեան 4 ժամին ամբոխը ջանաց մտնել հրէաների թաղը, բայց չաջողւեց. չատերը խուլ փողոցներով մտան թաղը և քարերով ջարդեցին հրէաների տների պատուհանները: Զինուորական ուժը աւելացաւ մի քանի վաշտերով և: Երեկոյեան ժամ 9-ին կարգը վերականգնւած էր: Հոկտ. 17-ին առաւօտը իմերէլները նորից ջանացին մտնել հրէաների թաղը, դէպի ուր քարեր էին արձակում. դոցանից ոմանք դիպան զինուորներին և ոստիկաններին: Զօրքերի զգուշ գործողութիւնները, նահանգապետի չորդորները և մի քանի հրէաների ձերբակալումը աղղեցին ամբոխի վրայ և հրապարակներն ու փողոցները մաքրւեցին ամբոխից, և կարգը վերջնականապէս վերականգնւեց:

ՄԱՀԻԱՆ ՊԱՏԻԺ տրւեց Երևանում հոկտեմբերի 30-ին Ալիբէկ Հաչրապետեանին և Խաչատուր Սարգսեանին, որոնք դատւած էին զինուորական դատարանով բացառիկ օրէնքի հիման վրայ:

ՏՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՀԱԻՈՐՄԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ Օղեսաւում, բացւեց այս տարւաչ լուսիսի 4-ից և տեեց մինչ հոկտեմբերի 1-ը: Յուցահանդէս սարքողն էր Կալսերական ռուսաց Տեխնիկական Ընկերութեան տեղական ճիւղը, որը լրացնում է շուտով իւր գոյութեան

25-ամեակը: Այդ ցուցահանդէսով Ընկերութեան Օղղեսալի ճիւղը կամեցել էր համագումար տալ ալն բոլոր կատարելագործութիւնները, որ եղած են տներ շինելու տեխնիկայի և տներ կահաւորելու և սարքելու մէջ: Յուցահանդէսը համեստ չափսեր ունէր, բայց մասնակցել էին Ռուսաստանի հարաւը և Ղրիմը ու Ռուսաստանի և Արևմտեան Աւրոպային խոշոր արդիւնաբերութեան կենտրոնները: Անդրկովկասը չէր մասնակցում:

Յուցահանդէսը սակաւն լիակատար չէր, ի միջի ալոց ուշք չէր դարձած նախ ալն բանի վրալ թէ ինչպէս համեստ միւոցների տէր մարդը իւր տունը կահաւորէ. և երկրորդ՝ գիւղական տունը բուրովին բացակայում էր:

ԻՇԽԱՆ ԼՈՎԱՆՈՎ-ՌՈՍՏՈՎՍԿԻՅ և գեներալ **ԴԻԱԳՈՍԻՐՈՎ**, բաւական ժամանակ Ֆրանսիա անցուցին, դեն. Դրագոմիրով իւր Ֆրանսիական մեծ զօրախաղերին Ռուսիայի ներկայացուցիչը: Նոքա մեծ ընդունելութիւններէ գտան կառավարութեան կողմից, ամրապնդելով Ֆրանսիայի և Ռուսիայի միջի չարաբերութիւնները: Իսկ թագաւոր-կայսրը այս մօտ ժամանակներս Տուլոն և Պարիզ քաղաքներին թանկագին ընծաներ զրկեց ի վշատակ Ֆրանսիացոց և ռուսաց նաւային էսկադրաների անցեալ տարիները Արոնշտատում և Տուլոնում արած փոխադարձ ալցելութիւններին:

ՊՐԱՆՍԻԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ: Ռիքս'ի (չափաւոր հանրապետական) մինիստրութիւնը ընկաւ Նոր մինիստրութեան կազմելը Հանրապետութեան նախագահ Ֆելիքս Ֆոր լանձնեց Լէօն Բուրժուաին, որը զիստուր ներկայացուցիչն է չափաւոր արմատականները: Բուրժուայի կառավարութեան գլուխ անցնելը նշանաւոր երեւոթ է Ֆրանսիայում, որովհետեւ աւելի քան քառորդ դարի մէջ, ինչ գոյութիւն ունի երրորդ հանրապետութիւնը՝ ոն առաջին անգամն է որ արմատականները կառավարութեան գլուխ են անցնում: Բարժուա'ի մինիստրութեան մէջ, բացի իրենից որ ներքին գործերի պարտֆէլն է վերցրել, կարեւոր անձերից մտել են Ալեքսեակ—պատեւրագմական մինիստր, Լոկուա—ծովային, Բերթըլօ—արտաքին գործերի, որոնցից Ալեքսեակը — զինուորական չէ. նա լաւագոն ապագայ է խոստանում և շատ աչքի ընկնող ոչ թէ Ֆրանսիայի ներկայիս գործիչների մէջ. երկրորդը՝ ծովապետ չէ, իսկ երրորդը՝ հռչակաւոր քիմիկոս է: Նոր մինիստրութեան ծրագրի ամենագլխաւոր կէտը պիտի համարել՝ եկամտային աճեցող հարկը, որ Վերմանիայում վաղուց գոյութիւն ունի: Ծրագրի մէջ մտնում է նաեւ բանւորական կասալի հիմնելը: Բուրժուայի մինիստրութեան կազմելը Ֆրանսիական ներքին կեանքի համար լաւաշղիմական երեւոթ պի-

տի համարել, բայց պարլամենտում նա չի ունենալ մի ամփոփ և որոշ մեծամասնություն, հետևապէս կամ նա կարճատև կեանք կ'ունենալ և կամ մինիստրութիւնը ստիպւած կը լինի Հանրապետութեան նախագահին առաջարկել որ պարլամենտը արձակւի՝ նոր ընդհանուր ընտրութիւններ կատարել տալու համար։ Բուրժուալի մինիստրութիւնը, որ ներկայացուցիչ է արմատական և սոցիալիստ կոռակցութիւնների, սոցյա վրա՝ միաջն հիմնելով՝ չի կարող կռաւարել, որովհետև դոքա մեծամասնութիւն չեն կազմում։ Նա ստիպւած կը լինի հակել դէպի չափաւոր հանրապետականները, որոնք եթէ սխտեմական հակառակութիւն չանեն մինիստրութեան, — Բուրժուալի մինիստրութիւնը կը ներկայանալ իբր ողակ չափաւորների և ծայրահեղ արմատականների, — մի հանգամանք, որ բաղաւորութիւն կարող է լինել սոցիալական օրէնսդրութեան մէջ լեւտ մասցած Ֆրանսիայի համար։

ԳԵՐԵՎԱՃԱՌՈՒԹԻՒՆԸ, որ, ինչպէս չափնի է, պաշտօնապէս վերադել է Զանդիբարում (տես «Մուրճ» 1892 թ. № 1 — 8, էջ 1223), իրապէս շարունակում է դուլութիւն ունենալ Զանգիւար և Պեմբա կղզիներում։ Այդ մասին Դոնալդ Մեկենզի նոր տոմարով հոկտ. 14-ին լոնդոնում, մի միտինգում, ճառ խօսեց, որից երևաց թէ գերեվաճառութիւնը շարունակում է գոլութիւն ունենալ ալը կղզիներում անգլիական զրօշակի տակ։ Դերութիւնը վերացնելով՝ անգլիացիք թողին եղած գերիներին իբր ստրուկներ ցմահ, արգելելով նոր գերիներ ունենալը, բայց ալժմ չափնում է որ նոր գերիներ են բերում Աֆրիկայից։ Պեմբա կղզում կալ 90.000 ստրուկ (զերի), Զանդիբար կղզում 176.000 ստրուկ։ Աջնպէս որ ալը երկու կղզիների 400.000 բնակիչներից՝ 266.000-ը ստրուկ են։ Արաբները ստրուկներ են տանում Պարսից ծոցի ափերը և ալնտեղ ծախում։ Ալը բոլոր Մեկենզի սեփական աչքերով տեսել է։

† ԱԼԵԳՍԱՆԴՐ ԴԻԻՄԱՌԻԴԻ — Ֆրանսիացի չափնի դրամատիկական հեղինակը վախճանեց նոյեմբ. 15 ին, 71 տարեկան հասկում, Նա որդին էր չափնի վիպագիր Դիւմա-հօր։ Դիւմա-որդին իւր գրական գործունէութեան գլխաւոր առարկան ընտրել էր կնոջ պաշտպանութիւնը. իւր դրամաներում նա չարուցանում էր ազատ ամուսնութեան, ապահարգանի, ապօրինի զաւակների խնդիրները։ Նորա գործքերը գրւած են լեւելքով և մեծ փալով ու շատ համարձակ։ Նորա գրւածքներից ամենաչափնին է «Կամելիազարդ տիկինը», որ շատ լեզուներով թարգմանւած է (Նան հալերէն ներկայացւած)։ Ապա չափնի են նորա «Կիս ալիարհը», «Պր. Ալֆրեսը», «Ֆրանսիկոն», «Տիկին Օբբիի պաղափարները», «Օտարունին», «Իենիզ», «Դանիշ-

ներ» և ալլն: Բացի կոմսերիաներից ունի գրած վէպեր («Ալեմանսօի գործերը») և բազմաթիւ լառաջարաններ, որոնք միշտ մեծ արժէք են ունեցած: Թողեց անտիպ «Թեքէի ռզին» զրաման:

Դիւմա որդու գրածների ազդեցութեան տակ են գրած նաև քաղմաթիւ գրամաներ ուրիշ երկիրներում: Նա անդամ էր Ֆրանսիական Ակադեմիայի: Նորա մահը ամեն տեղ խոր կերպով զգացւեց Պարիզի թատրոնական և գրական շրջաններում, որպէս նաև զոցանից դուրս: Դիւմա-Որդու մահով անկաշտացաւ զարուս ամենամեծ գրողներից մէկը:

† ԲԱՐԹԵԼԸՄԻ ՍԵՆՏ-ԻԼԷՐ վախճանւ. 30 տարեկան հասակում (ծնւած էր 1805 թ.): Յայտնի էր որպէս Փիլոսոֆա-գիտնական (գլխաւորապէս որպէս թարգմանիչ ու մեկնիչ Արիստոտելի) և որպէս քաղաքական գործիչ: 1838-ին նա նշանակւեց պրոֆեսոր Առէժ դը Ֆրանսում, ընտրւեց Ֆրանսիական Ակադեմիայի անդամ: 1851 թ. ապրիլի հարւածից չետոյ պրինց Լուի Նապոլէօն Բոնապարտը նորան կալանաւորել տւեց և ապա զրկեց պրոֆեսորութեան պաշտօնից, որովհետև Սենտ-Իլէր հրաժարւեց երդում տալ Նապոլէօն կաշօրին: Երկրորդ կաշտերութեան տարիները նա զբաղւեց գիտնական աշխատութիւններով սանսլրիա լեզւի և հին գրականութեան վերաբերեալ:

Նապոլէօնի անկումից չետոյ Սենտ-Իլէր ընտրւեց ազգային ժողովի անդամ Բօրգօնում, ուր նա մեծապէս նպաստեց իւր մտերիմ բարեկամ Թիերի ընտրւելուն իբր Հանրապետութեան նախագահ: 1876-ին նա ընտրւեց սենատոր ցմահ, իսկ 1880 թ. արտաքին գործոց մինիստր էր Ֆերրիի կաբինետում:

† ԲԺ. ՎԵՐՄԻՇՆԱՆ (Նիկողայոս), վախճանւեց Թիֆլիսում նոյեմբ. 18-ին, 64 տարեկան հասակում: Ծնւած էր Թելաւ, 1856 թ.ին վարում էր Երևանի գաւառական բժշկի պաշտօն, ապա փոխադրւեց Թելաւ, 1868-ից վարում էր Թիֆլիսի 4-րդ քաղաքամասի քաղաքային բժշկի պաշտօնը: Քաղաքային բուժարանում երկար ժամանակ վարեց ձրիաբար օրդինատորի, դիրեկտորի օգնականի և դիրեկտորի պաշտօնները: Աւելի քան տասնեակ տարի քաղաքային խորհրդարանի անդամ էր, եռանդուն կերպով մասնակցելով Թիֆլիսի առողջապահական խնդիրներին:

Բաց հանգուդիալ բժիշկ Վերմիշեան մանաւանդ զնահատւած էր որպէս բարեկամ չքաւոր դասակարգի, որին, բացի ձրի աչցելութիւններից, նաև գրամական օգնութիւն էր հասցնում:

Մի քանի տարի առաջ Թիֆլիսի գաւառի Գլխան գիւղում հաւոց Էկեղեցու կառուցանելու համար ընծայել վր իւր կալւածքից, գետին և մտադիր էր Էկեղեցուն կից հաւոց դպրոց բանալ:

ՆՈՐ ՍՏԱՑԱԾ ԳՐԳԵՐ

- 1) ՊԱՆԱՍԱՆԵԱՆ, Ստեփաննոս.— Պատմութիւն Հալոց սկզբից մինչև մեր օրերը: Երկրորդ տպագրութիւն: Հրատ. Թիֆլ. Հալ. Հրատ. Ընկ., Թիֆլիս, տպ. վրաց Հրատ. Ընկ., 1895 թ., գինն է 1 ռ. 50 կոպ.
- 2) ՄԷՆԷՎԻՇԵԱՆ, Հ. Գաբրիէլ վար., Մխիթ. Ուստէն:—Կենսագրական ակնարկ գեր. Արսէն արքեպիսկոպոսի Աւստեան ընդհանրական արքայի Մխիթարեանց վիեննայ: Կենաց և գործունէութեան Յիսնամիալ լոբելիների առթիւ: Վիեննա, Մխիթարեան տպարան, 1895 թ., գինն է 1 ֆրանկ կամ 35 կոպէկ:
- 3) ԳԱՐԱԳԱՇԵԱՆ, Ա. Մ.—Քննական Պատմութիւն Հալոց, ըստ Նորագոյն պատմական, լեզուաբանական և բանասիրական տեղեկութեանց: Մասն. Գ. Պատմական ժամանակ: Ժամանակ անտէրնցութեան, մինչև ի վախճան և. դարու: Մատենագրական և կրօնական շարժումը: Թիֆլիս, տպ. Մ. Գ. Ոստինեանցի: 1895 թ. գինն է 1 ռուբլի:
- 4) ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, Յովհաննէս.—Մանկական խաղեր: Թիֆլիս, տպար. Շարաձէ՝ 1895 թ., գինն է 50 կոպէկ:
- 5) ԾԵՐԵՔԵԼԻ, Գեօրգի.—Մարդ-Ասիւծ. առասպելական պոէմա, պատկերազարդ. փոխադրեց Դաւիթ Տէր-Դաւթեան: Թիֆլիս, տպ. վրաց Հրատ. Ընկ., գինն է 10 կոպէկ:
- 6) ՊԷՏԼԻՔՃԵԱՆ, Մելիք.-Ընկեցիկը, Նորավէպ, Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, գինն է 2 զրուշ կամ 15 կոպէկ:
- 7) FRANÇOIS, Adolphe.—Les grands problèmes: I. La question du bonheur. II. Le bien social. III. Le Beau. IV. La question de l'âme.—Paris, Imprim. et librairie de Ch. Noblet. 1895 թ., գինը է 1 նշանակած:
- 8) ЗАХАРЬЯНЪ, Т. А.—Къ казуистикѣ и этиологіи скрытной перемежающейся лихорадки (febris intermittens larvata) на Кавказѣ.—Հանումք „Военно-медицинскій журналъ-ի 1895 թ. № 3-ից:
- 9) GURGENIANZ, Gregor.—Ueber ein neues Reductionsprodukt des Xanthons.—Inaugural-Dissertation zur Erlang. der philos. Doctorwürde der hohen philos. Facultät der Univers. Bern.—Bern, Buchdruck. K. J. Wyss. 1895.

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 9—10 1188 , (ալսինքն էջ 1188, տող 6) ուղղել ճիրաններից. 1195 , ներքևից Գուղակի (և ոչ՝ Տուղակի). 1212. 1⁴ հալերի (և ոչ՝ հալեր). 1319 10-11 ուղղել՝ ուխանաներով. նույն էջ տող 3 ներքևից ուղղել՝ արդարանալ:

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶԻԱՅ ՄՈՍԿԻԱ

Հանգուցեալ Պետական Խորհրդական

ԴԱՆԻԷԼ ԳԱՐԻԻԷԼԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ ՄՐՅԱՆԱԿԻ ՆԻԺԸ

«ՀԱՅԵՐԸ ԲԻՆԱՅԻՒՅՈՒՄ՝ ՄԻՆՉԵՆ ԽԱՉԱԿՐԱՅ
ԱՐՇԱՒԱՆԶԸ» (մանաւանդ Բիւզանդական աղբիւրների հիմամբ):

Շարադրութիւնը կարող է ներկայացել Հայերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն:

Շարադրութիւնը պէտք է ներկայացւի ոչ ուշ քան 1-ին Յունւարի 1898 թ.:

Հաւագողն շարադրութիւնը լիչեալ նիւթի մասին կը պարզեատրւի Խորհրդարանի կողմից և օրէնքով մրցանակով:

Վերաանուի Ճեմարանի Գ. Քանանեան.

Քարտուղար Խորհրդարանի Գ. Սալաբեանց.

10/22 Հոկտեմբերի, 1895 թ.

Մոսկա.

De la part du Conseil des Classes Spéciales de l'Institut
Lazareff des Langues Orientales, à Moscou.

Sujet donné pour le concours au prix fondé avec autorisation
supérieure par le feu conseiller d'état

D. G. KANANOFF:

„Les Arméniens à Byzance jusqu'à l'époque des Croisades“ (en s'appuyant de préférence sur les sources Byzantines).

Les travaux peuvent être présentés dans les langues: arménienne, russe, française, allemande.

Le terme fixé pour la remise des travaux ne peut dépasser le 1-er janvier 1898.

Il sera accordé par le Conseil un prix de sept cents roubles (à peu près 2000 francs) au meilleur travail sur le sujet ci-dessus donné.

Le directeur de l'Institut G. Kananoff.

Le secrétaire du Conseil G. Khalatiantz.

Le 10/22 Octobre, 1895.
Moscou.

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՈՍՍԻԱ“ „РОССИЯ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ 1881 թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄԱԳՆՈՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահւում են պետական բանկում

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ալիւնքի դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջկաների համար, թոշակները տղաների համար և ալլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին:

1894 թւի չունւարի 1-ին «Րոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրած էին 28.246 անձ 75,621,010 ռուբլի դրամագլխով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԵՊՔԵՐԻՑ

առանձին անձների, և թէ համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների և բանւորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները՝ ղրկիլէնդի փոխարէն:

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալւածքները (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և ալլն):


ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետալին, ցամաքալին և ծովալին. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին չափաբարութիւնները ընդունւում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37). Վտկասեան չըրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիւսկալա փ. տուն № 6. և բոլոր գործակալութիւններում կաշարութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ գէպերից՝ երկաթուղիներով և չոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրւում են նոյնպէս երկաթուղիների կաւարաններում և չոգենաւալին նաւանագիստներում:



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀՅՍԱՐՍԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ

Բ Ա Յ Ի Ո Ւ Մ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ տարեկան 10 հոգի է, կամ 30 ֆռանկ: Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 հոգի է, արհեստավորները 7 հոգի է: Կարելի է վճարել մաս-մաս, 3 և 5 կգրում, 3 և 5 մինչ մարտի 1-ը, մնացեալը մինչ յուլիսի 1-ը:

ԴԻՄԵՆ՝ Թիֆլիս, Վեկամիսեան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Արաստահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“. և կամ հեռագրով անձերին:

ԲԱՔՈՒ—պ. պ. Ֆրիդոն Մարգարեանին և Սեդրակ Թառաչեանին:

ԲԱԼԱՍԱՆԻ—պ. Արշակ Դաւթեանցին (Ե. և Ա. Մելիքովների մօտ):

ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան, Ծովհանեանի բանկ. գրասենեակ:

ԵՐԵՒԱՆ—պ. Գէորգ Ղարաջեանցին. Առևար. բանկի ճիւղը:

ԿԱՐՍ—պ. Աբէլ Ապրեսեանին, զործակալ «Նաղեժդա» ընկ.

ԱԳՈՒՎԻՍ—պ. պ. Ստեփան Արասխանեանց և Աւետիս Դաւթեանց:

ԴԱՆՁԱԿ—պ. Կոնստ. Գիւլնաղարեանցին:

ՆՈՒԻԻ—պ. պ. Աբրահամ Բունիաթեանց և Խաչատուր Խոջամիրեանց:

ՂԱԶԱՐ—պ. Հմայեակ Մաժինեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՂԱՐ—պ. Արամ Շապովալեան:

ՄՈՍԿՒԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան, Մ. Շորշորովի գրասենեակ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Քր. Բաշինջաղեանին (Постин. дворъ № 7):

ԽԱՐԻԻՋ—պ. Յակոբ Սառիկեանին (ուսուցիչ):